

MEMOIRS
OF
JAMES WATSON OF
PETERHEAD

By James Watson

Printed by James Watson, Peterhead, 1847.

Պատմության և ինքնակրթության կալուստի Ինստիտուտ

ՍԵՐԷՆՈՍԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՀԱՐՄԱՆԻ ՏՊԵՐԱԲԱՆԻՔԻՆ

Քաղաքապետարանի և Ժամօրագրի

P. 24m3.

U.S. VULNERABILITY

Институт Истории и материальной культуры

8(47.925)

0-33

1961

ИСТОРИЯ ЕПИСКОПА СЕБЕОСА

ЧЕТВЕРТОЕ ИЗДАНИЕ

сличенное с рукописями, с предисловием
и примечаниями

Под редакцией
СТ. МАЛХАСЯНЦА



АРМФАН

1939

ЕРЕВАН

А II
34142

3244

Տպագրութիւն եւ ԽՍՀՄ Դիտութիւնների Ակադեմիայի Հայկական
Ֆիլիալի Նախագահութեան կարգադրութեամբ:

Նախագահի տեղակալ Ս. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ:

Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

I. ՍԵՔՆՈՍ ԵՎ ՆՐԱ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ.— II. ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԶԵՌԱԳԻՐՆԵՐԸ.— III. ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.— IV. ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՐԵՆՈՍԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ.— V. ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ.— VI. ՆԵՐԿԱ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՆՊԱՄԱՆՔՆԵՐԸ.

I. ՍԵՔՆՈՍ ԵՎ ՆՐԱ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Միջնադարյան մի քանի հայ հեղինակներ հիշում են Սեբեոս անունով մի պատմիչ և նրա գրած Պատմութիւնը Հերակլ կայսեր մասին։ Այսպես՝ Ասողիկ յուր աղբյուրների մեջ հիշում և «Պատմութիւն Հերակլի, որ ի Սերէոսէ (ծեռ. Սեբիոսէ) եպիսկոպոսէ ասացեալ» (Ս. Պետրբուրգ, յեր. 7)։ Մխիթար Անեցի (հր. Պատկ. յեր. 15) իրան հայտնի պատմագիրների շարքում հիշում և Շապուհ Բագրատունուց հետո՝ «Եւ Սեբեոս որ Հերակլին է»։ Սամուել Անեցի հիշում և՛ «և Հերակղն ի Սեբիոսէ եպիսկոպոսէ ասացեալ», (յեր. 32)։ Նույնը կրկնում և Կիրակոս Գանձակեցի (Վին. յեր. 3), Մխիթար Այրիվանեցի (յեր. 37)։ Ուխտանես հիշում և Պատմութիւն Հերակլի, առանց հեղինակի անունը տալու (Ռ. յեր. 56)։ Թումայ Արծրունին նրա պատմութիւնից մի ընդող խոսք և փոխ առնում* 1) առանց սակայն հիշելու Սեբեոսի անունը և Պատմութիւնը։

Բայց այս Պատմութիւնը յերկար ժամանակ կորած եր համարվում։ Միայն 1842 թվին Հով. Շահխաթունյան յեպիսկոպոսն Եղմիածնի ձեռագիրները քրքրելիս՝ պատահում և մի պատմական զրգամբի առանց հեղինակի անվան և առանց վերնագրի։ Ծանոթանալով զրգամբի բովանդակութեան հետ՝ նա համոզվում և, թե դա Սեբեոսի վաղուց կորած Պատմութիւնն և. ըստ այսմ ել այդ ձեռագրի վրա մակագրվել և. «Սերէոսի եպիսկոպոսի պատմութիւն ի Հերակլին»։

Շահխաթունյանի յենթադրութիւնը, թե յուր գտած պատմական զրգամբն իրոք Սեբեոսի Պատմութիւնն և՛ արդարա

* Սեր. զէ. Ա. Շուն ևս դու, և յերամակէ շանց դու և ժողովուրդ՝ քու։
— Թումայ Արծրունի (Պատկ. յեր. 25), «Շուն դու, և երամակ շանց՝ որ զկնիքս աղեկայ սահին»։

նում և մի քանի կողմնակի փաստերով: Ղոչ մի ուրիշ հին հայ հեղինակ այնպես մանրամասն չե գրել Հերակլի արշավանքների պատմությունը՝ ինչպես այս գրվածքը, և վերոհիշյալ միջնադարյան հեղինակները Սերեոսին են վերագրում «Պատմություն ի Հերակլին»: Մյուս կողմից՝ այդ միջնադարյան հեղինակները Սերեոսին կոչում են յեպիսկոպոս, և արդարև, յոթներորդ դարի կեսերին մոտ, ուրեմն Հերակլի արշավանքների ժամանակ, Հայաստանում ապրել և մի վոմն յեպիսկոպոս Սերեոս անունով, վոր մասնակցել և Դվինի յեկեղեցական ժողովին և յուր անունն ըստորագրել և «Տէր Սերէոս եպիսկոպոս Բագրատունեաց»: Վոր հենց այս Բագրատունյաց յեպիսկոպոս Սերեոսն և Պատմության հեղինակը՝ պարզ յերևում և այն մեծ ուշադրութիւնից, վոր պատմիչը դարձնում և Բագրատունյաց իշխանների գործերի վրա և այնպես սիրով ու մանրամասն նկարագրում: Ուրեմն վոչ մի տարակույս չե մնում, վոր ներկա պատմական գրվածքը Սերեոսինն և:

Հեղինակի մասին կենսագրական տեղեկություններ գրեթե չկան: Միակ դրական տեղեկությունն այն է, վոր նա մասնակից և յեղել Դվնա յեկեղեցական ժողովին, 645 թվին՝ իբրև առաջնորդ Բագրատունյաց կալվածների թեմի: Սրանից դուրս՝ կարելի չե մի քանի հավանական յնթադրություններ անել՝ հիմնվելով Պատմության մեջ մի - յերկու ակնարկությունների վրա: Ա. գլխում նա հայտնում է, թե Մարաբասյան մատչանն ինքր ձեռք և բերել Միջագետքում Մարաբասի աշակերտներից: Դ. գլխում, Մամիկոնյանների ժազման մասին պատմելիս, հայտնում է, թե ինքը լսել և Ձինաստանից խոսրով (Փարիզ, Կ 628) թագավորի մոտ յեկած պատգամավորից՝ ինչ վոր Ձինաստանում զուսանները ասում են Մամիկի և Կոնակի մասին: Այս յերկու ցուցումներից, (յեթն Միջագետք բառը ճշտամուտ հավելված չե) կարելի չե յեզրակացնել, թե Սերեոս ճանապարհորդություններ և կատարել Հայաստանի սահմաններից դուրս, յերեկ վորոշ հանձնարարություններով: Դվնա ժողովին ներկա լինելը թելադրում և կարծել, թե նա մասնակցած կլինի Դավանության թղթի հորինման, զուցե և գլխավոր խմբագիրը: Այս յնթադրությունը յուր ուժը կառնպանե նաև այն դեպքում՝ յեթե այդ թուղթը գրված լինի վոչ թե 645 թվի ժողովում, այլ մի այլ ժողովում, վոր հավանորեն գումարվել և դարձյալ Դվնում 648 թվին:

Սերեոսի ծննդյան և մահւոյն թվականները նույնպէս հայտնի չեն. բայց րանի վոյ նա Պատմութիւնը վերջացնում է 661 թվականով, և մյուս կողմից մինչև 628 թվականը նա յեղել և Պարսկաստանում, խոսքովի արքունիքում, և տեսակցել և չինացի դեսպանների հետ՝ հաժանական և նրա ծննդյան տարին ղնել վեցերորդ դարի վերջին տասնամյակում, ուրեմն նա Պատմութիւնը գրած կլինի մոտ 70 տարեկան ճասակում. խոստաբանության առաջին մութ խոսքերից («Եւ եղև ոչ ի կամայական պիտոյից»...) կարելի չի յեղրակացնել, թե նա Պատմութիւնը գրել և վու ինքնաբերաբար, այլ ստանալով առաջարկութիւն մի ավագ անծի կողմից. այսպիսի անծ կարող և լինել Բագրատունաց իշխաններից մեկը, հաժանորեն վերջինը՝ վորին նա հիշում և Պատմության մեջ, այսինքն Սմբատ խոսքով Շումի վորդի Վարդապետրոցը, այս պատճառով ել նա առանձին տեղ և տալիս յուր Պատմության մեջ Բագրատունի իշխանների կատարած գործերին:

II. ՎԵՏՄՈՒԹՅԱՆ ԶԵՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սերեոսի Պատմության ծեռագիրներն մասին մամանակով առաջին տեղեկութիւնները գտնում ենք այս Պատմության առաջին հրատարակիչ Թադեոս Մինրդատյանի կանխաբանության մեջ, Մինրդատյանը հայտնում և, վոր ինքն եղմիածնում տեսել և յերկու որինակ Սերեոսի Առաջինը յեղել և թերի. գրութած և յեղել ըոյրգրով մարուր գրությամբ, հմուտ գրից, հին բամբակյա թղթի վրա, Ունեցել և վերջում հետեյալ հիշատակաբանք. «Արդ գրեցաւ... ի թուին ՈԺէ (1568) ի սուրբ և տինգերական ուխտն Մարմաշինու վանաց, ձեռամբ յոգնամեղ և տնարդիւն գրչի աէր Յուսէկ կոչեցելոյ» ևն, Ունեցել և ճակատին դրոշմված՝ «Պատմագիրք Սերեոսի ի Հերակլն»:

Յերբորդ որինակը գրված և յեղել ՌՃԻԱ (1672) թվին Բաղնշում Հովհաննես Կարապետի վանքում, Ունեցել և վերջում հետեյալ հիշատակարանք. «Ջնտինս ի գրաց և գառաշինս ի մեղաւորաց՝ զանաբժան զանարհեստ և զանիմաստ գրիգոր երէցս արժանի առնել միով ողորմայիւ, և մեղաց իմոց թողութիւն ջնորհել՝ ինծ և իմոցն ամենայնի. և նա որ յիշէ, յիշեալ լինիցի յարդարամէտ դատաւորէն մերմէ Յիսուսէ Գրիգորոսէ, և նմա փառք յախտեանս՝ ամէն Արդ՝ գրեցաւ ի թուին ՌՃԻԱ,

ի Բաղէշ՝ ի վանս Յովհաննու Կարապետի»^{*)}։ Միհրդատյանի ասելով՝ այս ձեռագիրն ունեցել և սկզբում վերնագիր՝ «Սեբէէս եպիսկոպոսի ի Հերակլն»։ Այս ձեռագրում Քրոնիկոնի մասում յերկու տեղ պակաս և յեղել մի տեղ զրված և յեղել «չորս տող պակաս է», յերկուրդ տեղում՝ «Յօթն տող պակաս»։ Ինքը Միհրդատյանն այս պակաս տեղերը լրացրել և հնագույն որինակից^{**)}։ Յերրորդ որինակը յեղել և նոր ընդորինակություն յերկրորդից։ Միհրդատյան 1850 թվին վորոշ հանձնարարությամբ Թիֆլիս յեկած լինելով Ներսես կաթողիկոսի մոտ՝ տեսնում և նրա մոտ այս որինակը և խնդրում և կաթողիկոսից՝ Հետո գնալով Եջմիածին՝ բաղդատում և բնագրի հետ և դարձնում և յուր տպագրության բնագիրը^{***)}։

Այս յերեք ձեռագիրներից առաջինը, հնագույնը, վոր մեր բաղդատությունների մեջ նշանակում ենք Հ (— հին) տառով այն ձեռագիրն և, վոր գտել և Շահխաթունյանը և ճակատին մակագրել և «Գատմագիրք Սեբէէսի ի Հերակլն»։ Այս ձեռագիրն անհետ կորել և, կորած և յեղել դեռ անցյալ դարի յոթնամասնական թվականներին՝ յերբ Բ. Գատկանյանն Եջմիածին գնալով և Սեբէէսի ձեռագիրները փնտռելով՝ վոչ մի ձեռագիր չէ գտել այնտեղ։

Միհրդատյանի հիշած յերկրորդ ձեռագիրը զրյագիրների Գետական մատենադարանում պահվող թանկարժեք № 611 ձեռագիրն և (նոր № 2639), վոր մենք կոչել ենք Ա. ձեռագիր։ Սակայն մի մեծ տարակույս և այստեղ ծագում։ Միհրդատյանն ասում և, թե այս ձեռագիրն սկզբում ունեցել և վերնագիր՝ «Սեբէէս եպիսկոպոսի ի Հերակլն»։ այն ինչ ձեռագիրն իրոր վոչ մի վերնագիր և վոչ իսկ հեղինակի անուն չէ կրում։ Այս ակնհերև հակասությունը բացատրելու համար պետք և յննթադրենք, թե հիշյալ վերնագիրը յեղել և Միհրդատյանի ձեռքում գտնված նոր ընդորինակության վրա, վորը նա ստացել ևր Ներսես կաթողիկոսից։

*) Այս թվականը չկա հիշատակարանի վերջում։ Միտարանը (Գալ. Տեր-Միսայան), վոր առաջին անգամ նշառագրել և այս ձեռագիրը՝ հիշյալ թվականը վերցրել և նույն ձեռագրի ուրիշ հիշատակարանից։ Տես քիչ վաղը։

**) Տես Ներկա հրատ. Գլ. Գ. բաղդատությունները այս պակաս տեղերին վերաբերյալ։

***) Միհրդատյանն ունեցել և մի ուրիշ որինակ ևս «Հատմագրով իմն որինակեալը Սլժմածնի միտարանների ձեռքով, յերկուրդ ձեռագրից։ Այս որինակից ճափանարեն ընդորինակված և Վիեննայի մատենադարանի № 59 որինակը։

Այս ձեռագիրը (№ 611, նոր № 2629, մեր բաղդատութեան մեջ Ա.) մի քանի անգամ նկարագրված է, ամենից մանրամասն կերպով՝ Միաբանից («Արարատ», 1891, յեր. 147—155 և «Արարատ», 1901, յեր. 542—549), այնուհետև մեզանից (Ղազար Փարպեցու Առաջաբանում, Պատմագիրք Հայոց. Թիֆլիս, յեր. 5—2), վորից քաղում ենք հետևյալ տեղեկությունները: Զեռագիրը կաշեկազմ է, դեղնավուն կոկված թղթի վրա գրված, բոլորագիր, ընտիր գրչություն: Սա հավաքածո չե ոչառմութեանց: Բովանդակում է՝ Ազաթանգեղոսի Պատմութիւն՝ Դաշանց թղթով, Մեծին Ներսեսի վարքը, Պատմութիւն Մովսեսի Խորենացու, Պատմութիւն Նղիշէի, Պատմութիւն Ղազարայ Փարպեցու և Թուղթ առ Վահան Մամիկոնեան, Պատմութիւն Սեբէոսի և Պատմութիւն վարուց և մահուան սրբոյն Մեսրոբայ՝ Կորիւնի Վերջին յերկու պատմութեանները չունին վերնագիր: Զեռագիրը գրված է յերկու գրչից: Առաջին մասը (Ազաթանգեղոս, Վարք Ներսիսի, Խորենացի, Նղիշէ) գրել է Պողոս յերեց Դավրազի՝ Վարդան վարդապետ Բաղիշեցու հանձնարարութեամբ, Բաղեշի Հովհաննու Կարապետի վանքում (Ամրդուլու), հայոց ԹՃԻԱ ԹՎին (=1121, փրկյալան 1672): Յերկրորդ մասը (Ղազար Փարպեցի, Սեբէոս, Կորիւն) արտագրել է Գրիգոր յերեց՝ Նույն Վարդան վարդապետի հանձնարարութեամբ: Հիշատակարանը վերը բերինք: Հարկավոր է այստեղ բերել մի հատված մի ուրիշ հիշատակարանից, վոր գտնվում է Ղազար Փարպեցու Թղթի վերջում (անմիջապէս Սեբէոսից առաջ) և Նույնքան վերաբերում է Սեբէոսին: «Ով սուրբ ընթերցաւոր և եղբարք, գիրքս հին էր և աւրինակս: Յունան վարդապետն կարդացաւ էր գաւրինակն և նորագեալ, և զպակասութիւն թղթոցն որ պակասէ՝ ոչ էր գտեալ, և ես ոչ կարացի գտանել...»: Թանկարժեք ձեռագիր է սա. մի կողմ թողնելով մյուս պատմութեանները՝ բավականանում ենք ասելով, վոր սա մայր ձեռագիրն է Ղ. Փարպեցու և Նրա Թղթի և Սեբէոսի Պատմութեանների: Այս ձեռագրից են արտագրված Ղ. Փարպեցու յերկրորդ օրինակը և Սեբէոսի մյուս բոլոր օրինակները:

Բացի այս ձեռագրից՝ եղմիածնի Պետական գրչագիրների մատենադարանում կան նաև ուրիշ յերեք նորագոյն օրինակներ Սեբէոսի Պատմութեան, վորոնք, ինչպէս մանրամասն բաղդատութեանը ցույց տվեց՝ բոլորն էլ արտագրված են № 611, նոր № 2629 ձեռագրից. սրանք են—

№ 2867 (մեր բաղդատութեան մեջ՝ Բ.) մեծագիր տետրակ, 153 գրված յերես, խոշոր՝ պարզ կանոնավոր նոր գրով։ Զունի հիշատակարան և տարեթիվ։ Առաջին յերեսի վրա ջնջված և «Սեբերիանոսի» և վերևից գրված և «Պատմութիւն Սեբէոսի», վորից ներքև՝ № 92. Ներքև՝ ԺԹ, Խ. յեպիսկոպ.։

№ 3122, (մեր բաղդատութեան մեջ՝ Գ.) նոր գեղեցիկ գրով, 99 թվաճամարած յերես։ Ունի վերնագիր՝ «Պատմութիւն Հայոց և Կայսերն Յունաց մեծին Հերակլի, արարեալ ի Սեբէոս եպիսկոպոսէ Հայոց, բովանդակեալ յԳԺ տետր»։ Վերջին 103-րդ յերեսի վրա թանաքով ջնջված և յերկու տող, վորի տակ կարդացվում և. «Անգոյգ բարեբարիս Մկրտիչ Յովհաննեսեանցին Գրիգոր եպս. աշակերտ»... ներքև՝ Վոսկան Տր. Գեորգյան Հովհաննիսյանց. 10 հունվարի 1852 ամի Յերևան։ Սխալաշատ որինակ և և լուսանցբում կրում և բովական թվով ուղղումներ։

№ 6454, (մեր բաղդատութեան մեջ՝ Դ.), մանր, գեղեցիկ, պարզ գրութիւն՝ նստրագրից նոր գրի փոխանցման գրերով, ավելի հին թղթի վրա. 158 յերես գրութիւն։ Զունի վոյ վերնագիր, վոյ հիշատակարան։

Բացի այս ձեռագիրներէց Նշմիածնի Պետական Մատենադարանում վերցնելու զանվել են դարձյալ յերկու նոր ձեռագիր Սեբեոսի Պատմութեան, վորոնք, ինչպես ինձ հաղորդեցին գիտական վոյ մի արժեք չունին։

Նշմիածնի Պետ. Մատենադարանից դուրս՝ Սեբեոսի Պատմութեան որինակներ զանվում են—

Դիտութիւնների Ակադեմիայի մատենադարանում, վորից ոգտվել և Պատկանյանն յուր հրատարակութեան մեջ, Ուրիշ վոյ մի տեղեկութիւն նա չե հաղորդում այս որինակի մասին, բովականանալով կոչել այն «նորագույն գրչագիր որինակ», բայց այս գրչագրից նրա հրատարակութեան մեջ ջնջված վարիանտների բաղդատութիւնից յերեսաց, վեր նա արտագրված և նույն № 611-ից։

Վիեննայի Մխիթարյանների մատենադարանում № 52, վոր ըստ վկայութեան Վիեննայի բանասերներից մեկի (յեր. 12) արտագրված և Միհրդատյանի համար Նշմիածնում «հապճեպ» արտագրված որինակից, և № 86, վոր ըստ վկայութեան նույն Վիեննայի բանասերի (անդ), բաղդատութիւն և Միհրդատյանի Ներսես կաթողիկոսից ստացած որինակի հետ։

Այսպես ուրեմն, հաշվի չառնելով Միհրդատյանի յերկու որինակները, վորոնք անհետ կորած են՝ ներկայումս Սերեոսի Պատմութեան 8 ձեռագիր կա. հինգը նշմանում, յերկուսը վիճանայում և մեկը Գիտութեանների Ակադեմիայում. Սրանցից մեկը, № 611 (նոր № 2629, մեր Ա.) մայր որինակ է, մյուսները նրա դստերը և թոռներն են:

Նկատի ունենալով այս մայր ձեռագրի կարեորութիւնը՝ հարկավոր ենք համարում վորոշել նրա ազգականական կապը՝ անհետ կորած հնագույն որինակի (մեր Հ.) և Հունան վարդապետի որինակի հետ:

Հ. և Ա. անտարակոյս ազգականներ են, միևնույն որինակից ծագած: Այս յերևում և նրանից, վոր յերկուսի մեջ ել պակասում և մի թուղթ՝ Մամիկոնյաններին վերաբերյալ հատվածից առաջ (տ. ծանոթ. 17), և յերկուսի մեջ ել խոսքը աղավաղված՝ պատմութեան ընթացքը խանգարված է է—Ը գլուխներում մի թուղթ տեղահան յեղած և ուրիշ տեղ դրված լինելու պատճառով (տ. ծանոթ. 30): Սրանք անկասկածելի ապացույցներ են, վոր յերկու ձեռագիրներն ել միևնույն ընդհանուր աղբյուրից են ծագում, վորի մեջ արդեն մի թուղթ ընկած և յեղել և մի ուրիշ թուղթ տեղահան յեղել:

Դարձյալ յերևում է, վոր այս յերկու ձեռագիրները մոտ ազգականներ են, վորովհետև նրանք իրար շատ նման են և տարբերութեաններն աննշան են: Յեթե նրանք հեռավոր ազգականներ լինեյին, այսինքն մի քանի սերունդներով մայր որինակից հեռացած՝ նրանց մեջ տարբերութիւնները ընականորեն ավելի շատ և ավելի նշանավոր կլինեյին:

Այս ազգականութեան և նմանութեան հետ միաժամանակ նկատվում է և մի խոշոր տարբերութիւն: Յեռանուն ցանկի մեջ (գլ. Դ.) Հ. թերութիւն՝ պակասորդ չունի, այն ինչ Ա. յերկու տեղ պակաս ունի, մի անգամ չորս տող, յերկորդ անգամ յոթ տող, վորոնք հետո նոր գրով լրացրած են:

Սա ցույց և տալիս նախ՝ վոր Հ. և Ա. մեկը մյուսից արտագրված չեն, հակառակ դեպքում յերկուսն ել կամ պակասորդ կունենային, կամ լրիվ կլինեյին, և յերկորդ՝ վոր նրանք քույրեր չեն, այսինքն ամբողջապես չեն ծագել մի որինակից, այլապես յերկուսն ել հավասարապես կամ թերի կլինեյին կամ լրիվ: Զի կարելի չենթադրել, թե Հ-ի արտագրվելուց հետո մայր

որինակը վնասվել է, տողեր են փլացել, և ապա նրանից արտագրվել է Ա-ն, վորովհետև Ա-ի որինակում «յոթն տող պակաս» է յեղել, և զգված է յեղել ապագա արտագրողներին խորատ «յորինակն այլի գրած էր, թէ է-ը տող թող»։ Ուրեմն հենց Ա-ի անմիջական մայրն ունեցել և բաց թողած տողեր, Յեթն այս մայրը Հ-ի մայրը լիներ, վոր հետո վնասվել է՝ նա չէր ունենա բաց թողած տողեր, այլ կամ ջնջված՝ անվերամանի տողեր, կամ պատռված, կտրված տեղեր։ Սրանից ել յեզրակացնում ենք, թե Հ-ի մայր որինակից արտագրված է յեղել և մի այլ (X) որինակ, վորը վնասվել է, տողեր է կորցրել, և ապա սրանից արտագրվել է Ա-ն։ Ամենից հավանականն է, վոր այս X որինակը՝ Հունան վարդապետի նորոգած որինակը լինի, (Մարմաշենի)։ Այս յենթադրությանը շատ հարմար է զրի հաղորդած տեղեկությունը։ «Ով սուրբ բնթերցաւոյք և եղբարք, զիրքս հին էր և արինակս։ Յունան վարդապետն կարդացեալ էր զարինակն և նորոգեալ. և զպակասութիւն թղթոցն որ պակասէ՝ ոչ էր գտեալ, և ես ոչ կարացի գտանել»։ Հունան վարդապետն այս հին ու վնասված ձեռագիրը նորոգել է, վորտեղ վոր պակաս է նկատել, և պակասը լն կարողացել լրացնել՝ նշանակել է. «չորս տող քինջ էր», «7—8 տող բաց տեղ թող», այն հուսով, վոր ապագայում մի ուրիշ լիակատար ձեռագրից այս պակասները կլրացնվեն, (ինչպես և իրոր յեղել է)։

Վերոհիշյալ դիտողությունների հիման վրա կարելի չէ կազմել հետևյալ ճշուդագրությունը։

Մայր որինակ, (? դար)

X (Յունան վալի ?)

Հ (1568 թ.)

Ա. (№ 611, 1672 թ.)

№ 2867, № 3122, № 6454, և միւս յայտնի որինակները։

Քանի վոր մայր որինակի անվագ դուստրը Հ. 1568 թվից է՝ մայր որինակը ի հարկն ազելի հին կլինի։ Այս հնությունը կարող է հասնել մինչև ԺԳ դար, ամենաուշը մինչև ԺԴ դար, քանի վոր Ա-ում, ինչպես և Հ-ում, նկատվում է խառն ուղղագրություն հին և նորի (աւրհներ, մեւս, կիւղիկիւս և օր, միւս,

Կիլիկիայ)։ Այսպիսի խառն ուղղագրութիւնն յենթադրվում է այնպիսի ժամանակ՝ յերբ հին և նոր ուղղագրութիւնները մրցում էին, յերկուսն էլ խառն գործ էին անում։ Այս մրցութիւնը կարող եր տեղի ունենալ ԺԴ—ԺԴ դարերում։ Սրանից առաջ տիրապետողը հին ուղղագրութիւնն էր, իսկ սրանից յետո՝ նոր ուղղագրութիւնը։

III. ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Առաջին տպագրութիւնն Սեբեոսի Պատմութիւնն առաջին տպագրութիւնն արել է Քաղեոս Միհրդատյանը Կ. Պոլսում 1851 թվին, Խնչպես կանխաբանութիւն մեջ նա տեսւմ է՝ յուր հրատարակութիւնն համար բնագիրն և ընտրել Ներսէս կաթողիկոսից ստացած որինակը, վոր արտագրված է յեղել մեր Ա. ձեռագրից։ Այս յուր ընագրի միջի յերկու պահասները (չորս տող և յոթը տող) նա լրացրել է մյուս՝ հնագույն որինակից (Հ), վորին հետեւել է նաև յեռանուն և յերկանուն ցանկերի մեջ, ծանոթութիւններն մեջ նշանակելով այս տեղերը նաև շարունակութիւնն մեջ, վորքան հնար է յեղել՝ քաղղատել և այս հնագույն որինակի հետ, ընտրած ընթերցվածը բնագրի մեջ առնելով, և խոտանները ծանոթութիւնների մեջ հիշելով (յեր. ԺԴ)։ Յեւ հիրավի, յուր տպագրութիւնն մեջ նա 41 անգամ հիշում է այն հնագույն որինակը, յերբեմն նրա տարբեր ընթերցվածը յուր բնագրի մեջ առնելով, յերբեմն ծանոթութիւնն մեջ հիշելով և յերբեմն ցույց տալով նրա մեջ պատահող թերթերի պակասները։ Վերջին ցուցումներից տեղեկանում ենք, վոր հնագույն ձեռագիրը, քացի յուր մորից ժառանգած պակասորդներից, վոր վերը հիշեցինք (մի թուղթ ընկած Մամիկոնյանների մասին տեղեկութիւնից առաջ և մի տեղահան յեղած թուղթ է—Ը գլուխներում)՝ յուր կողմից կորցրած է յեղել—մի թուղթ Ը գլխում, «եւ արդ՝ զբէ նա անդրէն դարծյալ թուղթ յերկորդ» խոսքից հետո մինչև «երեսալ կացուցանէին առաջի թագավորին»։ մի թուղթ ԽԴ գլխում (Դավանութիւնն թղթում), «Կնաց ի Հոռոմ տեսանել զԿոստանդիանոս» խոսքից հետո։ (չե նշանակած մինչև վորտեղ)։ Յեւ վերջապես այդ ձեռագիրը վերջից թերի յե յեղել, վերջանալիս է յեղել «յերկոտասաներորդ ամի թագաւորութիւնն Կոստանդի» (գլ. ԽԶ)։

Քացի այն ուղղումներից, վոր Միհրդատյանը մտցրել է յուր տպագրութիւնն մեջ ըստ հնագույն որինակի ընթերցված—

ների՝ յուր կողմից ևս նա մուծել է 22 ուղղումներ (վորոնցից չեբեբը անաջող), ամեն անգամ ծանոթության մեջ բերելով ազավադված բնագիրը, վորը ինքն ուղղել է։ Այս բոլոր ուղղումները զույգ են տրված ներկա հրատարակության բաղդատությունների մեջ։

Սրանցից դուրս՝ Միհրդատյանը իրան թույլ է տվել մի քանի բարեխոսություններ մտցնել բնագրի մեջ։ Նկատելով, Վոր Սերետսի պատմությունը տարբեր տարրեր և պարունակում,—Ազաթանգեղյան արձանագրություն, Գրոնիկոն (յնուսուն և յերկանուն ցանկերը) և ժամանակակից պատմություն՝ նա ամբողջ Պատմությունը բաժանել և յեռե՞ դպրութեան համար՝ աշխատեց՝ «Պատմութիւն Սերետսի եպիսկոպոսի ի Հերակլոն, Դպրութիւն Ա.» ներքեղ գրել է ծանոթություն. «Ի բնագրին եր գլուխ Ա, բայց մեր եղար Դպրութիւն Ա. ըստ բաժանման մերոյ յերիս դպրութիւնս»։ Այս դպրության մեջ նա զետեղել է մեր ներկա հրատարակության առաջին յերկու գլուխները, սկսելով «Եւ եղև վոյ ի կամայական պիտոյից»... մինչև «Պապ որդի Արշակայ ամս է», այս բոլորը համարելով Ազաթանգեղյան արձանագրությունից, վոր հայտնապես սխալ է։ (Տես մեր ծան. 7)։

Այնուհետև գալիս է—

«Պատմութիւն Սերետսի եպիսկոպոսի. Արդ թե պիտոյ է քեզ, ով բնեցաւսէր—գորդի ի հարե ճանաչել։ Դպրութիւն Բ., և ներքեղ ծանոթություն. «Ի բնագրին եր գլուխ Դ.—մեր եղար Դպրութիւն Բ.»։ Այս դպրության մեջ նա զետեղում է մեր հրատարակության Դ—Դ գլուխները, մինչև «Բարձաւ տէրութիւնն Պարսից, որ կալաւ Շէք ամ»։

Սրան հետևում է ինքնահնար վերնագիր. «Նախերգանք հեղինակին Դ. դպրության», վորի տակ զետեղված է «Եւ եղև ի նուազել» և այլն (մեր հրատարակության գլ. Ե.)։

Այնուհետև գալիս է—

«Պատմություն Սերետսի եպիսկոպոսի. Ապստամբութիւն Վահանայ ի Պերդէ... Դպրութիւն Դ. գլ. Ա.» և ներքեղ ծանոթություն. «Ի բնագրին էր գլուխ Զ. մեր եղար Դպրութիւն Դ.»։

Այս կերպով Միհրդատյանը կամայականորեն Սերետսի միակտուր Պատմությունը բաժանել և յերեք մասերի (դպրությունների). բնագրի առաջին հինգ գլուխները վերածել և յերկու դպրությունների, բնագրի վեցերորդ գլուխը դարձել և ա-

ուազին զլուխ և այսպես շարունակել և, վերջացնելով 38-րդ զբլխով, այն ինչ ձևազիրն ունի 30 զլուխ:

Այսպիսի կամայական այլայլումները բնագրի, մանավանդ յերբ նրանք սխալ հիմքից են բղխում՝ անթույլատրելի յեն, Բայց կա այստեղ մի մեղմացուցիչ հանգամանք.— Միհրդատյանն ընթերցողից չէ թագցնում յուր մուծած փոփոխությունները, այլ միշտ հաշիվ և տալիս նրանց մասին. այնպես վոր ընթերցողը մոլորություն մեջ չէ ընկնում և հնարագորություն ունի՝ Միհրդատյանի ցուցմունքների համաձայն վերականգնել բնագիրը:

Բացի սրանից՝ Միհրդատյանն ոգտակար և համարել յուրաքանչյուր գլխին վերնագիր դնել՝ գլխի բովանդակությունն ամփոփելով: Զեռագիրը միայն մի քանի տեղ ունեցել և վերնագիրներ, այն ել շատ համառոտ և անքաղաքար: Նույնպես հայտնում և Միհրդատյանը, վոր պահպանել և բնագրի հին ուղղագրությունը — ար, արհնեալ, երկեւղ և այլն, և թեպետ բնագիրը տեղ-տեղ շեղել և (այս հին ուղղագրությունից՝ ինքը շարունակ պահպանել և հինը:

Միհրդատյանի այս հրատարակությունը Վիեննայի Բանասերը խստիվ քննադատում և (յեր. 15—16): «Անհմուտ հրատարակիչը վոր միայն չէ հաջողած վերականգնել բնագիրը, մարքելով զայն ընդորինակողներու անիմաստ վրիպակներն, այլ և հոգ տարած չէ հավատարմությամբ ներկայացնել ձեռագիրներու տարբեր ընթերցվածքները, (հմմտ. «Նոյան Աղա՛լի» 1853 թ. 52, «Սխալ տպագրութիւն Սեբէոս մատենին, ի լոյս ընծայելոյ ի 1851 ամի, անհամաձայն ընդ բնագրին եղելոյ յԱթոռն էջմիածնի, յորմէ առեալ է զօրինակ տպագրելոյս, որպէս ասէ ի յառաջարանի իւրում»): «Ըստ բմաց բաժանած և բնագիրը յերեք դպրությունց, և յերրորդ դպրությունը Ա—ԼԸ զլուխներու, վորոնց կցած և նաև գլխակարգության բովանդակություն: ասոնք անծանոթ են ձեռագրին»:

Անհրոգ տպագրութեւն Սեբեոսի Պատմության յերկրորդ տպագրությունը կատարել և պրոֆեսոր Քերովն Ռեստեն-Պատկանյանը 1879 թվին Ս. Պետերբուրգում:

Առաջարանում Պատկանյանը հայտնում և, վոր յուր հրատարակության համար մանրակրկիտ ըաղղատել և Կ. Պոլսի (Միհրդատյանի) տպագրությունը Պիտոմբյունների Ակադեմիայի մի նորագույն գրչագիր որինակի հետ. վորովհետև նա (1878 թ.) ելմիածին գնալով՝ այնտեղ չէ գտել Սեբեոսի Պատմության յեր-

կու ձեռագիրներին (№ 811 և հնագույն որինակ) և վոչ մեկը ինքը բնագրի վրիպակ ընթերցվածները տեղ-տեղ ուղղել և համաձայն յուր նոր գրչագիր որինակին և հին հեղինակների մոտ պահպանված՝ Սեբեոսի Պատմության զանազան հատվածների ընթերցվածներին։ Այս հատվածները (Թովմա Արծրունուց, Ասողիկից, Վարդանից, Հովհաննես կաթողիկոսից) նա առանձին զետեղել և Սեբեոսի Պատմության վերջում, հավելվածների մեջ (յեր. 154—197)։ Նաև ավելացրել է 53 պատմական և աշխարհագրական՝ հասարակ և հատուկ անունների բացատրություն։ Լրիվ պահպանել և Միհրդատյանի բաժանումը յերեք դպրությունների, վորոնցից առաջինը, Միհրդատյանի նման սխալվելով, համարում է Ազաթանգեղեան արծանագրութիւն, յերկրորդը՝ «Բրոնիկոն, հանել ի պատմությանց Խորենացուն և Ասողկայ»*)։ Բուն Սեբեոսի Պատմություն համարում է միայն յերրորդը, «որպէս ի վաղուց հետէ ասացնել է մեր յայլում տեղուր»։ Մամիկոնյաններին վերաբերյալ հատվածը նույնպես համարում է ուրիշ հեղինակի։ Նա լրիվ ընդունել է նաև Միհրդատյանի բոլոր ուղղումները, յուր կողմից ել ավելացնելով 13 նոր ուղղումներ, վորոնք բոլորը ցույց են տրված ներկա հրատարակության մեջ։

Բայց մի փոփոխություն ընդդեմ ձեռագրի և ընդդեմ Միհրդատյան հրատարակության, վոր իրան թույլ է տվել Պատկանյանը՝ միանգամայն աններելի յե, և մենք ստիպված ենք նրան վորակել իբրև գրական խարդախանք։

Ինչպես վերը հիշեցինք՝ Միհրդատյանը Սեբեոսի Պատմությունը բաժանել է յերեք դպրությունների, («Դպրություն» բառն ինքն եր մտցրել յուր տպագրության մեջ), յուրաքանչյուր դպրության գլխին դնելով «Սեբեոսի Պատմութիւն» բառերը, և ներքևում ծանոթութիւնների մեջ նշանակելով, թե բնագրում դրված եր զլուխ Ա, զլուխ Դ, զլուխ Զ, իսկ մենք զրինք Դպրություն Ա, Դպրություն Բ, Դպրություն Դ։ Արդ Պատկանյան, համոզմունք կազմած լինելով, թե Սեբեոսին պատկանում է միայն յերրորդ Դպրությունը՝ յուր հրատարակության մեջ աշխատել է չեզոքացնել առաջին յերկու դպրություններն՝ իբրև ուրիշ հեղինակի կամ՝ հեղինակների գրվածքներ։ Այս նպատակով նա

*) Սեբեոսի բնագրում հիշված Ստեփանոս Տառնացուն նա նույնացրել է Ստեփանոս Տառնացի Ասողիկի հետ, վոր նույնպես սխալ է և տեղիք է յեղել իւրիւր թյուրիմացութիւնների, ինչպես կ'սեանենք քիչ հետո։

առաջին և յերկրորդ դպրութիւնների վրայից վերջրել և «Պատմութիւն Սեբեոսի» բառերը, իսկ յերրորդ Դպրութիւն վրայից՝ այս «Դպրութիւն Գ» բառերը, Միկնույն ժամանակ լռել և թե բնագրում այդ տեղերում յեղել են գլուխ Ա, Գ, Զ, և թե՛ Միհրդատյանի տպագրութիւնը (վորից վերջրել և «Դպրութիւն» անվանակոչութիւնը և յերեք մասի բաժանումը), յերեք տեղումն ել ունեցել և վերնագիր «Պատմութիւն Սեբեոսի»։ Այնպես վոր Պատկանյանի այս հրատարակութիւնը ձեռք առնողը հանդիպում և մի տարորինակ յերևութիւն—նախ մի անանուն «Դպրութիւն Ա» (յեր. 1—10), ապա ելի մի անանուն «Դպրութիւն Բ» (յեր. 11—21), ապա՝ վերնագիր՝ «Պատմութիւն Սեբեոսի և պիսկոպոսի ի Հերակլն—Նախերգանք» (յեր. 22—24), վորին արդեն հաջորդում են գլուխ Ա, Բ, Գ և այլն մինչև գլուխ ԼԸ, ըստ Մեհրդատյանի։

Ով վոր Միհրդատյանի հրատարակութիւնը լեր տեսել և միայն Պատկանյանի այս հրատարակութեամբ եր ծանոթանում Սեբեոսի հետ՝ (այսպես են յեղել բանասերների մեծ մասը, վորովհետեւ Միհրդատյանի հրատարակութիւնը մեր կողմերում սակավագուտ եր), անշուշտ համոզմունք կկազմեր Պատկանյանի հետ, թե Ա. և Բ. Դպրութիւնները անծանոթ հեղինակի կամ հեղինակների գրվածքներ են, վորոնք պատահաբար ընկել են Սեբեոսի Պատմութեան սկիզբը։

Այս համոզումը մի քանի տասնյակ տարի տիրապետող դարձավ և առաջ ըերեց հռչակավոր «Դպրութիւնների» և «Անանունի» (Аноним) հարցերը, վորոնց մասին քիչ հետո։

Հարկավոր և նախ այստեղ ծանոթանալ այն փաստերի հետ, վորոնց հիման վրա Պատկանյանը Ա. և Բ. Դպրութիւնները ճանաչեց վոյ Սեբեոսի գործ։ Յուր հրատարակութեան Առաջաբանում նա ասում և, թե ինքն այդ մասին վաղուց խոսել և մի ուրիշ տեղում։ Այդ տեղը՝ Սեբեոսի Պատմութեան ռուսերեն թարգմանութիւնն և, վոր նա տպագրել և Ս. Պետերբուրգում 1862 թվին, և վորի Առաջաբանում, հիրավի, նա պաշտպանում և յուր այդ տեսակետը (յեր. VI—X)։

Բերում ենք քաղվածորն նրա փաստերը հայերն թարգմանութեամբ։

Յերեք Դպրութիւններից միայն վերջինը, ասում և նա մենք վերագրում ենք իսկապես Սեբեոսին։ Մեր յեղրակացութիւնները հիմնում ենք հետևյալ դիտողութիւնների վրա։ Առա-

ջին՝ հայտնի յե, վոր Սեբեոսը գրել և Պատմութիւն, վոր կրե-
լիս և յեղել վերնագիր՝ «Պատմութիւն ի Հերակլէն», այն ինչ
առաջին յերկու Դպրութիւնների մեջ չկա վոյ մի բան, վոր կապ
ունենար Հերակլ կայսեր ժամանակաշրջանի հետ։ Յերկրորդ՝ յեր-
րորդ Դպրութիւնից առաջ հեղինակը գրել և Առաջաբան, վորի
մեջ բացատրված և, թե ի՞նչ բան նա պիտի նկարագրե և ի՞նչ
ժամանակաշրջան։ Նա ավելացնում և, թե ինքր չե խոսելու վա-
ղուց անցած ժամանակների մասին, վորովհետև նրանց մասին
գրել են ուրիշները։ Ուրեմն Սեբեոսը իր աշխատութիւնը ձեռ-
նարկելիս նպատակ և ունեցել նկարագրել միայն այն ժամանա-
կաշրջանը, վորի ծրագիրը համառոտ զետեղել և իր Առաջաբա-
նում՝ Գ. Դպրութիւնից առաջ, իսկ այն ընթերցողին, վոր կկա-
մենար տեղեկութիւն ստանալ հնագույն ժամանակների մասին՝
նա հրավիրում և դիմել ուրիշ հեղինակների, վորոնց վրա ակ-
նարկում և, բայց անունները չե տալիս։ Յերրորդ՝ յերկրորդ
Դպրութիւնը, ինչպէս յերևում և նրա համառոտ վերնագրից՝
պարունակում և համառոտ սինխրոնիկ ցանկ, վոր քաղված և Մ.
Քորենացու և Ստեփանոս Տարոնացու գրվածքներից։ Հայերեն
քնագրի հրատարակիչը (այսինքն Միհրդատյանը), նկատելով այս
վերնագրում Քորենացու և Ստեփանոս Տարոնացու անունների
գուգադրութիւնը, այլ և վոր այս յերկրորդ Դպրութիւնը զե-
տեղված և Սեբեոսի բուն Պատմութիւն առաջ, և վերջապես
համոզված լինելով, վոր յերև դպրութիւններն ել պատկանում
են Սեբեոսին՝ մոլորութիւն մեջ և ընկել Ստեփանոս Տարոնացու
անձի նկատմամբ, և... հետևելով և, թե վերջինս հին հայ հեղի-
նակ և, կամ ժամանակակից Քորենացու, կամ նրա մերձավորա-
գույն հաջորդը, վորից Սեբեոսն յոթներորդ դարում ոգտվել և,
ուստի նա համարում և թե այս պատմութիւնը իսպառ անձե-
տացել և Բայց Ստեփանոս Տարոնացու գրվածքը, ասում և Պատ-
կանյանը, յերեք կորած չե յեղել։ Ստեփանոս Տարոնացին վոչ
այլ վոր և, քան Ստեփանոս Ասողիկը, տասնևմեկերորդ դարի
հեղինակը... Մեր այս կարծիքը հիմնավորում ենք նրանով, վոր
նախ՝ Ստեփանոս Տարոնացի (վոչ Ասողիկ) անունով հեղինակ և
նրա պատմութիւնը չե հիշում վորևէ հայ հեղինակ, չնայելով
վոր նրանք, մանավանդ Մխիթար Այրիվանեցին և Սամուել Անե-
ցին, հիշատակում են բոլոր իրանց նախորդ պատմագիրներին,
և յերկրորդ՝ նրանով, վոր Բ. Դպրութիւն բանաբաղի փոխա-
ռութիւններն Ասողիկի Պատմութիւնից ակնհայտնի յեն և կա-

կածից դուրս: Բազմական ե, վոր հետաքրքիր ընթերցողը համեմատեմ նրանց: Այսպես ուրեմն ամբողջ յերկրորդ դպրութիւնը մի անծանոթ հեղինակի գործ ե և վոչ Սեբեոսի, վորի Պատմութիւն կողքին նա ընկել և ձեռագրի ժողովածուի մեջ...

Առաջին դպրութիւն մասին կարող ենք ասել միայն,—շարունակում ե Պատկանյանը,—վոր նա յել Սեբեոսին չե պատկանում: Նրա մեջ գրի յեն առկած այն ավանդութիւնները, վորոնք պատմվում եյին ժողովրդի մեջ դեռ Մ. Խորենացու ժամանակ: Այս դպրութիւնը, իբրև առանձին ձեռագիր հոգւած, հայտնի յեր և Վարդան Պատմագրին, վոր նրան հանաչում ե վոչ թե Սեբեոսի զրկածը, այլ լոկ Ազաթանգեղյան արծանագրութիւն, վոր արծանի վրայից արտագրված ե Մծրինում: Շատ հավանական ե, վոր այսպիսի արծանագրութիւն զոյութիւն ե ունեցել՝ արծանի վրա գրված Տրդատ Թագավորի քարտուղար Ազաթանգեղոսի ձեռքով:—Ուրեմն և այս առաջին դպրութիւնը պատահաբար կցված ե Սեբեոսին, վորի հետ վոչ մի կապ չունի: Յեթե այս Դպրութիւնից կարելի չե վորեն բան վերագրել Սեբեոսին՝ այդ նրա առաջին 16 տողերն են (այսինքն՝ «և և դև ոչ ի կամայական պիտոյից», մինչև «Քանզի այսու ունէր վերնագիրն այսպես»): (յեր. VI—X):

Պատկանյանի այս կարծիքների քննութիւնը բերված ե մեր «Սերէոսի Պատմութիւնը և Մ. Խորենացին» աշխատութիւն մեջ, վորի բովանդակութիւն հետ հետո կժանոթանանք:

Սեբեոսի Պատմութիւն յերրորդ ուղագրութեանը կատարված ե Թիֆլիսում 1912 թվին—(Ղուկասյան մատենադարան, է): Սատառացի տպագրութիւն ե Պատկանյանի հրատարակութիւնից և բանասիրական տեսակետից վոչ մի նշանակութիւն չունի: Միայն ավելացրած ե հատուկ անունների ցանկ:

IV. ԸՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԵՐԵՈՍ ՎԵՏՈՒԹՅՈՒՆ

Բազմաթիվ համառոտ և ընդարձակ քննութիւններ և ուսումնասիրութիւններ են կատարված Սեբեոսի Պատմութիւն հայերեն, ռուսերեն և յեվրոպական լեզուներով, բայց նրանցից շատ քիչն են շոշափում Սեբեոսի Պատմութիւնն ամբողջապես, այլ զրեթե քաջառապես նվիրված են Պատկանյանի հրատարակութեամբ ստեղծված համառված առաջին և մասամբ յերկրորդ դպրութիւններին և նրանց Անանուն հեղինակին (Аноним):

Դարձյալ նկատելի չեն, վոր սկզբում քիչ արժեք եյին տալիս, գրեթե արհամարհում եյին այս յերկու դպրությունները, բայց բանի զնաց՝ նրանց մատենագրական և պատմական նշանակությունը հետզհետե ավելացավ:

Մանոթանանք այս քննությունների բովանդակության հետ*):

Ակագեմիկ Բրոսսե յուր զեկուցման մեջ (Rapport sur un voyage archéologique dans la Géorgie et l'Arménie, 1849) վերկայում է, վոր վաղուց կորած համարված Սեբեոսի Պատմությունը գտել է զիտնական Շահխաթունի արքեպիսկոպոսն Եմիխածնի մատենադարանի փոշոտ նկուղներում, անվերնագիր (апокриф) ձեռագրի մեջ և ուսումնասիրելով յեզրակացրել է, վոր դս Սեբեոսի Պատմությունն է Հերակլի մասին. Դրքի մասին Բրոսսե հետևյալ կարծիքն է հայտնում. «Դիրքն սկսում է մի քաղվածքով Մովսես Խորենացուց, սկսած Հայոց ծագումից մինչև Արշակ Գ-ի վորդի Պապի թագավորելը» (Պատկ. Առաջ. ուռ. Թարգմանության):

Թ. Միկեղայանը յուր անդրանիկ հրատարակության՝ (1851 թ.) կանխասացության մեջ ամենևին չե տարակուսում, թե ամբողջ գրվածքը, այսինքն բոլոր յերեք դպրություններն ել, Սեբեոսինն է, բայց վորովհետև Բ. Դպրության վերնագրում իրրև պատմական աղբյուրներ ցույց են տրված Մ. Խորենացին և Ստեփանոս Տարոնացին՝ Միհրդատյանն այս Ստեփանոսին չն նույնացնում Ստեփանոս Տարոնացի Ասողիկի հետ (վոր գրել է ԺԱ. դարի սկզբում), այլ համարում է մի ուրիշ՝ ներկայումս կորած հեղինակ:

Չ. Ա. Գաբրելյան, (Շուրոպա, 1852) նկատելով, վոր Պատմության վերնագրի մեջ «Ի Հերակլն» բառն անտեղի չեն, քանի՜ վոր Պատմության մեջ Հերակլի գործունեյությունը փոքր տեղ է զբաղում՝ այս տարակուսելի յերևույթը բացատրում է նրանով, վոր Հերակլ կայսրը, ջախջախելով Պարսից հզորությունը և զերությունից ազատելով խալափայտը՝ հիացրեց ու վոգևորեց քրիստոնյաներին. Սեբեոսն ել յերևի այս զեպքից շարժվելով՝ ձեռնարկել է գրելու յուր Պատմությունը և «Պատմութիւն ի Հերակլն» անվանելու. բայց Հերակլի Պատմության հետ գրել է

* Սա քննություններից մի մասին անմամբ ծանոթ չենք. նրանց բովանդակությունը բերել ենք ուրիշ բանասերների զրգանքներից, ամեն անգամ հասկանալի վերջում զնելով այդ բանասերի անունը:

նաև հարակից դեպքերը՝ Պատմության նախերգանքի մասին (այսինքն Ա. և Բ. դպրության) Գաթրըճյանը նկատել է, թե սա «Սեբեոսի Պատմության մասին չափ մտադրությամբ շինված չերևար, այլ իբրև յերկրորդական և հարակից բան մը և կամ ավելի բացահայտ ըսելու համար՝ ասդիեն անդիեն նյութերը ժողոված, բայց դեռ կարգի չբերված ծրագիր մը» (Վիեննայի Բանասեր)։ Մի ուրիշ՝ անտիպ աշխատության մեջ՝ Գաթրըճյանն արհամարհանքով այդ նախերգանքը կոչում է «հայ կարկատան» (Հանդ. ամս. 1893 թ.)։

Մ. Էմիլը Վարդանի Պատմության ռուսերեն թարգմանության (1861) ծանոթություններից մեկում հարևանցիորեն նկատում է, թե այն պատմական հիշատակարանը, վոր հակասում է Մ. Խորենացուն առաջին հայ Արշակունի թագավորի մասին՝ Սեբեոսինն է (Խալաթյանց)։

Պ. Գալակմյանի կարծիքը (ռուս. թարգմ. Առաջաբան, 1862), թե Սեբեոսի Պատմության սկզբում դրված յերկու դպրությունների Սեբեոսին չեն պատկանում՝ վերն արդեն մանրամասն բերինք։ Այնուհետև Պատկանյանը «Վանա արծանագրությունների» մեջ (1875) վորոշակի կարծիք հայտնեց, թե Սեբեոսի Ա. Դպրության մեջ հիշված Մար-Արաս Մծուրնացին նույնն է Խորենացու Մար-Արաս Կատինայի հետ, և այսպիսի բացատրություն տվեց։ — Մար-Արաս (Մծուրնացին), կամ այս անվան տակ թագավոր մեկը, յեղել է ասորի գիտնական Գ—Դ դարում. նա պատահաբար ներկա չէ յեղել՝ յերբ, ըստ Սեբեոսի, Սանատրուկի պալատի ավերակները պեղելիս են յեղել, և արտագրել է այն արծանագրությունը, վոր պարունակելիս է յեղել Հայոց առասպելական պատմությունը։ Այս արծանագրությունն այնուհետև տարածվել է և նրանից մի որինակ ել ընկել է Սեբեոսի ձեռքը։ Բայց նույն այդ արծանագրությունը գաղափար է հղացրել Մար-Արաս Մծուրնացու մեջ՝ գրել մի ավելի ընդարձակ ու կապակցված՝ խարդախված Պատմություն Հայոց (Մար-Արաս Կատինայի), վոր վերջն ընկել է Խորենացու ձեռքը (Խալաթյանց)։

Վ. Լաբգուտ յուր Հայ Պատմագիտների ժողովածուի մեջ (Collection des Historiens arméniens, հատ. Ա. 1867) տատանվում է յուր կարծիքի մեջ Կեղծ-Ագաթանգեղոսի մասին. (այս անունով նա կնքել է Սեբեոսի Ա. Դպրության անանուն հեղինակին)։ մի անգամ նա ասում է, թե Կեղծ-Ագաթանգեղոսն աչքի առաջ ունեցել է Մար-Արաս Կատինայի ընագիրը, և մանրամաս-

նորեն նկարագրել ե այն՝ ինչ վոր խորենացին բերել ե կրճատված ծնով. ուրիշ անգամ ել ասում ե, թե Անանունը մի մատենագիր ե՝ վոր ապրել ե խորենացուց հետո և սրա ավանդանըստ յուր ճաշակի ճոխացրել ե՝ յուր պատմությունն ավելի հետաքրքրական դարձնելու համար (Քալաթյանց)։

Հայրօմաթ Սեբեոսի մասնակի թարգմանության մեջ („Zur Geschichte Armeniens und der ersten Kriege der Araber“, 1875) հարևանցի կարծիք հայտնեց, թե անանուն հատվածի (Ա. Դպրության) հեղինակը Սեբեոսը չե, և վոր նրա ականարկած աղբյուրը մտացածին ե (Քալաթյանց)։

Դուստմիս յուր հոգվածում խորենացու Հայոց Պատմության արժանահավատության մասին („Ueber die Glaubenswürdigkeit der Armenischen Geschichte des Moses von Khoren, Kleine Schriften“. III, 1876) կարծիք ե հայտնում, թե Հայոց նախնական պատմությունը Սեբեոսի մոտ (Ա. Դպրությունը) ակնբխնամանություն ունի խորենացու հետ և միևնույն ժամանակ զանազան կետերում զգալի տարբերություններ, բայց այս տարբերությունները պատահական չեն, այլ կարծես դիտավորյալ։ Նա կարծում ե, թե հենց ինքը խորենացին ե հեղինակն այդ անանուն հատվածի, վոր նրան ծառայել ե իբրև ուրվագիծ, վորը հետո նա մշակել ե և կատարելագործել ըստ յուր ճաշակի, մասամբ իրոք ուղղելով նախկին սխալները և մասամբ սկզբնական դեռ տարտամ առասպելներից հյուսելով առասպելների փառահեղ կառուցվածք։ Նրա ասելով՝ հնարովի չե Անանունի մոտ հիշատակված արժանագրությունը, հնարովի չե և Ազաթանգեղոսի անունը, վոր այստեղ բերվել ե շնորհիվ այն մեծ ժողովրդականության, վոր այս անունը գտել ե իբրև Հայոց դարձի պատմության հեղինակի անուն. մինչդեռ այս անունն ել, վոր հունարեն նշանակում ե «բարի ավետարեբ»՝ նույնպես հնարովի չե. չե յեղել այս անունը կրող՝ Տրդատ Թագավորի քառուղար, և Հայոց դարձի պատմությունը խմբագրվել ե հինգերորդ դարի կեսերին։ Նույնպես չեն յեղել Մար-Աբաս և նրա զիրքը։

Կ. Կարապետյանը յուր Բնական պատմության մեջ (առաջին տպ. 1880, յերկրորդ տպ. 1895, Ա. հատ. յեր. 185) շատ արհամարհանքով ե խոսում Մար-Աբաս Մծուրնացու մասին, չի սկզբան պատմության Սեբեոսի անձանոթ վրմն կկցե այլանդակ պատմութիւն մը, կոչելով «Մար-Աբայ փիլիսոփայի Մծուրնացույ մատեան», վոր վորպես թե յԱզաթանգեղոսն դրոշ-

մյալ եր յարծանի հրամանով Տրդատա ի Մծրին հանդեպ դրան ապարանից Սանատրկո, բայց հետո ծածկյալ ընդ ավերակոք, և յևտ ժամանակաց, մինչ ավերակները կրանային սյուներ հանելու ըստ հրամանի Պարսից արքային՝ ըստ դիպաց իմն գտնված եր արծանը, Թե ո՛վ կամ յե՛րը եր Պարսից թագավորն առ վորով գտնվեցավ արծանազրութիւնը, և ո՛վ կամ յե՛րը եր այն, վոր զայս կպատմե և վոր ասե թե զտավ զայն արծանազրություն ի Միջագետս՝ հիշված լեն։ Թե տգետ կամ խաբեբա մարդիկ ժամանակավ կյողեյին այսպիսի սուտեր՝ զարմանալի չե, այն և զարմանալի, զի առ մեծը իսկ ծանր խորհող մարդիկ կթվին հավատա ընծայել հետին դարուց տգետ հեղինակաց անհամ պատմութիւններուն, վորոնց թեթեւ հավատարմություն անգամ ընծայել չե առողջ մտաց։

Դ. Զարհամլլամ — «Հայկական հին դպրության պատմության» մեջ (Բ. տպ. 1836), խոսելով Սերեոսի Պատմության ունրա բովանդակության մասին՝ հետեյալ կարծիքն և հայտնում Ա. և Բ. դպրությունների վերաբերմամբ. «Հայոց Արշակունի թագավորաց և իրենց ատենի Պարթևաց և Հունաց կայսերաց՝ համառոտ ժամանակագրական ցանկ մը կա, ի Մովսեսե Խորենացւոյ և ի Ստեփանոսե Տարոնացւոյ առնված... և ալ ավելի առաջ՝ Հայոց ազգին ի Հայկա սկզբնավորության, և անոր պատերազմին ու իր պայազատաց հիշատակությունը կըլլան հին ու վսեմ վոճո՞վ, վոր վոչ միայն Սերեոսի գրածն չե, այլ թերեւ և վոչ իրեն գրածն ի սկիզբն Պատմության յուրոյ. այլ այն հին և պատմական հատվածքն՝ Ագաթանգեղոսի և Ղազարա Փարպեցւոյ ծանոթ պատմական գրքերն դուրս գրված գործերեն են. նույնպէս և ժամանակագրականքն ալ՝ անհարմար թվականներով՝ հետին և վոչ շատ հմտի գործ են։ Յերկունք ալ անհարազատ սեպելով Սերեոսի՝ քվելորդ կսեպենք հոս քննել զանոսը»։

Բաւագադանը յուր ուսումնասիրության մեջ Պիտոյից գրքի մասին («Ueder das Buch «die Chile», 189¹) մի քանի համոզիչ փաստերով ապացուցանում ե, վոր Հովհաննէս պատմաբան կաթողիկոսի ժամանակ, ուրեմն իննեորդ դարում, Սերեոսի ձեռագրի մեջ դեռ չկար Անանունի նախնական պատմությունը, (այսինքն՝ Ա. և Բ. Դպրությունները)։ (Մառ)։

Ճեւտը յուր հոգվածում Մար-Աբաս Մծուրնացու գրքի մասին՝ կարծիք և հայտնում, թե Խորենացին ինքը չե հնարել Մար Աբասի գիրքը, այլ մշակել և նրան։ Խորենացու ժամանակ ապ-

րելիս և յեղել մի վոմն ասորի հեղինակ, վորի իսկական կամ կեղծ անունը յեղել և Մար-Աբաս, վոր ընակելիս և յեղել Մծբնում։ Նրա գրվածքը... պարունակելիս և յեղել նաև Հայաստանի հնագույն պատմությունը մինչև Արշակունյաց հարստության ծագումը։ Յուր պատմության նյութը, գտնե հայերին վերաբերյալ մասը, Մար-Աբասը հավաքել և ժողովրդական ավանդություններից՝ խորենացու Մար-Աբաս Կատինան և Անանունի Մար-Աբաս Մծուրնացին թուրքի հեղինակներ են. յերկուսն ել ծագում են Մար-Աբասի հնագույն խմբագրությունից, վորից հավասարապես ոգտվել են թե՛, խորենացին և թե՛ Անանունը, յուրաքանչյուրն ըստ յուր ճաշակի։ Մինչդեռ խորենացին յուր ընագիր աղբյուրը մշակելիս նրա մեջ ըստ յուր սովորության մտցրել և բազմաթիւ նորանոր մանրամասնություններ՝ յերկրորդը, Անանունը՝ ընդհակառակը՝ կրճատել և այս յուր աղբյուրը, բայց հավատարիմ մնալով նրան, և դուրս և ձգել ժողովրդական ավանդությունները, վորոնցից լայնաբար ոգտվել և խորենացին» (Խալաթյանց)։

Նոսա՞ր Ռազաճեանցի, յուր հոգվածում «Իմ կարծիք զկրկին հայ թարգմանությանց եկեղեցական պատմության Սոկրատայ Սքոլաստիկոսի» (Հանդ. ամս. 1893) նկատում և հետևյալը. «Յերեսը 27—41 Սեբեոսի՝ (այսինքն Բ. դպրությունը Միհրդատյանի հրատարակության մեջ) ստույգ Սեբեոսի են ըստ իս. Ասի ի վերնագիրն, 27, «Արդ՝ թէ պիտոյ է քեզ, ով ընթերցասէր, երկրորդեցից ի պատմագրացն Մովսիսի խորենացույ և Ստեփանոսի Տարաւնացույ» ալլովքն հանդերձ. Հ. Դ. Ալիշան (1. ծանոթ. 2. հատորոյ Հայկական Սոփեռաց, յեր. 145) ասն՝ թե «Ստեփանոսդ այդ՝ Ասողիկն եւ. այլ յես կարծեմ թե Սոփեռաց հարաւնացի և հիշատակյալն ի Հայկական հին դպրության պատմության Հ. Գար. 2 (արքանայանի) 277, մի յերկրորդ թարգմանչաց, վորպես թվի՝ Հատվածն ի Ստ. Ասողիկ. Ա. Դ. 30—32, «Թագաւորեցոյց զեղրայր իւր զՎաղարշակ ի վերայ աշխարհին Հայոց» մինչև ի կատարած զխոյն յերես 32, առյալ և ի Սեբեոսե, 27—28. «Սա թագաւորեցոյց զեղրայր իւր զՎաղարշակ ի վերայ աշխարհին Հայոց», մինչև շն. յես նորա պայազատը նորին զնոյն ծև արինա (կի)»։ Նաև այլուր Ասողիկ ընդորինակն ի Սեբեոսե ընդաքծակ հատվածս»։

Ա. Յեւ-Միհրդատ Սամունի Անեցու Պատմության հրատարակության (1893) մի ծանոթության մեջ (յեր. 253—254) հերքում և Բ. Պատկանյանի կարծիքը, թե Ա. Բ. դպրությունները

Սերեոսինը չեն։ Նա հետեյայն ե ասում. «Նորա (Պատկանյանի) հիմունքները շատել ընդունելի չեն, վասն զի Սերեոսի բուն պատմության նախնականքի կապակցությունը նախնիքաց գլուխների հետ և գլխակարգությունը ցույց են տալիս, վոր իրավունք յունենք Սերեոսինը չհամարելու այդ կտորներն։ Այլ և Սերեոսը նախնականքի մեջ հիշում ե պարզապես, վոր միայն Հազկերտի յարագործություններն և Վարդանանց պատերազմն հեթ չե ուզում պատմել։ յեթե Սերեոս Հայոց անցյալի մասին ևս վոխնչ պատմելու յիններ՝ պետք ե դորա հետ անպատճառ հիշատակելու Յերկրորդ՝ Ա. Դպրության սկզբում ասում ե հայտնապես. «և զնախնի քաջացն ծնունդակելով դրոշմել վիպասանութիւնս, զիմն յիշատակել զառապելս, և ի նոյն շարագրելով ասացից զառ ի յապայսն եղելոյ, և ցուցից համառօտիւք զարդեաց ժամանակացս զաղետիցս վերաբերության զամս և զաւուրս հինգ թագաւորացն յիշատակելովս, վոր հաստատում ե այդ յերկու հատվածների յուրը լինւ լր... Զորրորդ՝ Թագավորների և կայսրների շարքը հասցնում ե մինչև Իսմայելացոց տերութիւնն, այսինքն այն ժամանակն, վորով վերջացնելու յեր յուր Պատմությունը. Հինգերորդ՝ լեզուն ևս անփոփոխ նույն ե ամբողջ Պատմության մեջ, և այդ արտահայտվում ե մինչև այն, վոր մի քանի գլուխներ հենց սկզբից «Եւ եղև»-ով ե սկսում շարունակաբար։ Այս բոլորը տարակույսների տեղիք չեն տալիս այլ ևս։ Գրքի անունն «Ի Հերակլ» կոչված լինելը վոչ մի հերքման հիմունք չկարն լինել։ Բավական ե հիշել, վոր Թովմա վարդապետն ևս յուր գիրքը կոչում ե Պատմություն տանն Արծրունյաց, բայց պատմում ե Խորենացուն հար և նման։ Նույն իսկ Սերեոս պատմում ե ուրիշ կայսրների գործերն ևս։ Ստեփանոս Տարոնացու անձնավորութիւնն ևս, վոր անդ հիշվում ե, չպետք ե նույնացնենք Ասողկա հետ, վասն զի իրավի հիշվում ե նա իբրև ժամանակակից Խորենացու, վորպես կտեսնենք ստորև»։ «Ստորև», 22-րդ ծանոթություն մեջ (յեր. 281 - 283) Տեր-Միքելյանն արտատպում ե «Արաբատից» հայոց յնպիսկոպոսների հաջորդորթյան կարգը Թադևոս տառայալից սկսած մինչև Գրիգոր Լուսավորիչ, «Գրեալ հանդերձ ժամանակագրութեամբ. և անուն նորին Ստեփանոս Տարոնացի, որ էր աշակերտ սրբոյն Մեսրոպայոյ»։ — (Տեր-Միքելյանի այս դիտողությունները վոչ մի բանասեր չե հիշում. մենք ել նրա հետ ծանօթացանք աս ուշ 1860 թվին՝ յեբ մեր «Սերեոս

պատմութիւնը» վերջացրել էյինք։ Այս դիտողութիւնները մեզ ծանոթացրեց Միաբանը (Գ. Տեր-Մկրտչյանը)։

Առաջին մանրամասն ուսումնասիրութիւնը Ա. դպրութիւնի պատկանում է Ն. Մառնի։ Ֆրանսիացի հայագետ Կարրիերի մի շարք մերկացուցիչ գրվածքների առիթով խորենացու և նրա Պատմութիւն մասին՝ Մառը գրեց յուր հետազոտութիւնը «Անանունի Հայաստանի նախնական պատմութիւն մասին» (О Начальной истории Армении Анонима, Визант. Временник, 1894), վորի մեջ քննում է խորենացու Պատմութիւն աղբյուրների, մատնաւորապէս Մար-Աբասի հարցը, նա սկսում է հակաճառութիւն Կարրիերի հետ, քայց նա մի առ. մի և սխտեմարար լին քննում Կարրիերի այս կամ այն հայացքը, այլ մի սուր նկատողութիւն անելով անցնում է Դաւիթ Ա. Դպրութիւն՝ նա նկատում է. «վաղուց հայտնի լին, վոր Անանունի գործը (այսինքն Ա. դպրութիւնը) վոչ մի կապ չունի Սերետի հետ, իսկ Բ. դպրութիւնը առհասարակ լին զբաղվում։ Անանունի գրվածքը նա գտնում է աղավաղված. նրա կարծիքով պետք էր այդ գրվածքը տնատել, նման Ս. Դրբի տնատութիւն։ Ինքը տնատել է Ա. դպրութիւնը 51 տուն, վորոնցից 36 տուն կազմում են դպրութիւն առաջին մասը, իսկ 37—51 տները՝ յերկրորդ մասը։ Նա գտնում է, վոր Անանունը հայերեն ամենահին պատմական հիշատակարանն է, խորենացին, հինգերորդ դարի հեղինակը, նրանից հետո լին Բաղդատում և Անանունի և Մ. խորենացու ցանկերը Պարթև և Արշակունի թագավորների, գտնում է, վոր խորենացին յուր ցանկը կազմելիս ոգտվել է Անանունի ցանկից։ Նա նույնացնում է Դպրութիւն սկզբում յերկու անգամ հիշված «էինգ թագավորներին»։ Բաքն Տրդատ, վորի հրամանով Ագաթանգեղոս գրել է արծանագրութիւնը՝ նա համարում է վոչ թե քրիստոնեայութիւն ընդունած Տրդատին Գ. դարում, այլ Պարթև Մեծ Արշակին, վոր կրում էր Տրդատ անունը։ «Ագաթանգեղոս» անունը նա համարում է մտացածին, վոր կարող էր արծանագրութիւն հեղինակ ընդունվել շնորհիվ այն հեղինակութիւն, վոր վայելում էր Հայոց դարծի Պատմութիւնը գրող Ագաթանգեղոսը. կամ ընդհակառակը, Հայոց դարծի պատմութիւն վրա Ագաթանգեղոս անունը դրված է՝ շնորհիվ արծանագրութիւն Ագաթանգեղոսին։ «Ժամանակագիրը», վորին հիշում է Անանունը՝ ըստ Մառի հենց այս Ագաթանգեղոսն է։ Ի միջի այլոց նա յերրայական և ասորական

արմատներից և բացատրում Արմավիր (Ա. դպրության մեջ՝ Արամայիր), Արարադ, Կադմոս անունները:

Խորենացու Մար-Արաս Կատինա և Անանունի Մար-Սքաս Մծուրնացի աղբյուրների հարաբերության մասին՝ բերենք ամբողջապես նրա յեզրակացությունը.—

1. Հայաստանի նախնական պատմության վերաբերյալ ամենահին հիշատակարանը հայերեն լեզվով, վոր հասել է մեր ձեռքը՝ Անանունի գործն է, վոր հիմնված է մասամբ առասպելների վրա, ինչպես խոստովանում է ինքը հեղինակը, և մասամբ՝ անվավերական (апокрифический) ծագում ունեցող՝ Հինգ քաղաքների Պատմության վրա, վորովհետև ընդունելով հեղինակի հետ, վոր նա այս պատմությունը գտել է Միջագետքում ասորի փիլիսոփայի աշակերտների մոտ՝ չենք կարող չնկատել, վոր արձանագրության գլուտն ավերակների մեջ՝ յուր մանրամասնություններով կրում է ապոկրիֆներին հատուկ գծեր. (հմմտ. նգրաս Զ, գլ. 2. 1—2, Բ. գլ. 2. 23), և նույն իսկ Ազաթանգեղոս անունը կարելի չէ մտածածին է:

2. Այս անվավերական Ազաթանգեղոսին կարելի չէ մերձեցնել Հայոց Պարծի պատմության հեղինակ համարված Ազաթանգեղոսի հետ միայն այն դեպքում, յեթև ընդունենք, վոր Հայոց դարծի պատմությունն սկզբում չէ կրել հեղինակի անուն և միայն հետո յե նա վերագրել Ազաթանգեղոսին թյուրիմացությամբ՝ ինչպես վերը բացատրեցինք. (այսինքն՝ արձանագրության մեջ հիշված է, վոր Ազաթանգեղոսը գրել է հրամանաւ քաջին Տրդատայ, այս Տրդատին նույնացնելով քրիստոնեյություն ընդունած Տրդատի հետ՝ բնականապես Ազաթանգեղոսին ել վերագրել են նրա քրիստոնեյություն ընդունելու պատմությունը):

3. Անանունի գրվածքի մեջ ակնարկ անգամ չկա հայրենասիրական տրամադրության, չե նկատվում անմիջական ծանոթություն հունական գրականության հետ, վոր պատմագիր Խորենացու խանդավառ և բացառիկ յերկրպագության առարկան է: Անանունի մթնոլորտը՝ Ս. Գրքի ավանդություններն են և ասորական իմաստությունն ու գիտությունը: Մի խոսքով՝ նրա պատմությունն արդյունք է ասորա-քրիստոնեական կուլտուրայի տիրապետության ժամանակի Հայաստանում, վոր շատ լավ զուգադիրպում է այն ժամանակին, վոր վորոշվում է թագավորների ցանկի վերջին անուններով, այսինքն չորրորդ դարի վերջին և հինգերորդ դարի սկզբին:

4. Հետագայում Անանունի աշխատությունից ոգտվել է մի ուրիշ անծանոթ հեղինակ, վոր Ազաթանգեղոսի (Մար-Սրասի) պատմական արձանագրության հետ վերցնելով նաև մի քանի քան Անանունի հավելվածներից և յուրատեսակ մշակելով յուր աղբյուրի մեջ գտնված մանրամասնությունները՝ այս կերպ մշակված Անանունի ամբողջ աշխատությունը հրապարակ հանեց ասորի իմաստասեր Մարարայի կամ Մարարասի անունով, և սրանով ընկավ կոպիտ հակասության մեջ, վորովհետև այն պատմության մեջ, վոր հորինվել է Առաջին Արշակունու առաջարկությամբ, հիշատակվում է նաև նրա մահը և նկարագրվում են նրան հաջորդող Արշակի թագավորությունը Այս հիշատակարանը (կեղծ Մարարա) մեր ձեռքը չե հասել առանձին:

5. Մ. Խորենացին, վոր ծանոթ եր յերկու խմբագրություններին ել՝ նախապատվություն տվեց Անանունի աշխատության ավելի ընդհանրացած և մանրամասն մշակած խրմբագրության, վոր նրա ժամանակ ճանաչված եր իբրև Մար-Արասի աշխատությունը, և նրան ամբողջապես մուծեց յուր Մեծ Հայոց պատմության մեջ, յուր կողմից ևս մի քանի հավելվածներով: Այս աղբյուրը գրավում է Խորենացու Պատմության Առաջին գիրքը, սկսած Ը. գլխից, և յերկրորդ գրքի առաջին իննը գլուխները:

Այս յեզրակացությունները բերելուց հետո, Մառը մի հետաքրքրական խոստովանություն և անում. «Զմոռանանք վոր Անանունի ներածության ըուն սկզբում պարզ արտահայտված խոստումը մնացել է անկատար. փաստերի պակասության պատճառով դժվար ե վորոշակի ասել, թե ինչից ե առաջ յեկել Անանունի աշխատության մեջ քաջակայությունը ժամանակակից աղետների նկարագրության, արդյոք նրանից, վոր մեզ հասած ձեռագիրները թերի յեն, թե՞ նրանից, վոր նա յուր խոստումը չե կատարել»:

Անանունի այս «կորած» կամ «չգրած» հատվածը վորոշելիս՝ Մառը նկատում ե, վոր նրա Պատմությունը ձեռագիրների մեջ գետնգլված ե Սեբեոսի «Հերակլի արշավանքների» Պատմության սկզբում, թեպետ Անանունի պատմությունը վոյ մի կապ չունի (не представляет ничего общего) Սեբեոսի պատմության հետ, բայց արտագրողներն ըստ յերևույթին զգացել են, վոր նա (Անանունի պատմությունը) մասն ե կազմում, ներածական մասն, մի ինչ-վոր պատմական գրվածքի:

Վորոնեյով այս պատմական գրվածքը, վորի ներածութիւնն և յեղել Անանունը՝ Մառը ուշադրութիւն և դարձնում Փափստոս Բյուզանդացու վրա, վորի Պատմութիւնն սկսվում և յերրորդ դարութիւնամբ Մառը ուշադրութիւն և դարձնում Փափստոսի խոստարանության հետևյալ խոսքերի վրա. (ըբրում ենք համառոտած). Թադեոս առաքյալի քարոզութիւնից մինչև Գրիգոր Լուսավորի վախճանելը և առաքելասպան Սանատրուկից մինչև Տրդատի ակամա հնազանդելը (քրիստոնեական) կրոնին ու նրա մասը... ուրիշներից արդեն նկարագրված են, Բայց մենք ել զանց չարինք մեր պատմութիւն մեջ, այլ վորք ի շատե հիշատակեցինք՝ անցքերի մեջ կապ պահպանելու համար, վորովհետև մեր պատմութիւնը մասամբ առաջից և և մասամբ վերջից, իսկ ինչ վոր միջին յեղավ՝ այն ուրիշներից պատմվեց։ Սրանից Մառը յեզրակացնում է, թե Փափստոսը զբաժ և յեղել Հայաստանի նախնական և նորագույն՝ այսինքն իրան ժամանակակից պատմութիւնները, իսկ միջին պատմութիւնը—(Թադեոս առաքյալի և Գրիգոր Լուսավորի) միայն հիշատակում եւ—Սակայն Փափստոսի մեզ հասած ընազրում, վոր սկսվում և յերրորդ դարութիւնամբ, ի՞նչ մի նախնական պատմութիւն լկա։ Ակամայից միտք և ծագում մերծեցնել Անանունին, վոր խոստանում և զրել իրան ժամանակակից պատմութիւնը, վոր սակայն լկա՝ Փափստոսի հետ, վոր խոստանում և զրել նախնական պատմութիւնը, վոր նույնպես լկա։

Բացի սրանից՝ Մառը գտնում և ուրիշ մերծեցման կետեր ևս Անանունի և Փափստոսի մեջ։ Վերջինս ասում է, թե յուր գիրքը պարունակում է «Ժամանակագիր կանոններ», այն ինչ նրա պատմութիւն մեջ լկան սրանք. ընդհակառակն՝ Անանունի վերջում դրված և ժամանակագրութիւն, վոր հասնում է մինչև Պապը, այսինքն մոտավորապես այն ժամանակը, վորով վերջացնում է Փափստոսը յուր Պատմութիւնը։ Բացի սրանից՝ թե՛ Անանունը և թե՛ Փափստոսը անքի յեն ընկնում հայ հեղինակների մեջ՝ Ս. Դրբի վրեով գրելու սովորութիւնամբ, ժողովրդական դարձվածքների զործածութիւնամբ, լեզվի բնական պարզութիւնամբ, առասպելներ մուծելով պատմութիւն մեջ և ազգայնութիւն վառ զգացմունքի բացակայութիւնամբ։ Վերջապես թե՛ Անանունը և թե՛ Փափստոսը հայ զրականութիւն հունասիրական շրջանում հալասարապես արհամարհված եյին. նրանց համարում եյին տգետ, անբարեխիղճ հեղինակներ։ «Թեթե սակայն, յեզրակաց-

նում և Ռադը. հետագա հետազոտութիւններէց յերևաց, վոր Անանուն և Փապստոսը տարբեր անձնավորութիւններ են, այնու ամենայնիվ անկարելի չէ նրանց բոլորովին անջատել իրարուց»:

Հաջորդ ընդարձակ ուսումնասիրութիւնը, դարձյալ Ա. Դպրութեան մասին, պատկանում է Ն. Խալաթյանցիին. (Армянский эпос в Истории Армении М. Хоренского, 1896. «Аноним как поздний анокриф, յեր. 58—105): Սկզբից և յետ հինակը հայտնում է, թէ յերկրորդ դպրութիւնը, վոր պարունակում է սինխրոնիկ ցանկեր՝ հորինված է տասներորդ դարից վոյ առաջ, ինչպես ցույց են տալիս նրա վերնագիրը և սկիզբը, վորոնք կրում են հետքեր Քորենացուց և Ստ. Ասողիկից (ԺԱ. դար): «Այս դպրութիւնը, հայտնում է խալաթյանց, մենք քննութեան չենք յենթարկում, Մեզ համար կարևոր է Առաջին դպրութիւնը, վոր պարունակում է Հայոց Նախնական պատմութիւնը մինչև Արշակունիների յերևան գալը»:

Այնուհետև հեղինակը բերում է Ա. դպրութեան բովանդակութիւնը բավական մանրամասն, (թեև վոյ բավական ճիշտ՝ սկզբում քաց թողնելով «ներկա աղետալի ժամանակները» կարևոր խոսքը), հիշում է այն բանասերներին, վորոնք զբաղվել են այս դպրութեամբ, և բերում է նրանց կարծիքները համառոտ, (վորոնցից մի բանիսից մենք ոգտվեցինք), ամբողջապես բերում է Ն. Մառի յեզրակացութեան հինգ կետերը (տե՛ս վերը, յեր. 27) և ապա ղիմում է Ա. Դպրութեան քննութեան:

Քննութիւնը բաժանում է հինգ հոդվածի. 1. Ի՞նչ բան և այդ անանուն Դպրութիւնը (отрывок), և ի՞նչ աղբյուրներից է կազմվել. 2. Ի՞նչ է յեղել այդ դպրութիւնը հորինողի նպատակը. 3. Ինչո՞ւ դպրութիւնը կցված է հատկապես Սերեոսի Պատմութեան, ինչպես նրա սկիզբը. 4. Թե՞րբ և զրկված այդ դպրութիւնը. 5. Ի՞նչ դրութեամբ է մեզ հասել դպրութիւնը:

Առաջին հոդվածի սկզբում հեղինակն ասում է. «Այս դպրութեան ընագրի մանրամասն վերլուծութեամբ յես յեկա այս յեզրակացութեան, վոր նա ապշեցուցիչ (поразительный) նմանութիւն ունի ամենից առաջ և ամենից շատ Սերեոսի Պատմութեան հետ, վորի հետ նա կցված է նաև մերենայորեն: Այս նմանութիւնը, վոր տեղ-տեղ հասնում է նույնութեան՝ նկատվում է յերկու զրկվածքների վոճի և պատմելու յեղանակի մեջ, լեզվի և մի բանի կիրառութիւնների մեջ, վոյ միայն բերակա-

նության, շարադրության և բառամթերքի կողմից, այլ և միայն յերկուսի մեջ նկատվող՝ ինքնահատուկ աշխարհագրական և ազգադրական անունները»:

Այնուհետև բերում և մի ընդարձակ շարք բառերի, դարձվածքների, աշխարհագրական և ազգագրական անունների Ա. Դպրությունից, յուրաքանչյուրի դեմ ղնելով նույն բառերը, դարձվածքներն ու անունները Սեբեոսի Պատմությունից, վոր միանգամայն արդարացնում և նրա մատնանշած նմանությունը, նույն իսկ նույնությունը յերկու գրվածքների մեջ, — Յույց և Կալիս դարձյալ, վոր Ա. դպրության և Սեբեոսի Պատմության մեջ միշտ նույն սահմաններն են նշանակված հին Հայաստանի, յերկուսի մեջ ևլ ճեղհնակները, խոստովանելով իրանց անկարողութիւնը՝ ցույց են տալիս աղբյուրներ՝ վորոնցից պիտի ոգտվին. Ա. Դպրության մեջ՝ «անդր հայելով ի մատնանն Մարաբայ փիլիսոփայի», պատմության մեջ, վերջում՝ «անդր հայելով ի կարգս ուսումնասիրացն»: Բացի այս արտաքին կապերից՝ յերկուսի մեջ կա և ներքին կապ. Այս բոլորը ցույց են տալիս Սեբեոսի Պատմության ազդեցությունը Ա. Դպրության վրա. Հակառակն յննթադրել անկարելի յե:

Դպրության յերկրորդ աղբյուր Խալաթյանցը համարում և Ս. Գրրբը. Նա ցույց և տալիս, ինչպես Անանունը Ս. Գրբի հետևողությամբ և զրեթե նրա բառերով բերում և Հայոց հին նահապետների անուններն. «և ծնաւ Արամնակ ուստերս և զըստերս ըագումս, յորոց անդրանիկն Արամայիս: Եւ ծնաւ Արամայիս ուստերս և զստերս ըագումս, յորոց անդրանիկն Ամասիա» և այլն, կամ «մեռաւ և Արամայիս, և կալաւ զերկիրն նոցա Ամասիա...»: «Մեռաւ Գեղամ և տիրեաց որդի նորա Հարմա» և այլն: Ս. Գրրբից և վերցնում տեղեկությունը՝ Աբրահամի հարճի Մարտակի փախստյան մասին Դամասկոսից: Նույն Ս. Գրրբից և առնված Արաբադ յերկրի անունը, ուր առաջին անգամ յեկավ Հայկը Բաբելոնից: Հեղինակը Ս. Գրբի ազդեցության յե վերագրում Հայոց հին նահապետների մեծ մասի անունների ստեղծումը, այսպես՝ նա Ս. Գրբի զանազան անունների հետ համեմատում և հին Հայոց նահապետների հետևյալ անունները — Հայկ (առասպելական աղեղնավոր Հայկի անունը վերցրած և իբրեւ նախահայր հայերի. նրա պատերազմը Բելի հետ՝ ներշնչված և Յերեմիա մարգարեյի մի ակնարկությամբ, (զլ. Ծ. ԾԱ.) Կադմոս, Արամայիս (Եվսեբիոսի Ժամանակագրությունից), Ամա-

սիա, Գեղամ, Հարմայ, Արամ, Արա, Մասիս (լեռք), Արմոդ, Բագրատ, Իսկ Պարսկական լեզվի ազդեցության տակ են հորինված անուններս—Սարհանգ, Շավաշ, Փառնավազ, Բագրատի Անգեղ կոչվելը բարբառոսների կողմից՝ ազդված է Ս. Գրքից (Դ. Թագ. գ. ԺԷ, 30)։

Յերրորդ աղբյուրը Ա. Դպրության խալաթյանը համարում է նվաճեցիկոս Կեսարացու ժամանակագրությունը։ Դպրության մի հինգերորդ մասը, Պարթևների ապստամբությունը Մակեդոնացիներից մինչև Անտիոքիոսի սպանվելը Բաքելոնում Արշակից՝ քաղվածաբար առնված է ժամանակագրությունից, յերեսմի բառացի նույնությամբ, ըստ հայերեն թարգմանության, ինչպես յերևում է հիշյալ ամբողջ հատվածի զուգադրությունից նվաճեցիկոսի ժամանակագրության հայերեն թարգմանության հետ։ (Այստեղ հեղինակը սրամիտ կերպով բացատրում է Ա. Դպրության մեջ Արշակին տրված 130 տարի կյանքը, վոր հետևանք է նվաճեցիկոսի բնագրի սխալ հասկացողության)։

Բացի այս յերեք զխավոր աղբյուրներից, խալաթյանցը ցույց է տալիս նաև մի քանի ռժանդակ աղբյուրներ. — Ագաթանգեղոս, վորից գիտե Տրդատ թագավորի անունը և «Փառական դաշտ որսոց և արշաւանաց նոցին»։ Ագաթանգեղոսի անունը՝ իբրև Տրդատի քարտուղարի, վորի հրամանով նա գրել է Դարծի պատմությունը և Մծբինի արծանագրությունը. աշտարակադինության ժամանակ լեզուների խառնակումը։—Ապա Փավստոս Բյուզանդացի, վորից Անանունը գիտե Սանատրուկ թագավորի շինած Մծուրք քաղաքը և հավատալիքը արալեզների մասին, Բելի սպանության նկարագրությունը, Բագրատի յուր աղջկը կնության տալը Վաղարշակին (նմանությամբ Փավստոսի հիշած՝ Արշակի ամուսնության Մանուել սպարապետի աղբկան հետ)։ Եղիշե, վորից Անանունը վերցրել է Արմավիր բերդի անունը, «արծանն մսեղէն» արտահայտությունը, «խարսխել», «վերաբերութիւն» և այլն բառերը. —Յոհան Իմաստասէր Ոձնեցի, (ութեցորդ դարի հեղինակ), վորից Անանունը վերցրել է Բելի «Տխտանյան» մակդիրը, «զիւրն վոյ ծանալէք ընութիւն», «ետ երկիր պագաննել իբրև աստուծոյ» դարձվածքնսը, «աստուածաւրէն» բառը։

Այնուհետև հեղինակը զբաղվում է դպրության մեջ բերված Պարթևների և հայ Արշակունի թագավորների ջանկերով,

Պարթևների ցանկում բերված են տասներկու անուն միայն, իրականից յերեք անգամ պակաս. բայց նրանց թագավորության տևողությունը հաշված ե 576 տարի՝ իրականից 100 տարով ավելի՝ Տասներկու թագավորների մեջ միայն յերկուսն են պահպանական, մյուսները պարսկական են։ Այս տասներկու անուններից տասն և մեկը պատահում են Ս. Գրքում, Եվսեբիոսի մոտ, Ագաթանգեղոսում։ Հայ Արշակունիների անունները նույնպես Անանունը հավաքել ե զանազան աղբյուրներից—Եվսեբիոս, Ագաթանգեղոս, Փավստոս, Լարուբնա, Եզնիկ, Կորիւն, վորոնց զրվածքների հետ ել համեմատում ե Անանունի բերած անունները յուր աշխատության յերկրորդ մասում. (Матеріалы)։

Յաջորդ հոգվածներում հալաթյանցը կարծիք ե հայտնում, թե Անանուն հեղինակի նպատակն ե յեղել փառավորել Բագրատունիներին, ցույց տալ նրանց հինավուրց ծագումը դեռ Նաբուգոդոնոսորի ժամանակներից, նրանց բարձր դիրքն ու վայելած պատիվը Հայկազյան և Արշակունյաց հարստությունների ժամանակ, յերբ դեռ ուրիշ նախադարձությունների հիշատակն անգամ չկար։ Հիշելով Բագրատունիների կալվածները, մեծամեծ իրավունքները, նույն իսկ ասելով՝ կոչվելը, թագավորի հետ խնամանալը*), Անանունը նպատակ ե ունեցել ցույց տալ, վոր Արշակունյաց հարստության բարձումից հետո Հայաստանի թագի վրա ամենից շատ իրավունք ունին Բագրատունիները՝ իբրև Արշակունյաց ազգականներ։ Բագրատունիները իրանց հզորության շրջանում կարիք են զգացել, իրանց ապագա փառասիրական ծգտումները հիմնավորելու համար, ցույց տալ վավերական դոկումենտներով իրանց հին բարձր ծագումը. այսպիսի վավերական անկասկածելի դոկումենտ կարող եր համարվել՝ Տրդատի քարտուղար Ագաթանգեղոսի ծեռքով զրված արձանագրությունը Սանատրուկի պալատի առաջ, վոր դուրս ե յակել փլատակների տակից։ Այս դոկումենտը կարելի յե համարվել կցել հատկապես Սեբեոսի Պատմությանը, իբրև նրա սկիզբը, քանի վոր Սեբեոսի Պատմությունն ել Բագրատունյաց պատմությունն ե։ Այս կերպով Անանունի զրվածքը, առանց հեղինակի անվան, կցվել ե Սեբեոսի Պատմության իբրև նրա լրացում։ Իբրև ջոկ՝ առանձին զրվածք՝ նա գոյություն յե ունեցել։ Ուրեմն Անանունը վոչ միայն

*) Նախաթյանցը չե նկատել վոր ըստ Անանունի՝ Պարթև Վաղարշակի մեծ զորքով Հայաստան մտնելիս՝ Բագրատը յեղել ե թագապետ. «Պատկերացա ի Թագ հայրենի խոսքն ուրիշ բան չե նշանակուս։

արտաքինով—բառերով, վոճով, այլ և ներքինով—քնդհանուր գիտավորութեամբ—կապված և Սեբեոսի հետ:

Զորքորդ հողավածում հալաթիանցը քննում և Անանունի գրութեան ժամանակը: Մի կողմից նա նկատում և, վոր Անանունի մեջ հիլիկիան հիշված և իրրև Պարթևներից գրավված յերկիր. իսկ Պարթևները հիլիկիային յերբեր չեն տիրացել. այս բանը պատահել և կարճ ժամանակով, Սասանյանների ժամանակ, խոսքով Անուշրուվանի (531—578) և խոսքով Ապրուեզի (590—627) որերով: Մյուս կողմից նա յնթադրում և, վոր Անանունը ոգտվել և Յոհան Ոճնեցու գրվածքից, վոր կաթողիկոս և յեղել 729—739 թվականներին: Յերրորդ կողմից՝ հայտնի չև, վոր Բուսա Արծրունին, վոր ապրում եր Բ. դարի վերջերին, ոգտվել և Անանունից: Այս թվական տվյալների հիման վրա, (վորոնցից Յոհան Ոճնեցուն վերաբերյալը չափազանց թույլ և և անհամոզիչ) հալաթիանցը յեզրակացնում և, վոր Անանունի գրվածքի հորինումը պետք և ղենել ութերորդ դարի կեսերից մինչև իններորդ դարի վերջը:

Վերջին հողավածում հալաթիանցը քննում և, թե ինչ դրութեամբ հասել և մեզ Անանունի գրվածքը: Նա համաձայն չև բանասերների հայտնած կարծիքներին, թե այս դպրութիւնն աղանաղված և, ունի թերի տեղեր և կրում և մի քանի հեղինակների՝ Մարաբաս Մծուրնացու, Ազաթանզեղոսի և մի յերրորդ անծի մասնակցութեան հետքեր: Բացի սկզբի յերկու տողից և աշտարակաշինութեան վերաբերյալ հատվածից, վորոնք մութ են գրիչների աղավաղութեան պատճառով մնացած ամբողջ հատվածը գերծ և աղճատումներից և դյուրահասկանալի: Թերի տեղեր նույնպես չև նկատում: Ն. Մառի ցուցումը, թե Դպրութեան մեջ պակասում են Մասյակի յերեք վորդիներից յերկուսի անունները՝ նա անհիմն և զտնում: Նրա կարծիքով այդ յերկու վորդիքը՝ Փառոխոն ու Փառականն են, վորոնց անուններով կոչվել են տեղերը: Նույնպես չև ընդունում մի քանի անծերի մասնակցութեանը Դպրութեան հորինման մեջ, վորին հակառակ են յեզվի աղտահայտութեան միութեանն ամբողջ հատվածում և միևնույն աղբյուրների գործադրութիւնը: Իսկ հիշատակութիւնն ասորի Մարաբաս փիլիսոփայի, առաջին հայ պատմագիր Ազաթանզեղոսի, առաջին քրիստոնյա թագավոր Տրդատի, և սրա հետ՝ հռչակավոր արծանագրութեան գյուտն արքայական սլալատի ավերակներում—սրանք թուրք հատուկ գծեր են անանուն,

անվավերական ապոկրիֆներէց շատերի, վորոնց նպատակն ե՛-
վավերականութիւն ընծայել տնդենցիոզ և մտացածին հիշա-
տակարանին:

Դպրութեան քննութիւնը վերջացնելուց հետո Խալաթյան-
ցը աշխատում և գտնել կապ Դպրութեան և Խորենացու Պատ-
մութեան մեջ: Նա համոզված և կարրիերի հետ, թե Խորենացին
ապրել և ութերորդ դարի վերջերում, նույն իսկ իններորդի սկզբը-
ներում, ուրեմն և նա կարող եր ծանոթ լինել Դպրութեանը:
Վոր նա իրոք ծանոթ և յեղել՝ պարզ երևում և Խորենացու մի
հատվածից. «Քանզի ասելն ոմանց անհաւաստի մարդոց... ի
Հայկայ զթագադիր ազգո Բագրատունեաց լինել Վասն որոյ
ասեմ, մի այսպիսեաց յիմար բանից հաւանիր, զի և ոչ մի շա-
ւիղ կամ ցուցումն գոյ նմանութեան յասացեալսդ՝ որ զարդա-
րութիւն ակնարկէ. զի ի բայ բանից և անոն իմն յաղագս Հայ-
կայ և նմանեացն կակազէ» (Ա. գիրք, գլ. ԻԲ): Այս խոսքերը,
Խալաթյանցի կարծիքով, կարող են վերաբերվել միայն և միայն
Ա. Դպրութեան, վորովհետև ուրիշ վոչ մի հեղինակի լեն հար-
մարում նրանք, և միայն Անանունի գրվածքն և, վորի մեջ Բագ-
րատունյաց ծագումը Հայկի սերունդից և նշանակված: Սակայն
Խորենացին չնայելով այս արհամարհանքին՝ լե մերժում Անա-
նունի գրվածքը. նա նրանից ոգտվել և իբրև սքեմայից, զար-
գացրել, ընդարձակել և և նրա վրա յե հիմնել յուր հայրենիքի
նախնական պատմութիւնը: Խալաթյանցը այս մտքով և հաս-
կանում Գուտշմիտի շատ «սրամիտ դիտողութիւնը», թե Ա.
Դպրութիւնը Խորենացու առաջին ուղագիծն և յեղել: Բայց
Խալաթյանցը առանձին դժվարութիւն չե գտնում հենց ուղ-
ղակի իմաստով ել ընդունել Գուտշմիտի կարծիքը, թե այդ
Դպրութիւնը պատկանում և Խորենացու գրչին, իբրև նախնա-
կան ուրվագիծ յուր Պատմութեան: Հոգուտ այս յենթադու-
թեան նա յատնանիչ և լինում, վոր Ա. Դպրութեան հորինումը
և Խորենացին ժամանակակից են, միևնույն քնորոշ սովորու-
թիւններով ու գիտավորութիւններով:

Մառի և Խալաթյանցի վերոհիշյալ ուսումնասիրութիւն-
ներին հաջորդեց մեր աշխատութիւնը՝ «Սեբեոսի Պատմարկունը
չեւ Մովսէս Խորենացի» վերնագրով, Թիֆլիս, 1899, վորին առիթ
տվին մի կողմից կարրիերի մերկացուցիչ հոգվածները, վորոն-
ցով Խորենացու ժամանակը իջեցնվում և մինչև Ը—Թ դար, և
մյուս կողմից հիշյալ յերկու ուսումնասիրութիւնները, վորոնք,

մեր կարծիքով, սխալ ելին ըմբռնել ու բացատրել Ա. Դպրությունը և իսպառ ալքաթող ելին արել Բ. Դպրությունը, Մեր աշխատության մեջ «Մենք ուսումնասիրել ենք Սերեոսի Պատմության սկզբում դրված՝ իբրեւ անծանոթ հեղինակների գրվածքներ նանայված յերկու Դպրությունները, և ցույց ենք տվել, վոր դրանք անտարակույս Սերեոսին են պատկանում, իբրեւ նրա Պատմության անբաժան, համերաշխ և անհրաժեշտ մասերը»:

Մեր բնության մեջ նախ բերել ենք Ա. և Բ. դպրությունների բովանդակությունը, ապա զանազան բանասերների կարծիքներն այս դպրությունների մասին: Այստեղ մասնավորապես քննության ենք յենթարկել Պատկանյանի այն կարծիքները, վորոնց հիման վրա այս դպրություններն անբաժանույն են Սերեոսի Պատմությունից, իբրեւ նրա հետ վոյ մի կապ չունեցող հատկածներ (Տես վերը յեր. ԺԵ—ԺԹ), Այս կարծիքների վերաբերմամբ, մենք ասել ենք.—

1. «Յեթե Ա. Դպրությունը Սերեոսի գործ չհամարենք այն հիման վրա, վոր նա վոյ մի կապ չունի Հերակլ կայսեր շրջանի հետ, վորի պատմությունն և գրում Սերեոս՝ պետք է, հետեւողաբար վարվելով, Սերեոսինը ջամարենք նաև նրա բուն Պատմության գոնե Ա. և Բ. գլուխները, վորոնք պարզունակում են հիշատակություն Հայաստան յեկող զանազան մարզպանների ու նրանց կռիվների և Պարսկաստանի անցքերի՝ նախ բան Հերակլյան շրջանը, Հերակլ կայսրը Սերեոսի Պատմության մեջ հանդես և զայիս ԻԱ գլխում և վերջանում է 1. գլխով. բնդամենը տասը գլխի մեջ. մյուս 28 գլուխները (ներկա հրատարակությամբ՝ 40 գլուխները) Հերակլից առաջ և հետո կատարված բաներ են, շատ անգամ այնպիսի բաներ, վորոնք ամենակին կապ չունին քաղաքական պատմության հետ, ուրեմն նույնպես պետք է անհարազատ համարվելին: Տեսնում ենք ուրեմն, վոր չի կարելի գրքի վերնագիրը («Պատմութիւն ի Հերակլին») նեղ մտքով հասկանալ և անհարազատ համարել այն՝ վոր Հերակլի շրջանի հետ կապ չունի*): Մենք հետո կտեսնենք, վոր

* Սերեոսի ձեռագիրներն ուսումնասիրությունից հետո, վոր կատարեցինք իբրև նախնադարաստեղծան աշխատանք, ներկա Հրատարակության՝ կապով ենք ավելացնել այն ամենակարևոր փոփոխությունները, վոր Սերեոսի Պատմությունը չէ նրել վերնագիրը «Պատմութիւն ի Հերակլին»: Այս վերնագիրը գրել է Յ. Շահաբադյանը, ինչպես վկայում է ակադեմիկոս Բրասին, վորի վկայությունը մեջ է բերում ինքը՝ Պատկանյանը և ուսերեն թարգմանության տալիքանում:

Ա. դպրութիւններ անհրաժեշտ կապ ունի Սերետսի Պատմութեան հետ:

2. Բուն Պատմութեան սկզբում զրկած նախնորգանքում Սերետսը չն ասում, թե «ինքը լաիտի խոսի վաղեմի ժամանակների մասին, վորովհետեւ այս բոլորը պատմված ե ուրիշներից»: Նա համառոտիվ հիշելով, վոր Արշակունյաց բարձումից հետո Սասանյանները խորհուրդ հղացան քրիստոնեայութիւնը վերացնել Հայաստանից՝ շարունակում ե. «Արդ զժամանակս Թագաւորութեան յարազործին Յազկերտի, և թէ ո՞րպէս նա կամէր զաստուածային եղածնել կարգա, և կամ ո՞րպէս քաջ նախարարացն Հայոց և... նահապետն Մամիկոնէից տանն Կարմիրն կոչեցեալ Վարդան... զինեցան ի պատերազմս... եւ կամ ո՞րպէս... սուրբ վկայքն Գրիգորոսի կատարեղին զնահատակութիւնս իւրեանց... մերձ ի Նիշապուրս քաղաքի... այն ամենայն ի ձեռն այլոց գրեցաւ, որպէս ցուցանէ Տայն Իսկ պատմութիւնն»:

Ուրեմն խոսքն այստեղ միայն Վարդանանց ժամանակի մասին ե, վորը մանրամասն պատմել Սերետսը զանց ե անում՝ քանի վոր Յեղիշեն («նույն Իսկ պատմութիւնն») արդեն գրել ե Վաղեմի ժամանակների մասին ակնարկութիւն անգամ չկա այս խոսքերում: — Մենք հետո կտեսնենք, վոր այս խոսքերն ապացուցանում են Ա. եւ Բ. դպրութիւնների վավերականութիւնը:

3. «Բ. Դպրութեան վերնագրում հիշված Ստեփանոս Տարոնացին կարող ե և չինել Ասողիկը, Հիրավի, այս դպրութեան սկիզբը, մինչև «և յետ նորա պայազատք նորին զնոյն ձև աւրինա (կի)», մի յերեսից պակաս քան՝ կա, մի քանի հավելվածներով, և Ասողիկի մէջ (տպ. Ս. Պետերբուրգ, յեր. 29—32). բայց փոխ առնողը կարող ե լինել և Ասողիկը, վոր ուրիշ տեղերում ել տասնյակ յերեսներով արտագրում ե Սեբեոսից. մնացած 9 յերեսից ավելի նյութը վոչ մի կերպով չն կարող քաղված լինել վոչ Ասողիկից, վոչ Խորենացուց և վոչ ել յերկուսից միասին, այլ ենթագրում ե ուրիշ աղբյուր—մեզ անծանօթ Ստ. Տարոնացուն—վոչ Ասողիկին: Իսկ վոր Ստեփանոս Տարոնացին, բացի այս վերնագրից, ուրիշ ճեղհնակների մօտ հիշված չե՝ սա բավական հիմք չն նրա գոյութիւնը մերժելու: Ունեցել ենք և ուրիշ ճեղհնակներ, վորոնք նույնպէս մի կամ յերկու անգամ են հիշված հետագա ճեղհնակներից, ինչպէս Բեռզորոս Բերթոյ, Աբրահամ Խոստովանոյ և այլն:—Մենք հետո կտեսնենք, վոր Ստեփանոս Տարոնացին—վոչ Ասողիկը, հիշված կա և ուրիշ տեղ:

4. «Տարորինակ կլինեն յենթադրել, վոր այս յերկու դպրությունները, վորոնցից յիւրաքանչյուրն առանձին վերցրած, իբրեւ անկախ գործ, անխորհուրդ աշխատությունն ե՛ր պատահաբար յերկուսն ել կցվելին Սերեոսի Պատմության սկզբին, նախ Ա. Դրպությունը կցվեր և ապա, մի քանի հարիւր տարի վրան անցնելուց հետո, կցվեր Բ. Դպրությունը, այն ել Ա. Դպրության և Սերեոսի Պատմության մեջ, և ապա այնուհետև այս յերկու անհարազատ հավելվածներն ընդունելուց հետո ամբողջ գրվածքը բաժանվեր գլուխների»։ յեր. (12—16)։

Շարունակության մեջ մենք բնեւ նոր Գուտշմիտի և Խալաթյանցի կարծիքները, և ցույց տվել, թե նրանք հիմնավոր չեն.—

5. «Գուտշմիտի նկատած ակնհայտին նմանությունը և դիտաւորյալ շեղումի կերպարանք ունեցող տարբերությունները Ա. Դպրության և Խորենացու Պատմության մեջ՝ կարող ելին առաջ գալ և այն դեպքում՝ յեթե թե՛ Խորենացին և թե՛ Ա. Դպրության հեղինակը միմյանցից անկախ կերպով ոգտված լինելին հասարակաց աղբյուրից, Մար-Աբասյան պատմությունից, և յուրաքանչյուրը նրան մշակած ըստ յուր ճաշակի և հայացքների, ինչպես իրավամբ յենթադրում ե Ն. Մառը Այս դեպքում՝ առաջին դեմքով խոսող անժանոթը կարող եր լինել և Սերեոսը։ Իսկ վոր Խորենացին չե այս դպրության հեղինակը՝ արդեն ցույց ե տրված ուրիշներից»։

6. Գ. Խալաթյանցի կարծիքների նկատմամբ կարելի չե հետեյալ առարկություններն անել։ 1) Մեր Գ. Խալաթյանցը ցույց ե տվել առաջին անգամ այն ապշեցնող (поразительный) նմանությունը, կարելի չե ասել նույնությունը (тождественность), վոր նկատվում ե այս դպրության և Սերեոսի Պատմության լեզվի, վոճի և դարձվածքների մեջ։ Իսկ վոր այս դպրությունը քաղվածք ե զանազան աղբյուրներից՝ դա չե կարող խանգարել, վոր նա գրված լինել Սերեոսից, վորովհետև Սերեոսն ել, ինչպես և ամեն վոր, անցյալ դարերի մասին գրելիս՝ ստիպված պետք ե լինել զանազան աղբյուրներից քաղվածքներ անել։ 2) Յերբ Սերեոսը գրում ե իրան մոտ ժամանակ կատարված դեպքերը իբրեւ ժամանակակից և նույն իսկ ականատես՝ անտարակույս նրա գրածը ստույգ պատմական կլինի, իսկ յերբ հեռավոր ժամանակների համար դիմում ե գրավոր կամ անգիր աղբյուրների՝ նրա գրածը բնականաբար կստանա այդ աղբյուրների գույնը, Հայոց

նախնական ժամանակի պատմությունը նա առել է Մար-Արա-
սից, մեր առաջին հասկացողությունը՝ անվավերական (апокри-
фический) գրվածքից, և նրա աշխատության այս մասը, մեր
առաջին հասկացողությամբ՝ անվավերական և։ Նույն դպրու-
թյան յերկրորդ մասը, Պարթևների ապստամբությունը, առել է
«Ժամանակագրից» (= Ժամանակագրության հեղինակ Եվսե-
րիոսից), ուստի նույն դպրության այդ մասն արդեն պատմա-
կան և։ Նույն իսկ անկասկած Սեբեոսի համարված պատմու-
թյան մեջ, յերր հեղինակն ավանդությունից կամ ի լրո յե գրում
արդեն տվանդական և հրաշալի գույն և ստանում նրա ստույգ
պատմական աշխատությունը (Բերսե և որինակ Վահան Մամի-
կոնյանի պատերազմը Պերդի գործերի դեմ, Իսմայելացոց նավա-
տորմի կործանման նկարագիրը և այլն)։ 3) Յոհան Օձնեցու և
այս դպրության մեջ նկատված մի յերկու բառերը կարևորու-
թյուն չունին, ինքը Գ. Խալաթյանցն էլ կարծիքաբար և ասում,
թե Անծանոթն այդ մի բանի բառն «բոս յերևույթին» առած
պետք է լինի Յոհան Օձնեցուց, Ի հարկե, կարող եր և ընդհակա-
ռակը պատահած լինել, վոր Օձնեցին առած լինեք Սեբեոսից,
յեթև միայն կամենալինք այդ մի յերկու բառի վերաբերու-
թյամբ բանարարության խնդիր հարուցանել։ (յեր. 15—12)։

Հարկավոր ենք համարում, իբրև լրացում, մի յերկու դիտո-
ղություն ել ավելացնել Գուտշմիտի և Խալաթյանցի վերը բեր-
ված կարծիքների մասին, վորոնք, վորչափ դիտենք, լին արտա-
հայտված ուրիշների կողմից։

Գուտշմիտի կարծիքը, թե Ա. Դարությունը գուցե հենց
Խորենացու գրածը լինի իբրև ուրվագիծ յուր ապագա Պատմու-
թյան՝ անկարելի չե ընդունել այն պատճառով, վոր Խորենացին
խիստ խոսքերով դատաւարտում և այդ գրվածքը, Հիշենք՝ ինչ
և ասում նա. «Մի քանի անհավաստի մարդիկ ասում են, թե
ծեր Բագրատունյաց Թագադիր ցեղը Հայկից և ծագում։ Յնա
ասում եմ, այդպիսի հիմար խոսքերի մի՞ հավատար, վորովհետև
վոչ մի հավանականություն չկայլ կամ ապացույց չկա դրա
մշմարտության։ Հայկի և նմանների մասին ել կախաղում և
կցկտուր դատարկաբանությունը»։ Կարո՞ղ և վորեն մարդ յուր
իսկ գրածն այս կերպով պարսավելու—Մյուս դիտողությունը
վերաբերում և Խալաթյանցի այն հավաստիացման, թե Խորե-
նացին տեսել և ոգավել և Սեբեոսի Մար-Աբասյան աղբյուրից։
Այս ել անկարելի չե։ Խորենացին Բագրատունյաց պատմիչ և,

նա առիթ բաց չե թողնում նրանց բարձրացնելու, փառավորելու, Յեթե նա տեսած լիներ Սերեոսի Մար-Աբասյան աղբյուրը՝ չեր կարող զանց անել այն ամենափառավոր նկարագիրը, վոր տալիս է սա Բազրատ Փառազյանին. «Սմա (Արշակ Փորրին, առաջին Արշակունի հայ թագավորին) ընդ առաջ ելանէր Բազարատն Փառազեան յորդուցն Արամնակայ, նախարար մեծ, հանդերձ զաւրու: Մատուցանէ նմա պատարագ ոսկի և արծաթ և զարդարէ զնա ի սնդր և ի վակաս. պսակէ զնա ի թագ հայրենի, և նստուցանէ զնա ի վերայ ոսկիապատ ականաճուռ զահոյից և տայ նմա զգուստր իւր ի կնութեան: Զսա արար Արշակ արքայ ասպետ Հայաստան երկրին, որ էր իշխան հրամանատար, ամենայն թագաւորութեանն հրամանաց զլոյս, և հայր արքայի և եղբայր, որում ետ իշխանութիւն տէրութեանն այնորիկ: Նա կոտորեաց զհակայսն, որ զաւրածողով եղեն ի վերայ նորա ի Միթագեստ Ասորուց: Կարող եր արդար խորենացին չոգտագործել այս փառավոր վկայությունը յոր սիրած տոհմի մասին՝ վոր բղխում եր ամենահեղինակավոր Մար-Աբասյան աղբյուրից:

Յույց տալուց հոտո, թե անզոր են այն փաստերը, վոր բերվել են Պատկանյանի և ուրիշ բանասերների կողմից՝ ապացուցանելու համար Ա. և Բ. դպրությունների Սերեոսին լաւտկանիւր, այլ անձանոթ հեղինակների գործեր լինելը՝ այնուհետեւ մենք անցել ենք փաստերին, վորոնք ապացուցանում են այդ Դպրությունների Սերեոսին պատկանելը՝ իբրեւ նրա Պատմության անհրաժեշտ սկիզբը:

Նախ քննել ենք Բ. դպրությունը, վոր կրում է վերնագիր, «Արդ՝ թէ պիտոյ է քեզ, ո՛վ ընթերցասէր, երկրորդեցից ի պատմագրացն Մովսէսի Խորենացւոյ և Ստեփանոսի Տարանացւոյ, հաւաստի և ճշմարիտ մատենագրաց՝ զորդի ի հարէ հանաչել»: Դպրությունը բաժանել ենք չորս մասի. 1. Պարթևների ժամանակագրությունը, սկզբից մինչև «և յետ նորա պայազատք նորին զնոյն ձև աւրինակի»: 2. Մամիկոնյանների ծագման վերաբերյալ հատվածը. 3. Յեռանուն ցանկը Պարսից, Հունաց և Հայոց թագավորների, և 4. Յերկանուն ցանկը Պարսից և Հունաց թագավորների: Յույց ենք տվել, վոր առաջին և յերկրորդ մասերը իրար հետ կապ չունին, վորովհետև նրանց մեջ դուրս է ընկած մի թուղթ, վոր պարունակելիս է յեղել հայ Արշակունիների ցանկը մինչև Մեծն Խոսրովի 31-րդ տարին:

(Տե՛ս ներկա հրատարակության մեջ ծանոթ. 17): Այս հատվածը, ասել ենք, աղբյուր չունի. հեղինակն ինքը լսել է լինացի պատգամավորից և զրի յն առել:

Դառնալով առաջին մասին, Պարթևների ցանկին՝ ասել ենք, վոր արդարեւ բառացի նմանութիւն կա Բ. Դպրութեան և Ասողիկի մեջ. Դեմ առ դեմ մեք բերելով այդ հատվածն ամբողջական բառ Ասողիկի և Բ. Դպրութեան՝ նկատել ենք, վոր Ասողիկի մոտ շատ ավելի բնդարձակ է հատվածը, և ինչ վոր նա ավելի ունի Բ. Դպրութիւնից՝ բոլորն առնված են Խորենացուց և եվսեբիոսից. Պարզ յերևում է, վոր Ասողիկը Բ. Դպրութիւնից արտագրելիս նրան լրացրել է Խորենացուց և եվսեբիոսից առած տեղեկութիւններով, ինչպես նրա սովորութիւնն է ուրիշ տեղերում: Այս միջանկյալ լրացումների պատճառով Ասողիկի մոտ խզվել է խոսքի բնական շարունակութիւնը, վոր նկատուում է Բ. Դպրութեան մեջ. (որինակ. Բ. Դպրութիւնն ունի. «Յետ նորա թագաւորէ սորին որի Արշակ որ կոչեցաւ Մեծ ամա ՄԲ. Սա թագաւորեցոյց զեղբայր իւր զՂաղարշակ ի վերայ աշխարհիս Հայոց»): Նույն տեղում Ասողիկ ունի. «Յետ նորա թագաւորէ սորին որդի Արշակ որ կոչեցաւ Մեծ (զայիս է այստեղ միջանկյալ հատված եվսեբիոսից, վորից հետո՝ «Յայնժե՛ ժամանակի Արտակ Մեծ, բռն Արտակայ Դաքի թագաւորեցոյց զեղբայր իւր զՂաղարշակ ի վերայ աշխարհիս Հայոց»): Անկարելի յն հակառակ յենթադրութիւն անել, այսինքն թէ Բ. Դպրութեան անծանոթ հեղինակն ռզմվել է Ասողիկից, և արտագրելու ժամանակ դիտմամբ և բոկովի դէն և ձգել այն կտարները, վոր Ասողիկն առել է Խորենացուց և եվսեբիոսից:

Այս համեմատութեան և ուրիշ մի շարք դիտողութիւնների հիման վրա (յեր. 23—34) մենք յեկել ենք յեզրութեացութեան, թէ Պարթևների ցանկում բանաբաղը Ասողիկն է, վոր ուրիշ տեղեր ել ամբողջ յերեսներով արտագրում է Սեբեոսից և նրան հիշում է յուր աղբյուրների թվում, և վոյ Բ. Դպրութեան անծանոթ հեղինակը, ինչպես կարծել է Պատկանյանը և նրան հետեւել են ուրիշները*):

*) Այս կետում մեզ համակարծիք է Մատթեւան, (ՀԱՆՈՒՄՆԵՐ ԿՈՄ ԿԵԶԺ ՍԵՐԵԱՆԶ, յեր. 29—Մանոթ): Նա առում է. «Զի կրնար նաև Ասողիկն թող գոժայք ըլլու այս Բ Դպրութիւնը. Թողունք վոր յերկուքը իրարու հետ համեմատողը նշանադրեա կուտնէ, թէ բանաբաղողը Ասողիկն է և վոյ թէ Բ Դպրութիւնը—հմմտ. նաև Սա. Մալխաշանց Սերեոսի Պատմութեանը և Խո-

Այս հիման վրա՝ Ստ. Ասողիկի անունը մենք վերցնում ենք Բ. Դպրության առաջին մասի վրայից, իբրև աղբյուր, և հետևեցնում ենք, վոր Բ. Դպրության հիմնադիր իբրև աղբյուր են ծառայել, համանշան վերնագրին, Մ. Խորենացին և Ստ. Տարոնացին՝—վոր Ասողիկը,

Այս ուղղությամբ շարունակելով մեր քննությունը՝ մենք համեմատել ենք առաջին մասի ցանկը Խորենացու հետ, յերրորդ և չորրորդ մասերի ցանկերը (այսինքն յեռանուն և յերկանուն ցանկերը) Պարսից, Հունաց և Հայոց թագավորների առանձին առանձին՝ Խորենացու և Ասողիկի հետ, (յեր. 42—53), և յեկել ենք հետևյալ յեզրակացություններին. 1. Բ. Դպրության առաջին մասի, այսինքն Պարթևների ժամանակագրության զլրսավոր տիրապետող աղբյուրն յեղել և Խորենացու Պատմությունը. իսկ Ասողիկը վոր թե աղբյուր և նրա համար, այլ նրանից ոգտվել և իբրև աղբյուրից։ 2. Բ. դպրության Սասանյանների ցանկը չեր կարող կազմված լինել Խորենացու և Ասողիկի աղբյուրներից։ 3. Բյուզանդական կայսրների ցանկի համար ել Խորենացին և Ասողիկը չեն Բ. Դպրության աղբյուրները։ 4. Նույնպես Բ. Դպրությունը Արշակունիների ցանկը չե կազմել ըստ Խորենացու և Ասողիկի. Բացի սրանից դիտել ենք, վոր Բ. Դպրության յեռանուն և յերկանուն ցանկերը կազմված են սինխրոնիզմներով, այն ինչ վոր Խորենացին և վոր Ասողիկը լուսին սինխրոնիզմներ, և նրանց տված տարիներից չե կարելի սինխրոնիզմներ կազմել։ Սրանից յեզրակացնում ենք, թե Բ. Դպրության յեռանուն և յերկանուն ցանկերի համար իբրև աղբյուր չեն ծառայել Խորենացին և Ասողիկը, ուրեմն և այդ դպրության վերնագրում հիշված Ստեփանոս Տարոնացին Ասողիկը չե, այլ մի ուրիշ՝ անծանոթ Ստ. Տարոնացի։

Դալով այս անծանոթ Ստ. Տարոնացուն՝ մենք ցույց ենք տվել, վոր այդ անունով մի անձ, ժամանակագրության հեղի-

բենացի, եջ 14, 31—53...), Բաց առաի յեթե Բ. Դպրության հեղինակը յուր առջին ունեք դասողիկ, ինչու, մինչև 652 հրացնե յուր ժամանակագրությունը և այլև Սակայն Մատիկյան համարա չե մեր տառածներին Բ. Դպրության հեղինակի մասին, (անշ), այսինքն չե ընդունում, վոր այդ դպրության հեղինակը չենք ինքը Սեբեոսն և, վոր յուր Պատմութիւնն ել իբրեւ հաջնում և մինչև 652, այսինքն մինչև Սասանյան թագավորության բարձումը, Նույն կարծիքն են ունեցել, ինչպես տեսունք, Նորայր Բյուզանդացին և Ա. Տէր-Միքէլյանը։

նակ, իրոր զոյություն և ունեցել: «Արարատ» ամսագրում 1868 թվին տպագրված և մի ընդարձակ հոդված՝ «Անընդհատ Հարու- նակութիւն առաքելական յաջորդության ուղղափառ Ս. եկե-ղեցւոյ Հայաստանայց» վերնագրով, Հոդվածի անանուն հեղինակը ասում և (յեր. 41). «Այս խնդրույս մասին մեծ յույս և ոգմա-դակություն կտա հին ծեռագրերն մը (վոր Ս. Եջմիածնի մատենադարանէն կնշմարվի) ցոյցած և գողցված յերեք հատ թերթերը, վոր Հայոց ՉՀԹ (779) թվականին... գրված և կամ ընդորինակված»: Ծանոթության մեջ ասում և. «Վերջին անգամ ի Պոլիս գտնված ժամանակնիս, վոր պետք և դայինք ի Ս. Եջմիածին, վեհ. կաթողիկոսը վերոհիշյալ յերեք թերթերը... ծեռք բերավ Գ. Թ. Միհրդատյանցն՝ Ա. Եջմիածնա մատենա-դարանին մեջ պահելու համար»: Հետո նա բերում և (յեր. 103—105) այդ «խիստ մաշված հին սագաղաթյա յերեք թեր-թերուն պարունակության ամբողջ որինակը» (ամբողջը մենք բերել ենք մեր Սերեոսի Պատմության հավելվածում):

Այս թերթերում մեզ հետաքրքրում և հիշատակարանը- «Յիշկերութիւր եպիսկոպոսաց Առքլկն վիճակիս Արտագու, զոր գտար ի հին յշուկնէ միտք, որ էր գրեալ ՂԸ թուական Հայոց... Այլ և գտար յայլ պատմութիւն մի հնագոյն և անվերծանելի, զոր շնկբր անցուցեալ էր ի զիր յաջորդութիւն որ առաքելոյն Թադէոսի... գրեալ հանդերձ ժմեգրուր, Եւ անուն նորին Ստե-փանոս Տարաւնացի, որ էր աշկրտ արքոյն Մեսրոպայալ, Ուստի մեծաւ փափոք և բզմ տամանմամբ դադափարեցի, զի մի կորիցէ իսպառ: Բանդի ոչ էր դիպեալ ուրեք մատենի...»: Հիշատակարանն սկսվում և — «Յետ ամսունկն քարոզութեանց սր Առաքելոյն և Առաջին լուսատուին մերոյ Թադէոսի...»: Վերջանում և — «հա այսբան սակաւութ բաւեցի, և զիս յիշելոյ մի՝ դանդաղիր ով ընթերցաւդ աղաչեմ, ԹՎն ՉՀԹ»: Այս թեր-թերի մասին լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար դիմեցինք Կ. Պոլիս, Մանկունի յեպիսկոպոսին, վորի պատաս-խանից յերևաց, վոր Միհրդատյանը խոստովանել և, թե այդ թերթերը կտրված ըն յեղել Եջմիածնի մատենադարանի մի ծեռագրից, և վոր այդ թերթերը պահվում էին Վեհարանի Մադկյա ալվան կռված դահլիճում: Ուրիշ կողմից լսեցինք, վոր Խրիմյան Հայրիկը այդ թերթերն ուղարկել և Մատենադարանը, Ներկայումս, 38 տարի հետո, կարելի չե մի յերկու նոր տեղեկություններ հաղորդել Ստ. Տարոնացու և այդ

Թերթերի մասին: Դ. Ալիշան Հայապատումի մեջ (մասն Ա. յեր. 65) գրում է, թե Ստ. Ռոշքյան (տասնևութերորդ դարի կեսերին) յուր բառարանում հիշատակում է Ստեփանոս Տարոնացի անունով հեղինակ և նրանից բերում է վկայություններ՝ «Շմբատ» և «Արտաշատ» անունների համար: Դարձյալ գրում է Ալիշան, թե պատմւոյ շարագասող մեկն (ո՞վ) յերկու Ստեփանոս հիշե, զատ անծինք համարելով զԱսողիկն և զՊատմացիս: Ալիշան յենթադրում է, վոր յեթե Սեբեոսին է պատկանում Բ. Դպրության վերնագիրը՝ «Պատմագրացն Մովսիսի Խորենացւոյ և Ստեփանոսի Տարոնացւոյ»՝ ապա այս Ստեփանոսը կարող է լինել Տարոնի յեպիսկոպոսը. է. դարի սկզբում, վոր զնաց Կոմիտաս կաթողիկոսի մոտ և Հովսիսիմեյի նորագլուխ նշխարներից մի մասը տարավ յուր աթոռը, Ղազարու վանքը: Այսպես կամ այնպես Ստեփանոս Տարոնացի պատմագիրը, վոյ Ասողիկ, բացի վերոհիշյալ Թերթից՝ հիշատակվում է ուրիշ յերկու անգամ եւ՝ տարբեր անձերի կողմից, այնպես վոր այսպիսի հեղինակի գոյության մասին հարուցված կասկածներն այլևս անտեղի յեն: Դաւով մագաղաթյա յերեք Թերթերին՝ մենք հետամուտ յեղանք նրանց հետքը գտնելու: Կարենյանցի ցուցակում մենք ուշադրություն դարձրինք № 1684-ի վրա, վոր պարունակում է «Պատմութիւն ժամանակագրական որ և քրոնիկոն՝ քառածալ բոլորագիր, զրեալ ի մագաղաթի ի Թուին Հայոց ՌՃԵԴ: Յենթադրելով թե զուցե այս ձեռագրից լինին կտրված այդ Թերթերը՝ հարցրինք այս մասին Նշմիածնի ձեռագիրների մատենադարանին: Ձեռագրատան բաժնի վարիչ ընկ. Հ. Մանվելյանը պատասխանեց թե «Կարենյան ցուցակի № 2340 (նոր 2348) ձեռագրում 144 և 145 Թերթերի արանքում հերավի նկատելի յն կտրված Թերթերի հետքեր, սակայն վոյ մագաղաթյա: Կտրված Թերթերի քանակն է 5, այլ վոյ 3—3...: Դժբախտաբար հանված Թերթերի մասին առայժմ չկա վոյ մի հետք մատենադարանում»: Կապ ունի՞ն արդյոք այս Թերթերը վերը հիշված յերեք Թերթերի հետ՝ դժվարանում ենք ասել:

Յերը մենք վերացնում ենք Դպրությունների բաժանումը, վոր հետեանք է յեղել նախկին հրատարակիչների կամայականության, և Բ. Դպրության վերնագրում հիշված Ստեփանոս Տարոնացուն: չենք նույնացնում Ասողիկի հետ, ինչպես արել են Թյուրիմացաբար Պատկանյանը և նրա հետեողները, այն ժամանակ ամբողջ գրվածքը մեզ ներկայանում է բոլորովին ուրիշ կեր-

պարանքով, — իբրև մի սխտեմական Հայոց պատմութիւն՝ նախ-
նական ժամանակներից սկսած մինչև Սերեոսի ապրած ժամա-
նակները, այսինքն յօթներորդ դարի կեսերը, և միայն այսպիսի
ըմբռնումով հասկանալի յետ դառնում հեղինակի խոստարանու-
թիւնը հենց գրքի սկզբում, Սերեոսն այստեղ ասում է. «եւ եղև
» ի կամայական պիտոյից վարժ խուզակի զանտարագրել ժա-
մանակ և զնախնի քաջացն ծեռնարկելով դրոշմել վիպասանու-
թիւնս, զիմն յիշատակել զառասպելս. և ի նոյն շարագրելով
ասացից զառ ի յապայսն եղելոյ, և ցուցից համառաւտիւք զար-
դեաց ժամանակացս զաղետիցս վերաբերութեան զամս և զաւուրս
հինգ թագաւորացն յիշատակելով»:

Ուրեմն հեղինակը յուր գրելիք պատմութիւնն նյութը բա-
ժանում է յերեք շրջանի — 1. Գալսեի Բագրէի վիպասանութեանը
(героническое время), 2. աչգ օրջանին հարազադ պատմական
անցքերը, (առ ի յապայսն եղևայր) և 3. յուր աղետալի ժամանակի
անցքերը, փորոնք անդի ունեցան հինգ թագաւորների որերով:
Ղորովհետև Սերեոսը չե գործածում վո՛չ փրկչական և վո՛չ Հայոց
թիւականները՝ ուստի ժամանակաշրջանը փորոշելու համար նա
գործ և ածում տիրող թագաւորների տարիները: Տվյալ տեղում՝
հինգ թագաւորներն են Հունաց հինգ կայսրները — Մորիկ, Փակաս,
Հերակլ, Յերակղակ և Կոստոս: Նրա Պատմութիւնն մեզ հիշվող
Հունաց առաջին թագաւորն և Մորիկը, վերջինը Կոստոսը*):

Այս խոստման համաձայն եւ Սերեոս գրում է յուր Պատ-
մութիւնը:

*) Այն բանասերները, զորոնք Ա. դարութիւնը համարել են մի Անճա-
նոթի գրվածք՝ բնականապէս չեն կարողացել ուղիղ նախկալալ այս խոստա-
րանութիւնը և ընկել են զանազան անհիմն չեմքազրութիւնների մեջ: Պատ-
կանաւորը (սուս. թարգմ. Առաջարան յիւ. X.) յենթադրում է, թէ այս առիթը
կարող է գրած լինել Սերեոսը, ջոնի վ-ր չդիտենք, թէ ով է առաջին անգամ
առասպելի Աղաթանգեղյան արձանագրութիւնը: Այս զեպքում անհասկանալի
յետեւ, թէ ինչու Սերեոսն այս առիթը պիտի գրէր առ առաջի գրվածքի
սկզբում: Մտքը բնականաբար, վոր անճանաթ հեղինակը խոստացել է գրել իր
ժամանակի անցքերը՝ այս բանը չե գտնում Ա. Դարութիւնն մեզ և կարծում է
թէ կամ նա մոռացել է գրել, կամ նրա գրածը կորել է: Միևնույն ժամանակ
նա բանագրութիւն կերպով աշտակ հիշված հինգ թագաւորներին նույնացնում է
քիչ վորը հիշված՝ Հայոց և Պարթեաց հինգ թագաւորների նեւ: Թալաթիւնցի
կարծիքով Անճանոս հեղինակը խոստանում է գրել հինգ թագաւորների ուս-
թիւները՝ հետևելով Մաքարոս Մմուրջացու մատյանին, վոր պարունակում էր
Աղաթանգեղյան արձանագրութիւնը Հայոց և Պարթեաց հինգ թագաւորների
մասին:

Ա. գլխում նա գրում է նախնի բազերի վիպասանությունը, (Հայկ և Բել, Արա և Շամիրամ. հին նահապետներ). աղբյուր ունենալով Մարաբասին:

Բ. — Ե. գլուխներում նա պատմում է նախնական ժամանակին հաջորդող պատմական անցքերը, այսպես.

Բ. գլուխ. Պարթևների ապստամբությունը Մակեդոնացիներից. Պարթևների և հայ Արշակունիների ցանկերով՝ ըստ Եվսեբիոսի և Ագաթանգեղյան արձանագրության:

Գ. գլուխ. Նույն Պարթևների և հայ Արշակունիների ցանկերը՝ Հունաց, Պարսից և Հայոց Թագավորների յեռանուն ցանկով՝ մինչև Արշակունյաց բարձուժը՝ ըստ Խորենացու և Ստ. Տարոնացու: (Արշակունի հայ Թագավորների ցանկը մինչև Մեծն Խոսրովի 31-րդ տարին չկա, վերջինս ծնողից թուղթ է ընկել):

Դ. գլուխ. Հունաց և Պարսից Թագավորների յերկանուն ցանկը՝ մինչև Մասանյան տերության բարձուժը, առաջին մասն ըստ Ստ. Տարոնացու, յերկրորդ՝ ճիշտ մասն առանց աղբյուրի, իբրեւ ժամանակակից: (Այս ցանկի ժամանակագրությունը նշում է թյամբ հետևել և Սեբեոս յուր Պատմության ընթացքում:

Ե. գլուխ. Հայոց պատմության շարունակությունն Արշակունյաց բարձուժից հետո: Մասանյանների մոլեռանդ ու միաձուլող քաղաքականությունը և 451 թ. Հայաստանի ապստամբությունը Պարսկաստանի դեմ՝ Վարդան Մամիկոնյանի առաջնորդությամբ, սակայն առանց ընդարձակ պատմելու, քանի վոր, ինչպես ասում է՝ ուրիշներն արդեն գրել են այդ:

Զ. Է. գլուխներ. Հայոց պատմության շարունակությունը. — Վահան Մամիկոնյանի կոիվները և մարզպան նշանակվելը, նրան հաջորդող մարզպաններն ու նրանց մղած կոիվները Հայաստանում, Պարսից պատմության գլխավոր անցքերը — Վահրամ Միհրկանդակի (Չորինի) ապստամբությունը, Որմզդի սպանվելը և Խոսրով Ապրուեզի (Փարվեզի) Թագավորելը:

Ը. գլխով հեղինակն անցնում է ժամանակակից Պատմությանը, վորին մի բանաստեղծական ներածություն և ղնում, կոչելով «Մատենան ժամանակակից», «պատմութիւն ըստ պատմական», մանրամասն նկարագրելով աշխարհը Այս ներածությունը պարզ հիշեցնում է խոստաքանության վերջին մասի խոսքերը — «զարդնաց ժամանակացս», «զամս և զաւուրց եիմզ քաղաւորացս», «զաղեւիցս վերաբնութայն»:

«Սրանից տեսնում ենք, վոր Ա. և Բ. Դպրութիւն կոչվածները վոյ միայն ուտար հալելովածներ չեն, վորոնք իբր թե «պատահաբար» կցվել են Սերեոսի Պատմութեան և նրա հետ վոյ մի կուտ յունին», այլ նրա անհրաժեշտ մասերն են, վորոնցով տեղեկահաւաստ պատմված և Հայոց պատմութեանը, նախնական ժամանակներից սկսած մինչև հեղինակի որերը, և յեթն նրանցից վորեւ մեկը պակասեր՝ Սերեոսի ձրագիրը թերի կմտար և պատմութեան թկը կընդհատվեր. Տեսնում ենք, վոր միայն այս կերպով հասկանալի կդառնա գրքի ներածութիւնը՝ յուր «այժմյան աղետալի ժամանակների հինգ թագավորներով» (յեր 75), Տեսնում ենք նաեւ, վոր միայն այս կերպով և փարատվում Մառի տարակուսանքը, վոր համածայն ներածութեան, փնտռում եր ժամանակակից պատմութիւնը և չեր գտնում, այս կերպով հասկանալի կդառնա խալաթյանցի նկատած ապշեցուցիչ նմանութիւնը, նույն իսկ նույնութիւնը Ա. դպրութեան և Սերեոսի մեջ:

Նույնպիսի նմանութիւն, գրեթե նույնութիւն (վոյ ապշեցուցիչ՝ ըստ խալաթյանցի, այլ բնական՝ ըստ մեզ) գտնում ենք Բ. դպրութեան և Սերեոսի բուն Պատմութեան մեջ: (Ա. Դպրութիւնից բազմաթիւ որինակներ արդեն բերել ե խալաթյանցը, իսկ Բ. դպրութեամբ նա չե գրադվել):

Որինակ —

Նմանութիւններ պատմական հայացքների մեջ.—

1. Ըստ Ա. Դպրութեան՝ Արշակ Մեծ Պարթեաց թագավորը յուր յնդրոր Փոքր Արշակին Հայաստանի թագավոր և կարգում, և փորձում և նրա թագավորութեան սահմանները:—Բոլորովին նույն սահմաններով Հայաստանը հիշում ե Պատմութեան մեջ՝ երբ Վահրամ Միհրեանդակը Մուշեղին առաջարկում ե յուր հետ միանալ խոսրովի դեմ (զլ. Ը.): (Այս համեմատութիւնը բերել և և խալաթյանցը):

2. Թե Բ. Դպրութիւնը և թե Սերեոսի Պատմութիւնը (զլ. Ե.) այնպես զիտեն, թե Արշակունյաց վերջին թագավորը, վորի ժամանակ Արշակունյաց թագավորութիւնը վերջացավ՝ յեղել ե Վաւաշապուհը:

3. Թե Բ. Դպրութիւնը և թե Սերեոսի Պատմութիւնը Մահմետի յերևումը ղնում են՝ «հրամանաւ Աստուծոյ Բ. Դպրութիւնը գրում ե. «Ընդ Իսմայելացիսն որ Ելիմ առաւ Ի Սիմե ամապսէ հրամանաւ Աստուծոյ առնել ամապսէ զամեթոյն երկն»: Սերեոսի Պատմութեան մեջ կարգում ենք. «Ելիմ յարե-

ւիյք. աղբիւն Բաճայէի ի Սիմ ամապաւնէ»։ (զլ. Խ.)։ «Մահմէտ... որպէս ի հրամանէն Աստուծոյ երեւեալ»։ (զլ. Խ.)։ «Զորրորդ թագաւորութիւնն (Իսմայէլացւոց... որ արար ամապաւն զսահմայն երկիր» (զլ. ԽԵ.)։

4. Թե՛ Բ. Դպրութիւնը և թե՛ Սերեոսի Պատմութիւնը վերջանում են միեւնոյն շրջանով—Սասանյան հարստութեան բարձումով, վոր տեղի ունեցաւ 652 (կամ 653) թվականին։ Այս հարստութեան տեղադրեալն նկատմամբ ել Բ. Դպրութիւնը ու Սերեոսի Պատմութիւնը համեմատելի են (չնայելով վոր մեկը դնում է 542 տարի, մյուսը 532 տարի) նրանով, վոր յերկուսն ել հաւասարապես ավելի քան հարյուր տարով սխալվում են, քանի վոր այդ հարստութեան տեղադրութիւնը յեղել է 426 տարի։ Նման սովորութիւնն՝ նախապես հիշելու յուր զրելիրը.—

Ա. Դպր. «ցուցից համառատիւք զարդեաց ժամանակացս... զամս և զաւուրս հինգ թագաւորացն»։ «Զվէպս յահնդն արքայ և յարի ալրն սկսայց ասել»։

Բ. Դպր. «Երկրորդեցից ի Պատմագրացն... զորդի ի հաւրէ ճանայել»։—«Երկակի կանոնաւ զՊարսից և զՅունաց... նշանակեցից զթագաւորութեան ժամանակն»։

Պատմութիւն, «Ասացից զվէպս ի կործանիչն Խոսրով»։ (Գլ. Ը. նախերգանք)։—«Ասացից և զՆերսիս զապատմորդացն զխորհուրդսն» (զլ. ԽԱ.)։—«ԶԱրաբհամեանն ճառեցից զգաւակէ»։ (Գլ. Խ.) և այլն։

Նման սովորութիւնն՝ ցույց տալու յուր աղբյուրը.—

Ա. Դպր. «Անդր հայելով ի մատենան Մարարայ փիլիսոփայի... զոր իմ գեաւ ի Միջագետս ի նորին աշակերտացն՝ կամեցայ ձեզ զրուցակարգել»։

Բ. Դպր. «Որպէս լուայ յառնէն մեծէ, որ էր նկեալ հրեշտակութեամբ ի ճեմաց թագաւորէն... յա՛ իմ հարցնալ ի դրանն»։

Պատմութիւն, «Զայս լուար յարանց՝ զերկոց... որոց ինքեանք իսկ ականատես եղեալ պատմեցին մեզ զայս բան»։ (Գլ. Խ.)։

Լեզվի և վոճի նմանութիւններն անչափ են. բավականա-նանք մի յերկու որինակով.—

Ա. Դպր. «Թափեցից իսկ այսաւր ի քեզ զկապարճս իմ»։ Պատմ. «Թափեցին ի նոսա զկապարճս իւրեանց»։ (Գլ. Լ.)։

Ա. Դպր. «Ապստամբեալ ի բաց կացին Պարթևք ի ծառայութենէ Մակեդոնացւոց»։

Բ. դպր. «Ապստամբեալ ի բաց կացին ի նմանէ»:

Պատմ. «Ապստամբեցին Հայր և ի բաց կացին ի Թագաւորութենէն Յունաց»։ (Գլ. ԽԶ)։

Ա. դպր. «Ազդ լինի նորին, եթէ Թագաւորեաց Անտիոքոս. լուծանէ Արշակ զԴիմնորիտս»:

Բ. դպր. «Ազդ լինի ճեմրակուրի. զուստէ և նա զզարս իւրոյ կողմանն»:

Պատմ. «Ազդ լինի երակլի կայսեր... առեալ զզարս իւր և դառնայ»։ (Գլ. ԼԶ)։ Յեղ ալն»

Մեր քննութեան յեզրակացութեանն են յեղել են—

1. Լուրջ հիմք չունին այն առարկութեանները, վորոնց պատմաբան Ս. և Բ. Դպրութեանները համարել են անվավերական, — վոչ Սեբեոսի գործը:

2. Վերին աստիճանի անհավանական է, վոր յերկու անկապ՝ միմյանցից անկախ զրկածքներ, մեկը մյուսից մոտ 400 տարի առաջ և յետ հորինված՝ պատահաբար զայն կցվելին Սեբեոսի Պատմութեան սկզբին, այն ել նախ Ա. դպրութեանը կցվեր, և ապա, 400 տարի հետո, Բ. դպրութեանը զարայս յերկուսի մեջ ընկներ, և այնուհետև միայն գիրքը բաժանվեր զլուխներին:

3. Բ. դպրութեան վերնագրում նշանակված Ստեփանոս Տարոնացին Ասողիկը չէ, այլ ավելի հին մատենագիր, պատմական — ժամանակագրական մի զրկածքի հեղինակ, վորի զրկածքից մի պատահիկ հասել և մեր ձեռքը մի հին ձեռագրի մեջ (և վորի անունը, բացի այս պատահիկից, հիշատակված և յերկու անգամ ուրիշ հեղինակների կողմից)։

4. Բ. Դպրութեան սկզբում զետեղված Պարթև Թագավորների ցանկը Ասողիկն և արտագրել այս դպրութեանից, (և վոչ ընդհակառակը), յուր կողմից հավելումներ անելով, Ասողիկը ուրիշ տեղեր ել յերեսներով արտագրում և Սեբեոսից:

5. Բ. Դպրութեան սկզբում զետեղված Պարթև Թագավորների ցանկը Սեբեոսը քաղել և Մ. Խորենացու Պատմութեան Բ. գրքի Բ, Գ, ԿԸ, ԿԹ, ԼԱ գլուխներից, յեռանուն ցանկը և յերկանուն ցանկի առաջին մասը՝ Սա. Տարոնացուց, իսկ յերկանուն ցանկի վերջին մասը կազմել է իրանից, իբրև ժամանակակից:

6. Ա. և Բ. Դպրութեաններն, իբրև կողիացած անանուն աշխատութեաններ, ինչպես ներկայացրված են Պատկանյանի տպագրութեան մեջ՝ գոյութեան չունին Սեբեոսի ձեռագիրներում:

Բնագիր ձեռագիրն ունի մի վերնագիր—«Պատմութիւն Սերէոսի ի Հերակլին», (վոր Շաճիսաթունյան յիպիսկոպոսի գրածն և անվերնագիր ձեռագրի վրա), վորից հետո գալիս են՝ Ա, Բ, Գ, Դ գլուխներով՝ Ա. և Բ. կոչված դպրությունները, և զիսով նախերգանք կոչվածը։ Տպագրի Ա գլուխը ձեռագրում Զ գլուխն և Այնպես վոր այս «Դպրություն» կոչվածները ձեռագրում անբաժանելի կերպով կապված են Պատմության հետ։

7. Ա. և Բ Դպրություններն՝ ամբողջացնող մասն են Պատմության, վորոնք անընդհատ կերպով հաջորդաբար ավանդում են Հայոց պատմությունը. նախնական ժամանակներից սկսած մինչև Սասանյանների բարձումը։ Ա Դպրության ներածությունը հասկանալի կդառնա՝ յերբ Պատմության մասը համարենք այս ցերկու. դպրությունները։

8. Թե՛ Դպրությունների և թե՛ Պատմության մեջ տիրում և համերաշխություն պատմական հայացքների, տեղեկությունների և ժամանակագրության կողմից։ Բ Դպրության վերջին մասն անհրաժեշտ բանալի յե՛ պատմության ժամանակագրությունը լիովին հասկանալու համար։

9. Դպրությունների և Պատմության մեջ տիրապետում են միևնույն լեզուն, վոճը, բնորոշ քառերը, մատենագրելու սովորությունը։ Այս նմանությունը հասնում և նույնության։

Այս հիմունքների վրա հենվելով՝ մենք իրավունք ունինք յեզրակացնելու, թե—

10. Ա. և Բ Դպրությունների անձանոթ կամ Անանուն հեղինակը նույն ինքը Սերետոս յիպիսկոպոսն և, Հերակլի Պատմության հեղինակը, և թե այս դպրությունները նա գրել և յուր Պատմության հետ, իբրև նրա առաջին գլուխները։

11. Սերետոս յիպիսկոպոսը յուր Պատմությունը գրելիս ռզտվել և ի միջի այլոց և Մովսես Խորենացու Պատմությունից, կոչելով նրան «Եշմարիտ և հավաստի մատենագիր»։ (յեր. 94—97*)։

*) Մեր գրքույկի բովանդակությունը համեմատաբար ավելի մանրամասն ընդինք, մե քանի նոր հավելվածներով, վորովհետև նրանով վերջնականապես լուծվեցին Ա—Բ դպրությունների և Անանուն հեղինակների հարցերը, վորոնք մի քանի տասնյակ տարի կաշկանդել էին մտքերը և սխալ ուղղություն ավել բանասիրության։ Այս ցուցմանով Սերետոսի Պատմությունը վերականգնվում և յուր սկզբնական ծավալով իբրև մի ամբողջություն. անհրաժեշտ եր ներկա հրատարակության առաջարկում ըրելի այն, ծանոթացնելու համար այն փաստերի հետ, վորոնց հիման վրա Սերետոսի Պատմությունը լայն և անձնուժ յուր

Այս մեր զրքույկն առիթ տվեց պրոֆ. Ալեանցին գրել մի ուսումնասիրություն *ուսանքն լեզվով, վոր կրում և վերնագիր*. «Начальная История Армении у Себеоса в ее отношениях к трудам Моисея Хоренского и Фавста Византийского. По поводу брошюры С. Мовхвсая: *Սերէոսի Պատմութիւնը և Մովսէս Խորենացի, 1899, Կիփլիս*. («Հայաստանի նախնական պատմությունը» Սերեոսի մոտ և նրա հարաբերությունները Մովսէս Խորենացու և Փավստոս Բյուզանդացու աշխատությունների հետ. Սոս. Մալխասյանի «Սերեոսի պատմությունը և Մ. Խորենացի» բրոշյուրի առիթով, 1899, Քիփլիս), վոր արտատպված և «Византийский Временник»-ի VIII հատորից, 1901, № 1, 2:

Հեղինակը գիտում և յուր գրվածքի սկզբում, թե «Հայաստանի նախնական պատմությունը» կամ այսպես կոչված Անանունի պատմությունը, չնայելով նրան նվիրված բազմաթիվ քննություններին՝ դեռ շարունակում և առեղծված մնալ հայկական լատնասիրության համար... Հանգուցյալ Պատկանյանը Անանունի մասին այնքան վեճական տոնով խոսեց, վոր նրա կարծիքի ստուգումն, եսկան մասերում, յերկար ժամանակ ավելորդ եր թվում: Հարցող քննադատները նրա հայացքներն Անանունի պատմության ծավալի և նրա հարաբերության մասին Սերեոսի հետ՝ ընդունեցին լուր հավատարմով նրանց, և այդ հայացքները յիյակեա ընդունեցին իրանց աշխատանքների մեջ նույն իսկ ամենից մանրամասն և կարեոր աշխատանքների հեղինակներն այս հարցում: Բայց Պատկանյանի քննադատությունը, չնայելով յուր բացարձակ վեճական ձևին, մի հետադիմական բայլ եր Անանունի ուսումնասիրության Պատմության մեջ: Այս պատճառով հաջորդ հետազոտությունները, վորոնք նրա վրա ելին հիմնված՝ զահացուցիչ չեն:

«Ներկա հոգվածում, շարունակում և բանասերը, յես կաշխատեմ իոր տեսակետով քննել «Նախնական պատմության» քնազիրը Սերեոսի մոտ և վորտեղ նրա հարաբերությունը Խորենացու և Փավստոսի հետ: Վորովհետե իմ այս հոգվածին առիթ տվեց Սոս. Մալխասյանի նորերս լույս տեսած զրքույկը՝ ավելորդ լնամարեցի այս հետաքրքրական ուսումնասիրության քննությունը կապակցել իմ քննադատության հետ»:

Ներկա կերպարանքով:—Նոր՝ անմիակի ապացույցներ, վոր Սերեոսը իրոք պապել և Մ. Խորենացու Պատմությունից՝ բերել ենք ներկա հրատարակության 8 և 9 ծանոթություններում:

Այս ներածութիւնից հետո հեղինակն անցնում է բուն նյութին և նախ և առաջ քննութեան ե յենթարկում մեր գրքույկի մեջ մեր պաշտպանած թեզիսները։ Սեբեոսի Պատմութեան ծավալի տեսակետից ամենակարևորն այն է, վոր Ադոնցը համաձայն է մեզ հետ, վոր Ա և Բ Դպրութիւններն անրաժան են միմյանցից և յերկուսն ել անբաժան են Սեբեոսի Պատմութիւնից (յեր. 6), կամ վոր թե՛ Ա և թե՛ Բ Դպրութիւնները Սեբեոսի գրածներն են իբրև նրա Պատմութեան մասերը (յեր. 29)։ Նա նույնպես շատ աջող է գտնում մեր տված բացատրութիւնն առաջին անգամ հիշված «հինգ թագավորներին», այսինքն վոր դրանք Հունաց այն հինգ թագավորներն են, վորոնց ժամանակի պատմութիւնը Սեբեոսը խոստանում է գրել (յեր. 12)։ Ուրիշ մի քանի յերկրորդական հարցերում ել բանասերը համաձայնում է մեզ հետ։ Բայց նա անհամաձայն է մեր այն թեզիսներին՝ թե համաձայն Բ Դպրութեան վերնագրի՝ Սեբեոսն ոգտվել է Մ. Խորենացուց և Ստ. Տարոնացուց և թե այս Ստ. Տարոնացին Ասողիկը չէ, այլ ավելի հին հեղինակ, վորի ժամանակագրական գրվածքի մի պատուիրը գտնված ու տպագրված է։ Նրա առարկութիւնները կարելի չե ամփոփել հետևյալ կետերում։

1. Թեթե բնդունենք իսկ մի Ստ. Տարոնացու (վոչ Ասողիկի) գոյութիւնը՝ ապա նա ըստ պատառիկի վկայութեան, յեղել և աշակերտ Ս. Մեսրոպի, ուրեմն և յեր կարող գրել ժամանակագրութիւն մինչև Հուստինիանոս կայսեր ժամանակները (327—363)։

2. Բ Դպրութեան սկզբում բերված ցանկը բառացի նմանութիւն ունի Ասողիկի հետ և քաղված է նրանից։ Հակառակ մտքով մեր բերած բանասիրական դիտողութիւնները Ադոնցի կարծիքով շատ մանր բաներ են և վճռական նշանակութիւն չունին։

3. Նույնպես Ասողիկից արտագրված պետք է լիներ Բ դպրութեան մեջ Արշակունյաց ցանկը, վոր այժմ կորած է, (Մամիկոնյաններին վերաբերյալ հատվածից հետո, վոր յուր տեղումը չէ)։ Այս յերկու ցանկերը, վորոնք արտագրված են Ասողիկից՝ ուշ ժամանակների ընդմիջարկութիւններ են (յեր. 6)։

4. Ընդմիջարկող գրիչը, նկատելով մեծ զանազանութիւն Ա Դպրութեան Պարթևաց և Արշակունյաց ցանկերի և Ասողիկի միջև՝ հարկ է համարել կրկնել այս ցանկերն ըստ «հշմարիտ և

«հավաստի մատենագրաց», բայց բերում ե ցանկերը միայն ըստ Ասողիկի. բայց վորոգհետև լավ հայտնի յեր, վոր Ասողիկը ինքն ել յուր նյութը քաղել ե Խորենացու հուշակավոր Պատմությունից՝ սրա անունն ես նա դրել ե Ասողիկի անվան կողքին: Ուրեմն Բ Դպրության վերնագիրն ել ընդմիջարկություն ե այս անծանոթ գրչի (յեր. 6):

Ե. Յեթէ Սերեոսը Խորենացու Պատմությունը տեսած լիներ՝ նա չեր գրի նախնական պատմությունն ըստ Մարարաս Մծուրնացու, վոր ըստ Խորենացու վկայության՝ ճշմարտության վոչ մի նշույլ չն պարունակում, այլ դատարկ կակազանքներ են, այլ կոզտվեր հենց Խորենացու անհամեմատ լավ մշակած Պատմությունից (յեր. 6)*):

Այնուհետև հեղինակը գիմում ե յուր ծրագրի հիմնական մասերին—ցույց տալու Սերեոսի Ա, Բ Դպրությունների աղբրաբեր Խորենացու ե Փապստոսի հետ:

Նա բերում ե մի քանի ցանկեր—յեռանուն ցանկը Հայ Արշակունիների, Սասանյանների ե Հունաց կայսրների, յերկանուն ցանկը Սասանյանների ե Հունաց կայսրների, Պարթևների ե հայ Արշակունիների ցանկը ըստ Ա Դպրության ե Խորենացու, Սասանյանների շրջանի ժամանակագրությունն ըստ Խորենացու ե Մորմանի: Այս ցանկերից ամեն մեկը նա յենթարկում ե մանրակրկիտ քննության, ուշդում ե թվանշան-տառերի նմանությունից առաջ յեկած վրիպակները ե ճշնում ե ապացուցանել, թե Խորենացին յուր ժամանակագրությունը (Պարթևների, Սասանյանների ե հայ Արշակունիների) մշակել ե՝ ոգտվելով Սերեոսի մոտ պահված Ա ե Բ Դպրություններից, Բայց

* Տեղը չե այտեղ հակահասել պրոֆ. Ազոնցի հետ ե հելլենի ճշտադրությունները մեր քնդիտների դեմ: Այսքանը միայն անհրաժեշտ ե ասել, վոր նա ինչպես այտեղ, այնպես ել յուր հոգվածի շարունակության մեջ (Խորենացու ե Ա Դպրության աղբրի հարցում) ստիպված եր գիմել նման անապացույց յենթադրությունների՝ ջանի վոր նա մի կողմից համոզվել ե, թե Ա ե Բ Դպրությունները Սերեոսին են պատկանում, ե մյուս կողմից խորապես համոզված ե, թե Խորենացին է կամ ավելի ուշ ժամանակի հեղինակ ե, ինչպես վերջը գրում ե: Այս յերկու համոզմունքն ունեցող գիմեակունը հաջով չէր կարող իբրև վավերական բնդունել Բ Դպրության վերնագիրը, վորտեղ Սերեոսն իրան աղբյուր ե ցույց տալիս Խորենացուն ե Սո. Տարնացուն ե իբրեւ ել պատվում ե ճշմանից: Ազոնցն ուրեմն հաջողգրված եր անվավերական գաղաճել այս վերնագիրը ե ճշտ ասել բերված ցանկերը, ինչպես նաեւ: Մո. Տարնացուն նույնացնել Ասողիկի հետ:

վորովհետև շատ մեծ տարբերություններ կան խորհնացու և այս կարծեցյալ աղբյուրի մեջ՝ ուստի Ադոնցը գիտում և միշտ ըստ մեծի մասին անապացույց և բարդ յնթադրությունների, վորոնք սակայն համոզիչ չեն։ (Այս մասը մենք շատ համառոտ ենք բերում, վորովհետև վերաբերում և խորհնացուն և վոչ Սեբեոսին)։

Հոգվածի վերջին մասում նա զբաղվում և Սեբեոսի Մարաբասյան աղբյուրի և Փավստոս Բյուզանդացու աղբյուրի հարցով։ Ինչպես վերը տեսանք՝ Ն. Մառը առաջին անգամ այս աղբյուրի հարցը թեթև շոշափել էր։ Ադոնցը բոլորովին նոր տեսակետով մշակում և այն, նա բերում և մի հատված Զ դարի հույն հեղինակ Գրոկոպիոսից, վորի մեջ ասված և, թե «Գարթնների թագավորներից մեկը Հայաստանի թագավոր նշանակեց յուր յեղբոր Արշակին, ինչպես գրված և «Հայոց Պատմության» մեջ... Ազգականության պատճառով նրանց մեջ խաղաղություն ևր տիրում 500 տարվա ընթացքում։—Արդ հեղինակը նկատում և, վոր այս տեղեկություններն ամբողջապես առնված են Սեբեոսի մոտ պահված Հայաստանի նախնական պատմությունից, վորովհետև միայն այստեղ առաջին Արշակունի թագավորը կոչված և Արշակ և Արշակունիների թագավորության տեղությունը նշանակված և 500 տարի, Գրոկոպիոսի հիշած «Հայոց Պատմության» աղբյուրը Փավստոսի հետ, շարունակում և նա, շատ հեռավորության և. մի բան անմխտեյի հաստատ և, վոր այդ Հայոց Պատմությունը Փավստոսի Պատմությունն և. Սրանով մի կապ և հաստատվում Սեբեոսի նախնական պատմության և Փավստոսի մեջ։ Բայց Փավստոսին հայտնի չեն վոչ Ագաթանգեղոս անունը և վոչ Ագաթանգեղյան արծանագրությունը, վորոնք հիշվում են Սեբեոսի Մարաբասյան նախնական պատմության մեջ, Հեղինակն հետևյալ կերպով և բացատրում Մարաբասյան աղբյուրի ծագումը։ Մարաբասյան «Նախնական Պատմությունը» աղբատիկ մնացորդներ են ժողովրդի հիշողություններից յուր յերկրի հին վիճակի մասին, վորոնք ծագել ու ստեղծվել են Յեփրատի ակունքների մոտ, Դարանադյաց և Եփրատյաց գավառներում, Այս հիշողություններն ընկնում են գիտուն Մարաբասի ձեռքը, վոր ձևնդամբ յեղել և Մծուրբից, հայ թե՛ ասորի՝ միևնույն և. Այս հիշողություններն իբրև թանկագին նյութեր փիլիսոփան հետը տանում և Մծբին։ Նա, լինելով փիլիսոփա՝ կպատկաներ մի դպրոցի, ուրեմն «աշակերտ» բառով կարելի

յև հասկանալ ընդհանրապես հետեողներ, թեև ուղ ժամանակով հեռավոր^{*)} յ Մարաբասից հետո շնախնական պատմությունը նրա աշակերտների շրջանում յնեթարկվում է կերպարանափոխության։ Նրանք դուրս են ծղում Արշակունիներին վերաբերյալ գրույցը և նրան փոխարինում և Եվսեբիոսից առած պատմությամբ։ Ինչ վոր պարզ եր նրանց գիտնական ուսուցչի համար՝ նրանց համար մութն և. նրանց համար անհասկանալի Մծուրքը փոխվում և Մծրինի. այստեղ են փոխադրվում Սանատրուկի արքունիքը, թեպետ Սանատրուկը այրով էլ չէ տեսել Մծրինը։ Հայոց գրականության հմուտ լինելով՝ նրանք հավանական և ամենից ավելի պատշաճ հեղինակ են համարել այդ հիշողությունների՝ հայոց ամենահին հեղինակին, Ազաթանգեղոսին։ Այստեղից արդեն մի քայլ է մնում մինչև Ազաթանգեղյան արծանագրությունը։

Նախնական պատմության սկզբնական խմբագրությունը (բուն Մարաբասի)—կամ ինչպես հեղինակն անվանում է՝ Մծուրնական խմբագրություն, զանազանելու համար հետագա՝ աշակերտների ձեռքով վերամշակված Մծրնական խմբագրությունից —անցել և Փավստոսի ձեռքը և մտել և նրա Պատմության առաջին դպրության մեջ։ Բայց Փավստոսի Պատմության մեջ ներկայումս ույշ առաջին դպրությունը չկա, և Փարպեզին նրա Պատմությունը գիտե այն ծավալով ինչպես մեզ հասել է,—մի շատ կարեոր փաստ, վոր խոսում և Փավստոսի առաջին (և յերկրորդ) Դպրությունների գոյության դեմ սուհասարակ։

Այս առիթով Ադոնցը հետևյալ բացատրությունն է տալիս.

Նրա կարծիքով Փավստոսի Պատմությունն սկզբնապես գրված է յնդել հունարեն լեզվով Դ դարի վերջերին, կամ Ե-ի սկզբներին, Հայոց այրուքնին Մեսրոպի ձեռքով կատարեղագործվելուց քի առաջ. իսկ նրա թարգմանությունը հայերեն լեզվով կատարվել է և դարում, վորի ժամանակ բաց են թողնվել առաջին յերկու դպրությունները, այն պատճառով, վոր առաջին դպրությունը վերաբերում եր հայոց հեթանոսական ժամանակին, վորի հիշատակներն ամեն կերպ ուղում եյին վոյնլացնել հայ յեկեղեցական գործիչները, իսկ յերկրորդ դպրությունը պարունակում եր Թա-

^{*)} Բայց ոչ ոք. Ադոնցը այսուրի չայն բացատրություն չէ ընդունում Սո Տարածացու Նկատմամբ, վոր կաշված և Սևրոպի աշակերտ։

դեռ առաքյալի և Գրիգոր լուսավորչի համառոտ պատմությունը, վոր ավելորդ համարվեց թարգմանել, քանի վոր արդեն գոյություն ունեյին նրանց բնագիրները:

Նախնական պատմությունը, վոր պատահաբար ընկած էր Ասորոց Միջագետքը՝ այնտեղ պահպանվեց մինչև է դարը: Նա այդտեղից ընկավ Մեքենոսի ձեռքը, վոր այս հիշատակարանի մեծ արժեքը գնահատելով՝ զետեղեց յուր Պատմության սկզբում: Խորենացու Մարաբասյան աղբյուրը ծագումով կապ ունի այս Մեքենական, կամ Մեքենոսյան խմբագրության հետ: Բայց Խորենացին ծանոթ է յեղել և մյուս՝ Մծուրնական խմբագրության հետ, վոր պահված է Փավստոսի մոտ:

Խորենացու «Հայոց Պատմության» գրվելու ժամանակի հարցում, ըստ Ադոնցի, վեոական ուժ է ստանում այն փաստը, վոր նա ոգտվել է Մարաբասից, այսինքն, ըստ Ադոնցի՝ Մեքենոսի մոտ պահված «Նախնական պատմությունից»: Յեւ յեթե ճիշտ է, վոր Անանունը (Ա և Բ դպրությունների հեղինակը) և Հերակլի պատմությունը գրող հեղինակը մինևույն անձն է՝ ապա Հայոց պատմությունը է դարից վաղ չե կարող գրված լինել: Բանասերի կարծիքով Խորենացին ապրել է դարում, նա Ղ. Փարպեցու հիշած Փիլիստոս Մովսեսն է, «այր ծեր և հիւանդոտ և անպարտաւ ի թարգմանութեանց»: Նա իբրև գիտնական այնքան հուշակավոր է յեղել, վոր ճշտագայում մի անհայտ, բայց տաղանդավոր հեղինակ գրել է «Հայոց Պատմութիւնը» և վերագրել Խորենացու անվան:

Մենք համառոտ ամփոփեցինք պրոֆ. Ադոնցի տեսություններն ու յենթադրությունները, վարոնց մեջ շատ քան ըստ մեզ վիճելի և անհավանական է: Բայց կարևորն ու արժեքավորը և ներկա հրատարակության վերաբերմամբ թանկագինն այն է, վոր նա ևս Ա և Բ կոչված դպրությունները ճանաչում է Մեքենոսի գործ: Դժվարինն այս էր Բ դպրության վերնագրի, (վորտեղ իբրև աղբյուր հիշված են Խորենացին և Ստ. Տարոնացին) վավերականությունը ճանաչելը՝ արդեն ժամանակի հարց է*):

*) Նույն հեղինակը 1904 թվին Խայթյանցի «Армянские Аршакиды» հետազոտությունը բնագրաբանելու, յուր հոդվածի վերջում տալով է. «Ближайшая задача критики Хоренского — умерить пыл увлечений и точнее определить время и место Историк Арменин в ряду памятников Армянской литературы VI—VIII ст.» (Зап. отд. Р. Арх. общ. 1904 թ. 160): Յնքն բանաբանն այս խոսքերով հնարավոր է համարւմ Խորենացու

Դ. Ալիսան «Հայապատումի» մեջ, վոր լույս տեսավ նույն 1901 թվին, անորոշ կերպով և խոստում Ա. և Բ դպրութիւններին ծագման մասին: Սերեոս, ասում և նա, շիր ժամանակին գործերն առաջ գրած և վերողջիչալ Հայկազանց և անոնց նախահոր Հայկայ հիշատակն, Խորենացոյն նման և աննման, և հայտնապես ուրիշ աղբյուրն հանած կամ ի նույն ինքն Մար-Աբասայ: Բանասիրաց վեհ յեղավ ի նորումս, թե ո՞վ և այդ ըմբից գրող կամ հավա-րողն: Հավանելի չե վողջախոհից, թե հնագույն քան զՍերեոս մեկն րլաւ. և ահա մեր հիշած Ապարանեցի վիպասանդ ցուցուց մեզ՝ Ղազար Փարպեցին և նա՝ վոր «Ի Մար-Աբայ մատենանս մրտեալ զՄծուրնացոյնին վերծանեալ» (յեր. 18): Մի ուրիշ տեղ էլ (յեր. 70) Սերեոսի և նրա Պատմութիւն մասին հակիրճ տեղեկութիւն տալով՝ Ալիսան վերջում ասում և. «Սերեոսի Պատմութիւն հրատարակողը ի 1851 և հետո ի սկզբան գրոցն գտած և կցած են այն հին պատմութիւն կոտորքն, վորոնց հեղինակը չգիտելով՝ Անանուց կոչած են, և մենք Ղազարա Փարպեցո ըլլալ հիշեցինք: Այս հատվածը պատմութիւնց՝ կերպով մ՝ անհայտաց-նեն Սերեոսի հատուկ պատմութիւնց սկիզբը կամ հառաջարանը»:

Ա. Բախչյան, («Արարատ» 1901, „Die Anfänge des armenischen Mönchtums“, 1904, „Politische und Kirchengeschichte Armeniens“, 1905) և Հ. Կ. Տեր-Սահակյան (Ալիշանի «Հայաստան հառաջ քան զլինելն Հայաստան» գրվածքի ծանոթութիւն մեջ, 1904) կարծիք հայանեցին, թե Սերեոսի Ա. և Բ դպրութիւններն նույն ինքն Փավստոսի՝ այժմ կորած Ա. և Բ դպրութիւններն են: Սրանց ապացույցներն են — Առաջին՝ Սերեոսի մոտ Անանունի Ա. և Բ դպրութիւնց քաժանուժը, վոր, ինչպես հայտնի չե՝ Մինրդատյանցի մեկ ճնարքն և. Յերկրորդն և Անանունի «Չաճա և զաւարտ երեց քաղաւորացն» խոսքը, վորուն մեջ Փավստոսի Խոսրով Բ, Տիրան, Արշակ, Պապ և Վարազդատ Թագավորնե-րուն մասին ակնարկութիւն կնկատե (Թուիլյան): Բայց Փավստոսի ժամանակագրական աղյուսակն ինչո՞ւ դուրս հանված են Արշակ (Բ), Վարդաշակ և Խոսրով Գ Թագավորները: Յերրորդ ապացույցն և Փավստոսի խոսքը, թե «է ինչ մեր պատմութիւն որ առաջին է, և է ինչ որ վերջին, իսկ որ միջին ինչ եղև այն

Պատմութիւն գրութիւն ժամանակը վեր հանել մինչև 2 դար՝ որոշով ամբա-
հապա տալովում և՛ Յորենացու Սերեոսյան Մարտարոսի սգոված լինելու տեսութիւնը, և քնդակառակը Բ դպրութիւն վերնագրի վաճառականութիւնը վերականգնում և. Բակ 2 դարից մինչև աճանգալան 6 դարը, ինչպէս հայ-
նի չե՝ մի քաջ և:

ի ձեռն այլոց գրել գրեցաւ: Անս Փափատոսի Պատմութեան այս առաջին մասը կազմելիս են յեղել նրա Ա և Բ դպրութիւնները, վոր սակայն նրա Պատմութեան մեջ չկան, բայց պահելն են Սեբեոսի Պատմութեան սկզբում Ա և Բ դպրութիւն անուններով: Զորրորդ ապացոյցն է Պրոկոպիոս պատմագիր ծանօթ հատվածը (տ. վերը յեր. ԾԴ), սակայն այս յերկու ապացոյցներով «ավելի Փափատոսի Ա և Բ դպրութեանց գոյութիւնը կցուցի. քան թէ Անանուհի Փափատոսէ հեղինակված ըլլալը» (Մատիկյան):

2. Ա. Մատիկյան 1903-ին գրեց մի ուսումնասիրութիւն «Անանուհի կամ Կեղծ-Սեբեոս» վերնագրով, (Ազգ. մատեն. Հ. արտատպված «Հանդես ամսորայի 1911—1913 համարներից», Սեբեոսի Ա և Բ դպրութիւնների մասին, նրանց աղբյուր ցույց տալով Փափատոսի՝ այժմ կորած Ա և Բ դպրութիւնները, Ինչպես ինքը հեղինակը հայտնում է՝ յոր տեսակետը նույնն է, ինչ վոր Թովմյանինը և Տեր-Սահակյանինը, «Հարգելի կարծեկիցներն իրենց տեսութիւնը համոզեցուցիչ կերպով չեն կրցած ապացուցել: Մենք պիտի փորձենք նույնը բարեխոսելով ապացուցանել ըստ ըստի նոր փաստերով» (յեր. 7): Հեղինակը մանրակրկիտ հետազոտութեամբ կարգաւոր Մանուհի յերկու դպրութիւնները, տեսել է, վոր նրանց մեջ «վստիկադաւան» և «ուչ-սփսկեդաւան» հաստատներ կան. այս է լինում նրան այս տեսութեանը մղող առաջին և գլխավոր պատճառը: Ենթ նա ուզում է ապացուցանել, «վոր Անանուհի Իմչ-Իմչ հաստատները, վորոնք գրին հապիվ կեսը կգրովն» հաստատներ են Ս զարա մեջ գրված Հայոց Յախմակամ պատմութեամբ մը, վորում ենդիմակն է Իմնինն իսկ Փափատոսը» (յեր. 9)^{*)}:

*) Այստեղ Մատիկյանը զուտ է մի դարձանալի ծանօթութեան, վոր հախմակ է գրքի «Անանուհի կամ Կեղծ-Սեբեոս» վերնագրին: Նա ասում է. «Անանուհի խմբագրողին խնդիրը՝ ուսումնասիրութեան մեջ անշուստի պիտի մնա: Պատկանան, Յախմակաց և ուրիշները, յենթագրելով վոր Ա և Բ դպրութիւնները Սեբեոսին չեն պատկանում՝ ստեղծեցին մի Անանուհի նկար, իսկապես՝ խմբագրող այս դպրութիւններին: Բայց չմ վոր գրածին հետաջոյս տեսան յերկու մանրամասն ուսումնասիրութիւններ (մերը և Աղանցիներ), վորոնց մեջ ապացուցում է ընդունվում եր, վոր այդ յերկու դպրութիւնները ենց Սեբեոսի գրածներն են: Մատիկյանին այս յերկու ուսումնասիրութիւններն էլ հայանի յեն: Ինչպես կարող եր նա, ասանց այս ուսումնասիրութիւնների այս կարծող յեղբակացութեանը հերքելու, կամ գտնել յաւանաւանութեանը հայտնելու՝ դարձաւ Անանուհին կամ Կեղծ-Սեբեոսին վերագրել յերկու դպրութիւնները: Ենթե նա յաւ դրվածքին վերնագիր զներ Հայոց նախնական Պատմութեան՝ կամ «Ա և Բ դպրութիւնները Սեբեոսի

Այս նպատակին հասնելու համար Մատիկյանը նախ աշխատում է ապացուցանել, վոր Փափստոսը զրած է յեղել նաև Հայոց նախնական պատմութիւնը, վոր այժմ պակասում է նրա զրբում: Ապացույց բերում է նախ՝ Փափստոսի խոստարանութիւն հայտնի Թրազը—«զի է ինչ մեր պատմութիւն՝ որ առաջին է, և է ինչ՝ որ վերջին, իսկ որ միջին ինչ եղև՝ այն է ձևոն այլոց զրել զրեցաւ»: Մատիկյանից առաջ շատերը, ի միջի այլոց Ադոնցը, այս Թրազին տվել են նույն մեկնութիւնը, ինչ վոր տալիս է նա, այսինքն վոր Փափստոսը զրած է յեղել հայոց նախնական («առաջին») պատմութիւնը, վոր յկա այժմ նրա զրբում, և «վերջին» պատմութիւնը, վոր մենք այժմ ունինք, և վոր սկսվում է Դ գպրութիւնը, իսկ չե զրել «միջին» պատմութիւնը, վորովհետև ուրիշները զրել են, միջինի տակ հասկանալով Թադևոս առաքյալի վարրը և Հայոց դարձի պատմութիւնը, վոր ուրիշներն արդեն զրել են: Հետո Մատիկյանը թարգմանաբար բերում է յերկու հատված Պրոկոպիոսից: Առաջինը Արշակ Բ-ի պատմութիւն վերջին մասն է—նրա Պարսկաստան կանչվելը, հայկական հողով ու ջրով հմայութիւն յենթարկվելը, Անհուշ բերդն արքորվելը, այնտեղ մի որ թագավորավայել կյանք վարելը և անձնասպանութիւն գործելը,—վորը Պրոկոպիոս, ինչպես ասում է՝ առել է «Հայոց Պատմութիւնից»: Տարակույս չկա, վոր այս «Հայոց Պատմութիւնը» Փափստոսի Պատմութիւնն է, վորի մեջ Պրոկոպիոսին շատ նման պատմված է Արշակ Բ-ի յեղերական վախճանը. (և ուրիշ հեղինակ չկա նույն բանն այդպես պատմող): Յերկրորդ հատվածը պատմում է Պարթևաց թագավորի Հայաստանի վրա թագավոր նշանակելը յուր Արշակ յեղոր (տե՛ս Սեբ. զ. Բ.), վորի համար Պրոկոպիոս մատնացույց է լինում նույն «Հայոց Պատմութիւն» վրա: Բայց այս տեղեկութիւնն այժմյան Փափստոսի մեջ չկա, այլ կա Անանունի մեջ: Ուրեմն Պրոկոպիոսի զիտցած Հայոց Պատմութիւնը, այսինքն Փափստոսի պատմութիւնը, պարունակելիս է յեղել և այն՝ վոր ներկայումս գտնում ենք Անանունի մոտ: Սրանից յեզրակացնում է, վոր Սեբեոսի

մոտ՝ մենք վոյնն չենք ունենա տարեկա Բայց զրվածքի վերնագիր գնել «Անանունը կամ Կեզմ-Սեբեոս», այսինքն վիճելին կամ աղացուցանելին իբրև աշխատելի և ապացուցված ընդունել և միևնույն ժամանակ Էջմազդի Ա և Բ գպրութիւնների խժրագրոյի հարցը չօգտփելուց՝ առ զիտակն մեթոգ չե և արամարտներն դատելով հակասական է:

Ա և Բ դպրութիւնների մեջ պահված հատվածները հայոց նախնական պատմութեան մասին՝ սկզբնապէս գտնվելիս են յեղեւ Փափստոսի Պատմութեան մեջ և կազմելիս են յեղեւ նրա պատմութեան Ա և Բ (այժմ կորած) դպրութիւնները:

Բայց այստեղ Մատիկյանի առաջ «Դժվարութիւն մը կհանեն Գ. Քալաթիւնց և Ստ. Մալխասյանց, վոր ե՛ր Փարպեցոյ այսպիսի գրութեան մը գոյութեան տգիտութիւնը և անոր կողմանէ փափստոսի «Դ դպրութեան» Բ պատմութիւնը հաջորդումը»^{*)}: Սակայն, շարունակում ե նա, այս դժվարութիւնը կմնա լոկ դժվարութիւն, փաստի ույժ չունի բնավ, վասն զի Փարպեցին Փափստոսի վոյ անծին և վոյ գրութեան վրա իրական ծանոթութիւն ունի» (յեր. 26) ^{**)}:

Բայց Մատիկյանն ինքն ել զգալով յուր այս բացատրութեան անզորութիւնը՝ վոյ պակաս կամայական և հակապատմական յենթադրութիւն ե անում: Նա կարծում ե, թե «Ղազար Փարպեցու ժամանակ՝ Փափստոսի առաջին պատմութիւնն արդեն բաժանված եր... Ղազար այնպիսի ժամանակ մը կապրեր, վոր թեև Մաշիոցներու և Սահակներու ժամանակեն շատ հեռու չեր, սակայն կրօնական և բազմաթիւ տնայական պահ. բազմաթիւ պատճառով այնչափ փոխված եր, վոր կարծես անոր հետ առնչութիւն մը չուներ: 50 տարւան մասնագետական անտարժապէսը մընայն՝ շատ բան մեր առջե կրնա պարզել: Այսպիսի աղետալից պարագաներու մեջ ո՞վ գիտե ինչ անցքերու

^{*)} Ղ. Փարպեցին (Պատմագիրք Հայոց. յեր. 25) բերում ե մի ցիտատներսն Մեծի տեեճն Արշակին և Արշակունիներին, և ասում ե, թե այդ տեեճը գրված և լի պատմութեան երկրորդումն ի հառին հնգետասաներորդին: Այս ցիտատը գտնվում ե Փափստոսի Պատմութեան չորրորդ դպրութեան տասնհինգերորդ գլխում: Այս վկայութեանից Գր. Քալաթիւնց (Ղ. Փարպեցի ե գործը նորին) և ժանք (Zeitschrift für armenische Philologie, I, եր. 64—67) իրարուց անկախ, յեղրակացիկ էյինք, թե ուրեմն Փարպեցու ձեռքին յեղած Փափստոսի Պատմութեան մոյ մեր աշխարհի Դ դպրութեանը Բ դպրութեանն եր, ուրեմն և աշխարհի Գ դպրութեանը, վորով սկսվում ե Փափստոսի պատմութեանը՝ նրա ձեռագրում և դպրութեանն եր, ուրեմն և Փափստոսի Պատմութեանը սկզբից թերի չե, և Ա, Բ կորած դպրութեաններ չե ունեցել:

^{**)} Փարպեցին հանձման հիշում և Փափստոսի այս-ինչ դպրութեանը, այս-ինչ գլուխը, դատապարտում ե նրա պատմութեան աստուգելարանութեանն, ել Բն իրախոն ծանոթութեան և պահանջվում նրա դպրութեան:

հանդիպեցաւ Փալատոսի Առաջին պատմութիւնը, վոր Ղազար յուր ունեցած ծնւագրին մեջ լգտաւ՝ (յեր. 27) *):

Ղազար Փարպեցու հարուցած դժվարութիւնն այս կերպով վերացնելուց հետո Մատիկյանը դիմում և յուր զլսավոր փաստին՝ ստուգապես յեզրակացնելու համար, թե Փարպեցու ժամանակ Փալատոսի Առաջին պատմութիւնը Խալեհեմ լեզվով կար, սակայն Փարպեցու այլից վրիպած և Այս փաստն և՛ Անանունի հատվածների համեմատութիւնը Փալատոսի հետ:

Հեղինակը նախապես նկատում և, վոր գրեթե բոլոր բանասերները քննութիւնն են տուելով Անանունի միայն առաջին Դպրութիւնը, վորովհետեւ, նրանց կարծիքով, Բ դպրութիւնը, խորենացու և Ասողիկի ժամանակագրութիւնից քաղված ինքնութիւնն գրութիւնն և։ Ինքը հակառակ և այս կարծիքին, «անհիմն և ըսել, թե խորենացիներ և Ասողիկներ քաղվածք մըն և Բ դպրութիւնը» մեր համեմատութիւնները՝ հիշտ հակառակը կհաստատեն։ Մանրութիւնն մեջ ել ըրելում և մի բանի անցքերու ժամանակագրութիւններ, վորոնք տարբեր կն ավանդված Բ դպրութիւնն և խորենացու մեջ, Յեւ ինքն շարունակում և. «Զի կրնար նաև Ասողիկներ քաղվածոյք ըլլալ այս Բ դպրութիւնը... յերկուք իրար հետ համեմատողը հայտնապես կտեսնեն թե բանարադողը Ասողիկն և և վոչ Բ դպրութիւնը»։ Առ այս նա մատնանիշ և լիում մեր «Սերեոսի պատմութիւնը» զրոյակի վրա, վորտեղ մենք նոյն միտքն ենք պաշտպանել, «միայն թե, տվեցանում և նա, Ստ. Մալաթայանցի Բ դպրութիւնն հեղինակին մասին ըսածներուն համամիտ լենք» (յեր. 29 և ծանոթ.)։

Այս խոստովանութիւնը Մատիկյանի հետազոտութիւնն մեջ ամենակարևոր կետն և, վորով ընդունում և, թե Բ դպրութիւնն վերնագրում հիշված Մ. խորենացին և Ստ. Տարնացին իրեն սղրյուր են ծառայել Սերեոսին, (ըստ Մատիկյանի՝ Անանուն խմբագրողին), և թե սխալ և Պատկանյանի և նրա

*) Այսպէս ուրեմն հինգերորդ դարի յերկուքը կեսը, Հայոց պատմութիւնն ամենախաղաղ շրջանը, յիւր պատեհազմ կռիվելու արժանի վոչ մի ընդհարում անգի չունեցաւ. (451 թ. առաւմտեցութիւնից հետո), Մատիկյանը վորակում և իրեն անընդհատ պատերազմներու շրջան, և այդ կեա զարը, ամենաարդատաբարը հայ ժառանգութիւնն մեջ, յիւր գրվելին նդիշելի, Ազաթանդեղոսի, Փաղատոսի, Խալեհեմ, Փարպեցու պատմութիւնները, յիւր յերան յեկով հունական դպրոցը, կտարբիցին յաղմաթիվ թարգմանութիւններ՝ Մատիկյանը վորակում և իրեն մատենագրական անշարժութիւնն շրջան։ Ինչևէ՛ Ղազարպի «Բ» գլխե Ինչ անցքերու հանդիպեալ Փաղատոսի Առաջին պատմութիւնը։

հետևողների կարծիքը՝ իբր թե նույն դպրության մեջ պատահող նման հատվածը դպրության հեղինակը բաղել է Ասողիկից, այլ ընդհակառակն է յեղել — Ասողիկն է բաղել Բ դպրությունից, ինչպես ապացուցել ելինք մենք:

Նախ բան Անանունը Փավստոսի հետ համեմատելը Մատիկյանը նկատում է, վոր այս դպրությունները, լեզվի տեսակետից, յերկու տարբեր խավերից են բաղկացած, մեկը վոսկեդարյան լեզու, վոր Փավստոսից բաղված հատվածների լեզուն է, իսկ մյուսը՝ ցելսադարյան (1) — Անանուն խմբագրողի լեզուն Յերկու լեզուների համար ել ղնում է նմուշներ Ա Դպրության սկզբի հետվածներից: Այնուհետև ընրում է զուգահեռաբար բաղմաթիվ հատվածներ դպրություններից և Փավստոսից, վորոնց մեջ նկատվում է զործածություն միևնույն բառերի, վոճերի: Սրան հաջորդում են բավական թվով որինակներ, վորոնց մեջ ցույց է տրված համեմադրությունը դպրությունների և Փավստոսի մեջ՝ պատմական տեղեկությունների վերաբերյալ — (յեր. 39 60), վորից և հանում է յեզրակացություն, թե Անանունի զործածած Մարաբասյան աղբյուրը Փավստոս է, և բանի վոր Խորենացին իր կողմից ոգտվել է այս Մարաբասյան աղբյուրից՝ սրանից հետևում է, վոր Խորենացու Մարաբաս-հատինան Փավստոս է, բայց Խորենացին վորոշ նկատառումներով այլափոխել կամ խարդախել է յուր աղբյուրը: (յեր. 61):

Այս բացարձակ վճիռը տալուց հետո Մատիկյանը յուր ուսումնասիրության վերջում Անանունի յերկու դպրություններից բաղում է ղնում է (յեր. 79—81) Փավստոսի Ա պատմության հատակտորները:

Շատ բան կարելի յեր առարկել «վոսկեդարյան» և «ցելսադարյան» հատվածների ընտրության, Փավստոսի Ա պատմության հատակտորների և ն մասին: Բայց դրանք չեն կարող շոշափվել այստեղ: Մի բան միայն անհրաժեշտ է ասել, թե Մատիկյանի՝ ըստ յերևույթին ապահով կառուցվածքն իրապես նման է խաղաթղթերից կազմած տնակի, վոր մի փչելուց կտապալվի:

Արդարև՝ անվիճելի փաստ է, վոր շատ մեծ նմանություն, գրեթե նույնություն է նկատվում Դպրությունների և Սերեոսի մեջ ըստ լեզվի, վոճի, պատմական տեղեկությունների, ինչպես ապացուցել է Խալաթյանց Ա Դպրության նկատմամբ և ապացուցել ենք մենք Բ Դպրության նկատմամբ: Դարձյալ անվիճելի փաստ է, վոր նույնպիսի նմանություն, գրեթե նույնություն

նկատուում և այս դպրութիւնների և Փալատոսի մեջ՝ ինչպես ապացուցել և ինքը Մատիկյանը:

Ի՞նչ կնկատես սրանից, Հայտնի մաթեմատիկական ակադմի համաձայն՝ յերբ յերկու բանակութիւն առանձին - առանձին հալմասար են մի յերրորդ բանակութիւն՝ նրանք հալմասար են իրար: Յերբ Ա և Բ Դպրութիւնները շատ նուան գրեթե նույն են - լեզվով, վոճով, պատմական տեղեկութիւններով - մի կողմից Սերեոսին և մյուս կողմից Փալատոսին՝ բնականապես յեզրակացում և, թե ուրեմն Սերեոս և Փալատոս շատ նման են միմյանց լեզվով, վոճով և այլն: Այս տրամաբանական հետեղութիւնը փորձով ել ապացուցել և Ակինյանը, Սա նկատում և, «Մատիկյան, վոր այնքան խնամքով լեզվական նմանութիւն, զուգակցութիւն փնտռած և նախերգանքի և Փալատոսի մեջ, անփութի զտնայած և Փալատոսի հետ համեմատութիւն առնելու նաև Սերեոսի Պատմութիւնը, ուր ավելի հարուստ թվով պիտի գտներ նույնանման լեզվական զուգակցութիւններ, բառեր, ասութիւններ, նախադասութիւններ իսկ. ուսկից իմարկե կարելի չե հետևցնել, թե նաև Սերեոսի Պատմութիւնը հատուկտոր մըն և «Ե դարու մեջ գրված» «Հայոց Պատմութիւն մը» (այսինքն Փալատոսի): Յուր խոսքերին իբրև ապացույց Ակինյան բերում և Սերեոսից և Փալատոսից բնդարձակ հատվածներ և բազմաթիվ համեմատութիւններ (յեր. 66 - 72):

Սրանից բոտ ինքյան հետեում և, վոր Ա և Բ Դպրութիւնների այն հատվածները, վոր Մատիկյանն կնքել և «Փալատոսից հատակտորներ» անուևով, պարզապես Սերեոսի գրածներն են, ինչպես և բնական եր սպասել, վորոնք սակայն Մատիկյանը սխալմամբ վերագրել և Փալատոսին՝ խաբվելով Սերեոսի և Փալատոսի լեզվի և վոճի նմանութիւնից: Իսկ այն «ցեխադարյան» լեզվի որինակները, վոր Մատիկյանը նկատել և Ա և Բ Դպրութիւնների մեջ, բաղական թվով պատահում են Սերեոսի Պատմութիւն մեջ, ուրեմն այս կտորներն ել պատկանում են Սերեոսին, այնպէս, վոր Ա և Բ Դպրութիւնների մեջ խմբագրողի «ցեխադարյան» լեզու և Փալատոսյան հատվածների մեջ «վոսկեդարյան» լեզու վորոշելու տեսութիւնն ել նույնպես տապալվում ե:

Սերեոսի Պատմութիւն վերջին քննութիւնն բոտ ժամանակի, վորքան գիտենք՝ Ակինյանի հետազոտութիւնն և՛ «Սերիոս յակիսկոպոս Բագրատունյաց և յուր պատմութիւնն

ի Հերակլն» վերնագրով. (Ազգ. մատենադարան, ՃԴ, 1924, արտատպված Հանդես Ամսորայից), վոր միևնույն ժամանակ հանդիսանում է իբրև առաջին քննություն Սերեոսի ամբողջ Պատմության, և վոյ թե նրա Ա և Բ դպրությունների, Հեղինակը հայտնում է (յեր. 99) «նկատմամբ նախերգանքի (Ա և Բ դպրություններու) հեղինակին՝ ընդգրկենք ամբողջությամբ Ստ. Մալխասյանցի յեզրակացությունն, վոր կհանգի հայն, թե Ա և Բ դպրությունները «անտարակույս Սերեոսին են պատկանում, իբրև նրա Պատմության անբաժան, համերաշխ և անհրաժեշտ մասերը»։ Այս միակ ուղիղ համոզմունքը կազմելով, և Ա և Բ դպրությունների ու նրանց նորահնար Անանուն հեղինակների՝ տասնյակ տարիներով տիրապետող հմայքն իրանից թոթափելով՝ քանասեր Ակինյանը դիտել է Սերեոսի Պատմությունն իբրև մի ամբողջություն, սկզբից մինչև վերջը հորինված մի զրյից մի վորոշ ծրագրով, և իբրև այսպիսին ել նա քննել է այս Պատմությունը բազմակողմանի կերպով և մանրամասնորեն առանձին-առանձին հոդվածներով։

«Սերեոսի Պատմության ձեռագիրները» հոդվածում (յեր. 4—15) նա նկարագրում է իրեն հայտնի բոլոր ձեռագիրները և տալիս է նրանց հյուղագրությունը։ Նա գիտե յերեք մայր ձեռագիր և վեց նոր ընդորինակություններ. (տ. այս մասին վերրյեր. է—ԺԲ)։ Նրան հայտնի չեն պետ. Գրչագրական Մատենադարանի նորագյուտ յերեք ընդորինակությունները. №№ 2867, 3122, 6454. Մի թյուրիմացություն կարևոր է այստեղ ուղղել։ Հ. Ակինյանը գրում է (յեր. 15), թե «Բրոսսե յերկու տեղ միայն կհիշատակե թերույթ (611) ձեռագրին մեջ. եջ 10, ուր 4 եջ դատարկ մը կա... և դարձյալ եջ 16—17, իբր 7—8 եջ դատարկ մը»։ Սյս դատարկները եջեր չեն, այլ «աղտ», վորոնք Միհրդատյանը 1850 թվին լրացրել և Հին որինակից։ Բրոսսե ձեռագիրը տեսել եր 1847—1848-ի ուղևորության ժամանակ, յերբ դեռ այդ դատարկները լրացրած չեյին։

Հաջորդ հոդվածն է «Սերեոսի Տպագրությունները», վորտեղ մանրամասն նկարագրում է Միհրդատյանի անդրանիկ տպագրությունը, նրան խիստ դատապարտելով, և Պատկանյանի տպագրությունը, վորը «անհամեմատ ընտիր» է համարում նախորդի քաղգատությունը։ Նա չե հիշում Բիֆլիսի 1912 թվի տպագրությունը (Ղուկասյան մատենադարան, է), վոր արտատպություն է Պատկանյանից)։

Հաջորդ հոդվածն է «Պատմության խորագիրը» (յեր. 17—19)։ Այստեղ հիշում են, վոր ըստ վկայության Բրոսսելի և Միսարանի՝ ձեռագիրը չունի վոչ վերնագիր և վոչ հեղինակի անուն, և ուրիշներն հետ ինքն ել հավանական են համարում, վոր «Սեբեոսի պատմություն ի Հերակլին» վերնագիրը գրել են Յ. Շանխաթունյանը։ Միջնադարյան հեղինակները զանազան կերպով են կոչել Սեբեոսի Պատմությունը. ինքը հարազատագույն խորագիր են համարում՝ «Պատմութիւն Հերակլի ի Սեբիոսէ նպիսկոպոսէ ասացեալս»։

Հետևյալ հոդվածը վերնագիր և կրում «Հեղինակին անունը», (յեր. 18—26)։ Միջնադարյան հեղինակները միաբերան Սեբեոս են կոչում Պատմության հեղինակին, (իսկ մեկը նվաճքի)։ ԴՊսա ժողովին ներկա յեղող յնպիսկոպոսներից մեկի անունը ձեռագիրներն մեջ տարբեր կերպով են գրվում—Սեբիոս և Սեբեոս։ Առաջտրկում են ընդունել անվան հարազատ ձևը—Սեբեոս կամ լավ էս՝ նվաճեալս։ Այստեղ բանասեր Ակինյանը բերում է Սեբեոսի կենսագրությունից այն հատուկտոր տեղեկությունները՝ ինչ վոր կարելի յն մակարերել նրա Պատմության մի քանի տեղերից։

Չորրորդ հոդվածի վերնագիրն է «Պատմության բաժանումը» (յեր. 25—28)։ Սեբեոսի Պատմության սկզբնագիրն, ըստ բանասեր Ակինյանի, յերեք գլխավոր բաժանմունք ունեցած է. 1. նախերգանք՝ «նախնեաց պատմութիւն», (ներկա հրատարակության մեջ գլ. Ա—Է). 2. Ա գիրք կամ դպրություն՝ «Պատմութիւն Թագաւորական, վէպք յԱպրուէզն Խոսրով» (գլ. Ը—ԼԹ), և 3. Բ գիրք կամ դպրություն՝ «Բարձունն Սասանականին և մուտ որդւոցն Իսմայելի յաշխարհս Հայոց», (գլ. Խ—Մ)։ Այս բաժանումն Ակինյան արդարացնում են վոչ միայն բովանդակութեամբ, այլ և Սիմ. Ապարանեցու մի վկայութեամբ, թեև հայտնի չեն, թե այսպիսի ստորաբաժանումներ ձեռագիրներն ունեցե՞լ են թե վոչ։ Ձեռագիրները (հատկապես № 611) նյութը բաժանում են հիսուն հատվածի, վորոնցից մի քանիսն ունին վերնագիրներ, իսկ մյուսները չունին։ Այս առիթով բանասեր Ակինյանը մեղադրում է Միջնադարյանին, վոր անտես անելով ձեռագրի այս հատածները՝ Սեբեոսի Պատմությանը նոր կերպարանք են տվել, բաժանելով յերեք դպրությունների և վերջինը 38 գլուխների։ Այստեղ բանասեր Ակինյանը խոսում են ընազրի «ամբողջութեան» և «յետեառաջութիւնների» մասին։ Նա նկատում է, վոր

Սեբեոսի մեզ հասած ձեռագիրները շատ ազդեցական են. թղթեր են դուրս բերված*), տեղափոխված, պատահում են և անընթեռնյի տեղեր. այնպես վոր անհրաժեշտ է ունենալ հնագույն գրչագրի մը վրա վերակազմած նոր բնագիր մը (Շատ իրավացի ցանկություն, յեթե միայն այդպիսի մի հնագույն գրչագիր գտնվեր)։ Թղթերի յետևադաշտավորությունն պատճառով բնագիրը շատ տեղ խանգարված է, վորը չեն նկատել հրատարակիչներն ու թարգմանիչները։ Հիշում եմ, վոր առաջին անգամ մենք ենք ուշադրություն դարձրել նման յետևադաշտավորությունների, և ուղղություններ մտցրել, (տ. այս մասին մեր ծանոթ. 30), ինչպես նաև Մարկվարտը։ Բայց Սեբեոսի Պատմությունը շատ ավելի խանգարած է, քան այս քննությունները մատնանշել են։ Ինքը վերոհիշյալ ուղղումների վրա ավելացնում է յուր կողմից մի շարք նոր ուղղումներ իրեն առաջարկություն, վորոնց վերջնական ճշտությունը կարելի չե ստուգել միայն ընտիր ձեռագրի վրա։ Այս ուղղումների թիվը հասնում է 26-ի, վորոնցից մի քանիսը տարածվում են 6—7 յերեսի վրա (յեր. 30—38), Մենք, վոր ներկա հրատարակության բնագիրը պիտի վերակազմելինք հնարավորին չափ կատարյալ և հարազատ ձևով բնականապես շատ հետաքրքրվեցինք այս ուղղումներով, և մի առ մի ստուգելով. հուսախաբ յեղանք. գոնե չվատահաճանք վորեն մեկից ոգտվել և բոտ այնմ տեղափոխել հաստատվածները։ Ինքն ել վերջը նկատում եմ, վոր «Գուցն յուր արած փորձը հանդուգն թվի և գուցե վորոշ տեղեր ավելի լավ կերպով կարելի լինի դասավորել»։

Հաջորդ հոդվածն է՝ Սեբեոսի պատմության «Բովանդակությունը» (յեր. 36—45), վորտեղ համառոտակի մեջ է բերում Սեբեոսի գրած Հայոց պատմությունը նախնական ժամանակներից սկսած մինչև յուր ժամանակը. ամբողջապես բերում է Ը գլխի նախնականքի յերկրորդ մասը, վորտեղ Սեբեոս մի առ մի թվում է այն նյութերը, վորոնց մասին խոսելու չե։ Այս մասում Հ. Ակիմյանը նկատում է, վոր Սեբեոս հաճախ լուծության է մատնում Հայոց յեկեղեցական շատ կարևոր գործերը, մինչդեռ նշանակություն է տալիս յերկրորդական բաներին։

Հաջորդ՝ վեցերորդ հոդվածում կանգ է առնում «Պատմութիւն ի Հերակլ» անվանակոչության վրա, վոր չե համա-

*) Հ. Ակիմյանն ևս չե նկատել, վոր Մամիկոնյաններին վերաբերյալ հաստատելի առաջ մի թուզք է բերված։

պատասխանում Պատմութեան բովանդակութեանը: Այս մասին մեք ե բերում չ. Դաթրեքեյանի բացատրութեանը, թե Հեբալկ կայսրը, խորտակելով Սասանյան տերութեան զորութիւնը և խաչափայտը գերութիւնից վերադարձնելով մեծ խանդավառութիւն առաջ բերեց քրիստոնեայ աշխարհներում, և զուցե Սերեոս հորգորվեց գրել նրա արշավանքների պատմութիւնը, բայց հետո յուր պատմութեան ծավալն ընդարձակեց: Այնուամենայնիւ, քանի վոր Հերակլի պատմութիւնը փոքր տեղ և դրավում Սերեոսի մօտ, և քանի վոր սա յուր ամբողջ մաղծը թափում և խոսքով Ապրուեզի վրա և խոստանում ե գրել «զվէպս ի կործանիլն և յապականողն խոսքով, յԱստոծոյ անիծեայն»՝ շատ բնական կլիներ գրել վերնագիր դնել «Պատմիւն յԱպրուեզն խոսքով»: Ինչպես կարծում ե չ. Ակինյանը, Գուցե, ասում և նա, հետագա մի պատմիչ փոխել ե սկզբնական վերնագիրը, որ կրում եր աշխարհավեր և ոտարադեն թագավորի անունը, և տեղը դրել և բարեպաշտ Հերակլի անունը (յեր. 48):

Այնուհետեւ չ. Ակինյանը խոսում ե Սերեոսի Պատմութեան «Արժեքի» մասին (յեր. 48), Սերեոսը առաջինն ե յեղել— (ինչպես հայտնի յե՝ չ. Ակինյանը խորհնացուն համարում և ուշ ժամանակի պատմիչ, Սերեոսից հետո)—վոր գրի յե առել Հայոց նախնական ժամանակի պատմութիւնը, վորին կցել և «զառ ի յապայսն եղեալ» անցքերը և իրեն ժամանակակից պատմութիւնը, այնպես վոր նրա գրվածքը Հայոց պատմութեան առաջին փորձն ե: «Իրրե աշտպիսի՝ լենք կրնար անշուշտ պահանքել հատկապես հնագույն Հայոց պատմութենեն ամեն կատարելութիւն, և վոչ այն՝ ինչ վոր ապա հաջողուցած ե Մ. խորհնացի»: Նա սիրող՝ հետաքրքրվող, հետազոտող անձ և, հարգութիւնը և արել ականատեսներին, ծանոթացել և նախնի քաջաց վեպերին, ոգովել և գրավոր աղբյուրներով, հետեւել և ժամանակագրութեան, աշխարհագրական տեղերը ճիշտ նշանակելու: Նա վոչ միայն գրել ե Հայոց պատմութիւնը, այլ և «շնապանական պատմութիւն», այսինքն ճշտվ և անընդհատ նկարագրում և Հայաստանի՝ մերձավոր դրացի պետութիւնների հետ ունեցած հարաբերութիւնները, «Փորձառու, հեռատես, յուրջ և անկողմնակալ պատմիչ ե, գիտե ուղիղ դատել, ի հարկին պարսավելով ազգայինն ալ, ոտարինն ալ, հեռու ազգայնամոլ ոտարատյաց ձգտումներե: Չնայելով վոր ունի թերութիւններ,

այքաթող և անոււմ շատ կարեւոր քաղաքական և յեկեղեցական խնդիրներ, այնու ամենայնիւ նա «արեւելյան պատմութեան համար անսպառ աղբյուր ե... Ինքը կուղղե, կհաստատե և կլրացնե հույն և ասորի հեղինակներու վկայութիւնները: Զարմանալի յե իր համածայնութիւնը այն ասորերեն ժամանակագրութեան հետ, զոր հրատարակեց Գվիդի (Guidi) Նելզեկեյի թարգմանութեամբ»:

Այնուհետեւ կանգ առնելով Սերետսի Պատմութեան «Դրութեան ժամանակի» վրա՝ Հ. Ակինյանը գտնում ե, վոր Սերետսի սկզբնական ծրագիրն ե յեղել գրել մինչև 852 թվականը, այսինքն մինչև Մասանյան տերութեան բարձումը, բայց հետո՝ կարեւոր ե համարել մի քանի տարւոյ ել շարունակել մինչև Մուսվիայի միապետելը, այսինքն մինչև 861 թվականը: Այնուհետեւ Հ. Ակինյանը խոսում ե Սերետսի «լեզվի» մասին: Այս լեզուն, ըստ Գաթրոնյանի գնահատութեան, դասական լեզվի կենդանական հյուլքը դեռ կորցրած չե, անհամեմատ բարձր ե Յոհան Մամիկոնյանից, նույն իսկ ավելի վողորկ քան Փարպեցու լեզուն: Շատ տեղ նկատվում ե հետեւողութիւն Ագաթանգեղոսին, Փաւստոսին, Նդիշեյին, Ս. Գրքի թարգմանութեան, բայց շատ ճարտարութեամբ: Բանասիրութեան համար ոգտակար ե յուր բառերով, բայց վոյ քերականական համածայնութեամբ: Նա բավականաչափ ճշիւ ե, և ամենից առաջ՝ բնական. նա ազատ ե ըռնազրոսիկ ու չափազանց սեթեւեթ վոճից, սխալ և անհարմար գործածութիւններից, խորթ՝ ոտար և հելլենարան, շարադրութիւնից, կամ բոլորովին մերկ, ցամաք և հետեակ բանակարգութիւնից:

Սրանից հետո Ակինյանը դնում ե ցուցակ Սերետսի Պատմութեան կամ մանր քաղվածքների «թարգմանութիւնների» և «քննութիւնների», վորոնք մենք կգետնողենք քիչ հետո:

Յոթներորդ հոդվածում (յեր. 60—74) նա խոսում ե Սերետսի «Աղբյուրների» մասին: Բացի այն աղբյուրներից, վորոնք արդեն ցույց եր տվել նախնայնցը, այսինքն Ս. Գրքից, Փաւստոսից, Ագաթանգեղոսից, Նվսեբիոսից և Նդիշեյից (տ. յեր. I—II), Ակինյանը յուր կողմից ցույց ե տալիս և ուրիշ աղբյուրներ, վոր են Պատմապետ (Վահրամ Միհրեվանդակի յերկու թուղթը և Մուշեղի պատասխանը, Մողեստոսի թուղթը և Կոմիտասի պատասխանը, Դավանութեան թուղթը, վոր հայերը գրեցին Կոստանդկայսրին, վորի անվավերականութեան ապացույցներ բերինք:

մենք (տ. ծանոթ. 64) և վորի վաւերականութիւնը կատկածի յն յենթարկած յեղել նախ Յ. Դաթըրճյան), ամբար տվածդարձ-
ներ և ակտնատեսների վկայութիւններու Առանձնապես հետաքրք-
րական և Ակինյանի գրածը Փաւստոսի վերաբերմամբ: Մեղա-
դրելով Մատիկյանին, վոր նա Փաւստոսի հետ համեմատել և
միայն Դպրութիւնները և նրանց լեզվի ու վոճի նմանութեան
վրա հիմնվելով հայտարարել և, թէ Մարարա Մծուրնացին
նույն ինքը Փաւստոսն է՝ Ակինյանը դիտել և, վոր նույնպիսի
նմանութիւն կգտնելինք՝ յենթե համեմատելինք Փաւստոսի հետ
անկասկած Սերետի գրածը, և այս բանը նա ապացուցանում
է բազմաթիւ համեմատութիւններով Սերետի և Փաւստոսի:
Մրանից արդեն յեղրականութիւնը պարզ և (տ. վերը յեր. ԿԳ):

Հաջորդ ութերորդ հոգւածը կրում և վերնագիր «Նախեր-
գանքի սկզբնաւորութիւնը կարող և սրբագրութիւն»։ Ակինյանը
նկատում և, վոր Սերետի հնազույն որինակն սկզբում «չատ
մաղիւծ և յեղել և քայքայված, վորով մուտ գտած են վրիպա-
կան ընթերցվածներ և տողերու յետևադրութիւն, վորը... առիթ
և տվել բանասերներու՝ հայտնելու պես-պես կարծիքներ նախեր-
գանքի շուրջը»։ Նա վործում և «վերականգնել սկզբնաւորու-
թիւնը բանի մը «հանդուզն» սրբագրութիւններով» (յեր. 74),
և բերում «և յուր սրբագրութեամբ Պատմութեան սկզբի
մասը «եւ եղև ոչ ի կամայական պիտոյից» մինչև «որ զառա-
ջինն թագաւորեաց ի վերայ երկրի»։ Մենք չենք կարող բերել
այդ սրբագրված բաղական ընդարձակ հատվածը: Բաղականա-
նում ենք նշելով հետեյալ սրբագրութիւնները:

Բնագրի «գանատարագրել» աղավաղված բառը դարձած և
«զանստոյզն նկարագրել»:

«Ջիմն յիշատակել առասպելս» դարձած և «զսուտն յիշա-
տակել զառասպելս»:

«Անդ հայելով ի մատենան Մարաբայ փիլիսոփայի Մծուր-
նացւոյ» դարձած և «Անդր հայելով ի բանսն Ազաթագեղոսի
փիլիսոփայի Մծուրնացւոյ»:

«Զոր եզիտ» դարձած և «զոր գտի»:

«Ի Մծրին քաղաքի» դարձած և «ի Մծուրք քաղաքի»:

«Ի նորին աշակերտացն»՝ դարձած և «ի նորին դաստա-
կերտսն»:

«Բանգի այսու ունէր վերնագիրն» դարձած և «բանգի այս
օրն ունէր վերնագիրն» և այլն:

Այս սրբազրությունները կամայական են, չապացուցված և վոյ համոզիչ. ավելին ասենք. անթույլատրելի յն բնագրի ուղիղ բնթերցվածները—«Մարաբայ փիլիսոփայի», «Ի նորին աշակերտացն», «Ի Մծբին բաղաքի»—փոխել «Ազաթանգեղեայ փիլիսոփայի», «Ի նորին դաստակերտսն», «Ի Մծուրք բաղաքի», Ինչ իրավունքով և արել Ակինյանը այս սրբազրությունները, բանի վոր բնագիքն այս տեղերում վոյ մի ազավազության հետք չէ կրում և միանգամայն հասկանալի յե:

Իններորդ հոգվածի վերնագիրն է՝ «Սերետոս, խորենացի և Մարաբայ մատյանը»։ Ինչպես վոր Պատկանյանի կարծիքը, թե Ա և Բ Դպրությունները Սերետոսին լեն պատկանում, ստեղծեց մի հիպնոզ, վորին հայկական բանասիրությունը յենթարկված մնաց մի բանի տասնյակ տարի և վորից հազիվ հազ այժմ կարողացավ սթափվել՝ այսպես ել Գարրիների և Քալաթյանցի տեսությունը, թե խորենացին ուշ ժամանակի, իններորդ դարի մատենագիր է՝ ստեղծեց մի ուրիշ հիպնոզ, վորին մինչև այժմ յենթարկված են հայկական բանասիրությամբ զբաղվողներից շատերը։ Յեվ ինչպես վոր Պատկանյանի կարծիքը տեղիք տվեց բաղմամթիվ՝ մեծ մասամբ անհիմն յենթադրությունների և մեկնությունների՝ այնպես ել Գարրիների և Քալաթյանցի տեսությունը դուռ բացեց ավելի բաղմամթիվ կամայական և անհամոզիչ յենթադրությունների ու տեսությունների, Յեվ համոզված ենք, ինչպես վոր փարատվեց Պատկանյանի հիպնոզը, և Սերետոսի անունը կրող Պատմությունն ամբողջապես հանալվեց Սերետոսի գործ՝ այսպես ել, վոյ շատ ուշ, խորենացին կհանալի հինգերորդ դարի հեղինակ, այն անծը՝ ինչպես ինքը վկայում և յուր մասին։ Սրա համար հարկավոր է մի բան ընդունել, մի շատ բնական և ապացուցված բան,—այսինքն թե խորենացու Պատմությունը դեռ հին ժամանակ (զուցե յոթներորդ կամ ութերորդ դարում) յենթարկված և հիմնական խմբագրության, և մենք ներկայումս ունինք այդ խմբագրությունը, իսկ սկզբնագիրը կորած է։

Այս ակամա շեղումը կատարեցինք, վորպեսզի ասենք, թե Ակինյանն ել այն բանասերներից է, վոր յենթարկված և Գարրիների և Քալաթյանցի հիպնոզին. ուստի յերը նա խոսում և խորենացու և Սերետոսի աղերսի մասին՝ բնականապես խորենացուն պետք և ներկայացնե իրու Սերետոսից ավելի ուշ գլուղ և նրանից ոգտվող հեղինակ, Իսկ ինչ վոր Սերետոսի բնագրում

հակասում եւ այս տեսութեան՝ նա պիտի մզնի բռնազրոսիկ կերպով վորեն կերպ բացատրել՝ դժվարութիւններէջ դուրս գալու համար:

Այսպէս՝ «կերեալ թէ Խորենացոյ ձեռքը զտնված որինակին մէջ առնե՞ Մծուրքը կարդացված եւ Մծրին», վորի հետեւանելով Խորենացին Սանատրուկի ապարանքը փոխադրել եւ Մծրին (Խոր. Բ. 12), Թե ինչպէս Մծուրք բառը, վոր անաղարտ պահպանված եւ մեր ձեռքը հասած բոլոր ձեռագիրներում, Խորենացու ժամանակ առնե՞ կարդացվել եւ Մծրին՝ մի առեղծված եւ՝ վոր ինքը հետող Ակինյանն ել չի կարողանա լուծել: Դարծյալ նա յենթադրում եւ, թե Խորենացու որով Սեբեոսի բնագրում յեղել եւ «ի բանսն Ագաթանգեղեայ», բայց անազանագոյն ժամանակի գրիչ մը... այստեղ ալ հնագույն պատմութեան աղբյուր ներկայացուցած եւ Խորենացու «մատյանն Մարաբայ», Վո՞ր գրիչ մտքից կանցներ՝ ամենահեղինակավոր՝ Տրդատի քաջ քարտուղար՝ ամենահայտնի Ագաթանգեղոսի անունը փոխարինել մի անհայտ Մարաբասի անունով—այս առեղծվածն ել դարծյալ մտում եւ լուծել հնարողին: Այսպէս նաեւ «հետնագույն գրիչ մը» ջանացած եւ Սեբեոսի անհամանայնութիւնը ազգային միութեան «համաստի եւ հշմարիտ մատենագրաց» հետ հաշտեցնել՝ լրացնելով (և տեղ տեղ կրճատելով) արքայացանկը՝ (խոսքը Դ զլսի սկզբի մասին եւ): «Յետ մահուանն Աղեքսանդրի» մինչև «Պայազատը նորին» — ամբողջապէս փոխառութիւն եւ Աստղիկեն: Բայց մի՞թե այս զլսի վերնագիրը— «արգ. եթէ պիտոյ էրեզ, ով ընթերցասէր, ներկորդեցից ի պատմագրացն Մովսիսի Խորենացոյ և Ստեփանոսի Տարոնացոյ... զորդի ի հարէ մանալել», մի՞թե այս վերնագիրը բարձրագոյ չի ազադակում, թե իրեն՝ Սեբեոսի գրածն եւ, նրա հատուկ վճռով ու սովորութեամբ, վոր գրքի մէջ տասնյակ անգամներ պատահում եւ Խորենացու անունը կա վերնագրում, և արդէն հիպոթոսը ներգործում եւ:

Այսպէս ըստ կամի փոփոխելով Սեբեոսի ուղիղ և հասկանալի բնագիրը՝ Ակինյանը ինքն ել նկատում եւ հակասութիւններ, վորոնք աշխատում եւ լուծել, բայց անաղող կերպով: Նրա յեզրակացութիւնն եւ այս մասում. «Մարաբաս գործ լուծի Սեբեոսի հետ, և անոր մատյանը, իբրև Խորենացու հնարագիտութիւնը, կմնա տնացվածք Խորենացու Այսպէս՝ Խորենացի ազգված Սեբեոսին՝ փոխադարձաբար ազգած եւ Սեբեոսի վրա՝

անազանագույն ժամանակի ընդորինակողներու ձեռք» (Յեր. 80—84)։

Հոգւածի շարունակութեան մեջ Ակինյանը կանգ ե տնոււմ «Ազաթանգեղոս» անվան վրա, և կարծիք ե հայտնում, թէ Հայոց դարծի պատմութիւնը զրոյ անհայտ հեղինակը ծանոթ ե յեղել Ազաթանգեղոսի անունը կրող արծանագրութեան, և այս անունն ել ինքը դրել ե յուր պատմութեան վրա (Յեր. 84)։ Բոլորովին հակառակ կարծիքն ավելի հավանական կլիներ։

Այնուհետև խոսում ե Ազաթանգեղյան արծանագրութեան մասին, վորի վավերականութեան վրա բնավ չե կասկածում, որինակ բերելով ուրիշ նման մի արծանագրութիւն Նեմրութ-Դաղի բարձրունքի վրա։ Խոսում ե և Մծուրքի մասին, վոր Փափտոսի ժամանակ արդեն փլատակ ե յեղել, և վորի տեղը մոտավորապես վորոշում ե Ողական ամրոցի մոտերը, Արածանի և Մեղ գետերի խառնուրդի մոտ։ Խոսում ե Խոսրով Ապրունգի շինել տված հռչակավոր «գաստակերտի» մասին (այս դաստակերտը Ակինյանը ինքը մտցրել ե Սեբեոսի բնագրի «աշակերտացն» բառի տեղ)։ Վերջապես խոսում ե «Արծանագրութեան պատճենի» մասին։ Սեբեոս Ազաթանգեղյան արծանագրութեան վերնագիրը բերելուց հետո խոստանում ե. «Ջոր փոքր մի և ապա յիւրում տեղւորն տեսցես զպատճենն»։ Վո՞րտեղ ե այս պատճենը։ «Ջուր ե փնտռել զայն, ասում ե Ակինյանը. հիշու այն տեղ, ուր կակնկալվեր կարդալ պատճենը՝ Սեբեոսի բնագիրը մեծ խանգարում կրած ե»։ Բայց և այնպես նա գտնում ե, վոր այդ պատճենը՝ Բ գլուխն ե—«Ապստամբութիւն Պարթևաց, որ եղև ի յայս ժամանակի» մինչև «զլորրորդն ի Հայաստան աշխարհի», վոր «Ժամանակագրին» (Ակինյան ժամանակագիր հասկանում ե Ազաթանգեղոսին) տողերուն ընդլայնված խմբագրութեան նկարագիրն ունի» (յեր. 94—95. Տես այս մասին մեր ծանոթ. 12 և 16)։

Յուր բնութեան վերջում Ակինյանը հիշում ե, վոր Սեբեոսի առաջին չորս գլուխները զանազան հեղինակների յնն վերագրվել բանասերների կողմից—Մարաբասին, Կեղծ - Ազաթանգեղոսին, Կեղծ - Սեբեոսին, Անանունին, Փ. Բյուզանդին, Ղ. Փարպեցուն և այլն։ Այս այլազան տեսութեանց զրգիւ տված եր Միհրդատյանց, վոր մուծած եր ըստ կամի նախերգանքի մեջ Ա և Բ Դրպրութեանց զանազանութիւն և... ամբողջ «Ա Դպրութիւնը» առած եր չակերտի մեջ, ինչպես մասն արծանագրութեան Ազա-

թանգեղյա» (յեր. 97—98); (Ալիւնյանը յօւթյան և տալիս Պատկանյանին, վոր գլխավոր պատճառն յեղալ հիշյալ ցավալի թյուրիմացության): Քերր համակարծիք չե այս բանասերներին, վորոնք Ա և Բ զպրություններն անքատում են Սերեոսի Պատմութիւնից իրրե Անանուն հեղինակների զործեր՝ պատահաբար կցված Սերեոսի սկզբին, այլ ընդունում և ամբողջությամբ մեր յգրականութիւնը, թե Ա և Բ Դպրութիւններն անտարակույս Սերեոսին են պատկանում, իրրե նրա Պատմության անբաժան, համերաշխ և անհրաժեշտ մասերը» (յեր. 99):

Բացի վերոհիշյալ ընտելութիւններից, վորոնցից վերջինների բովանդակութիւնը հարկ համարեցինք բալական մանրամասն բերել՝ մեր զիտողութիւններով, յույս են տեսել և ուրիշ մասնավոր զրգածքներ Սերեոսի անձին և Պատմության, ինչպես և Ա և Բ Դպրութիւններին վերաբերյալ, վորոնց ցանկը բերում ենք Ալիւնյանի զբրույկից (յեր. 59—60 և 101—102):

Ernest Gerland, „Die persischen Feldzüge des Kaisers Heracleios“, Leipzig, 1898.

Angelo Pernice, L'imperatore Eracleo, Firenze, 1905.

Յն. Տեր-Մինասյան, «Այսպես կոչված Պարսից ժողովը»: «Արարատ», 1907 թ., յեր. 179—195.

Հ. Անտոյան, «Նորագյուտ բառեր Սերեոսի մեջ»: «Արարատ», 1911 թ., յեր. 230—231.

Marquart, „Die Listen der eranischen und armenischen Arsaciden bei Mar-Abas und Ps.-Moses Xorenaci“, ZDMG, 1895, յեր. 646—659.

Marquart, Untersuchungen zur Geschichte von Eran. Die angeblichen Zariadrimünzen und die Fürsten von Sophene bei Mar Abas und Ps.-Moses Xorenaci“, Göttingen, 1896, յեր. 37—42.

Հ. Տաշյան, «Արշակունի դրամներ», Բ. յեր. 226—229...

Բ. Սարգիսյան, «Միմեոն Ապարանեցի և Կեղծ - Սերեոսի առեղծվածը»: «Բազմավեպ», 1910, յեր. 1—9, 33—39.

Դր. Տեր-Պողոսյան, «Նկատողութիւններ Փափստոսի Պատմության վերաբերյալ», Վիեննա, 1912, (արտագ. «Հանդ. Ամստրեայ»-ից)

Վ. ԽԵՐԽԵՐԵՐԵՆ ԹԱՐԿԱՆԻՐՈՒՄՆԵՐ

Սերեոսի Պատմութիւնն ամբողջապես թարգմանված և նախ ռուսերեն լեզվով Վ. Պատկանյանի ձեռքով, Դիտութիւն-

ների Ակադեմիայի հանձնարարությամբ, «История императора Иракла. Сочинение Себеоса, писателя VII века. Перевод с армянского с объяснениями и примечаниями К. Патканьяна, С. Петербург, 1862.

Մեր ուսերեն նոր թարգմանությունը (մամուլի տակ),

ձրաններեն թարգմանված է Ֆ. Մակկերի ձեռքով, նա առաջ հրատարակեց բուն Պատմությունը—Histoire de Heraclius par l'évêque Sebéos, traduite de l'arménien et annotée par Fr. Macier, Paris 1904, իսկ սրանից հետո Ա. մասի յերկրորդ դարությունն առանձին Pseudo-Sebéos, texte arménien traduit et annoté par Fr. Macier, Paris.

«Մասիս» լրագրի վկայությամբ՝ (1852, № 13) Սերետսի Պատմությունը հենց լույս տեսնելուն պես՝ «Դադղիական թարգմանությամբ Բոսպորոսի ծովեզերեն յեվրոպական բանասիրաց քննա կերթա»։ Բվում է՝ նույն թարգմանության վրա յն ակնարկում «Journal asiatique de Constantinople» թերթը 1, 1852, յեր. 75։ Սակայն այս թարգմանությունը հայտնի չեղավ։

Նեղեկե հիշում ե, թե Վենցել կատարել է Սերետսի թարգմանությունը գերմաներեն լեզվով, զորի ձեռագրից ինքը ոգտվել է յուր Persische Studien-ի համար։ Նույնպես լույս չն տեսած։

Մարկվարտն ել, ինչպես հաճատի աղբյուրից տեղեկացանք, թարգմանել է Սերետսի Պատմությունը գերմաներեն՝ ծանոթություններով։ Սակայն նա չեյ լույս չն տեսած։

Մասնակի թարգմանություններ են հետևյալները—

Պատմության առաջին դարությունը՝ ֆրանսերեն լեզվով՝ «Կեղծ Ագաթանգեղոս» վերնագրով Վ. Լամգլուայի ձեռքով, զետեղված նրա Հայ պատմագրաց ծաղկածուի Ա. հատորում. «Le pseudo—Agathange, Histoire ancienne de l'Arménie. Extrait de l'Histoire de Heraclius par Sebéos. Traduction de l'arménien, V. Langlois. Collection... Paris, 1867, 195—200.

Գերմաներեն մասնակի թարգմանություն կատարել է Հյուբսմանն. H. Hübschmann, Zur Geschichte Armeniens. Die ersten Kriegen der Araber. Aus dem Armenischen des Sebeos. Leipzig, 1875.

Յն. Գյուլտրինն Սերետսի Պատմության 1—1Բ և 1Ե զուխները (ներկա հրատարակության Խ—ԽԲ և ԽԶ զուխները) թարգմանել է ֆրանսերեն յուր Recherches sur la chronologie arménienne գրվածքում, Paris, 1859,

Մ. ՆՈՐԿԸ ՀԻՄՆՈՐԵԱՌԻՑՈՆ ՀԵՆՏՄԵՆՔՆԵՐԸ

Դուցն մի քիչ ընդարձակ մեջ բերինք Սերբոսի Պատմության, մանավանդ այսպես կոչված Ա և Բ Դպրություններին՝ վերաբերյալ մատենադրությունը, բայց այս՝ անհրաժեշտ երջույց տալու համար, թե ինչպիսի արտաքին կերպարանափոխության և վորքան այլընդայլո կարծիքների և յենթադրությունների տեղիք տվեց Սերբոսի բազմալարար Պատմությունը։ Կրկնակի դժբախտ՝ ընագիր ձեռագիրների կողմից և նախկին հրատարակիչների կամայական և անհիմն փոփոխություններով։ Հրատարակության իբրև ընագիր և ծառայել մի ձեռագիր, գրված 1672 թվին, Սերբոսի գրելուց մոտ հազար տարի հետո, վոր արտագրված և յեղել մի հին, յեղծված, պակասավոր որինակից։ միջից թղթեր ընկած, պակաս տողերով, տեղից պոկված և ուրիշ տեղ դրված թղթով և լի բազմաթիվ աղավաղություններով։ Մի ավելի հին, բայց ավելի պակասավոր որինակ՝ անհետ կորել և։ Նրանից միայն յերկու տեղ Միհրդատյանը լրացրել և ընագիր որինակի պակաս տողերով։

Այս պակասավոր որինակից տպագրությունը կատարելիս հրատարակիչներն ել իրանց կողմից, մանավանդ Ք. Պատկանյանը։ ավելի ևս վնասեցին Սերբոսի Պատմությանը, նրանից անջատելով առաջին չորս գլուխները՝ իբրև ոտար անժանոթ հեղինակների գրվածքներ։ Այնպես վոր Սերբոսի Պատմությունը մնաց անգլուխ, իսկ նրա սկզբում դրված «Ա և Բ Դպրությունները» հանալվեցին Անանուհների անկապ գրվածքներ՝ պատահաբար Սերբոսի Պատմությանը կցված։

Այս թյուր կարծիքը տիրապետում եր բանասիրության մեջ մի քանի տասնյակ տարի, մինչև վոր մենք 1899 թվին համարձակություն ունեցանք, հակառակ Պատկանյանի, Մառի, Խալաթյանցի և ուրիշ բանասերների, դուրս գալ հրապարակ և ապացուցանել, թե այդ Ա և Բ Դպրություն կոչված հատվածները Անանուհ հեղինակների անկապ գրվածքներ չեն, այլ բուն Սերբոսի գրվածքը՝ իբրև յուր Պատմության սկիզբը։

Մեր յեղույթն անհետևանք չմնաց։ Մեր գորույլը քննադատող Ադոնցը և այնուհետև Հ. Ալինյանը լիովին ընդունեցին մեր այս յեզրակացությունը։ Ճիշտ և, Մատիկյանն այնուհետև գրեց մի ուսումնասիրություն «Անանուհ կամ Գեղծ-Սերբոս»։

վերնագրով, բայց նա խուսափեց բուն հարցից, հայտարարելով թե «Անանուհի խմբագրողին խնդիրը ուսումնասիրության մեջ անշոշափելի պիտի մնա», ուրիշ խոսքով՝ նա հրաժարվում է քննել ամենակարևոր հարցը տվյալ տեղում, թե ո՞վ է գրել Առաջին դպրությունը:

Այս ճանգամանքներն արդեն նախորոշում են այն դիրքը, վոր մենք պետք է բռնեյինք ներկա հրատարակության մեջ — այն է վերականգնել Սեբեոսի Պատմությունը յուր ամբողջության մեջ և վորքան հնարավոր է՝ ուղղել այն բազմաթիվ պակասություններն ու աղնատումները, վոր մոտ հազար յերեք հարյուր տարվա ընթացքում սպրդել էին այդ Պատմության մեջ՝ գրիչների անփութության, ձեռագիրների՝ ֆիզիկական վնասվածքների և նրատարակիչների կամայականության պատճառով: Եեւ մենք ձգտել ենք այս նպատակն իրագործելու՝ վորքան թույլ են տվել մեր արամադրության տակ յեղած միջոցները:

Պատմության արտաքին ձևն ու ամբողջությունը վերականգնելու նպատակով կատարել ենք հետևյալը.

1. Պատմության վերնագիրը դրել ենք «Սեբեոսի»՝ եպիսկոպոսի պատմութիւն, դուրս ձգելով «Ի Հերակլն» բառը, հետևյալ պատճառներով:

Մայր ձեռագրի մեջ №611, (նոր № 2639, վոր մենք բաղդատությունների մեջ նշանակել ենք Ա. տառով) Սեբեոսի Պատմությունը չե կրում վոչ գրվածքի անուն և վոչ հեղինակի. «Սեբեոսի եպիսկոպոսի պատմութիւն ի Հերակլն» վերնագիրը դրել է Շահխաթունյան յեպիսկոպոսը, վոր յերևան է հանել այս Պատմությունն եջմիածնի մատենադարանում, և գուշակելով, վոր սա վաղուց կորած համարված՝ Սեբեոսի Պատմությունն է՝ հարմար է համարել նրան վերոհիշյալ վերնագիրը դնել, հետևելով միջնադարյան հեղինակներին, վորոնք այլ և այլ կերպով կոչում են այս պատմությունը, բայց միշտ Հերակլ անունը հիշելով: (Վերն արդեն բերել ենք այս անվան՝ գրքի վերնագրում հիշվելու համակարգի բացատրությունը):

*) Պահել ենք «Սեբեոս» ևնը (և վոչ Սեբեոս), վորովհետեւ այս ևնն ունին նախկին ազգորություններն և այս ևնով էլ ճանաչված է բանասիրության մեջ: Մանավանդ նկատի չենք ունեցել, վոր ԴՊՊԹ Ժողովի արևմտագրության մեջ ստորագրված և «Տէր Սեբեոս եպիսկոպոս Բագրատունեաց»:

Հերակլ անունը չե համապատասխանում Պատմության բովանդակությանը. Հայոց նախնական պատմությունը, Պարթևներն ու Արշակունիները, մարզպանները, Խոսրով Անուշըրուան, արաբական արշավանքները, Հայոց դավանության թուղթը և այլն վոյ մի կապ չունին Հերակլի հետ, վորի մասին խոսում ե հիդիւնակը յուր գրքի տասը գլխում միայն, իսկ մյուս քառասուն գլուխները Հերակլին չեն վերաբերում:

Հերակլի անունը գրքի վերնագրում սքողում ե Սեբեոսի գրվածքի բուն եյությունը, վոր ե Պատմություն Հայոց, նախնական ժամանակներից սկսած մինչև յուր որերը. Բայց մենք զգուշացանք այս գրվածքը կոչել Պատմություն Հայոց, քանի վոր հեղինակին ժամանակակից պատմության մեջ գլխավոր անցքերն են Պարսից և Հունաց պատերազմները, վորոնց թատերաբմն ե յեղել Հայաստանը, ինչպես նաև արաբական արշավանքները. Ուստի այստեղ Հայաստանը և Հայոց իշխանները յերկրորդական տեղ են զրավում. Ուստի ընտրեցինք «Սեբեոսի եպիսկոպոսի պատմություն» վերնագիրը, վոր վոյ մի վեճ չե հարուցանում:

2. Պատմության վրայից վերցրինք «Ա, Բ, Գ դպրություններ» ստորաբաժանումները և 38 գլուխների բաշխումը, վոր մտցրել եր Ք. Միհրդատյանը և պահպանել եր Պատկանյանը. Մենք ամբողջ գրվածքը բաժանեցինք հիսուն գլուխների, համաձայն ձեռագրի. Պետր ե նկատել սակայն, վոր ձեռագրում գլխահամարներ կրում են ԺԱ գլխից սկսած մինչև ԼԲ գլուխը. Իսկ Ա—Ժ և ԼԳ—Ծ գլուխների բաժանումը և գլխահամարները մենք զրել ենք՝ մի կողմից հետևելով Միհրդատյանի ցուցումներին (Ա—Ջ գլուխների մասին), մյուս կողմից Ակինյանի ցուցումներին (յեր. 37), միևնույն ժամանակ նկատի առնելով ձեռագրի լուսանցքում դրված նշաններն առանց տառաթվերի և կարմիր թանաքով սկսվող բառերը տողերի սկզբում:

3. Զեռագրում մի քանի գլուխներ ունին համառոտ վերնագիր, մյուսները չունին: Միհրդատյանը յուր կողմից բոլոր գլուխների համար վերնագիրներ ե դրել, մեջ առնելով նաև ձեռագրում յեղածները: Պատկանյանն՝ ել պահել ե այդ վերնագիրները: Պանի վոր նրանք վոյ մի վլաս չունին, այլ ընդհակառակը դյուրություն են տալիս ընթերցողին՝ մենք ևս հարմար համարեցինք պահպանել, ի հարկն վորոջ փոփոխություններով, քանի վոր մեր գլխակարգությունը (Ա—Խ գլուխ) զանազան-

վում և նախկին հրատարակությունների գլխակարգությունից (Ա. Բ. դպրություն, Նախնորգանք, գլուխ Ա—ԼԸ), Բայց այս նոր հավելումները բնագրի վերնագիրներից վորոշելու նպատակով՝ վերջինները միշտ ցոյց ենք տվել բաղդատութիւնների մեջ:

Գլուխների բաշխումը մենք գտնում ենք անհրաժեշտ. կան շատ յերկար գլուխներ՝ մի քանի տարբեր բովանդակություններով. վորոշնք պետք եր բաժանել մի քանի գլուխների, կան և կարճ գլուխներ: Բայց մենք վոյ մի փոփոխություն չմտցրինք այստեղ. այլ հետևեցինք ձեռագրի բաշխումներին:

Բնագրի ներքին պակասություններն ու աղետառումներն ուղղելու և նախկին հրատարակություններն ստուգելու նպատակով անհրաժեշտ համարեցինք տպագիրները բաղդատել Վաղարշապատի Պետ. Գրադարանում պահվող ձեռագիրների հետ, վորոշնք մասին արդեն խոսել ենք: Մենք ամբողջ Պատմությունը բաղդատեցինք № 811, (Նոր՝ 2639) մայր ձեռագրի հետ. (մեր բաղդատությունների մեջ նշանակել ենք Ա. տառով), իսկ Բ, Գ, Դ ձեռագիրների հետ բաղդատեցինք միայն «Ա. և Բ. դպրությունները», քանի վոր կատարելապես համոզվեցինք, վոր դրանք արտագրություններ են նույն մայր ձեռագրից և վոյինչ ինքնուրույն բան չեն ներկայացնում. նրանց մեջ յեղած չնչին տարբերություններն արտագրողների վրիպակներն են կամ նրանց ուղղումները: Ուստի ափելորդ համարեցինք նրանց ել մինչև վերջը բաղդատել և նրանց անարժեք վարկանտներով ծանրաբեռնել բաղդատությունները: Նույն այս նպատակով մայր ձեռագրի հետ ել բաղդատելիս՝ չենք նշանակել և չենք մուծել բաղդատությունների մեջ մի շարք ձեռագրական տարբերություններ. որինակ.

1. Ձենք նշանակել «ն» դիմորոշ հոդի տարբերությունները (արքայի կամ արքային), ընդհանրապես հետեւել ենք ձեռագրին:

2. Ձեռագիրը խառն ուղղագրություն ունի՝ հին և նոր, յերբեմն զրում և աւ, եւ, դ, ով (ինչպես հաւր, զաւրածողով, մեւս, երկեւդ, Հերակդ, Կիւղիկիա, Բաբելովն) և յերբեմն օ, իւ, լ, ո (գօրք, միւս, Կիլիկիա, Բաբելոն): Մենք ամեն անգամ չենք նշանակել այս տարբեր ընթերցվածները, վորոշնք հազարավորների կհասնեյին, այլ ընտրել ենք հին ուղղագրությունը (ինչպես իրավացի վարվել են և նախկին հրատարակիչները), իբրեւ նախնական, հեղինակի գործածածը: (Միայն հետևողական չենք յեղել

Ղ. կամ 1. (Հերակղ, Հերակկ) գրությունն նկատմամբ, և հիմք տնինք կարծելու, թե արդեն յոթներորդ դարումն ել խախտված եր Ղ. հնչյունի գրություն միտքինակությունը):

3. Զենք նշանակել այն շնորհամենքը սովորական ուղղագրությունից, փորոնք հետեանք են գրիչների արտասանություն կամ տգիտություն, ինչպես՝ հայկա, արարադա, արշակա, դմնտորհա, գնա (յեզ. 3-րդ դեմք), լուա, յորո, ի գնանո, խնանայ, հմայակ, և ընդհակառակն՝ սայ, դայ, դմայ, զնայ, արայրատ (յաճախ) արա՛յ (հրամ. եզ.), հիւսիւա, հիւսուսոյ, ի կնոջեն, եցւոյց, գետւոյն, և ընդհակառակն՝ որդովքն. ըմբէ, մանգուներ, ընդդել, բանդ, անտ, թուխթ, ախիւն, էրէց, ննգեաց (= տնգեաց—տնկեաց):

Այսպիսի անսովոր գրությունները նշանակելը կամ շնանակելը մագալափ անգամ ոգուտ լուսի բնագրի վերականգնման համար, վոր մեր գլխավոր նպատակն է յնդել, այլ զօր տեղը կրագմատակեր վարիանտների քանակը: Տարակույս չկա, վոր այդ գրությունները, նույն իսկ ակնհայտնի տառաախալները, նշանակություն ունին լեզվաբանի համար, վոր ուսումնասիրում է լեզվի հնչյունների պատմությունը, նրանց փոփոխություններն՝ ըստ ժամանակի և գավառի: Բայց լեզվաբանի հետազոտությունների համար ուրիշ աղբյուրներ (ծնագիրների մատենադարաններ) և ուրիշ պայմաններ են հարկավոր՝ քան մի ծնագրի ընթերցվածները, յերը հայտնի չե, թե դրանք վերջին ընդորինակողի՞ն են թե յերա ընագրինը, վո՞րտեղացի յնն այդ ընդորինակողները և այլն:

Զնագրի հետ լաղղատություն շնորհիվ բավական թվով ուղղումներ և լրացումներ մուծվեցին ներկա հրատարակության մեջ, ինչպես մանրամասն զույց է տրված լաղղատությունների մեջ^{*)}: Բացի սրանից՝ նախկին հրատարակիչներն ուղղել էին բավական թվով աղավաղություններ (Միհրդատյան՝ 23 հատ, Պատկանյանը սրանց վրա ավելացրել և դարձյալ 15 ուղղում), վորոնք մի առ. մի ցույց են տրված լաղղատությունների մեջ:

Այս ուղղումների վրա մեր կողմից ավելացրել ենք մոտ 100 նոր ուղղումներ, վորոնցից մի մասը մուծել ենք ընագրի մեջ՝

*) Առանձին կարեւորություն ունի շղթանով՝ անի վերականգնումն ըստ Առագրի փոխանակ աղագրների «Աթանովի (զլ. ԽԴ.), վորի մասին ա. Ժանաթ. 69.

իրէս աներկրայելի և կարեւոր, իսկ փոքր մասը դրել ենք բաղ-
դատութիւններէ մեզ՝ իբրեւ հալմանական յանձնարարութիւն կամ
անկարեւոր: Մեր ուղղումները մասամբ հիմնված են հին հեղի-
նականների վրա, վորոնք արտագրել են Սեքսոսից հատվածներ՝
(ավագույն ընթերցվածներով^{*)}), բայց մեծ մասամբ հիմնված են
մեր անձնական յեզրակացութիւնների վրա, ընագրի մանրա-
կրկիւս ուսումնասիրութիւնից^{ա)}), Առանձին կարեւորութիւն ունի
ուղղումը եւ—Ը գլուխների մեջ յեղած մեծ աղավաղութիւն, վոր
առաջ եր յեկել՝ ձեռագրի մեջ մի պոկված թուղթը ուրիշ տեղ
դնելու հետևանքով, և վորի պատճառով մոտ տասը յերես
կցկտուր, անկապ և անհասկանալի ելին մնում: Ներկա հրատա-
րակութիւն մեջ լիովին վերացրած եւ այդ աղետաւոր, Հատուկ
ուշադրութիւն ենք դարձրել նաև կետադրութիւն վրա, վորի
սխալ գործածութիւնը նախկին հրատարակութիւնների մեջ՝
տեղիք եւ տվել ընագրի սխալ թարգմանելու^{ա)}),

Պայելով այսքան ուղղումներին՝ դեռ շատ աղավաղու-
թիւններ են մնում Սեքսոսի Պատմութիւն մեջ, ինչպես և թերի
տեղեր, վորոնք կարող են ուղղվել և լրացվել միայն լավագույն
ձեռագրի ոգնութիւնը: Այստեղ մենք նկատի լունինք բազմա-

^{*)} Որինակ, ընագրի աղավաղված ընթերցվածը՝ «և առնել զնա անդ ի
մեջ դուրացն որ էին անդ ի բուն», (դ. ԺԸ), ուղղել ենք ըստ Միքիթաք Լանցու
«որ էին անդ՝ արբերուն»: Բնագրի աղավաղված «Սուրեն» անունը (դ. ԻԸ)
ուղղել ենք «Սուրմէն» ըստ Գեղըք Բղթսցի: Բնագրի աղավաղված խոսքը «սոսի
նայրապետն իսկ յառաջ մատուցեալ տեղը, մի՛ կոշեցի սատուած այլն այն»
(դ. ԽԴ), ուղղել ենք «հեղապետն» ըստ Ասողիկի: Այսպես նաև ընագրի աղա-
վաղված խոսքը՝ «որ անուանեալ Շահաստանին Մեկոյ կոչեն» (դ. Ե. ուղղել
ենք ըստ Մակմարտի ուղղագրութիւն «որ անուանեալ Շահաստան-ի նոկ (նոյ)
կոչեն»: Սրանց մասին տ. ծանոթութիւններ 47, 51, 55, 27:

^{ա)} Իբրեւ օրինակ՝ բերենք մի քանիք: Գ. գլխում ընագրին աղավաղված
եր այսպես «և յերկրորդ ամի միտքանեալ Պարսից արքայի ըսդ Իսմայիլաթիւն»,
որ ելին արտաքս: Այս հակադրամական ու կիսատ խոսքն ուղղել ենք «և
յերկրորդ ամի Սաղկերտի Գարսից արքայի միտքանեալ Հելից ընդ Իսմայիլաթիւն»
եկին արտաքս, հիմնվելով Սեքսոսի Խ. գլխի վրա—Գլ. Զ-ում բն-գրին ունեւր.
«և հալեալ ճանապարհ պնաց ի տեղի մի, և բնակեցաւ դեմ յանդիման նոր»:
Ուղղեցինք «Գնաց ի Մեղիտինէ, հիմնվելով խոսքի շարունակութիւն և է գլխի
ցուցման վրա. «Անուշտովան Խոսքով, որ որդէս ասացի արաք պատերազմ մի
մեծ ի Մելիտինէ»: Գլ. ԺԴ-ում ընագրին ունեւր. «Գնանալ տղորդիկ գնալա-
սան մեր արաքսուք». Ուղղեցինք՝ «գնա», հիմնվելով խոսքի շարունակու-
թիւն վրա: Յեղ այն: Այս և նման ուղղումները հիմնադրութիւնը բացառել
ենք համադրատախտան ծանոթութիւնների մեջ, Ա. ծան. 22, 11, 38 և այլն:

499) Ե. ծան. 34 (յերկու դեպք սխալ կետադրութիւն),


թիվ քերականական սխալները *), վորոնք շատ հեշտ եր ուղղել, բայց մենք ձեռք չտվինք, քանի վոր համոզված չեյինք, թե դրանք գրիչների սխալներն ու աղավաղություններն են։ Սերենոս, ինչպես յերևում ե նրա գրվածքից, դարձյալ կրթությունից զուրկ՝ ինքնուս անձ ե, յերկար ընթերցանությամբ գրելու վարժություն ձեռք բերած։ ուստի նրա ետպես դասական լեզվի մեջ սպրդում են համաձայնական անհարթություններ և ստուգաբանական սխալներ, իրու նշաններ գրաբար լեզվի քայքայման։

Եանդիությունների մեջ, վոր դրել ենք Պատմության վերջում, մենք սահմանափակվել ենք միայն այն հարցերով, վորոնք վերաբերում են քնազրի վերականգնման և հեղինակի մտքի ուղիղ հասկացման։ Ավելի մանրամասն պատմական մատենագրական և աշխարհագրական տեղեկություններ մենք զետեղել ենք մեր ուսանելի նոր Թարգմանության ծանոթությունների մեջ։

Գրքի վերջում ավելացրինք հատուկ անունների ցանկ, վոր չունեյին նախորդ յերկու հրատարակությունները։

ՍՏ. ՄԱԼԽԱՍՅԱՆՑ

*) Մի քանի որինակ. «գփայտակունք», «գեռաւ», (3 տնգամ), «ի սոփու» (փիւղ ի սոփայ), «պղապտայիւն», «պղապտայն», յորմղղիւ, «որմղղայի», «Աղղ լինի եղեալ իջքն», «Բանքն ոչ ունէր հաստատություն», «Ելին իջա՜վումս ի վերայ նորա», «զսոյն իսկ մըրիկ ի վերայ Բարեւոյնի տեսանի», «Հնադանդանցան ամենայն բնակիչք... յեռնականս և դաշտականս», «Էին նոքա երեք հազար սղառազէնս», «սո մահուն երկիւղիւ», «մեքձ քաղաքանս», «հատեալ նմա զկապանս» և այլն։ Աշխարհաբարի ձեւը—հատաւ, զկապաւ, մատուռ, փոզովէ, հրամայէ և այլն։



ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Առաջաբանում և ծանոթությունների մեջ, յերբ հեղինակների տնունները տալիս ենք, առանց հիշելու գրվածքը՝ նկատի ունինք նրանց հետևյալ գրվածքները—

Պրոֆ. Ն. Ադոնց, Н. Адонц, „Начальная История Арменнии у Себеоса. Византийский Временник“, 1901, № 1, 2.

2. Ալինյան, Սերիոս խաղիկոպոս Բաղրատունյաց և յուր պատմությունն ի Հերակլին Մատենադարանի հետազոտություններ, հատոր Բ. Ազգ. Մատենադարան, ՃԴ. Վիեննա 1924.

3. Խալաթյանց, Г. Халатьянц, „Аноним как поздний апокриф“. Армянский эпос, стр. 58—105, Москва, 1896.

4. Մառ, Н. Марр, О Начальной Истории Арменнии Анонима, Византийский Временник, 1894, 1.

5. Մատիկյան, Անանունը կամ Կեղծ-Սերիոս, Ազգ. Մատենադարան, Հ. Վիեննա, 1913.

6. Միրզախյան. Պատմություն Սերբուսի եպիսկոպոսի ի Հերակլին Ա. տպագր. ի Կոստանդնուպոլիս, 1851—182Ա.

5 թագաւորէ Յունաց ամս ԻԲ. Յազկերտ զառաջինն: Ն. Ռնորիոս
զառաջինն:

Յամի Ի-երորդի երկրորդի Ռնորեայ կայսեր թագաւորէ Վռամ
որդի Յազկերտի՝ ամս ԻԲ. Ն. յամին երկրորդի Վռամայ թագա-
ւորէ Յունաց Թէոդոս ամս ԻԲ. Ն. Ռնորիոս՝ ԻԲ. Վռամ՝ Բ. Թէո-
դոս՝ զառաջինն:

Յամի Ի-երորդի Թէոդոսի Փռքու թագաւորէ Պարսից Յազ-
կերտ որդի Վռամայ ամս ԺԲ. Ն. յամի Յազկերտի թագաւորէ
Յունաց Կոստանդինոս՝ ամս Ա. Յազկերտ՝ զառաջինն:

Յամի երկրորդի Յազկերտի թագաւորէ Յունաց Վաղենտինա-
նոս՝ ամս Լ. Յազկերտ՝ զերկրորդն Վաղենտինանոս՝ զառաջինն:

Յամի ԺԸ-երորդի Վաղենտինանոսի կայսեր թագաւորէ Պար-
սից Վաղարշ որդի Յազկերտի՝ ամս Դ. Վաղենտինանոս՝ ԺԸ. Վաղարշ՝
զառաջինն:

Յամի Ի-երորդի երկրորդի Վաղենտինանոսի կայսեր թագա-
ւորէ Պարսից Պերոզ՝ ամս ԽԸ. Վաղենտինանոս՝ ԻԲ. Պերոզ՝ զա-
ռաջինն:

Յամի Ժ-երորդի Պերոզի թագաւորէ Յունաց Նարեկիսոս ամս
Զ. Պերոզ՝ Ժ. Նարեկիսոս՝ զառաջինն:

Յամի ԺԷ-երորդի Պերոզի արքայի թագաւորէ Յունաց Վռամի-
նոս՝ ամս Դ. Պերոզ՝ ԺԷ. Վռամինոս՝ զառաջինն:

Յամի Ի-երորդի Պերոզի թագաւորէ Յունաց Մարկիանոս
ամս Ն. Պերոզ՝ Ի. Մարկիանոս՝ զառաջինն:

Յամի ԻԵ-երորդի Պերոզի թագաւորէ Լեւոն զառաջինն: Յա-
մին Լ-երորդի Պերոզի թագաւորէ Յունաց Անթիմոս, ամս Զ.
30 Պերոզ՝ ԼԱ. Անթիմոս զառաջինն:

Յամի ԽԴ-երորդի Պերոզի թագաւորէ Յունաց Ուլիսպոսոս՝

2 Վերնագիրը բնագրինն է:

3 Ա յունա

17 Ա զԺԸ

31 Ա, Բ, Գ յամի ԽԴ-երորդի
ամի: ՏՏ յամի Խ և չորրորդի

31 Ա, Դ ուղեմզոս

ամ մի և. ի միւսում ամի մեւ Ջենոն՝ ամ մի և. ի ԽԶ-երորդին Պերոզի՝ թագաւորէ Ջենոն ի վերայ Յունաց՝ ամս Ժէ, Պերոզ՝ ԽԶ, Ջենոն՝ դառաջինն:

Յամի չորրորդի Ջենոնի թագաւորէ Պարսից Ջամասպ՝ Ը, Ջենոն ի վերայ Յունաց՝ չորրորդն Ջամասպ՝ դառաջինն:

և. ի վերայ Ե-երորդի ամի Ջենոնի կայսեր թագաւորէ Պարսից Կաւատ՝ ամս ԽԱ, Ջենոն՝ Զ, Կաւատ՝ դառաջինն:

Յամի ԺԴ-երորդի Կաւատայ թագաւորէ Յունաց Անաստաս՝ ամս ԽԷ, Կաւատ՝ զԺԴ, Անաստաս՝ դառաջինն:

Յամի Խ-երորդի Կաւատայ թագաւորէ Յունաց Յուստիանոս ամս ԼԸ, Կաւատ՝ զԽ, Յուստիանոս՝ դառաջինն:

Յամի երրորդի Յուստիանոսի կայսեր թագաւորէ Խոսրով որդի Կաւատայ՝ ամս ԽԷ, Յուստիանոս՝ զերրորդն, Խոսրով՝ դառաջինն:

Յերեսուն և եօթն ամի Խոսրովայ թագաւորէ Յունաց Յուստիանոս՝ ամս ԺԲ, Խոսրով՝ ԼԷ, Յուստիանոս՝ դառաջինն:

Յամի ԺԲ-երորդի Յուստիանոսի կայսեր թագաւորէ Պարսից Որմիզդ որդի Խոսրովայ՝ ամս ԺԲ, Յուստիանոս՝ ԺԲ, Որմիզդ՝ դառաջինն:

Յամի երկրորդի Որմիզդի թագաւորէ Յունաց Տիբերոս՝ ամս Դ, Որմիզդ՝ զերկրորդն Տիբերոս՝ դառաջինն:

Ի հինգերորդի ամի Որմիզդի թագաւորէ Յունաց Մաւրիկ՝ ամս ԻԱ, Որմիզդ՝ և Մաւրիկ՝ դառաջինն:

Յամի Է-երորդի Մաւրիկայ կայսեր թագաւորէ Պարսից Խոսրով որդի Որմիզդի՝ ամս ԼԷ, Մաւրիկ՝ զԷ-երորդն, Խոսրով՝ դառաջինն:

Յամի ԺԴ-երորդի Խոսրովայ թագաւորէ Յունաց Փոկաս՝ ամս Ը, Խոսրով՝ ԺԴ, Փոկաս՝ դառաջինն:

Յամի Ի-երորդի Խոսրովայ Պարսից արքային թագաւորէ Յունաց Երակղոս որդի Երակղի՝ ամս Լ, Խոսրով՝ ԻԲ, Երակղոս՝ դառաջինն:

Յամի ԺԷ-երորդի Երակղի կայսեր թագաւորէ Պարսից Կաւատ որդի Խոսրովայ՝ ամս Ա, Երակղոս՝ ԺԷ, Կաւատ՝ դառաջինն:

4 Ա, Դ, Դ չամաս: Բ չամասպ

6 Ա ի վերայ երրորդի

18 Ա, Բ Դ որմիզդի

24 Ա—Դ չամիւն եր'դի մարկա

36 Ա—Դ մարիկ զինն երրորդն

31 Դ յիժ՝ Երակղի կայսեր

31 Դ չամի ԺԷ-երորդի ուր է պարսից կաւատ

31 Ա որ է, փիկ թագաւորէ

31 Դ բաց է թողել յերակղոս ԺԷ—Աբասալիբ զառաջինն (եր. 31, 3)

32 Ա—Դ Երակղոս Ժ.

Ապա Արտաշիր՝ ամա Գ. Երակզոս՝ ամա Ի. Արտաշիր՝
դառաջինն:

Ապա Բրոր բամբիւն զուսար Մասրովայ՝ ամա Բ. Երակզոս՝
ԻԱ. Բամբիւն՝ դառաջինն:

5 Ապա Յազկերտ՝ ամա Ի. Երակզոս՝ ԻԳ. Յազկերտ՝ դառաջինն:

Յամի ԻԴ-երորդի երանելւոյն Երակղի կայսեր, և երկրորդ
ամի Յազկերտի Պարսից արքայի միաբանեալ Հրէից ընդ Իսմայ-
ելացիսն²², որ ելին արտաքս ի Սինէ անապատ և հրամանաւ

10 Աստուծոյ՝ առնել անապատ միանգամայն զամենայն երկիր:
Երակզոս ԻԴ. Յազկերտ զերկրորդն՝ Ամո, արքայ Իսմայելի՝
դառաջինն:

Բայց զամա եկամտիցն և ծառայիցն թաղաւորելացն, որպէս
Քոռեմայն և զՔոռի Որմղդին և Քոսրովայն և զՈրմիզդն, որք
բռնութեամբ կալան զթաղաւորութիւնն, և էր որ ընդ պատանել
15 աղզացն հակառակութեամբ, ի սոյնս յաւելեալ կարգեցից թիւ-
որպէս զկէս ամին Քոռեմայ ի կէս ամին Կաւասայ յաւել ևս
ասացից ամ մի:

Յամի Զ-երորդի Պարսից արքայի Յազկերտի վախճանի
երանելին Երակղէս, և թագաւորն որդիք նորա Կոստանդին և
20 Երակղակ Ի նմին ամի մեռաւ Կոստանդին զաւեալ ի մաւրէնտ
նւ թագաւորէ Երակղակ Դարձեալ փոխեցաւ Երակղակ, և թա-
գաւորէ Կոստոս որդի Կոստանդեայ, որ կոչեցաւ յանուն հաւր
իւրոյ Կոստանդին: Յազկերտ՝ Է-երորդ, Կոստոս՝ դառաջինն:

Նւ թագաւորեաց Յազկերտ ի վերայ աշխարհին Պարսից
25 ամա Ի. Յազկերտ՝ Ի. Կոստանդին՝ ԺԱ. Արքայն Իսմայելի՝ Բ.

Յերկոտասան ամի Կոստանդի, և ի Ի-երորդ ամի Իսմայել-
լացւոց տէրութեանն՝ բարձաւ տէրութիւնն Պարսից, որ կալաւ
ՇԼԲ ամ, 26

7 Բւլ. յերկրորդ ամի միաբանեալ
պարսից արքայի ընդ... աղզե-
ցինք աշպես: Տ. ծանոթ. 22

8 22 չիք՝ տը ելին: Այսպէս
լրացել ևն Մ և Գ. Տ. ծա-
նոթ. 22.

10 Ա-Գ յազկերտ դառաջինն

10 Ա, Գ, Դ Իսմայելի

18 Ա-Գ յամին Իններորդի

22 Ա, Գ, Դ յազկերտի Ժ-երորդի:
Բ. ազկերտ ի Ժ-երորդի

25 Ա, Գ Կոստանդիու Բ Կոստան-
դէս

27 Մ որ կալաւ ՇԼԲ ամ. (աշ-
խարհի):

Գ Լ Ո Ւ Ե Ն

Հայք զկնի բառնալոյ հէտութեամբ Արտակունեաց Ռովանդակութիւն առաքիկայ պատմութեան, յապտամբութեան վախճանայ միջևն ցառնելն Բամայեղացոց եւ ռիւն յԱգիւղառնէ միջևն ի Պատրիկոյ

5 Եւ եղև ի նուազել ժամանակաց տէրութեանն Արշակունեաց ի Հայաստան աշխարհի, ի բառնալ տէրութեանն Ղաամշապուհ արքայի՝ տիրէ ի վերայ սորա ազգն Կարքեղովմայեցի իշխանութեանն: 21 Թորութիւն ի ձեռն առնալ արեղ եւ արադին՝ հանդերձ միարանութեամբ դառնալունչ եւ մեծամեծ քաւղիցն եւ ամենայն 10 զլխաւոր նախարարաւքն թագաւորութեան իւրոյ՝ բառնալ ի Հայաստան աշխարհէ զբարեպաշտութեան պատուա, Ուստի ոչինչ աւագեցաւ, այլ յոյժ փառեցաւ, եւ բարեպաշտութիւնն եւ քան զեւ ծագկեալ պայծառացաւ:

Արդ՝ զժամանակս թագաւորութեանն չարապործին Յազկերտի. եւ եթէ ճրպէս նա կամէր զստուածայինն եղծանել կարգա, եւ կամ ճրպէս քաջ նախարարացն Հայոց եւ նախանձաւորն Աստուծոյ նահապետն Մամիկոնէից տանն, Կարմիրն կոչեցեալ Վարդան, հանդերձ միապունդ ապառազէն նիզակակից 20 ընկերաւքն եւ զաւրաւք իւրեանց կողմեալ զինեցան ի պատեւրազմ, առնալ ի ձեռն զվահանն հաւատոյ, եւ զզեցեալ իրրն զգրաւ ամբութեան զնախանձն ստուածային բանին, գոչցեա թէ առաջի աշաց իսկ ականապետ զէմ յանդիման տեսանելով զ՝ ի վերուստ առաքեալ նոցա զպատկն. վասն որոյ աշնամարնեալ զմահ, եւ առաւել լաւ համարեալ մեռանել ի վերայ ստուածային պողոտային. եւ թէ ճրպէս ի վերայ նոցա էին զաւրքն պարսիկ սաստիկ 25 բռնութեամբ, եւ կամ ճրպէս ի զիմի հարեալ զիւրեանց կատարեցին զնահատակութիւն, եւ կամ ճրպէս ի ձեռն հեթանոսաց ըմբռնեալ սուրբ վկայքն Բրիստոսի՝ կատարեցին զնահատակու-

1 Մ փիկ չգլուխ և գրիւ եւ շախերգանք հեղինակէն Գ զգրութեան: Բակ Գ Պատմութիւն Մերէասի ի Հերակն, նախերգանք:

22 Ա նախադեւ զգլմե չգի ի

զերուստ, ապա ուղղած զլ ի վերուստ

24 Ա զմեռանել ի վերայ ստուածայեանն: Մ տեսանել, փիկ մեռանել

25 ՏՏ եթև, փիկ եւ թէ

Թիւնս իւրեանց յԱպր Շահր մերձ ի Նիւշապու: քաղաքի, ի տեղւոջն, որ կոչի Թէարքունի—այն ամենայն ի ձեռն ալոց գրեցաւ, որպէս ցուցանէ նոյն իսկ պատմութիւնն:

- Բայց զայն ամենայն, որ ի Պերոպի ժամանակն եղեալ չա-
 5 բութիւն, և զառ ի Խոսրովայ դապաստամբութիւնն զՎարդանայ, և զղաւաթցն Պարսիցն դապաստամբին ի յՈրմզդէի. զմահն Որմզդ-
 դայի և զԹաղաւորին Խոսրովայ. զմահն Մաւրկայ և զԹաղա-
 ւորին Փոկանայ. զառնուն Եգիպտոսի. զկոտորածն Աղեքսանդրի.
 զգլխին շերակղի ի կողմանս հիւսիսոյ առ արքայն Թէտալաց-
 10 ւոց. զյուզարկումն անուռն բազմութեանն աղգաց. զասպատակն
 Յունաց յԱտրպատական, զառ և զաւար, և զգարձն ընդ Փայ-
 տակարան. Կենկ զաւարացն Պարսից յարեւից զգլխի հարկանել
 նմա. զպատերազմն որ յաշխարհին Աղուանից. զգարձ կայսերն ի
 Նախնուան քաղաքն և զկոխն Արճիշոյ. զգնալն կայսեր անգէն
 15 ի սահմանս իւր. զմեռ ևս ալ գլխին ի վերայ Խոսրովայ. զգործ
 պատերազմին որ ի Նինուէ. զասպատակն որ ի Տիւրքոն քաղաք.
 զգարձն յԱտրպատական. զմահն Խոսրովայ. զԹաղաւորին կա-
 ւատայ. զհաշտութիւն՝ որ ի մէջ Թաղաւորացն երկոցունց. զխո-
 դուն անդրէն ի բաց զսահմանսն Յունաց. զգարձ աստուածեան
 20 խաչին ի քաղաքն սուրբ Սեա աշտրիկ զարթուցեալ անուռն
 բարկութիւն, և զվերջին աղէտ հինին՝ որ ի կողմանս հարաւոյ,
 և Թէ օրպէս յանկարծաւրէն շարժեցան բանակքն Իսմայելի, և
 ի վայրիկան ժամանակի վանելով զղաւթութիւն Թաղաւորացն
 երկոցունց՝ կալան յՅեգիպտոսէ մինչև յայսկոյս գետոյն մեծի
 25 Եփրատայ և ցտանման Հայաստանեայց, և յեղերէ ծովուն մեծի
 արևմտից մինչև ի զուռն Թագաւորութեանն Պարսից զամենայն
 քաղաքս Միջագետաց Ասորւոց և զՏիւրքոն և զՎեր Արտաշիր և
 զՄարանդ, զՀամատան մինչև ընդանձակ քաղաք և ցՀրատն մեծ՝
 որ յԱտրպատական դաւառի—զայս ամենայն կամեցայ ի ձեռն
 30 գրոյս աշտրիկ կարճաւատ ձեզ վիշտանսեր

19 Ա աստուածայեան

28 Ա և զհամապան

30 Ա, ՅՏ կարճաւատ ձեզ, Ա կար-

Հառա ի ձեզ. Ուղղեցինք
աշտրիկս

Գ Լ Ո Ւ Խ 2

Ապստամբութիւն վաւանայ ի Պերոզէ: Մահ Պերոզի եւ քաղաւորի
Կաւառայ: Վաւան կարգի մարդկան Հալոց: Մահ Կաւառայ եւ
քաղաւորի Անտօքոսլան Խոսրովայ: Ապստամբութիւն Վարդանայ:
Պաւերալմ բնդ մմա Խոսրովայ եւ պարաւորիւն:

- Եւ եղև յամս Պերոզի արքայի Պարսից բարձուսն ամենայն
իշխանութեանցն եւ կարգաց եւ աւրինաց քրիստոնէութեան, եւ
այնպիսի վտանգ նեղութեան հալածանաց եւ քամահանաց ի վե-
րայ հասեալ իշխանաց, մինչ զի ի բաց ընկեցին յինքեանց
10 զլուծն ծառայութեան: Եւ ապստամբեալ Մամիկոնեանն Վահան՝
հալածեաց զՊարսիկս եւ լռնարարայն գրաւեաց զիշխանութիւնն:
Յայնժամ արձակէ ի վերայ նորա Պերոզ արքայ՝ Հոնաց
գաւր յոյժ: Եւ հրաման տայ խիստ սաստիկ՝ սպանանել զապրո-
տամբն, եւ հարկանել զամենայն արու սրով սուսերիւ Ընդդէմ
15 սորա անապարեալ Վահան սպարապետ Լ հաղարաւ ընտիր վառե-
լոց, կարգին գունդ առ գունդ եւ նակատ առ նակատ, եւ յարձակին
ի միմեանս ի ձայն փողոյ տաղնապաւ ի գաշտին Գերանայ:
- Անդ յաւգնութիւն հասեալ աստուածեան Բանն, հողմն
սաստեղացեալ զմրրիկ փռչւոյն՝ զգաւաւքն Պարսից հեղոյր,
20 իրրեւ զմութ խաւարի զնոսա պատէր ի միջաւրեայ ժամանակի:
Սաստիկ կոտորած լինէր երկոցունց կողմանցն, եւ ոչ գոյր ընտ-
րել զզի անկելոցն, ոչ զպարսիկ եւ ոչ զհայ գաւրակաւ: Բայց
սակայն գաւրացեալ զաւրն Հայոց վանեցին անդ կոտորածով
զգաւրն Պարսից, եւ զմնացեալսն փախստական արարեալ հալածա-
25 կան օտանէին. եւ զարձան յաղթութեամբ մեծաւ:
- Այս Վահան ժողովեաց եւ զհարկս աշխարհիս Հայոց եւ շինեաց
զեկեղեցիս մեծամեծս, զոր աւերեալ էր Պարսից ի Վաղարշապատ

1 Մ պտտութիւն Սերէոսի եւ
պիսիւղոսի. զգրութիւն Գ,
զլուխ Ա, եւ ներքեւմ ծանօթ.
• ի ընդգրին էր զլուխ 2, մեք
եղաք զպրութիւն Գ. Պ. զլուխ
Ա, առանց ծանօթ.

6 Ա առնե ասն, փխկ ամենայն
10 Ա Վահան Մամիկոնեան...
զպարսիկն
16 Ա կարգեւ
20 Ա ի մեջ աւրեւ
27 ՏՏ եկեղեցիս

քաղաք և ի Դըւնի և ի Մպըւյս և ի բազում տեղիս աշխարհիս
Հայոց, Եւ շինեալ զերկիրն նորոգեաց վերստին:

Իսկ Պերողի արքային Պարսից, Թէպէտ և կամեցաւ վերըս-
տին գաւրս գումարել ի վերայ աշխարհիս Հայոց, ոչ եղև նմա
5 պարապ. զի համբաւք թշնամեացն ստիպէին զնա ի կողմանցն
Քուշանաց և յայնմ մարզէ. զի ինքն իոկ արքայն Քուշանաց խա-
ղացեալ գայր ի վերայ նորա գաւրու մեծաւ:

Եւ նորա գումարեալ գաւրս իւր՝ զնաց ընդդէմ նորա տաղ-
նապաւ մեծաւ Ասէ. շերթայց նախ առաջին զնա վանեցից, և
10 ապա պարտապաւ զարձեալ զնացից ի Հայս, և մի խնայեցէ սուր
իմ ի նոսա, յարս և ի կանայսս:

Եւ ինքն անցեալ փութանակի եհաւ ընդդէմ թշնամոյն
յարեկիւ. և եղև պատերազմն սաստիկ. հարին և կործանեցին
զբաղմութիւն գաւրացն Պարսից, մինչև ոչ մնաց ի նոցանէն ապ-
15 րեալ և փախստական: Եւ մեռաւ Պերող արքայ ի պատերազմին
հանդերձ եւթանեքումք որդւովքն:

Եւ ապա յայնժամ Թագաւորեաց Կաւատ որդի նորա ի վե-
րայ աշխարհին Պարսից: Եւ զի բեկեալ էր գաւրութիւն բազմու-
թեանն գաւրաց իւրոց, ոչ ընդ ումեք կամեցաւ ունել զործ պա-
20 տերազմի, այլ արար խաղաղութիւն յամենայն կողմանց. առնէ և
ընդ Հայոց հաշտութիւն, և կոչէ զՎահան ի գուռն, և մեծաւ
զնա մեծապէս պատուով: Եւ տայ նմա զմարդպանութիւն աշխար-
հին և զՄամիկոնեաց տէրութիւնն, և երգում առ բազում ի ծա-
ռայութիւն, և արձակէ բարեաւ յերկիր իւր:

Յետ Վահանայ կալաւ զԻշխանութիւնն Վարդ Պատրիկ
եղբայրն նորա սակաւ ինչ ժամանակ, և մեռաւ Զկնի նորա եկին
մարդպան պարսիկք. ապա ոչ կարացին պատերազմիլ Հայք: Ի
հնազանդութեան կացին մինչև ցՍուրէնն մարդպան և ցՎարդանն
Մամիկոնէից տէրն:

30 Եւ եղև ի ԽԱ ամի Թագաւորութեան Խոսրովայ որդւոյ Կա-
ւատայ՝ ապատամբեաց Վարդան և ի բաց եկաց ի ծառայութենէ
Թագաւորութեանն Պարսից հանդերձ միաբանութեամբ ամենայն
Հայաստանեաւք: Սպանեալ զՍուրէնն մարդպան յանկարծաւրէն

6 ՏՏ քուշանաց: Եւ յայնմ մար-
զէ... Ա նախ գրգռած՝ յայնմ
արէն, հետո ուղղած՝ մարզէ:
Ահ. արէ, փիկ մարզէ

11 Ա յայրս և

23 Ա երգում մըդ բազում

28 Ա ի հնազանդութիւն

ի Դուին քաղաքի՝ տոին զաւար բազում և զնոցին ի ծառայութիւն Յունաց:

Յայնժամ յառաջ քան զայս տպտամբեալ ի բաց ևկաց ի Հայոց անուանեալ Վահան իշխան աշխարհին Միւնեաց, և խընդ-
 5 րեաց ի Քոստովայ յարքայէն Պարսից, զի տարցեն զգիւան աշխարհին Միւնեաց ի Դըւնայ ի Փայտակարան քաղաք, և կարգեաց: զքաղաքն ի շահրմար Ատրպատականի 25, զի մի ևս կոչեաց ի անուն Հայոց ի վերայ նոցա: Եւ կատարէր հրամանն:

Իսկ առ Հայոց երզնայր թագաւորն Յունաց, և հաստատէր
 10 զնոյն ուխա՝ որ ի մէջ թագաւորացն էր երկոցունց, երանելոյն Տրդատայ և Կոստանդինոսի. և տայր նոցա զգաւրն կայսերական յաւանութիւն: Եւ նոցա առեալ զգաւրն՝ զիմեցին ի վերայ քաղաքին Դըւնայ և պաշարեալ կործանեցին ի վայր, և հալածեցին զգաւրն Պարսից որ ի նմա կային:

Բայց ևհա ի վերայ նոցա յանկարծաբէն խռովութիւն մեծ, զի զեկեկեցի սրբոյն Գրիգորի, որ շինեալ էր մերձ ի քաղաքն, էին արարեալ համբարանոցս Պարսիկքն, հարին հուր և տրեցին. վասն որոյ եղև նոցա խռովութիւն մեծ:

Դայ ապա ի վերայ նորա Միւրանն Միւրեանդակ ի հազարաւ զաւրու և փղաւք բազմաւք: Եւ եղև պատերազմ մեծ ի՝ զայտին Քաղամիւնայ. և հարեալ զգաւրն Պարսից անհնարին հարուածովք մաշէին ի սուր սուսերաց, զփիզան զամենայն թափէին: Եւ Միւրանն սակաւաւք պրծեալ զնոցին յերկիրն իւրեանց:

Այս այն Վարդան է, յորոյ վերայ եկն ինքն արքայն
 25 Պարսից, կոչեցեալ Անուշ Լոռւան Քոստով, հանդերձ բազմութեամբ սպառազէն զաւրացն և փղաւք բազմաւք, և ճանապարհ կալեալ ընդ զաւառն Արտազու՝ զնաց ընդ Բագրևանդ, զանց արարեալ զԿարնոյ քաղաքաւ: Եւ կալեալ ճանապարհ զնաց ի Մեղիթիւնէ և բանակեցաւ զէմ յանդիման նորա:

Եւ ի վաղուեան առաւօտուն հապճեպ ստիպով կտրգին
 30 զունդ առ գունդ և ճակատ առ ճակատ, և բաղիւէին զմիմեանս պատերազմաւ: Եւ սաստկացաւ պատերազմն ի վերայ երեսաց երկրի, և խմբեցաւ պատերազմն յոյժ. և մատնեաց Տէր ի պար-

17 Ա. պարսիկան

19 Ա. Միւրանն

21 Թնրեաւ ուղղեի՝ խաղամ (ա) - իւնաց, Տ. ծան. 28

23 Ա. Ակ. Միւրեանն

28 Բու. զնաց ի տեղի մի. Աւգ. զեցինք աշտեաւ: Տ. ծան. 27. 9

33 ՏՏ յերեսաց

- տութիւն վթազաւորն Պարսից և զաւրս նորա զամենայն։ Եւ խորտակեցան առաջի թշնամեացն արով սուսերի, և փախեան յերեսաց նոցա սաստիւ տաղնապաւ։ Եւ զիտելով զճանապարհս փախտեան իւրեանց՝ երթեալ ամացան ի գետն մեծ, որ կոչի Եւփրատէս։ Եւ ուռուցեալ ի վեր ջուրն՝ խաղացոյց զբազմութիւն փախտականացն իբրեւ զբազմութիւն մարախոյ, և ի կարացին յաւաւր յայնմիկ ճողոպրել բազումք։ Բայց թազաւորն մազապուր պրծեալ սակաւաւք՝ ի փիղս և ի ձին ապաստան եղեալ, փախտական ընդ Ազնիւսն անդրէն ի կայանս իւր երթալու։
- Եւ նոքա առին զբանակն ամենայն հանդերձ արքունական գանձիւքն։ Եւ կալան զբարձիւն և զբանակն, և թափեցին զՄաշտպերճանն ամենայն՝, զեսպակն ոսկեղէն բազմաքանքար, որ էր ակամբք պատուականաւք և մարգարտաւ յօրինեալ, որ անուանեալ կոչէր ի նոցունց գեսպակ փառաց։ Առաւ և Հրատն, զոր ընդ ինքեան շրջեցուցանէր թազաւորն հանապազորդ յադանականութուն իւր, որ մեծագոյն համարեալ էր քան զամենայն կրակ, որ կոչէր ի նոցունց Աթա, հեղձաւ ի գետն հանդերձ մովպետան մովպետաւ և այլ բազմութեամբ մեծամեծ տապաց։ Յամենայն ժամ տւրհնեալ է Աստուած։

20

Գ Լ Ո Ի Խ Է.

Ի Քիւստս հաւատալ եւ մկրել Անուօրովան Խոսրովայ։ Մարգարտն և զաւրովաւ Պարսից որ եկին ի Հայս յեւ Վարդանայ միմչեւ ցարձնովն Սասանեան սէրուքեան։

- Այս խորով, որ կոչեցաւ Անուշ Ըռուան՝ ի մամանակս իւրոյ թազաւորութեանն, յառաջ քան զապատմութիւնս զայս, հաստատեաց զերկիր, քանզի էր խաղաղասէր և աշխարհաշէն։ Եւ ի լինել ապատմութեանն տխորիկ, յայնմ հետէ ընդոստուցեալ զարթեալ ի բարկութիւն, զանձն անֆետ համարեալ իբր թէ՝ եւայր էի ամենայն երկրի, և ոչ տէր, և սնուցեալ զամենսեան իբրեւ որդի և սիրելի։ Եւ արդ՝ ասէ, ի նոցանէ խնդրեցէ

4 Բայ. երթեալ ամբացան ի
գետն, Ուղղեցինք այսպեւ,
8 Ա փրծեալ... ի փիղս
8 Ա ապատմութ, փիկ ապաստան

9 ՏՏ ի կայանս (միջս)
13 Ա ակամբ
16 ՏՏ մեծամեծաց
20 Ա յերկիր

Աստուած զարիւնս զայս: Այս Խորով ի ժամանակս իւրոյ Թա-
գաւորութեանն կապեաց զպահակն Շորայ և Աղուանից. կալաւ
ձերբակալ զարքայն Նզերացոց, և առ մարաւ գննախօք Պիսի-
զացոց, և գերեալ նստոյց առ Թաղաւորական կայանին:

- 5 Շինեալ քաղաք և անուանեալ զնա Վե՛ Անջատք Խորով,
զոր անուանեալ Շահաստան-ի Նոկ-նոյ կոչեն 27 եւ առ սա զԴա-
րա և զԿաղնիկոս, գերեաց ասպատակաւ և զկողմանս Կիւղիկեա-
ցոց:

- կալաւ սա զթագաւորութիւնն ամս 10: Եւ ի ժամ վախճա-
նին ծագեալ ժողակնացեալ զնովաւ լոյս աստուածային Բանին.
քանդի հաւատաց ի Քրիստոս, ասելով այսպէս. «Հաւատամ ի
միայն Աստուած, յայն՝ որ արար գերկինս և գերկիր, զոր քրիս-
տոնեայքդ պաշտել խոստովանին, Հայր և Որդի և Հոգի սուրբ-
դի նա միայն է Աստուած, և այլ ոչ գոյ բաց ի նմանէ, զոր քրիս-
տոնեայքն պաշտեն»:

- 15 Եւ հրաման տուեալ սպասաւորացն՝ զմզպետն արձակել
արքունի ի հեռագոյն տեղիս ի գործ, և զայլսն մերժեալ յարքու-
նական կայնիցն, և կոչեալ զեպիսկոպոսապետն, որ Երան կա-
թուղիկոս անուանի, միլտեցաւ ի նմանէ, և հրամայեաց ժամ առ-
20 նել ի սենեկին, և ընթեռնուլ զտէրունական Աւետարանին զպատ-
գամս, և հազորդեցաւ ի կինդանարար մարմնոյ և արեանն Տեառն,
և հրաժարեալ ի կաթողիկոսէն և ի տէրունեան Աւետարանէն՝ և
արձակէն զնա յիւր տեղին:

- Եւ ապա զկնի սակաւ ինչ աւուրց ննջեաց ի բարեք ծե-
25 բութեան իւրում. և բարձեալ զմարմին նորա քրիստոնէիցն՝ տա-
րեալ եղին ի շիրիմս Թաղաւորացն: Եւ Թագաւորէ Որմիզդ որդի
նորա յիւր նորա:

- Եւ արգ՝ այս են գաւրավարք արքային Պարսից, որ եկին
մի ըստ միովն յերկիրս Հայոց՝ յապտամբութենէ Վարդանայ
30 Մամիկոնէից տեսուն որդւոյն Վասակայ, մինչև ցայսաւր ժամա-
նակի: Ոմանք մեռան ի պատերազմի, և ոմանք պատերազմեցան,
և ոմանք յաղթութիւն զորժեցին և զնացին:

6 Բոլ. լատաստանին ակնոյ, Ուղ-
ղեցինք այսպէս: Տ ծանոթ. 27

9 ՏՏ վաղմանին (միշա)

14 Ա ըսայ ի նմանէ

18 ՁԶ. Մ որ էր անդ կաթուղիկոս
(Ա կաթողիկոս), փխչ որ

Երան կաթուղիկոս: Այսպէս
ուղղել և Գ. ըստ պատմ. Վաթ-
ղանայ,

28 Ա ի կաթողիկոսէն (միշա)

25 Ա. զմարմինս

Յորժամ սպանին զՍուրեն մարգպան՝ ի նմին ~~պի~~ եկն Վարդան Վշնասպ ոմն, և գործ ինչ ~~նչ~~ կարաց գործել. եկաց ~~պի~~ մի և զնաց:

Ապա եկն և Գողոնն Միրանն Ի հաղարա. զարաց սպառազինաց և փղաւք բազմաւք, և ունէր նա ընդ ինքեան սատարս բազումս ի ճամբարէ տնիիւ. ազգացն, որ բնակեալն են ընդ լեռնակողմամբն Կովկասու. ազգք Հոնաց, և հրաման յարքայէն՝ զի անճետս արացոցն զարս ի յաշխարհն Հայոց, խելի բրել, յատակել և անխնայ յերկիր կործանել: Եւ եկեալ նա, բայց եթէ ուրեք յանմատոյց ամբողջ ուրեմն անացեալ ապրիցան մարդիկ և կամ թէ՛ ուրեք ի հեռագոյն աշխարհս փախստական զնացին: Բայց սահայն ~~նչ~~ կարացին բազմաք նողոպրել. քանզի զորս գտանէին՝ սուր ի վերայ եղեալ սատակէին: Սա արար կոխ մի ի Վերս, և պարտեցաւ նկն ի Հայս, և առ զԱնկղ սուտ երգմամբ:

Փիլիպպոս, Միւնեաց տէր. արար կոխ մի ընդ քաղաք և ընդ Թաղամախիւ. 28 և կոխ մի ի Վոնանդ, ի յՈւթմաս գեղ, և յերկոսեանն պարտեցաւ. եկաց նա ամա է և զնաց:

Ապա եկն ինքն արքայն Անուշ ըստան Խոսրով, որպէս ասացի, և արար պատերազմ մի մեծ ի Մելիտինէ, յորում պարտեցաւ և զնաց:

Ապա եկն Յամ Խոսրով, և արար երկու կոխս, մի՛ ի Բասեան ի Բուրապահալի, ուր Մուրց և Երասխ խառնին, և մի՛ ի Բազրեանդ. ի Կըթնի և յերկոսինն յաղթութիւն գործեաց մեծաւնեւ. եկաց երկուս ամա և զնաց:

Ապա եկն Վարազ Վզուրն և արար կոխ մի ի Վանանդ ի յՈւթմաս գեղ, որ և նախ վանեցաւ, և քաղա յաղթեաց. եկաց ամ մի և զնաց:

Ապա եկն տապեան մեծ պարթեան և պարսպան, և արար կոխ մի ի Շիրակաւանին և յաղթեաց. եկաց եւթն ամ և զնաց:

Ապա Հրահատն մարգպան, որ զնաց ի Մրծունին իւրայ-

2 Բ, ՀՀ ոչ գործնաց

4 Ա Միրանն

5 Ա սա, փիկ նա

6 Բու. ընդ որ բնակեալն են, Ուզգեցինք աշաղես:

8 ՀՀ յի՞ք և (անխնայ): Ա անխնա

10 Նուցէ ուզգելի՛ կաղամախին:

Տ. Ժան, 28

18 Գ. արքայն (արմիզդ որդի) Անուշ ըստան Խոսրով (ու.), որ զՎնդոյն կապեալ... Տ Ժանթ. 29

28 Ա պարսպան

29 ՀՀ ի Շիրակ աւանին

նոցն սատար ի պատերազմ. և անդ նոքա պարտեցան և ապա
յաղթութիւն ստացան: Եւ անտի դարձեալ՝ արար կռիւ մի ի Բըդ-
նունիս ի Մաղկաշուրն և յաղթեաց. ևկաց չորս ամիս՝ և զնաց:

Ապա եկն Հրատրին Դատան մարդպան: Ապա այնուհետև ոչ
5 կարացին Պարսիկք պատերազմաւ զդէմ ունել վաւրացն Յունաց:
Առ սովաւ սպանաւ Ումիդդ, և թագաւորեաց որդի նորա Յոսրով:
Եկաց ամա երկու և զնաց:

Ապա եկին սահմանակալք պարսիկք մինչև ցապառուսն խա-
ղաղութեանն՝ որ ի մէջ Պարսից և Յունաց և ի մէջ թագաւորացն
10 երկոցունց՝ Մաւրկայ և Յոսրովայ:

Եւ ապա Վընդատականն: Ապա Յորականն: Զսա սպանին
դաւրք Պարսից ի Դաւնի, և ինքեանք ապստամբեալք զնացին ի
Գեղամա: Ապա Մերակրուան: Ապա Յազդէնն: Ապա Բուսմաշ,
Ապա Հոյիմանն: 34

Մ Ա Ց Ն Ա Ն Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ն Ա Ն

Պատմութիւն քաղաքական 35

Վէպ արիական, վանուա՞ն տիեզերական, հէն Սասանական՝
 յԱպրուէզն թոստովեան, որ հրդեհեալ բոցացոյց զառ ի ներքոյս
 5 ամենայն, զգորգեալ զծով և զցամաք, զարթուցանել զկործա-
 նուա՞ն ի վերայ ամենայն երկրի:

Եւ արդ՝ եւ նառեցից զեղելոցն յերկրի զանցից կործան-
 մանն առասպելս վիպասանելով, զի վերուստ զարթուցանել սըրտ-
 մտութիւն, և զառ ի ներքոյ բորբոքեալ զբարկութիւն. զհրոյն և
 10 զարեան հեղեղել և զհինիցն արշաւանս. և զմահարեբն տապաւալ,
 զգոչիւն զիւսց և շաղաղակ վիշապաց, զաղանց քաւղեաց և զա-
 բանց հակայաղանց, զաջաց սպառազինաց հեծելոց, յարեկելից յա-
 բնուստ, ի հիւսիսոյ ի հարաւ. Եւ զՀաբաւայինն զարթուցեալ
 մեծաւ բորբոքմամբ՝ յարծակեալ ի վերայ միմեանց, և կատարել
 15 զհրամանն բարկութեան Տեառն ի վերայ ամենայն երկրի. որք
 իբրեւ զմրրիկ աւդոյ թուցեալ փթթորկեալ ընթացեալ՝ ապակա-
 նել զառ ի ներքոյս ամենայն, աւարել զերինս և զրուրս, զա-
 տառել զդաշտս վայրաց, և խորտակել զվէմս և՛ զքարինս ի ներ-
 20 քոյ զարշապարաց երիվարաց և յառաթուր սմբակաց:

Եւ արդ՝ տասցից զվէպս ի կործանիչն և յապականողն թոս-
 տով, յԱստուծոյ անիծեալն:

5 Ա զկործուա՞ն
 8 Ա Վիպասանելով, զի, վերուստ
 10 Ա զհինիցն

13 Ա և զարթուցեալ բորբոքմամբ
 մեծաւ
 14 ՏՏ կատարեալ
 18 Ա վայրեաց

Գ Լ ՈՒ Ե Ը.

Թաղաւորել Ռմզդի և Կոստել զմախարաքս. Աստուած Միւրեկաւմ-
զակ հաւկամէ զՄատուրս Ռմիզդ զյաւի բնդ սակաւ աւարամասնն:
2 Զաւր Աստուածայ ապստամբին յՌմզդէ և առնն իւրեանց քաղա-
5 տօր զԱստուած Դիմումսն Աստուածայ ի վերայ Ռմզդի նախադարձ
սպանանն զՌմիզդ և կաշուցանն քաղաւոր զորդի նստ զԽոսրով
ժախտուա Խոսրովայ յերեսաց Աստուածայ:

Ա և իսկ յիս մահուանն Խոսրովայ որդւոյ Կաւատայ, և Թա-
ղաւորել որդւոյ նորս Ռմզդի ի վերայ աշխարհին Պարսից. որոյ
10 մայր իւր զուսար էր Խաքանայ մեծի արքային Թեաւալացոց,
կին Խոսրովայ. հաւր ցորս անուն Կայլն, որ թէպէտ ի հայրե-
նեաց մեծագոյն՝ ևս առաւել մեծագոյն և զաղանազոյն ի մայրե-
նեաց կողմանէ:

Դանդի երարձ սա զամենայն նախադարս և զնախնին և
15 զսուսնս բնակադոյնս յաշխարհէն Պարսից: Սպան սա զասպա-
րապետն մեծ, զպարթնն և զպաշխան, որ էր ի զաւակէ Անակայ
մահապարսի, զոր առեալ զայեկաց ի հինէ անտի Խոսրովայ ար-
քայի Հայոց՝ ժախտւցին ի գունն արքունի իւրեանց՝ ի կող-
մանս Պարսից: Ա և կատարեաց արքայն ի վերայ նորս զպար-
20 զիսն խոտաացեալս հաւրն նորս Անակայ. զբուն իսկ զպարթնա-
կան զպաշխան անդրէն զարձուցեալ՝ Թաղ կապեալ մեծարեաց, և
արար իւր երկրորդ Թաղաւորութեանն³:

Ա և ինն երկու որդիք սպարապետիս այսորիկ, անուն միոյն
Վնդոյ և երկրորդին՝ Վստամ. զՎնդոյն կապեալ ևզ ի Գրուանդա-
25 կանի, և Վստամ պրծեալ գնաց ժախստական. և ոչ սակաւ ինչ
պատերազմունս զարթոյց սա յաւուրսն յայնտիկ շուրջ դիւրեաւ:
Ա և իսկ ի ժամանակին յայնտիկ Վարամ ոմն Մերեւաւմ-
զակ, իշխան արեւելից կողմանց աշխարհին Պարսից, որ հարկանէր
30 քաջութեամբ իւրով զղաւթս Թեաւալացոց և բանութեամբ ունէր
զԲաւլ և զամենայն երկիրն Բուշանաց, մինչև յայնկոյս զետոյն
մեծի, որ կոչի Վեհոտ, և մինչև ցտեղին, որ կոչի Կաղրիոն:

18 Ա արքունին իւրեանց

18 ՏՏ չիք ի (կողման)

21 Բաւլ, անդրէն ժախտուցեալ:
Ուղղեցինք՝ զարձուցեալ, ըստ
Խոր. Բ, Կէ: Տ. ձանք. 30

24 Ա ի զբուանդ կանի... քրծեալ

26 Ա յաւուրն

31 Եղալընէն-ի փեկ Ասողիկ
ունի Գաւաղուն, ըստ Գ-ի՝ Թեւ-
եա ուղղելի՝ կաղրիոն

Քանզի դանց արար յայնկոյս նիզակի քաջին Սպանդիատայ, որովէ ասեն բարբարոսքն, եթէ հասեալ նա պատերազմաւ մինչև ցոյս վայր, ցցեալ զնիզակ իւր ի գետին:

- 5 Յայնժամ արարեալ Վահրամայն այնորիկ պատերազմն ընդ մեծի արքային Մազքթայց, որ էր ի կողմանն յայնմիկ, յայնկոյս գետոյն մեծի՝ հնար զրազմութիւն զաւարացն, և սպան զթաղաւորն ի պատերազմի. և ըմբռնեալ յափշտակեաց զամենայն զգանձն թագաւորութեանն այնորիկ:

- 10 Յայնժամ առաքէ առ արքայն Պարսից ի ձեռն հրէշտակաց իւրոց հրովարտակս աւետաւոր, և սուղ ինչ աւարամասն ի մեծամեծ գանձուցն հասելոց յաւարէ ասպատակին, նշանակ թագաւորութեանն ի պատուական իրացն, և զամենայն զգանձն զաւրուն շնորհէ ըստ իւրաքանչիւր արժանաւորութեան:

- 15 Արդ՝ իբրև տեսեալ թագաւորին՝ Որմզդի գհրեշտակսն եկեալս աւետաւորս, և ընթերցեալ զգիրս ողջունի զաւարացն, և ընկալեալ զընծայսն աւարամասն ի պատուական յարքունական գանձուցն, թէպէտ և խնդացեալ վեր ի վերոյ զմարդկան զմիտս հանէր՝ այլ ի ներքուստ ցասամբ բարբառեալ ասէր. «Ընթրիքն առաւել մեծագոյն, և զնշանն ի պատառոյս ճանաչեմ. բայց յայնչափ սաստիկ գանձուցն ոչ էր արժան այնչափ հասանել յարքունիս»:

- 20 Յայնժամ փոխանակ աւետաւոր հրովարտակին հրամայէ զրել հրովարտակ առաւել ցասամբ, և արձակէ ի գնդէն համահարզանց և փուշտիպանացն արքունի, զի երթիցեն առ զաւրն, և զգանձն զամենայն ի միջի արասցեն: Եւ նոցա երթեալ սկսան

- 25 պահանջել:
- Յայնժամ ընդոստուցեալ զաւրն ամենայն, սպանին զհաւատարիմս արքային, և ի բաց կացեալ ի ծառայութենէ նորա՝ զՎահրամ նստուցին թագաւոր իւրեանց, Երդունն կնքեցին ըստ աւրինի իւրեանց. միաբանեցան և զարձան յարևելից և զիմեցին
- 30 յԱսորեստան, զի սպանցեն զթագաւորն իւրեանց զՈւրմիզդ, և բարձցեն զտունն Սասանական, և հաստատեցեն զՎահրամ յաթոռ թագաւորութեանն: Եւ փութանակի ժողովեալ և տեսալ զնացեալ զրազմութիւն քաջ և մարտիկ ազգացն արևելից:

- 2 Բալ. պատե բազմաւ, փխկ պատերազմաւ: Այսպէս ուղղել է Պ
4 Ա չիք ընդ
6 Ա գետին
8 ՏՏ զգանձ
10 Բալ. աւարուն: Այսպէս ուղ-

- զում ենք բառ Ասողիկի
16 ՏՏ արքունական
18 Բալ. ի պատուոյս . . . Այսպէս ուղղում ենք ըստ Ասողիկի
20 Ա յանչափ
22 Ա զրոզ, փխկ զրել

Արդ՝ մինչև ցայս այսպէս շփոթ ամբոխի ի մէջ Պարսից
աշխարհին լեալ՝ Յովհանն պատրիկ և դաւաք Յունաց պատեալ
պաշարեալ պաւկէն դքսպաքն Դրւնայ, մարտուցեալ ընդ նմա մե-
քենայիւքն՝ մերձ էին ի կործանել զպարխաւն։ Իբրև եհաս լուրս
այս՝ թողին զնա և զնացին. նախապարհ կալեալ յԱտրպատա-
կան՝ լաստեցին զերկիրն ամենայն, հարեալ զամենայն զայր և
զկին բերանով սրոյ իւրեանց, առեալ զամենայն առ և զգերի
և զաւար՝ զարձան յերկիրն իւրեանց։

Աքդ՝ իբրև եհաս լուր աղաղակիս այսորիկ ի դուռն Սասա-
նականին, առ Որմզդի թագաւորն Պարսից՝ ոչ սակաւ ինչ եր-
կունք աւել պատեցին զնա։ Եւ կոչեցեալ զնախարարս որ ի զրանն
արքունի և զգունդա համահարդանց և զփուշտիպանացն, և խոր-
հուրդ արարեալ՝ առնուլ զգանձն թագաւորութեան և զամենայն
ամբոխ զրանն արքունի, և անցանել յայնկոյս գետոյն մեծի Դըզ-
լաթայ ընդ դոմ31 ի Վեհկաւատ, և հատանել զլարսն կամրջացն.
և խորհել իւր ապաւէն առնել զրազմութիւն ամբոխին արքային
Տաւկաց։

Իսկ այս ոչ այսպէս պատկանել։ քանզի խորհուրդ արա-
րեալ խորհին արանց և համահարդանց և փուշտիպանաց արքայ-
ին32, զի սպանցեն զՈրմիզդ և նստուցեն թագաւոր զորդի նորա
զնոսորով։

Արդ՝ վասն զի մայր շապուհ33 դուստր ասպարապետին այ-
նորիկ, որ էր նախարար տանն Պարթևաց, որք մեռեալ էին, քոյր
Վնդոյի և Վստամայ. և ինքն Վնդոյ էր այր իմաստուն և խոր-
հրդական և սրտիւ արխազոյն՝ խորհուրդ արարեալ լուծանել զնա
և առնել իւրեանց առաջնորդ և զօրժոյն զլիաւոր։ Եւ գնացեալ
ի բերդն Դրուանդականի, լուծին զնա և զամենայն կալանաւորսն
ընդ նմա, և արձակեալ զոմն սուրհանդակ հաւատարիմ երազադոյն
երկովարուք, և զրեալ առ Վստամ եղբայր, զի սաստիկ ստիպով
վաղ հասցէ ի տեղի զորժոյն. և եկեալ նա փութանակի։

Եւ ժողովեցան ամենայն նախարարք և զարադուխք և
դաւաք ի դաշլիճն արքունի, որ ի ժամուն յայնմիկ հանդիպեցան
անդ. և մտեալ ի սենեակ արքայի՝ կալան զթագաւորն Որմիզդ, և

- 3 Ա պարսիկ, փիկ պատրիկ
4 SS մերանայիքն
6 Մ չիք՝ հարեալ զամենայն
19 Ա խորհի արանց և համահար-
դաց

- 23 Ա—Դ այնորիկ որք մեռեալք
էին եթէ էր նախարար տանն
պարթևաց, քոյր՝ SS մեռեալ
38 Ա և արձակել

անդէն վաղվաղակի փորեցին դաշա նորա և ապա սպանին) Եւ նստուցին զորդի նորա Թագաւոր ի վերայ աշխարհին Պարսից. և սկսան առնել պատրաստութիւն փախստեան յայնկոյս զետոյն մեծի Դղլաթայ:

- 5 Եւ ոչ յետ բազում աւուրց Վահրամն եկն հաս փութանակի իրբն զետայնալ արծուոյ Եւ քանզի մանուկ տղայ էր խորով ի թագաւորել իւրում՝ առին զնա քեռիքն. իւր Վնդոյ և Վտամ, և անցին յայնկոյս զետոյն մեծի Դղլաթայ ընդ դոմ, և հասեալ ի բաց զարան կամրջացն Եւ եկեալ Վահրամն Հատ զամենայն դտուն և զգանձ և զկանայս արքունի, և նստաւ ի զահոյս թագաւորութեանն: Եւ հրամայեաց կապել զլաստս փայտեղէնս, և անց զգետովն առ ի յամբոնել զՊարսով:
- 10

- Բայց նորա յերկիւզէն ոչինչ կարաց ունել զսեղիս իրբն անցին զնաղին փախստաւան, և խորհեալ ի ճանապարհի, թէ ճր լաւագոյն իցէ, երթալ առ արքայն Տաճկաց, եթէ առ թագաւորն Յունաց:
- 15

- Ապա լաւ համարեցան առնել իւրեանց ապաւէն զթագաւորն Յունաց: Եթէ թէպէտ և է, տան, թշնամութիւն ի միջի, սակայն քրիստոնեայ են և ձգորմած. և յորժամ երդնուն՝ սակ երգման ոչ կարենա: Եւ զնացեալ ընդ արևմուտս զուղիղ ճանապարհ երթեալ մտին ի քաղաքն՝ որ կոչի Քաղար. և դադարեցին անգ:
- 20

Եւ առ թէպէտ անց զգետովն՝ ոչ կարաց հասանել. յետս դարձան անդրէն ի Տիարոն:

Գ Լ Ո Ի Ե Թ.

- 25 Թուրք խորովայ առ Մարիկ կայսր խորհուրդ Սիմկղիստոնիս Մարիկ առաքէ խորովայ զաւր յազմակաճո՝ քիւն: Կեղիճ քաղաք Վահրամայ առ Մալեղ և պատասխանի սորա. Պատեազմ, յորում կառկանի զաւրմ Վահրամայ Փայտուս և մահ Վահրամայ:

- Յայնժամ յդէ խորով արքայ առ թագաւորն Մարիկ տրտ
30 ճոխս պատարագաւք, և զբէ այսպէս. «Տհւր ինձ զգա՛ն և զսեղի թագաւորութեան հարց և նախնեաց խոց, և արձակեմ ինձ զաւր

1 Ա զորեցին դաշա
14 Ա ուր, հետ ւ՛ր քերած
20 Ա յետ, փիւ յետս

21 Բոլ. հայց, փիւ հարց: Այսպէս ուղղել և Պ ըստ Քաղմայի Աբծր.

յաւդնութիւն, որով կարացից հարկանել զթշնամին իմ, և կանգնեալ զթագաւորութիւն իմ, և եղէց քոյ որդիս ևւ աաց քեզ զկողմանս Ասորւոց—զԱրուստտանն ամենայն մինչև ի Մծրին քաղաք, և յերկրէն Հայոց՝ զաշխարհն Տանուսերական իշխանութեանն մինչև ցԱյրարատ և ցԴուին քաղաք, և մինչև ցեղը ծովուն Բզնունեաց և ցԱռեստ աւան, և զմեծ մասն Վրաց աշխարհին՝ մինչև ցՏփլիս քաղաք, և կալցուք ուխտ խաղաղութեան ի մէջ մեր մինչ ցմահ երկոցունցա, և անշուշտ լիցի այս երդումն ի միջի մերում և ի մէջ որդւոց մերոց, որ թագաւորելոց իցեն յետ մերս:

Արդ՝ ժողովեալ թագաւորին դամենայն սնկղիտոսն, հարցանէր ցնոսա խորհուրդ, և ասէր. «Սպանին Պարսիկք զՈրմիզդ թագաւորն իւրեանց և նստուցին զօրդի նորա թագաւոր ևւ դաւրք թագաւորութեանն նստուցին զայլ ոմն թագաւոր յԱրևելս, և եկեալ նա դաւրու մեծաւ յինքն յափշտակեաց զթագաւորութիւնն, և մտնուի որդի նորա փախստական դնացեալ եկն առ մեզ, և խնդրէ ի մէջ դաւրս յաւդնականութիւն, և խոտտանայ առնեալ ²² արդ՝ զմն արասցուք, ընդունիմք, արժան է բնգունել, իէ ոչաւ Իսկ նոքա առնն, «Ոչ է արժան ընդունել, զի ազգ մի անաւրէն են և ամենեին սուտ, ի նեղութեան իւրեանց խռատանս առնել, և յորժամ յանգորր ելանեն՝ ստեն, բազում չարիս կրեալ է մեր ի նոցանէ, թնգ ապաւեացեն զմիմեանս, և մեք հանգիցուք»:

Անգ թագաւորն նորազ կայր ի մեծ վտանդի, և տեսանէր զմահ առաջի աչաց. — զի զերծեալ էր ի բերանոյ առիւծու և անկեալ ի բերան թշնամեաց, ուստի փախուստ ոչ գոյր:

Իսկ թագաւորն մերժեալ զխորհուրդս սնկղիտասացն՝ յինքնէ յզէր զՓիղիղիկոս զփեսայ իւր և տայր տանել պատասխանի ընդունելութեանն, առնայր ի նմանէ երդումն, և տայր նա զաւր կայսերական յաւդնականութիւն, զՅովհանն Պատրիկ ի Հայոց կղզմանէ, և զնեքստ ստրատելատ յԱսորւոց և զդաւրս նոցա. տնցեալք ի հանդիսի, երեք հազար հեծեալ ըստ հարկւրաւորաց, ըստ հազարաւորաց, ըստ զնդից, ըստ դրուշից իւրեանց:

22 ՏՏ դասորւոց
23 ՏՏ յԱրարատ
24 Ա յեզր... յառեստաւան
25 Ա ամենեին

25 ՏՏ առիւծայ
28 Բու. զՓիղիղիկոսու Ուղղեցինք այսպեւ, Տես զԼ. ԼԲ

Եւ զգաւրս աշխարհին Հայոց բնդունէին գումարել, որք ի
 Ժամուն առ ձեռն գտեալ. և անցեալք ի Հանդիսի իրրն հազարք
 հնգետասանք, իւրաքանչիւր գունդք նախարարաց՝ ըստ հարիւ-
 րուորաց, ըստ հազարաւորաց, ըստ դնդից, ըստ դրաւչուց իւ-
 րեանց: Ամենեքեան սոքա սպառազէնք, ընտիրք պատերազմողք,
 5 վառեալք քաջութեամբ՝ իրրն դուր, որ ոչ զանգիտեն և ոչ զթիւ-
 կունս դարձուցանէին: Դէմք առիւծու դէմք նոցա, թեթեւութիւն
 ոտից իրրն զթեթեւութիւն այժեմանց երազութեամբ ի վերայ
 դաշտաց: Մտադրութեամբ և ամենայն հնազանդութեամբ չու յուզի
 10 անկեալ գնացին:

Արդ՝ առեալ ապստամբին միւրացելոյն զգաւրս իւր, զփիզս
 և դամենայն զգանձս թագաւորական, չու արարեալ զնայ հասանէ
 յԱտրպատական. և բանակեցան սակաւ մի հեռագոյն ի միմեանց
 ի Վարարատ գաւառին:

15 Արդ՝ զրէ Վահրամն հրովարտակ առ Մուշեղ և առ այլ նա-
 խարարս Հայոց, որ ունէր այսպէս. —

«Ես այսպէս կարծէի, եթէ ես յորժամ ընդ թշնամիս ձեր
 մարանչիմ, և դուք ի կողմանէ այսի եկեալ՝ ինձ աւգնական լի-
 նիցիք. զի ես և դուք միարանութեամբ բարձցուք ի միջոյ գախ-
 20 եզերական պատուհասն, զտունն Սասանայ: Իսկ դուք աւադիկ
 ժողովեալ զայլք ի վերայ իմ պատերազմաւ յաւգնականութիւն
 դմաւ Այլ ես ոչ երկեայց ի ժողովելոց երեցանցոյ Հողովանցելոյդ,
 որ եկեալ են ի վերայ իմ: Բայց դուք, Հայք, որ տարածամ ցու-
 ցանէք զտիրապիրութիւն. ճշ ապագէն առեղ Սասանական երարձ
 25 զերկիրդ ձեր և զտէրութիւն: Եւ կամ ընդէ՞ր բնաւ ապստամբեցին
 հարժն ձեր և զնացին ի ծառայութենէ նոցա, մինչև ցոյտաւր
 պատերազմեալ ի վերայ աշխարհին ձերոյ: Եւ ոչդ՝ զիմեալ զայ
 ի վերայ իմ կորուսանել զայնչափ վաստակս ձեր. զի թէ Թորով
 յաղթեալ էր՝ երկոքին դոքա միարանեալ բարձցեն զձեզ ի միջոյ:

30 Բայց զի հաճոյ թուեսցի ձեզ ի քանց կալ ի գոցանէ և միարանել
 ընդ իս, և ձեռն առլ ինձ յաւգնականութիւն: Եւ թէ ես յաղ-
 թեցից՝ երդուեալ ի մեծ աստուածն Արամազդ, և յԱրեգակն տէր
 և ի Լուսին, ի Հուր և ի Զուր, ի Միւր և յամենայն աստուածս,

11 Ա զորս իւր զփիզս.

14 Ա ի վար առաւտ զատդ

20 Ա առադիք

21 ՏՏ յաւգնութիւն

22 Ա նմայ, փիկ գմա

24 Ա պտիրութիւն

27 Թգում է ուղղել՝ զայլ

33 Ա ի միւր

եթէ ձեզ տուեալ լիցի իմ ղՀայոց թաղաւորութիւնն. Ղզը և զուք կամիր՝ արասցիք ձեզ թաղաւոր և թողում ձեզ զամենայն երկիրն Հայոց մինչև ցկապկո՛ւ և ցզուոն Աղուանից. և յԱսորայ կազմանէ՛ զԱրուստտան, զՄրժուին և ղՀոր Շիրական մինչև ցսանմանս Տաճկաց, զի առ նախնեաւքն իսկ ձեզ լիալ է. և ընդ արեմուտս մինչև ցկեսարիս Կապադովկացոց. և ես մի իշխեցից քան Զորասպ անցանել յաշնկոյս. և գանձն Արեաց թաղաւորութեանս բաւական համարեալ լիցի ինձ և ձեզ, և աշնչափ ձեզ շատ լիցի՝ մինչև ձեր թաղաւորութիւնդ հաստատեացիս:

10 Եւ ըստ իւրեանց կարգի՝ էր ազ ծրարեալ և կնքեալ ընդ հրովարտակին:

Եւ առեալ նոցա զհրովարտակն և ընթերցեալ՝ ոչ արարին բանիցն պատասխանի. և ոչ իսկ ասացին բազմաց, զի երկնչէին յանձնարանութենէ իւրեանց:

15 Եւ արդ՝ զրէ նա անդրէն գարձեալ թուղթ երկրորդ:

Երեցի առ ձեզ ի քաց կալ ի նոցանէ, ինձ և ձեզ բաւական համարելով զամենայն աշխարհ և զամենայն գանձս թաղաւորութեանս այսորիկ, ուրեմն ոչ կամեցարուք լսել, զի ոչ արարէք բանիցն պատասխանիս: «Եւ զձեզ ապաշաւեմ, առէ. քանզի վազիւ առաւառտուն ցուցանեմ ձեզ փիղս վառս, և ի վերայ, դուրս սպառազինեալս քաջաց, որ անգասցեն ի վերայ ձեր նետս երկաթեղէնս ձեռարձգութեամբ, և շուտուունս մուխս պողպատիկս սլաքաւք՝ ի հաստաձիդ աղեղանց. արս երխասարգս հաւարս սպառաղէնս վատնելոց, և երկվորս տաճիկս և երազունս, տապարս և սուսերս մուխս և պողպատիկս և կռուփս՝ որչափ Խոսրովայ և ձեզ պիտոյ իցէս:

2 Ա զերկիրն տմնալն հայոց

4 Գ. չիք զՄրժուին:

4 Ա զարուստտան զՄրժուին և ղՀոր շիրական: Ազգեցինք զՄրժուին բառ Թովս. Արծր. 7 ՏՏ քան զԱրասպ: Ազգեցինք Զարասպ: Հոժտ եր. 9 Լեւոն Զարասպ: Թովս, Սրժր, ունի գարասիս:

15 ՏՏ զրեն Անդրէն: Ազգեցինք աշաղկո: Թովս, Արծր.՝ զրէ գարձեալ

20 Բար, աղափաղով՝ ձեռք ունին տալլ զաղիւ, քանզի լինի առ Սասանայ: Ազգեցինք բառ Թովս. Արծր.՝ քանզի զաղիւ առաւառտուն:

22 22 ձեռարձգութեամբ: Մ. ուղղո՛ւ է այսպէս

22 ՏՏ շառաւուն: 22 շառաւուն: (շառաւն = եղեղ բառից)

22 ՏՏ պողպատիկս

22 Ա և մուխ և պողպատիկս

Առնէ նմա Մուշեղ պատմախոսնի աշտըան. «Առ Աստուծոյ մարդասիրութիւնն, և ում կամեցաւ՝ ետ- բայց դու պարտիս յաննն քո ապաշտել և ոչ ի մեզ: Եւ ծանեայ զքեզ այր պոռոտաբան. և ոչ խրախուսես յԱստուած, այլ ի քաջութիւն և ի 5 փղաց զաւարութիւն: Այլ ես ասեմ քեզ, եթէ Աստուած կամեցի՝ վազիւ պատելոց է զքեզ պատերազմ քաջաց, և ճայթեցին ի վերայ քո և ի վերայ բազմութեան փղացդ իբրեւ զամաց երկնից զաղա- նազոյնս քան զամենեւեան: Եւ ի վերուստ աւազին ճայթէ և 10 ժայլատակէ և յարմակին քեզ սպառազէնք ճերմակ երկվորուք և բռնալիր նիղակաւք, և անցանն ի մէջ բազմութեանն՝ իբրեւ զփայլատակունք զանառազ զգալարս և զգաւաացեալս հրոյ շան- թելոյ, զի ցաւդանայցեն ի յերկնից ի յերկիր, և այրեցին զիսեւս գաշաաց: Քանզի թէ Աստուած կամեցի՝ տանելոց է սաստկութիւն հոգոյ զգաւութիւնդ քո իբրեւ զփռչի, և գանձ 15 արքունի յարքունիս գնայն: Իին ընդ նոսրս Վնդոյն այն և Վստամ, զոր վերագոյն ա- սացի. և զաւրք պարսիկք իբրեւ ութ հազար հեծեալ: Եւ եղև ի վաղուեան առաւաւտուն, մինչդեռ տրեն զծայրս հաբկանէր, կարգէին ճակատ առ ճակատ, և բազիւնին զփոխեանս 20 պատերազմու: Ուժգին լինէր խուճր և խառնուրդ, և սասակ լինէր կոտորածն ի մէջ տարուերին: Եւ մարտուցեալ յայդուէ մինչև ցերեկոյ՝ յաւզնեցան երկոքին կողմանքն ի պատերազմին: Եւ այնչափ սասակ լինէր կոտորածն, մինչև զի խաղա- ցեալ վտակաց սաստկութիւն արեանցն տուգանէր զերկիրն ա- 25 մենայն: Եւ ոչ կարացաւ զգէմ ունել, փախտտեցան լինէր դարն աղստամբական առաջի դարացն Յունաց: Իսկ նոցա գնեալ մտեալ մինչև ցքաջ մթնաւ երեկոյին՝ ցիրս զիսթուալ կացուցանէին զդաշտաւքն և զճանաղարհաւքն. զրազումս սասակէին ի սուր սուսերի իւրեանց. և զրազումս ձերրոկալ արտրին, և կապեալ 30 զձեռս ի վերայ թիկանց՝ բերեալ կացուցանէին առաջի թագա-ւարին:

1 Բու. ազգագրգած ձեռք ունին՝
այսքան առ աստուծոյ մար-
դասիրութիւնն: Թագ. Արծր,
ունի լավագոյն ընթերցած.
Կրթնս քո լուեալ ասեմ, եթէ
յԱստուծոյ է թագաւորու-
թիւնն: Ուղղեցինք այսպէս:
7 Ա զազանագոյն

9 Ա յարմակեն
11 Ազգագրգած խոսք. պետք և
զանաառա զալարս և զգաւ-
աացեալս՝ սերքն տանել,
զիսեւս գաշաաց: Ից հետո:
19 Ա բախէին
29 ՏՏ ձեռքակալ
30 ՏՏ ձեռս

Եւ զբազմութիւն փղաղն զիմեալ գնային բռնաբարս։ Ապա
զհետ արդուեալ աղատաղունդ սպառազինացն՝ ներքուստ ի վեր
ծակոտէին զսպառաղէնս հեծելոց, որ կային ի նիւս փղաղն։ Եւ
աներկիւզ անվեհեր կուէին, և սատակեալ զբաղում փիզս և զհե-
ծեալս և զփղապանս՝ դարձուցանէին անդէն բռնաբար և զբազ-
մութիւն փղաղն։ Եւ եկին ամէն յանգիման թաղաւորին։

Եւ անդէն զիմեալ ի բանակետդն դաւաղցն Վահրամայ, Եւ
կայր ի խորանին գանձ արքունի և ամենայն գանձք թագաւո-
րութեանն անթիւ և անհամար պատուականք։ Գամենայն աւար
հարկանէին, և զբաղում գահոյս ռոկիապատս չքնաղ և գանաղան
կողմութեամբ մանրէին սուսերաւք իւրեանց, և անցանէին ի կող-
մանս փաղանդ փաղանդ զրեւինս բարձեալ ուղտուց և ջորուց
բազմութեանն։ Եւ լլցան ամենքեան բազում և մեծամեծ աւարաւ
ժողովեցին ապա և դաւրն Պարսից ի հապաղութե գանձուցն ոչ
սակաւ իւրս, և հասուցին անդրէն յարքունիսն իւրեանց։ Եւ դաւ-
րացաւ յաւուր յայնմիկ արքայ Խոսրով ի ձեռն յաղթութեանն
այնորիկ քան գամենայն զթշնամիս իւր, և հաստատեցաւ թա-
ղաւորութիւն նորա։

Եւ զբազմութիւն ձերբակալաց ձիահեծելոց և փղահեծելոցն
հրամայէր մերկացուցանել և կապել դձեռս ի վերայ ուսոց և ար-
կանել կոխան ի ներքոյ սաից փղաղն։ Եւ ոչ ուրեք կարացին
դառնել զհետ Վահրամայ, զի զերծաւ և դնաց այսպէս փախսաւ-
կան, և չուպաւ և անկաւ ի Բաշ Եանաստան, որպէս ի բանէն
Խոսրովայ սպանաւ ի նոցունց իսկ։

4 Ա փիւզս
5 ՏՏ անգրէն, փիկ անգլէն
10 ՏՏ ձեռքակալաց

23 ՏՏ չքնա.
33 Ա չահրաման

Գ Լ Ո Ւ Խ Ժ.

Նենգաւորիւն խորագայ ընդդէմ Մաւօնդի Սմարտաւնաւորիւն իօխա-
նացի Յովնայ զխորագայ առ Մաւրիկ կայսր: Մաւրիկ պատգաւանէ
խորագայ եւ զՄաւօնդ կաշէ ի պալատն: Խորագայ ապա կաշուե-
զաօխարհսն ըստ ուխտի խոստմանն:

- Եւ եղև ըստ աւուրց ինչ յևա անցանելոյ պատերազմին աշ-
տորիկ մեծի, մինչդեռ արքայն Խորագայ նստէր ի մէջ խորանին
իւրում, և զաւրն Պարսից շուրջ գնովաւ բանակեալ, և զաւրն Յու-
նաց Կեռադոյն ի նոցանէ աւթիւ միով, ուրոյն բանակեալ չո՛
բազմամբոյս լիւթեամբ աւարաւ իւրեանց, և կային զառաջեալ
արքային ամենայն մեծամեծք նախարարք իւր—խաւսել սկսաւ
արքայն և ասէ. «Իցէ՞ որ արդեաւք լեալ ի թագաւորաց աշխար-
հի, որ կարող է ըմբռնել զմեռա այլ թագաւոր զթշնամի իւր, զա-
ւարիչ թագաւորութեան իւրոյ, և ոչ սպանել զնա և Գնջեացէ զա-
մենայն արու յաշխարհէ նորա, այլ առնիցէ՝ զնա յարդեպիւս:
Թագ կապեալ նմա և ծիւրանեալք զարդարեալ մեծարիցէ, վանեալ
զթշնամիս նորա, և հաստատեացէ զնա յաթոս թագաւորութեանն,
և տուեալ նմա զանձ արքունական ի գտնձուց իւրոց, արձակէ
զնա բարեաւ զնալ զճանապարհ իւր: Այսպիսի պարգևս շնորհաց
ինձ Մաւրիկ թագաւոր հայր իմ, զոր ոչ ոք կարէ ի մարդկանէ
շնորհել որդւոյ իւրում սիրելւոյ: Պատասխանի ետուն ոմանք ի
նոցանէ, և ասեն. «Արքայ, յախտեան կեաց. մեք ոչ զխտեմք,
արժան իցէ շնորհ ունել և թէ ոչ: Զի ամենայն թագաւորութիւն
զանձիւք հաստատեալ կայ. և դքա զամենայն զանձս թագաւո-
րութեան աւար վարեցին»:

- Պատասխանի ետ արքայն և ասէ. «Զզանձս թագաւորու-
թեան իմոյ ընդ կողս դոցա այսրէն արտաքս քարչեցից հանդերձ
նոցունց աղիեալ զանձիւք, քանզի իմ է այն ամենայն Բայց
ինձ այս կարի է, զի ապրեցաւ տիրաւանացն այն և զնոց» Այլ
քաջ է նա և վերստին այլ զաւրս դումարէ ի քաջաց ազգաց ա-
րեւելիցս:

9 Ա որոյն, փիւղ ուրոյն

10 ՏՏ այնպիսի

21 ՏՏ այսպէս պատասխանի

23 Ա և եթէ ոչ

28 Ա մի է, փիւղ իմ է

Պատասխանի կտուն նմա և ասեն. «Զօրքատեացն դայն նորա զերծուցին, քանզի մերով աչաւք իսկ տեսաք, զի կալաւ զնա Մուշեղն այն Մամիկոնեան, և ետ նմա երիվար և զէն, և արձակեացաւ Զայս ասացին՝ զի կամեցան ի վերայ նորա չարիս:

3 Քանզի տեսանելով զհաւայտ նորա չարաշարս՝ զարհուրեալ խոտորեցան փրաք իւրեանց ի նմանէ: Եւ ոչ ինչ էւած զմտաւ արքայն, եթէ զինչ իցէ բանն այն. քանզի մանուկ տղայ էր և խակ: Եւ ոչ ինչ յիշեաց զխոռովութիւն այնպիսի դաւրացն. այլ հաստատեաց զմիտս իւր ի վերայ բանիցն ստութեան, և ասէ. «Ինչեացի տյար Մուշեղ, և կապեցիք ռախք և ձեռաւք, մինչև ես վասն նորա ծանուցից կայսերս:

Ի նմին ժամու հրամայէ գրել նա յետկար, և արձակու զմի ի սուրհանդակացն առ Մուշեղ. «Փութով եկ, ասէ, զորք հասեալ է կարի կարեւորագոյն: Եւ հրաման ետ փուշտիպանացն իւրոց

15 և ասէ. «Պատրանս լերուք, զի յորժամ եկեսցէ նա, և ես ձեռամբ նշանակեցից ձեզ՝ յանկարծակի զձեռս նորա յետս կալարուք և կապեցէք զնա. բայց պատրանս լիջիք, զի այր քաջ է նա, և մի թէ կամ ինքն մեռանի, կամ զիս սպանանէ: Եւ թէ ինքն իսկ մեռանի՝ ես պատասխանի տաց կայսեր վասն նորա: Սոյնպէս և քարապանացն պատուէր ետ, ասէ. «Զգոյշ կացէք, զի յորժամ եկեսցէ Մուշեղ ի գուն խորանին իմոյ՝ ի բաց լուծէք ի միջոյ նորա զկամարն և զսուսերն, ասելով, եթէ ընչ է աւրէն զինու հանգերս մասնել յանդիման թագաւորինս:

Արդ՝ մինչդեռ առնէր նա համար հանդիսի ի մէջ զաւրաց

25 իւրոց, տեսանել զթիւ կենդանեացն և մեռելոց, որք անկան ի պատերազմին՝ եկն եկաց առաջի նորա սուրհանդակն և ասաց նմա սղջոյն, և մատոյց նմա զթուղթն: Իսկ Մուշեղայ առեալ զթուղթն՝ ասէ ցնա, եթէ ընդոյն իցէ և խաղաղութիւնս: Պատասխանի ետ սուրհանդակն և ասէ. «Ընդոյն է և խաղաղութիւն, և զայլազգ ինչ ես ոչ գիտեմ, բայց միայն զի հրամայեցաւ ինձ փութանակի կոչել զքեզս: Եւ անդէն վազվազակի պատրաստեցաւ նա սրպէս ի պատերազմ, քանզի արկ ի միտս իւր, եթէ գուցէ հասեալ ինչ իցէ զորք պատերազմի, կամ շնորհ ինչ իցէ պարգևս փութանակ վաստակոցն: Եւ առնու ընդ իւր արս երկու հազարս ի սպառա-

3 Ա Մամիկոնեայն
6 Ա արքայն զմտաւ
12 ՏՏ՝ արձակէ

16 Ա յետ
18 ՏՏ և մի՛ կամ թէ ինքն
18 ՏՏ իսկ ինքն

զինաց՝ յաղատաց և յանողատաց, զորս զիտէր արժանիս պատ-
ւոյ, և վատաւ էր հեծելութեամբ:

Էր զրեալ վասն նորա և առ Պատրիկն Յովհան, զի արձա-
կեցել զնա, և նորա դարձեալ հրաման տուեալ նմա երբեալ այն-
5 ալէս պատրաստութեամբ, և հրամայեաց ամենեկուն նոցա ար-
կանել զանձամբ զիւրաքանչիւր զսպառազինութիւնս Վասեցան
և զնաղինս:

Եւ եղև իբրև մահն ի մէջ բանակին և մերձ եղին մաւտ ի
մաշկապեցեմանն արքունի, և հրաման հասանէր ընդդէմ, մի եր-
10 թալ այնքան բազմութեամբ, այլ բացազոյն նստուցանել զնոսա,
և նմա սակաւ արամբք յանդիման լինել արքայի:

Եւ նորա ոչ առեալ յանձին առնել այնպէս, այլ զնաց զա-
րութեամբք մաւտ ի դուռն խորանին արքունի. և զաւրն Պարսից
կացին շուրջ զխորանաւս սպառազինեալք. և իջեալ յերկարէն՝
15 զնաց ի դուռն խորանին Մ արամբքս. Եւ զաւրն կային այնպէս
զինեալ իւրաքանչիւր երկվարեալք. Զարհուրեցաւ արքայն, և ա-
մենայն զաւրք նորա. և սկսան ծածկել զեննդութիւնն: Եւ եղև իբրև
հասա ի դուռն խորանին՝ մատենան բարապանք զբանն և ասնն.
«Եթ զկամարդ և զսուսերդ ի միջոյ ջուսմէ, և մերկեմ ի քէն
20 զսպառազինութիւն քո. զի ոչ է արէն մտանել առաջի թաղաւո-
րինս: Անկաւ կասկած ի սիրտս նորա, սկսաւ պատրաստել և
կազմել զինքն յարձակումն: Պատասխանի եւս բարապանացն և
ասէ. «Ե՛մ մանկութենէ իմմէ սննդակից եղեալ եմ թագաւորաց ի
նախնեաց իմոց և հաւուց, և այժմ հասեալ կամ ի դուռն արքու-
25 նի, ի տեղի հանդիսի. Եւ զսպառազինութիւնն իմ յանձնէ իմմէ
ի բաց մերկացայց, և լուծից զկտմարս և զդաւաթս յանձնէ իմմէ,
զոր ոչ երբեք լուծանեմ ի ասան իմում յուրախութեանս: Եւ կամ
Խնձ արժան իցէ զիտել զչարութիւնդ Պարսիցքս: Եւ հրաման եւս
միում ընթանալ մանկանցն, զի յառաջ մատուցէ զզաւրն յաղ-
30 նութիւն.՝ և ինքն դարձաւ անդրէն ի զնալ:

Ազդ եղև արքայի, եթէ ոչ կամեցաւ այնպէս մտանել, այլ
դարձաւ անդրէն և զնաց: Եւ սկսաւ թաղաւորն ծածկել զչարու-
թիւնն և ասէ. «Թողցի արդ ի բաց խորհուրդն այն. Թող եկեացել,

8 SS իւրաքանչիւր զսպառազի-
նութիւն իւր
10 Ա արքայն
11 Ա արամբ
14 Թ՛վում և սղոյնի՛ կային

10 Ա քումէ
24 Ա ի առն, փխկ ի դուռն
27 SS երբեք
28 Ա ինչ, փխկ ինչ

որպէս և կամեացին: Քանզի ինքն մանուկ էր, և զաւրութիւն զաւրացն սուղ ինչ և սակաւ: Կոչին անդրէն և ասին. «Հրաման ևս մտանել որպէս և կամիրս: Նա զարձաւ և ասէ. «Թող տեսից, եթէ զԲնչ բարի խորհեցի աւալ ինձ արքայից արքայոյ»:

5 Եւ ետես ի խորանն, զառաջեաւ արքայի եւթն արամբք, և խանարեցաւ ի վերայ երեսաց խւրոց, երկիր եպագ արքայի, և կանգնեցաւ: Եւ արքայ ոչ ձգեաց զձեռն իւր որպէս երեկն և եսանգն՝ բնդունել զնա և ողջունել, այլ կայր այնպէս յամառա-

10 նրկեաւ արքայ և զանգիտեաց, և ոչ կարաց աւալ հրաման՝ որպէս խորհեալ էր, և ասել կամ մեծ կամ փոքր՝ յերկկաղէն: Եւ նա զարձեալ ել փութանակի ի խորանն. մասուցին նմա զերի-
վարն, հեծաւ և գնաց: Եւ եղև իրբև ետես զայն արքայ՝ յոյժ երկեաւ, և կամեցաւ ծածկել զքնաւ իւր. յոտն եկաց ի դահոյիցն
15 և բնթաղաւ ի գուռն խորանին, ել արտաքս և արձակեաց զնա նորա գոմն զլիաւոր նախարար: Եւ ասանել այլ կնքեալ՝ երգումն, և կոչել անդրէն, ողի պատուով և մեծարանալք զնաացեա, ասէ, աստի, և մի համարիր ի միտս քո խորհել վասն քո այլադդ ինչն:

20 Եւ նորա ոչ կամեցեալ, այլ գնաց ճանապարհ իւր: Արդ՝ նա խորհեալ նոցա զայս՝ յերրորդ ժամու. դիմել ի վերայ խորանին և սպանանել զնա: Եւ հրաման ատեալ զաւրացն՝ որք սպառազի-
նեալ շուրջ զխորանաւն ետարովու. կային: Վասն զի եկեալ ի զդադումն և զաւրոց նորա զխտովութիւն՝ զաղաւնցին ի խոր-
հոգոյն և զնացին:

25 Եւ եղև մինչդեռ երթային նոքա՝ ի դիմի հարաւ սոցա մի ամն ի փուշտիպանաց արքայի, և ըմբուտ զնա՝ առին զնացին ընդ խրեանս. և սպառնացաւ նմա Մուշեղ երգմամբ, զի եթէ ոչ պատմեցէ նմա զեղեալն վասն նորա խորհուրդ՝ մեռցի:

30 Իսկ նորա երգմնեցուցեալ զնա, զի մի սացէ զնա ի ձեռն արքայի. և պատմեաց զամենայն: Ապա ի միւտում ատուրն ընդ առաւանտն գնացեալ ի գուռն Պարիկին Յովնանու, ետես զնա և խաւեցաւ. զամենայն չարխն, ունելով առաջի գոտիկանն

3 Ա ետեմ արամբ

8 Ա ամառացեալ. ամառացեալք

11 Ա կամի մեծ և կամ

15 Ա արձակ (մտք բաց տեղ թողած)

18 Մ չիք՝ խորհել վասն քո

26 Ա ի փոշտիպանաց

27 Ա ընդ խրեանս

30 ՏՏ ի միտմ, փխի ի միտում

32 ՏՏ զառաջի

փուշտիպանն, որ և նա եկաց և խաւսեցաւ դամնայն եղեալ
բանաւ: Պոռվեցան իշխանքն և ամենայն զաւրն. բայց և նոցա
յիշելով զերգումն և զխոտութիւնն կայսերն, ոչ ինչ ի վեր հա-
նին զբանսն: Ասացին զրել առ թագաւորն և ծանուցանել նմա
5 զամենայն չարիսն: Բայց ասաց Մուշեղ յանդիման ամենեկուն.
«Եթէ ոչ մեռցի այրն այն՝ ի նորա ձեռն կորնչիոց է ամենայն
երկիր Հաովմայեցւոց տէրութեանդ»:

Յայնմ ժամանակի զործեցին ընծայա, մեծ աւարտման թա-
գաւորին իւրեանց, պսակս և խոյր մի ի զմրութատ և ի մարգա-
10 րիտս յաւրինեալս, ոսկի և արծաթ բազում յոյժ, և ականս պա-
տուականս չքնաղագիւտ, և հանդերձս պճնեալս ի զգետուց՝ որ
է զարդ իւրեանց յաւրինեալ թագաւորացն Պարսից, երկվարս ար-
քունականս հանդերձ նոցուն իսկ արքունական կազմուածովքն:
Եւ գործեալ ընծայա, և առաքեն հանդերձ աւետարտ հրովար-
15 տակաւ, զրեալ և ամբաստանութիւն զարքայն Պարսովայ, և
գումարեն զհետ ընծային հեծեալս շորեք հարիւր Ազգ լինի Պոս-
րովայ, եթէ հառն տանել ի գանձուց քոյ՝ գանձ աւարտման
թագաւորին իւրեանց, և զրեցին զքէն ամբաստանութիւն: Եւ ըն-
դոստուցեալ դառնութեամբ Պարսով արձակէ զկնի նոցա զաւր,
20 զի հասցեն ի հանապարհի և կորուսցեն զՄուշեղն յանկարծաւրէն
զաղտարար. և առեալ զգանձն արքունի՝ հասուցեն առ նա Այն-
պէս իմն փութանակի գիտացեալ և վասն իրացն և իշխանքն
յունականք՝ և նոցա առաքեալ զկնի նոցա զաւր բռնադոյն. և
հասեալ անդէն ի մաւտոյ՝ ոչ ապրեցուցին ի նոցանէ և ոչ մի:
25 Եւ բանն ի վեր ոչ ել. և զաւրն տարեալ հասուցին ի պաղտան
մեծաւ խնդութեամբ:

Ընկալաւ թագաւորն զընծայսն, և առաքէ հրովարտակ մեծաւ
շնորհակալութեամբ ի ձեռն իւրոյ հրեշտակի, և զրէ առ նոսա ի
բաց կալ ի խորհրդոյն յայնմանէ, զոր ամբաստանեալ զթագա-
30 ւորէն: «Եթէ ոչ զդուշանայցէք անձին զորա՝ ի ձեռաց ձերոց
ինդրեցից զգա՛ւ: Գրէ և առ արքայն՝ զհրութեամբ արձակել դա-
մենեանն»:

Յայնժամ արքայն Պարսով ետ ամենեկուն ըստ իւրաքան-

- 9 Ա չիք՝ ի (զմրութատ)
11 Ա ի պետատոց
13 ՏՏ հանդերձ իսկ արքունական:
Ա հանդերձ ցուն իսկ արքու-

- նական: Ուղղեցինք աշտան:
25 Ա հասուցանեն
25 Ապաւեյաւ եր՝ և զաւրն զըն-
ձայն տարեալ

- չիւր շափուց պարզես, և արձակեաց յիւրմէ։ Եւ իւր շու արարեալ
 յԱսորայտականէ՝ զնաց յԱսորեստան, ի բնիկ թագաւորական
 կայեանս իւր։ Եւ հաստատեցաւ յաթոս թագաւորութեան. և
 5 զխոստացեալ պարզեան կայսերն կատարեաց. եւ նոցա զԱրատա-
 տան զամենայն մինչև ցՄԺրին, և զերկիրն Հայոց. որ ընդ իւրով
 իշխանութեամբն էր, գտանն Տանուտերական մինչև ցգեան Հու-
 րադդան, և զգաւառն Կոռէից մինչև ցաւանն Գառնի և ցեղր ծո-
 10 վուն Բզնսնեաց, և ցԱսեստատան և զԳողովիտ գաւառ մինչև
 ցՀացին և ցՄտիու։ Եւ կողմն Վասպուրական զնդին էր ի ծա-
 սայութիւն Պարսից արքային։ Եւ ի նախարարացն Հայոց բա-
 15 դումք ի Յունաց կողմանէ և սակաւք՝ ի Պարսից։ Եւ և զմեծ
 մասն Վրաց աշխարհին մինչև ցՏիֆլիս քաղաք։ Բայց զՄուշեղն
 զայն կոչեաց թագաւորն ի պաղատան. և այլ ոչ ետես զերկիրն։

Գ Լ Ո Ի Խ ԺԱ.

- 15 Բարեպաշտութիւն Շիրիճ թագուհոյ։ Հրաման Խաւարդայ՝ Խաւա-
 րուն կալ մեալ ի հայրեմի աւելնալ

- Էին սորա կանայք բազում ըստ աւրինի մագութեան իւրեանց,
 բայց առ սա և կանայս քրիստոնեայս, և սորա կին քրիստոնեայ յոյժ
 զեզկեցիկ ի Յուժաստան աշխարհէ, անունն Շիրին։ Սա է բամբիշն,
 20 տիկնաց տիկին։ Շինեաց վանս և եկեղեցի մերձակայ արքունական
 կայսնիցն, և բնակեցոյց ի նմա քահանայս և պաշտաւնեայս.
 կարգեաց սահկա և հանգերձադինս յարքունուստ, զարդարեաց
 սկուով և արծաթով։ Եւ բարձր ի գլուխ համարձակութեամբ քա-
 րողէր զաւետարանն արքայութեան ի դրանն արքունի. և ոչ որ
 25 իշխէր ի մեծամեծաց քաւղէիցն բանալ զերբան իւր և ասել բան
 մի մեծ կամ փոքր ընդ քրիստոնէի։

- Բայց սոգա յորժամ լցան աւուրք և հաս ի կատարեալ
 մամանակի՝ զրազումս ի մոգուց որ գարձան ի քրիստոնէութիւն՝
 սոյանմամբ կատարեալ մարտիրոսութեամբ ի տեղիս տեղիս։

- 30 Եւ հրաման ետ, ասէ. չՄի ոք յանաւրինաց իշխեսցէ զա-
 նալ ի քրիստոնէութիւն, և մի ոք ի քրիստոնէից գարձցի յա-
 նաւորինութիւն, այլ իւրաքանչիւր ոք յիւր հայրենի յաւերչնս

3 ՏՏ կայսնս

18 ՏՏ չիք՝ և (կանայս)

23 Ա տնդերձագինս

25 Ա քթէիցն

պինդ կացցէ: Եւ որ ոչն կամիցի ունել զհայրենի գէն, ալ
 ապատամբեալ ի բաց կացցէ յիւր հայրենի աւրինացն՝ մնացիտ:
 Բայց ի մեծ տաւնի ողորմեանն՝ երթային ի վանաց Շիրինայ,
 և որ ալ քրիստոնեայք՝ ի դուռն սենեկին արքայի, պաշտմամբ
 5 ընթեռնուին դաւնտարան, և առնուին պարգևս ի թագաւորէն և
 գնային: Եւ ոչ ոք իշխել խաւսել ինչ ընդ նոսա:

Գ Լ Ո Ի Ե ԺԲ

Խնդրել կայսերն Մարկայ ի Խոսրովայ զմարմին Գաթիկի մար-
 ցարէին. Եւսմէ՞ որ եղեմ ի Խանիկ զմարմինն:

10 Եւ եղև ընդ աւուրսն ընդ այնոսիկ խնդրեաց թագաւորն
 Յունաց ի թագաւորէն Պարսից զմարմին մոեւոյ առն այնորիկ,
 որ կայր ի Շաւշ քաղաքի, ի դանձու արքային, եղևալ ի պզնձի
 աւաղանի, զոր պարսիկն անուանէ Կաւ խորով, և քրիստոնեայքն
 ասին զԴանիէլի մարգարէի: Եւ արքայն խորով հրամայէ ա
 15 նմա զինգիրն: Իսկ արկինն Շիրին յոյժ խոտկեալ էր ի վերայ
 իրացն. իբրև ոչինչ կարաց առնել զկամս թագաւորին զարձուցա-
 նել՝ հրաման ևս ամենայն քրիստոնէից աշխարհին, զի պահաւք
 և աղաւթիւք խնդրեացն ի Քրիստոսէ, զի մի շարժեալ գնացել
 յաշխարհն շնորհն այն:

20 Եւ ժողովեալ ամենայն երկիրն ի տեղին յայն, ուժգին
 խնդրուածովք և արտասուագոչ ողբովք խնդրէին ի Քրիստոսէ
 արգելու: Եւ ածեալ նմա ջորիս, և բերեալ նմա զհասակ արքու-
 նի, և առին գնացին: Իսկ իբրև ելին ընդ դուռն քաղաքին, յան-
 կարծաւրէն ջամաքեցան աղբիւրքն, որ ելանէին ի մէջ քաղաքին
 25 և հոսէին արտաքս. և ամենայն երկիրն վայիւ և աղաղակաւ
 գնային գնեալ նոսա:

Եւ եղև իբրև մեկնեցան ի քաղաքէն ասպարէզս երիտ՝ յան-
 կարծակի գտեղի առին ջորիքն որ ի զհասակին. և ոչ ոք կարաց
 զնոսա շարժել ի տեղուջէն: Եւ զարձեալ անդրէն յանկարծակի
 30 բռնաբար սուր սուր հարկանելով գամբոյն պատառեցին և
 զգուռն բռնութեամբ, և ընթացան անդրէն ի քաղաքն. և եղև

իրբե մտին ընդ դուռն քաղաքին՝ անգրէն արձակեալ ըզիեցին
 5 ջուրք զետոյն, և հոսէին ջուրքն արտաքս ի յորձանաւք ջուրց
 իրբե զառաջինն:

Գիտութիւն արարին կայսերն վասն նորա փութանակի: Եւ
 5 նորա տուեալ տանել նմա պատարագս՝ հրամայեաց առնել որդէս
 և նայն կամեցաւ: Թողին զնա և գնացին ի քաց:

Գ Լ Ո Ի Խ ԺԳ

Ենեցաւոր խորհուրդ Մաւրկայ՝ քափուր յիօխանաց Հայաց կացու-
 ցանել զՀայս: Փախուստ բազում իօխանաց յունակամ մտօնեմ
 10 Հայաց առ Պարսիկս:

Յայնմ ժամանակի Թաղաւորն Յուշաց Մաւրիկ հրամայէ
 զրկ յա թաղաւորն Պարսից զիր ամբաստան վասն իշխանացն՝
ամենայն Հայաստանեաց և զաւրաց իւրեանց: «Ազգ մի խոտոր
 և անհնազանդ են, ասէ, կան ի միջի մերում և պղտորնու Բայց
 15 նկ, ասէ, ես դիմս ժողովեմ և ի Թրակէ գումարեմ, և դու զքոյդ
 ժողով և հրամայէ յԱրևելս տանել: Զի եթէ մեռանին՝ թշնամիք
 մեռանին, և եթէ սպանանեն՝ զթշնամիս սպանանեն. և մեք
 կեցցուք խաղաղութեամբ: Զի եթէ գոքս յերկրի իւրեանց լինի-
 ցին՝ մեզ հանգչել ոչ լինիս:

Միաբանեցան երկուքին: Եւ սկսաւ կայսրն հրաման տալ,
 զի ժողովեցեն զամենեկեան և ի Թրակէ գումարեցեն. և սա-
 տիկ տապանապէր՝ հրամանն կատարէր: Եւ սկսան փախչել ի
 կողմանէն յայնմանէ և գալ ի ծառայութիւն Պարսից, մանաւանդ
 20 որոց երկիրն ընդ նորա իշխանութեամբ էր: Իսկ նա զամենե-
 սեան ընդունէր մեծարանաւք և մեծամեծ պարգևս քան զկայսր
 պարգևէր նոցա. մանաւանդ իրբե տեսանէր զփախուստ նոցա ի
 կայսերէն՝ ևս տուաւ մեծապէս սիրով կասէր կորզել առ ինքն:

Գ Լ ՈՒՆ ԺԴ

Դալ համարակարգի գամձու մեծու առ յամկուցսնի զիօխանս
 Հայոց ի բամձնն Յաւնաց, յափօսակնի իօխանաց զգամձն: Միա-
 բանութիւն երկոցունց բազաւորաց ընդդէմ յափօսակնաց: Հառաւորսն,
 5 երբալ ոմամց յիօխանացն առ Պարսիկս եւ ալլաց առ Յոյնս:

Արդ՝ իրրեւ տեսանէր թագաւորն Պարսից զմարդկան փա-
 խուստ ի կայսերէն՝ արձակոյր ի Հայս զՎասակուրականն
 համարակարն³⁷ հանդերձ գանձու բազմաւ և մեծամեծ պատուովք.
 զի այնպէս նուաճեալ ածղէ զնոսա ի ծառայութիւն իւր. և
 10 գնայր համարակարն ի Հայս, և ընդ նմ գանձ ուղտուք բազմաւոր:
 Եւ մինչ Սամուէլ Վահուունի հանդերձ ալլովք ընկերաւք
 իւրեանց գնացին ընդդէմ նորա և պատահեալ ի սահմանս
 Ատրպատական աշխարհին՝ հանին զգանձն, և համարակարին
 զարեն պարզեւ շնորհեցին Եւէին այսօքիկ. Ատաստ խոխոռունի,
 15 Սամուէլ Վահուունի և Մամակ Մամիկոնեան, Ստեփանոս Սիւնի
 և Կոսիտ Ամատունեաց տէր և Թէոդոս Տրպատունի, և հեծեալք
 իրրեւ երկու հազարք: Եւ զայս եղեալ ի մոթ՝ եթէ գանձուդ
այդուիկ ղէոնս մեր արասցուք,³⁸ և առեալ ի նոցանէ տւգնա-
 կանութիւն՝ պատերազմեսցուք ընդ երկոսին թագաւորսդ, և
 20 բռնութեամբ զերկիրդ մեր ի մեզ դարձուցուք: Եւ հասեալ ի
 Նախնաւան քաղաք՝ քակտեցան խորհուրդք միաբանութեան. ոչ
 հաւատարմով միմեանց ի ըաց բաժանեցին զգանձն, և բանակեցան
 և նստան ի զամբին, որ կոչի Ծահուկ:

Նա աւանիկ համարակարն երթեալ ի դուռն՝ պատմեաց
 25 թագաւորին զամենայն եղեալսն, և բանք կայսերն արգարացան:
 Յայնժամ հրամայէ գրել խոսրով արքայ հրովարտակ առ կայսր,
 և խնդրէ զաւր յուզնականութիւն, և արձակու անդրէն զՎաս-
 ակուրական համարակարն ի Հայս: Յայնժամ հրամայէ Հերակղի

8 Ա հատկարն

10 SS ուղտուք: Ա ուղտովք:

Ուղղեցինք այսպէս:

11 SS ընկերութ: Ա ընկերութ

14 Ա խորխոռունի

16 Ա, Ակ կարից, փիկ կոսիտ

27 Բալ. գանձուդ այդորիկ: Ուղ-

ղեցինք այսպէս:

18 Բալ. գնայտաւան. Ուղղեցինք
 այսպէս: Տես ծանօթ. 38

18 SS տւգնութիւն

27 SS արձակէ

27 Ա տնդէն

դաւաճարի, որ նստէր ի Հայաստան երկրի, առնուլ զդաւա իւր
 և զնալ ի վերայ նոցա ի պատերազմս Եւ արդ՝ երթնալ միացան
 երկուց թագաւորացն զուր ի Նախնաւանն քաղաքի։ Եւ եղև ի
 գումարել ի վերայ նոցա զաւարացս այսոցիկ՝ սկսան արձակել առ
 5 նոսա պատգամս, զի մի լիցի պատերազմ և արեւնհեղութիւն ի
 մէջ քրիստոնէից, այլ ի բաց կոցցեն ի յամառութիւնն յայնմանէ,
 և նուանեցին անդրէն ի ծառայութիւն թագաւորին, և երգմամբ
 հաստատեալ առ նոսա, եթէ ոչ երկիւղ է ձեզ ի թագաւորէն,
 10 արձակեաց, և ես ձեզ իսկ բերի. զգոնձն, և չիք ինչ ձեզ երկիւղ
 յարքայից արքայէն, և ցուցանէր նոցա երգումն ըստ աւրինի
 իւրեանց։

Սկսան նոքա քակտել և բաժանել ի միմեանց. ի բաց
 եկաց ի սոցանէ Մամակն Մամիկոնեան և Կոտրիտն Ամատունեաց
 15 տէրն և Ստեփանոս և այլք ևս ընդ նոսա, զանձինս անջնաս
 ցուցանելով համարակարին՝ նուանեցին զդաւա իւրեանց ի ծա-
 ռայութիւն արքային Պարսից։ Իսկ Ասատն Սոսիստունի և
 Սամուէլն Վանուսի զաւրաւքն իւրեանց փախստական գնացին
 ընդ քաղաքագեւղն կոչեցեալ Սաւալ, հասանէին յաշխարհն
 20 Աղուանից, ի Հոնս դէմս արաբեալ, և անցեալ ընդ գետովն որ
 կոչի Կուր՝ բանակէին առ գետեզերքն։

Հասեալ և սոքա յսփն գետոյն՝ բանակէին աստի կողմանէ,
 Եւ իբրև ոչ կարացին նոքա վատահանալ ի համարս Հոնաց,
 յայնժամ ապա երգումն խնդրեալ ի թագաւորէն Յունաց, և զնա-
 ցին ի ծառայութիւն նորա Գնացին ոմանք առ համարակարն, և
 25 զարձան անդրէն յերկիրն իւրեանց։ Եւ ժողովեալ համարակարին
 զամենայն իշխանս և զդաւա Հայոց, որ ի Պարսից կողմանէ՝
 ողորաւ և ևս քաղցր շանիւք յորդորեալ զամենեանս միարա-
 նեաց, արար գունդս գունդաւ Եթող անդրէն յաշխարհին սակա-
 30 ւութ և զնաց. «Մինչև ես ծանուցից, ասէ, վասն ձեր, և հասցէ
 անտի հրաման զաղարել անդ։ Զի զմտաւ իսկ անձեալ է նորա և
 զայլոց գոլն առ նոսա և զբողմանսն։

Իսկ զԱսատն Սոսիստունի փութանակի հանգերձ զաւրուս
 իւրոյ կոչէ թագաւորն ի պալատն, և մեծարէ շքով և պատուով,
 35 և տալ ինչս բազումս և գումարէ ի Թրակացիս։

3 Ա արեւնհեղութիւն

7 Ա նուանեցեն

16 Ա համակարին

17 ՏՏ այսոեղ և յետոյ խորխուսնի

19 Ա սոգա

23 Ա ի Գաթրոն

Գ Լ Ո Ւ Խ Ժ Ծ

Ապստամբութիւն իօխամաց սմանց յամական մտախնձ եւ կատարած
նոցին: Թափամիօք ի Թրակացւոց կառէ սպանման բազաւորութեանն
Յունացոյ

- 5 Ապստամբութիւն զարմեալ ի կողմանցն Յունաց սեպուհէն Վա-
հեռուիք—Սամուէլն զոր ասացի եւ Սարգիս եւ Վարազ Ներսէն եւ
Ներսէս եւ Վրտամ եւ Թէոդորոս Տրպատունի: Եւ խորհէին սպանանել
զկորսատորն՝ 39 մինչդեռ նա նստէր ի շերմիկ՝ 40 բժշկել ի հիւան-
դութենէ, մերեւ ի քաղաքն Կարնոյ: Իսկ նա ուստեմն իրազեկ
10 եղեալ՝ փախստական ի քաղաքն անկանէր. եւ նոցա արշաւեալ ի
շերմուկն՝ ոչ զիպան նմա: Ապա աւարեալ զոր ինչ ի զիմի
հարկանէր՝ տոին աւար բազում, եւ գնացին յերկիրն. ամուր
Կորդուաց. եւ կամեցեալ զամուրոն զայն ունել:

- Ապա գնեալ նոցա լինէին զաւրն Յունաց, Հերակղ զաւրալոբ
15 եւ Համադասոյ Մամիկոնեան. եւ նոցա հասեալ մերեւ յամուրն՝ ան-
ցին զգետովն՝ որ կոչի Զերմայ բնդ կամուրն, որ անուանեալ
կոչի Դանիէլի կամուրջ, եւ ի բաց ընկեցին զկամուրջն եւ ամրա-
ցեալք յամուկն պահէին զտեղի կամրջին: Կային առ գետե-
զերքն, եւ խորհէին՝ թէ զինչ արժան է առնել: Եւ իրրեւ ոչ զտին
20 հուռ, եւ կամեցան դառնալ ի բաց՝ յանկարծակի ի գիմի հարկա-
նէր սոցա երկց մի ուղեոր. եւ կալեալ նոցա զերէցն՝ ասեն՝ նմա,
«Յոյց մեզ գնուն գետոյս, ապա թէ ոչ սպանցուք զքեզ: Եւ նորա-
տեալ զգաւրն՝ եցոյց գնունն ի ներքոյ անդ: Եւ անցեալ զաւրն
ամենայն զգետովն՝ ոմանք ի թիկանց զամուրն պահէին, եւ ոմանք
25 զկամրջախելն եւ զձորաբերանն ունէին, եւ այլք մտեալ յամուրն՝
ընդ նոսա մարտնչէին, եւ շարաշար լինէր կոտորածն. բայց սա-
կայն սպառէին զնոսա:

- Արդ՝ զՆերսէս եւ զՎրտամ եւ զՍամուէլ սպանին ի պատե-
րադմին, որք ոչ սակաւ արարին շուրջ զնովար զկոտորածն. բայց
30 զՍարգիս եւ զՎարազն Ներսէն ձերբակալ արարին հանդերձ այլովք

8 Բոլ. նստէր ի շերմիւր Ուղե-
ցինք աշաղեւ,
9 Ա իրազեկ
10 22 կարմունջն... կարմունջ
11 Ա յամուկն

12 Ա ան գետեզերն
13 Ա զկարմեխիւելն
14 Ա ի յամուրն
15 Ա աշաղեւ եւ հետո՛ւ զարուց
Ներսէս

ամամբք. և տարեալ ի Կարնոյ քաղաք, և ապա զլիսատեցին: Որ
ի ժամ զլիսատելոյն ասէր Վարազ Ներսէ՛ց Սարգիս. «Վիճակ
արկցուք, թէ՛ զո՛ւստալի սպանցենաւ Իսկ Սարգիս ասէր. «Եւս այր
ձեր ևս և մեղաւոր, ազալեմ գնեզ, զպարզեազ այլ ինձ շնորհե-
ցէք. թող զի փոքր մի հանդեայց, և ոչ իսկ անսից զմահս ձերաւ:
Ապա դնա յառաջ զլիսատեցին: Բայց Թէոդորոսն Տրպասունի
փրծեալ փախաւական գնաց ի գունն արքային Պարսից: Եւ նորա
կապել հրամայեաց և տալ ի ձեռս Թշնամեացն, զի մեոցի. և ստա-
տիկ աղետիւք վտանգեցոյց:

Եւ Թշնամիքն որ էին ի Թրակացւոց կողմանէն, աւար առին
զԹաղաւորութեանն, անհուն զաւրացն բազմութեամբ ի ձեռն
հապճեազ պատերազմացն զԹաղաւորութիւնն և զազգա Հաւիմայ-
եցւոց տէրութեանն կամեցեալ բառնալ, և Թաղաւորութեանն
տիրել անձամբ ի վերայ Թաղաւորանիստ քաղաքին:

Գ Լ Ո Ւ Խ Ե ԺԶ

Մարիկ գամարէ գաւառ բնդդէմ Թրակացւոց. կացուցանէ գաւառ-
գրաւս զՄուսեղ Մամիկոնեան: Զառաքինն հաղիւմենն Յայն՝ գրօնա-
միս, յերհոսգումն Յուսգի հաղիւմիմ մեծաւ կործանմամբ: Ապա-
նումն Մուսեղի:

Յայնժամ Թաղաւորն Յունաց հրաման տայր՝ ժողովել զաւ-
րաց իւրոց զամենայն որ յարեւելից կողմանէ. վասն զի խաղա-
ղութիւն էր, և բանք ինչ ոչ գոյին նորա ընդ Ասորիսն ի Պար-
սից տէրութենէն: Հրաման ետ անցուցանել զամենեկան ընդ
ձով, և գումարել ի կողմանս Թրակացւոց ընդդէմ Թշնամոյն:
Հրաման ետ դարձեալ ժողովել զամենայն այր և ձի ի Հայաստա-
նեայց և զիշխանս նախարարացն, որք հմուտ էին և կարող զգէմ
ունել՝ կռուել ռազմ ի նիզակամութ ձակատի: Եւ հրաման ետ
դարձեալ յիւրատին դաւր հանել յաշխարհէն Հայոց քաղում յոյժ:

5 ՏՏ գման
8 Ա կապել
10 Ա և զԹշնամիքն որ ի թիրա-
կացւոց կողմանէն:

25 ՏՏ ժողովել դարձեալ
27 Բայ. կռուել ռազմի նիզակա-
մութ: Ուղղեցինք աղագետ:

զամենեան կամով և ընտրով հասակի. կազմել գունդս զարդու և զինու վառեալ և անցուցանել զամենեան յաշխարհն թրականաց ընդդէմ թշնամոյն. և Մուշեղ Մամիկոնեան զաւրադուի նոցա:

- 5 Անդ՝ երթեալ նոցա ի վերայ ազգացն, որ ունին՝ զկողմանս արևմտից ի յեզր մեծի գետոյն Դանուբայ: Եւ եղև պատերազմ սաստիկ ի վերայ երեսաց երկրին այնորիկ. խորտակեցաւ զաւրութիւն թշնամոյն այնորիկ առաջի երեսաց զաւրացն Յունաց, և փախատական արարեալ յայնկոյս գետոյն Դանուբայ: Եւ ինքեանք մեծաւ յաղթութեամբ հրեշտակ աւետաւոր կայսերն և ամենայն պաղատային փութանակի առաջէին:

- Եւ գնացեալ ինքեանք ի ներքին կողմն աշխարհին ասպատակաւ, և անցին ի նեղ ինչ տեղիս, աւերէին զերկիրն ամենայն, և հասեալ ի դիմին՝ եղև պատերազմ մեծ. հարին զՅոյնն և խորտակեցին կործանմամբ մեծաւ, և փախատական վարեցին առաջի իւրեանց: Եւ կալեալ զնեղ վայրն առաջի նոցա թշնամոյն՝ վանեցին զնոսա արով առւանքի, և ճողողրեալ հաղիւ հաղ զերծանէին յամուրս աշխարհին թրակացւոց: Եւ ձերբակալ արարին զՄուշեղն Մամիկոնեան, կապեցին զրարձրաբերձ տնկոյ անասափն և սղաւնին: Եւ բազմութիւն նախարարացն և զաւրացն Հայաստանեայց յաւուր յայնմիկ կործանեալ սատակեցան:

- 20 Ապա վերադին զարձեալ այլ զաւրս գումարեալ՝ հրամայեաց թաղաւորն միայն զգուշանալ տնձանց:

Գ Լ Ո Ւ Ե ԺԷ

- 25 Հրաման կայսերմ Մուսկայ՝ Բաղդոս Գաղղոսմի յեկեղեցիս Հայաստանեայց: Բաժանումն արձառն իսայրապետութեանն:

Հրաման ելանէ զարձեալ ի կայսերէն վերադին այլ՝ քարոզել զժողովն Բաղդեղոսն յամենայն եկեղեցիս Հայաստան երկրի, և միաւորել հաղորդութեամբ ընդ գաւր իւր: Իսկ մանկունք

2 Բու. կազմել գունդս զարդու և զինս վառեալ: Ուղղեցինք աշտիս:

3 ՍՏ զամենեանսն

3 Ա թիւակացւոց

11 Ա պաղատային

12 ՏՏ չիք աշխարհին

17 Ա ճողողրեալք

20 Ա Հայաստանեայցն

ուխտի եկեղեցեացն Հայոց՝ վախատական գնացեալ յաւար
երկիր վարէին: Եւ բազմաց առ ոչինչ համարեալ զհրամանն՝
զտեղի կարան և անշարժ մնացին: Եւ բազումք հաւանեալ փա-
ռասիրութեամբ հաղորդեալ միաւորեցան աւրինաւք: Բաժանեցաւ
5 ապա և աթոռ կաթողիկոսութեանն յերկուս. անուն միոյն Մով-
սէս, և միւսոյն՝ Յոհան: Մովսէս ի Պարսից կոզմանէ, և Յովհանն՝
Յունաց:

Եւ Յովհան ընդ նոսա հաղորդեալ միաւորեցաւ, բայց
Մովսէս ամենեին ոչ լինէր ի նոսա հուպ: Եւ սալաք ամենայն
10 եկեղեցւոյն որ ի Դընի արքայն Գրիգորի, զոր տարան եղեալ ի
պահեստի ի Կարոյ քաղաքի: Ուստի վարեցաւ ինքն այսուհետեւ
ի գերութիւն յերկիրն Պարսից, յԱնատոն շահաստան:

Գ Լ Ո Ի Ե ԺԹ

Հրաման դարձեալ ի կայսերէն՝ ժողովել զարս ի Հայոց եւ առաւել
15 ի ձեռն Սահակայ Մամիկոնեմի եւ Սմբատայ Բագրատունւոյ. դառ-
նալ Սմբատայ անգրէն յեսա եւ խորհուրդն ապառաւրուքեամ: Սմբա-
տայն ի ածի ի Կոստանդնուպոլիս, հասցնի վճիռ ի վերայ նոցա՝
արեւանել ի կիւմիկն: Նահապետութիւն Սմբատայ եւ գտանել ողոր-
մութիւն. զկնի արժար նոցա յԱփսիկ է:

20 Եայնմ ժամանակի դարձեալ հրաման ելանէր ի կայսերէն՝
վերստին քննել և խնդրել յաշխարհէն Հայոց զայր և զձի արս
ընտիրս սպառազէնս ԲՈՒ հեծելոց, և տալ յերկուս արս հաւա-
սարիւս և արձակել մեծաւ ստիպով:

25 Եայնժամ ի խնդիր ելեալ ընտրեցին արս ԲՈՒ սպառազէնս
և ետուն երկու հազարս յերկուս արս հաւաստարիւմս, մի հազար
ցՍահակ Մամիկոնեան և մի հազար ի ձեռն Սմբատայ Բագրա-
տունւոյ, որդւոյ Մանուէլի: Եւ ոչ ընդ մի ճանապարհ արարեալ
նոցա զչուս, այլ Սահակ Մամիկոնեան արձուկին միով հազարաւ
ընդ Սեբաստիա, և զՍմբատ Բագրատունի միւսովն՝ ընդ կողմանս

4 Բու. արինաւորք: Ուղղեցինք
այսպէս:

20 Ա ժամանակաւ:

25 ՏՏ չիք՝ երկու հազարս

25 Ա յերկու:

26 Ա Սմբատայ

28 Ուղղելի՝ զՍահակ

Քաղաքացիքն Եւ Սահակ գնացեալ առնի հասուցանել զգաւրն ի պաղատն, և յանդիման լինի թագաւորին:

Իսկ Սմբատ հասեալ ի Քաղախ՝ բռնանայ. քանզի երկեալ գաւրն ի հանապազօրի, ոչ կամեցեալ երթալ ի տեղին յայն գնետ
 5 թագաւորին խնդրոյ: Ազգ լինի թագաւորին եղեալ իրքն. ապա ի ձեռն հրովարտակաց և հաւատարիմ հրեշտակաց երգամբ խոստանայ՝ մեծաւ պատուով փութանալի արձակել յերկիրն իւր Եւ գաւրուն խոստանայր պատիւս մեծամեծս և ինչս, և այնպէս ողորցեալ ածէ ի հաշտութիւն: Եւ գնացեալ միաբանութեամբ յան-
 10 դիման լինէին թագաւորին: Եւ թագաւորն սպառապիւնէ զգաւրն և զարգարէ և զտամարէ ի սահմանս Թրակացոց, և զՍմբատ մեծաւ պատուով յուղարկէ անդրէն հասանել յերկիրն իւրեանց բազում ստացուածովք:

Ապա դարձեալ սկսան միաբանել Քնացեալ նախարարքն
 15 Հայոց, և խնդրէին ի բաց կալ ի ծառայութենէն Յունաց թագաւորին և նստուցանել իւրեանց թագաւոր, զի մի և նոցա հասցէ մեռանել ի կողմանս Թրակացոց, այլ կեալ և մեռանել ի վերայ աշխարհին իւրեանց: Եւ բանք խորհրդոց նոցա ոչ ունէր զմիաբանութիւն իրին յինքեանս հաստատեալ, այլ ոմանք ի
 20 նոցանէ շողմոզութեամբ հասուցին զբանս խորհրդեանն յունկն թագաւորին, և ինքեանք այսր և անդր սորոտեալ խռատփէին:

Յայնմ ժամանակի հասանէին գեապանք արքունականք հրովարտակաւք, և կալեալ զՍմբատ հանդերձ այլովք ոմամբք եւթն արամբք և տարան յանդիման թագաւորին: Եւ քննեալ
 25 զնոսա ի մէջ բազմամբոխ հրապարտկին՝ հատաւ զձիւ ի վերայ նոցա՝ մերկացուցանել և ընկենուլ ի կիւնիկն: 41

Եւ էր սա այլ անհեղեղ անձամբ և զեղեցիկ տեսլեամբ, և բարձր և լայն հասակաւ, և բուռն և ցամաք մարմնով: Յայնժամ հզաւր և պատեւրազմող, որ ի բազում պատերազմունս ցուցեալ
 30 էր զիւր քաջութիւնն և զբռնութիւն: Այս է գաւրութիւն նորա. քանզի անցեալ սա ի ներքոյ անտառախիտ մայրիաց և գաւրաւոր ծառոց, ի վերայ յաղթանդամ և հզաւր երիվարին, և յարձակեալ զոստով ծառոյն՝ բուռն հարկանէր, և կծկեալ ուժգին երանաւքն և սախք զմէջ երիվարին՝ վերացուցանէր եղանաւքն ի գետնոյն:

5 Ա իբն

10 Ա ի լինքեանս

34 Ա եւթն արամբք

37 38 անհեղեղ

38 Եայնժամ պատմողովոմ բառ

մինչ զի ամենայն զաւրացն տեսեալ ահաքեկ լինէին ի զաւ-
մացմանէ:

Աւարդ՝ մերկացուցեալ զնա և ազուցեալ անդրաժարտիս և
ընկեցեալ ի կիւնիկն, զի կուր լիցի զազանաց:

5 Աւարձակեալ ի վերայ նորա արջ Աւ եղև՝ իրբև զիմնաց
ի վերայ նորա արջն՝ նա ազազակեաց մեծաձայն և ընթացաւ ի
վերայ արջոյն, և զարկեալ բոամբ իւրով զճակատն, և անդէն
ստատկէր զնա ի տեղւոյն:

10 Երկրորդ անգամ արձակեցին ի վերայ նորա ցուր Իսկ
նորա բուռն հարեալ զեղջիրացն ցուռն... և զաղաղակ հզաւրին...
և յաւդնեալ ցուրն ի մարտին՝ զելոյր զաւարանոցն և խորտակէր
զերկոսին եղջիրոն ի վերայ զլիսոյն. թուլանայր ցուրն և յետս
գնալով ի փախուստ զաւնայր: Իսկ նորա զհետ ընթացեալ՝
բուռն հարկանէր յաղին և ի կնդակն ազդեր միոյ ոտին նորա,
15 և թափեալ զկնդակն՝ մնայր ի ձեռին նորա Աւ ցուրն զնայր ի
նմանէ փախստական, միով ոտամբն բոկ:

Դարձեալ երրորդ անգամ արձակեցին ի վերայ նորա
տեսն: Աւ եղև՝ ի վերայ նորա յարձակել առիւծուն՝ այնպէս
իմն յաջողեալ նմա ի տեսանէ, բուռն հարեալ յականջ առիւծուն՝
20 հեծաւ ի վերայ նորա: Աւ անդէն բուռն հարեալ զխաչափողիցն՝
խեղդէր զառիւծն և սպանանէր: Անդ աղաղակ բազում ամբոխին
զերկիրն լնուին, և խնդրէին ի վերայ նորա ողորմութիւն ի
թագաւորէն:

Աւ նա վաստակեալ ի մարտին՝ նստէր ի վերայ առիւծուն
25 մեռելոյ, զի փոքր մի հանգիցէ: Անդ և կին թագաւորին անկեալ
տա ոտս նորա՝ խնդրէր ի վերայ նորա առնել ողորմութիւն.
վասն զի սիրելի էր յառաջն այրն այն թագաւորին և կնոջ
նորա, և անուանեալ էր զնա խւր յորդեգիրա: Աւ նա զարմացեալ
ընդ զաւրութիւն և ընդ պնդութիւն առնն և լուեալ զազատանաց
30 կնոջն և ամենայն զազատոյն՝ հրամայեաց առնել ի վերայ նորա
ողորմութիւն:

Եայնմամ տարան զնա ի լուացումն ի բաղանիս. լուացին
զնա և զգեցուցին, և կոչեցին զնա յընթրիս արքունի, զարմա-

7 ՏՏ անդրէն

10 Ա զեղջիրացն: Ետբունակա-
թյան մեջ պակասում են բա-
ւեր:

18 Ա փախուստն յետս յետս

զմարդ միով ոտամբն բոկ

17 Ա արձակէ

28 Ա ընդ որդեգիրա... զարմա-
ցեալ էր

29 Ա լուեալ

- 26 Զեյցին զնա կերակրովք: Եւ զկնի սուղ ինչ անցելոց, մանաւանդ եթէ ոչ ի չար ինչ կամաց թագաւորին, ալ ի նախանշորդաց չարախօսութենէ, հրամայէ հանել զնոսա ի նաւ և աքսորել ի կղզիս հեռաւորս: և ապա անտի հրամայէ անցուցանել յԱփրիկէ, և առնել նոցա անդ ի մէջ նոցա) և առնել զնա անդ ի մէջ զաւրացն, որ էին անդ՝ տրիբուն:

Գ Լ Ո Ւ Խ ԺԹ

- 10 Խառով հրովարտակաւ կուէ ի գունն զՅախարատն՝ զգրս րազեալ էր համարակարիմ, ցուցանէ մոցա պաշիս մեծամեծս և զգաւս մեծա մեծուցանէ ի Սպասիս Բաղարի:

Իսկ որ ի Պարսից կողմանէ էին նախարարքն և զաւրք, զորմէ վերագոյն ասացի, եթէ եթող համարակարն և գնաց. թէ մինչև հասցէ հրամանն արքունի:

- 15 Թայնժամ եկին հասին պէշասպիկք 42 հրովարտակաւք կոչել զնոսա միաբանութեամբ ի դուռն արքունի. Եւ այսորիկ են նախարարք և զաւրք, որ գնացին միաբանութեամբ հանդերձ իւրաքանչիւր զնդովք և դրաւշու/ի դուռն թագաւորին Պարսից Խոսրովու, յամի վեցերորդի թագաւորութեան նորա Առաջին՝ Գագիկ Մամիկոնեան որդի Մանուէլի. երկրորդն՝ Պապ Բաղրատունի որդի Աշոտայ ասպետի. երրորդն՝ Խառով Վահուճեաց տէր. չորրորդն՝ Վարդան Արծրունի. հինգերորդն՝ Մամակ Մամիկոնեան. վեցերորդն՝ Ստեփանոս Սիւնի. եւթներորդն՝ Կոսիտ Ամասունեաց տէր, և այլք ընդ նոսա ի նախարարաց, Եւ հասեալ նոցա յԱսորեստան ի տեղի արքունական տանն և յանդիման եղին թագաւորին: Իսկ նա խնդությամբ ընկալաւ զնոսա, և երեւիլ չքեղութեամբ մեծացոյց պատուովք. և զմեծամեծ իշխանսն հրամայէ պահել ի դրանն արքունի, կարգել նոցա ռոհիկս յարքունեաւս՝ աւալ ի տունս իւրաքանչիւր, և կոչել յամենայն աւուր յընթրիս արքունի: Եւ զաւրաց նոցա հրաման տայր նստել ի Սպահան աշխարհի, և դարմանել զնոսա փրով և ամենայն կամակարուս թեամբ:

5 Ափիւրդ կրկնություն և թվում
է և առնել նոցա անդ ի մէջ
նոցա:

6 Բու. որ էին անդ ի բուն: Ուղ-
ղեցինք այսպիսի բոս Միթիար
Անեցու, և և արարեալ զսա

արքուն քոջացն որ յԱփրի-
կէս: (հրատ. Գագի. եր. 35),
16 Բու. պէշասպիկ: Ուղղեցինք
այսպիսի բոս չիւքիւ:

26 Ա զիշխանսն

29 ՏՏ նախի

Գ Լ Ո Ւ Խ Ի

Սպաճումն Վնգոյի. փախուստ եւ սպառամբութիւն Վստամայ եւ
Լէր Թորս ի կողմումն Պարթեւաց:

5 Եւ Յայնմ ժամանակի արկ ի միտս իւր Խորով արքայն՝ խնդրեւ
զքէն վրիժուց մահուան հաւ իւրոյ ի ձեռաց նախարարացն,
ախոյրիկ, որք սպանին զնա: Եւ նախ կամի դատել զքեռիս իւր:
Հրաման տայ ունել զՎնդոյ, զայն որ վերագույն ասացի, կապել
և սպանանել: Իսկ եղբայր նորա Վստամ ոչ հանդիպեցաւ ի ժա-
մուն յայնմիկ ի դրանն արքունի: Եւ Թէւզեա և կոշեալ պատրա-
10 նաւք և բազում ողորմանաւք, իբր Թէ ոչ գիտիցէ նա զմահ-
եղբաւն իւրոյ, սակայն նա ուստեմ իրազեկ եղեալ՝ ոչ անկանէր
ի պատրանս խաբէութեան նորա, այլ ապստամբեալ անկանէր
յամուր երկիրն Գեղմայ, և գումարեալ նուաճէր ընդ ինքեան
զամենայն զաւրս նոցա:

15 Եւ ելեալ ի կողմն Ռէոյ ասպատակու, և աւար հարկանէր
զամենայն զրազում աշխարհս Թազաւորութեանն Պարսից: Եւ Յայն-
մամ արքայն Խորով առնոյր զզաւրս իւր, զնայր ի վերայ
նորա. և զաւր կայսերն էր ընդ նմա: Եւ մարտ եղեալ կռուով
ընդ միմեանս յմեհ աշխարհին: Եւ յայնմ պատերազմի ոչ փոքր
20 ինչ քաջութիւն գործեալ հայակոյտ զաւրացն. զոր տեսեալ Թա-
զաւորն՝ առաւել զարմանայր:

Իսկ իբրեւ ոչ կարաց ընդդէմ ժուժկալել ապստամբն՝ ի-
լեռնակողմն ապաւինեալ ամրանայր: Եւ այնպէս ոչ յաղթա-
հարեալք ի միմեանց՝ ի բաց դառնային յիւրաքանչիւր տեղի:
25 Գնայր և ապստամբն Վստամն յամուր յերկիրն Գեղմայ, որ և
ապա անախ չու արարեալ երթայր ի կողմանս Պարթեւաց, ի-
րուն երկիրն իւրոյ իշխանութեանն, զի նուաճեցուացէ՝ ընդ
ինքեան՝ զզաւրս կողմանն ախորիկ և դարձցի նոյնպէս:

Եւ Թազաւորին չու արարեալ յԱսորեստան՝ հասանէր ի-
30 րուն կայսեանս իւրոյ արքունականս, և իշխանք նախարարացն
Հայոց ընդ նմա:

Գ Լ ՈՒՆ ԻՆ

Մահ մախաբարացն Հայոց որ յԱսորեստանի: Սպանումն Կոստայ
Ամասուկոյ սարգսնոք ետորովայ: Սպանմարարիւն գաւառն Հայոց
որ մոտէրն ի Սպանիան: Յափօտակութիւն գտննու համարակարն և
ամիպանել սմանց յերկիրն Պարսկաց առ Վասան:

Յայնժամ հասեալ մահ իշխանացն Հայոց, մեռան ի դրանն
արքունի մահուամբ իւրեանց՝ Գագիկ Մամիկոնեան և Ճարսով
Վահուանաց տէր: Իսկ Մամակ Մամիկոնեան արձակեալ ի Հայս
վասն զաւրուսն. և նորա իսկ և իսկ հասեալ ի Դուին քաղաք,
կեցեալ սակաւ ինչ աւուրս՝ մեռանէր: Իսկ Սանգանոս Սիւնոյ
պայքար վասն տանուաւորութեան լեալ ընդ հաւրեղարաւն իւրում
Սահակայ: Իսկ Սահակ զբէր ի վերայ նորա գիր մահապարտու-
թեան, և կնքէր մատանեաւ իւրով և տանն եպիսկոպոսի, և
մատանեաւք այլ ևս իշխանաց Սիւնեաց, յիշեցուցանել թագա-
ւորին զՊրաւս նոցա ապստամբութեանն:

Յայնժամ հրաման ևս արքայն կապել զՍտեփանոս և զնիւ
ի բանու. և զլիտտեցին զնա ի բուն աղուհացն ի գատկին
շարաթուն:

Եւ զգոտիտ արձակեալ ի Մրժուին զսպան՝ հրաման ևս
հեծելոցն զարանամուտ լինել ի գաշտի, և աւազակարար յարձա-
կեալ ի վերայ՝ սպանին զնա ի հանապարհիւն: Իսկ զաւրս նոցա
որ նստէին ի Սպահան աշխարհին, իբրեւ լուան զեղեալսն՝ աս-
պատակեալ աւերեցին զերկիրն. առին և զգանձն արքունի որ ի
տանն համարակարին, որ ի հարկաց ժողովեալ աշխարհին այ-
նորիկ, և ճանապարհ կալեալ զնացին յամուսն ի յերկիրն Գեղմայ:
Եւ զհետ սոցա հասանէին զաւրս պերոզական. զամասն ի նոցանէ
սրով սատակէին, և ոմանք ընդ իւրեանս իսկ աւուր ելեալ՝ զի
մի լիցին ձերբակալեալ, և ոմանք մաղապուր պրծեալ անկանէին
յամուր երկիրն Գեղմայ: Եւ իբրեւ անդ ոչ զիպէին Վաստամայ՝
ձանապարհ կալեալ զնացին յերկիրն Պարթեաց, և երթալ կային
առաջի նորա:

11 Բու. պայքարեալ վասն տանու-
աւորութեան լեալ: Ուղղեցինք
այսպէս:

19 Ա արձակել
23 SS իբժ և (զգանձն)

24 Ա համակարին ի հարկաժողո-
վել զաշխարհին

26 Ա պերոզական

28 Ա ձերբակալեալ

30 Ա յերկիրն

Գ Լ ՈՒ Ե ԻՐ

Սմբատ Բագրատունի կարգի մտղպամ վարկանայ, Օսումէ զապը-
նամբսն, բառեկարգէ զաթիարհն վարկանայ:

Եւ եղև ի ժամանակին յայնմիկ հանձնաւ Սմբատայ
5 Բագրատունայ յաջա Պարսպու արքային. ապա ի նա զմարդպա-
նութիւն երկրին վարկանայ, առնէ զնա իշխանս և ի վերայ ամե-
նայն կողմանն այնորիկ, առաւել մեծացուցանէ պատառվք և իշ-
խանութեամբ. ըսու զնա ոսկւով և արծաթով, զարդարէ ի հան-
գերձս պատուականս և յերեւելիս Տայ նմա զկամարն և զսուսերն
10 լեալ հաւր իւրոյ Որմզդէի. զամարէ ի ձեռս նորա զաւրս պարսիկո
և զհայաստանեայս և հրամայէ զնալ յերկիր իշխանութեանն
իւրոյ:

Էին ապաամբ ի ժամանակին յայնմիկ յարքային: Պարսից
երկիրքն, որ անուանեալ կոչին Ամաղ, Ռոյիան, Զրէհան և Տա-
15 պարաստան. զորս վանեալ նորա պատերազմաւ՝ հարկանէր որով
սուսերի և ի ծառայութիւն արքային Պարսից կացուցանէր, և չի-
նեալ հաստատէր զամենայն երկիր իւրոյ մարդպանութեանն,
քանչիւ էր երկիրն աւերակ: Կային յաշխարհին յայնմիկ ազգն
զերեալք ի Հայաստան երկրէ, և նստուցեալ աւստորոտով անա-
20 պատին մեծի, որ ի Թուրքաստանի և ի Դեկհաստան կողմանէ.
զիւղու իւրեանց մոռացան և զպրութիւն նուազեալք, և կարգ քա-
հանայութեանն պակասեալք: Կային անդ և ազգ Կոզրեացն, որք
զերեցան մերովքն արամբք: Կային անդ և յիշխանութենէն Յու-
նաց և յԱսորեոց կողմանէ ոչ սակաւք:

25 Էին ազգ Կոզրեացն անհաւատք: Բայց ի վերայ քրիստո-
նէիցն ծագէր լոյս մեծ. հաստատէին ի հաւատոս և ուսանէին
զպրութիւն և լեզու. և հաստատէին ի կարգ: քահանայութեան
յաշխարհի անդ երէց ոմն ի նոցանէ, որ անուանեալ կոչէր Աբէլ:

5 Մի սրինակում՝ մայինա, Ա
մայ ի նա: Մ ուղղել և՛ ապ
նաւ: (Մ և Տ գրերի չփոխու-
թիւնից): Տեա ծանոթ. 9.

10 Ա իւրում

11 ՏՏ չիթ՝ և (հրամայէ)

14 Ա. զցենանս Մ. Զրէհանս Այադեա
ուղղել և Գ.

23 Ա. Ժրտաքն արամք

24 Ա չիթ՝ և (յաւորեաց):

25 Ա չիթ՝ ի (կարգ)

38 Բալ. Աբէլ:

Գ Լ Ո Ւ Խ Ի Գ

Գիւնիկն Վստամայ յԱստրեօսան ի վերայ ետստգլու և մնաանի յաւառ ի քննգութեան Գարիսկայ արեային Ռաւոսնաց: Յրուի զաւառաց Վստամայ: Պաւստգլմ Սմբատայ մաքղապանի ընդ Գնդաւան և պարսպիւնս:

- Սև եղև ի ժամանակին յայնմիկ նուաճեալ ընդ ինքեան Վստամայ զերկասին թագաւորսն Բուշանաց, զՆաւգն և զՊարիովկն. և դուստրեալ զամենաւն զաւրսն կողմանց Արևելից՝ դիմեաց զնաց յԱստրեօսան զաւրու մեծաւ և հաւաք յոյժ, զի սպանցլ զՍտարով և առցէ յինքն զԹագաւորութիւն նորա: Սև զաւրք նորա լիային յաջմէ և յահեկէ բացագոյն ի նմանէ. և արքայն Բուշանաց Պարիովկն ի թիկունս նորա ղինի նորա: Յայնժամ արկեալ ի միտս իւր նենգաւոր արքային Բուշանաց՝ երթեալ անցանէր զառաջեաւ նորա սակաւ արամբք, և իջեալ յերիվարէն երկիր պագանէր ի վերայ երեսաց իւրոց եւթն անգամ: Սև մատուցեալ սա յառաջ հրամայեաց հեծանն լանդըն յերիվարն իւր: Սև զարան զործեալ էր նմա ի ճանապարհի, Ասէ Պարիովկն. «Հրամայեալ արձակել ի քէն զամբոխդ, զի խաւանցայց ինչ ընդ արքայի բռնա ինչ խորհրդեանս: Որոյ ոչ զգացեալ զնենգութիւն նորա՝ հրամայեաց մարդկանն երթալ յինքննէ: Սև եղև մինչդեռ երթային նոքա զճանապարհն և խաւանէին՝ ելին յանկարծակի դարանակալքն ի տեղաւջէն իւրեանց, և հարեալ սպանին զՎստամ: Սև մամադիր լեալ զաւրացն իւրոց Պարիովկն՝ ազդ առնէր նոցա փութանակի, և նոցա զհետ արշաւեալ հասանէին և կալեալ զկին Վստամայ և զամենայն աղիւ և զկարասի նորա՝ դարձան փութանակի և զնացին: Անագան ուրեմն և ապա յետ աւուրց ինչ անցելոց ազդ լինէր ամենայն զաւրացն, և նոքա լքեալ քակտեցան ի միմեանց, և մեկնեալ զնացին յիւրաքանչիւր ի տեղիս: Գնացին նոյնպէս և զաւրն Գնդումն որ ընդ նմա, եկեալ հասեալ փութանակի յամուրս աշխարհին իւրեանց, և արքն այն հայաստանեայց, որ ապստամբեալ էին ի Սմբատայ և զնացեալք առ Վստամ՝ ընդ նոսա իբրև

6 Ուղղելի՝ ընդ ինքեամբ
7 Ա զշուկն, Ակ, լուկն
11 Ա բայցադոյն
17 Ա աւէ ցնա
17 Ա հրամայէ... զամբոխս

35 Ա ախդ, փիկ ազի
27 ՏՏ լքեալք
30 ՏՏ տխք
31 «Ի Սմբատայ թվում և ազա-
վագութիւն, փիկ ի խորագայ

- գնացին նոքա յերկիրն որ կոչի կոմշ, որ կայ անդրէն ի Թիկանց
Վրկանի, յայնմ կողմանէ սարոյն, որ անցանէ ընդ մէջ նոցա, և
հասին ի գեւդն, որ կոչին Յեկեանզ՝ ընդդէմ ելանէր նոցա Շահր
Վահրիմ, և Սմբատ Գուրկան մարզպան հանդերձ բաղմաւ Եւ
5 դաւրք Գեղամաք ոչ աւելի քան զերկուս հազարս Եւ եղև պատե-
րազմ ի վերայ երկրին այնորիկ և Հարին զդաւրն Գարսից, և փա-
խատական տրարեալ հալածական տանէին. զբազումս սպանեալ
և զբազումս ձերբակալ տրարեալ դարձան անդրէն և բանակեցան
մատ ի տեղի պատերազմին և արքն այն հայաստանեայց ընդ
10 նոսա Մեծան բազումք և ի դաւրացն և ի հայաստանեայցն, որ
ընդ մարզպանին Սմբատայ:

Գ Լ Ո Ւ Խ Ի

Դիւս մասին ճշտման խաչին ի ձեռն սեպիտմ:

- Արդ՝ անկեալ ի միտ առն միոջ երազիւր երեք ամսաւք
15 յառաջ քան զլինելն պատերազմին այնորիկ. և անուն առն Յով-
սէփ Եւսր մի, առէ, սքանչելատեսիլ, եկեալ աւեր ցիւս. պատե-
րազմ լինի զկնի երկից ամսոց, և անկանին բազումք ի պատերազ-
մին. բայց դու երթիշիր ի տեղի պատերազմին. և նշան լիցի քեզ
այս, զի տեսանիցես այր մի անկեալ ի վերայ երեսաց երկրի, և
20 մարմինն նորա պնդալովէ ի մէջ ամենայն դիականցն, և զու
երթեալ որ ինչ գտանիցես առ նմա, առցես ի քեզ: Եւ զգոյշ ընր,
առէ, մի մոռանայցես. զի նա է սքանչելի, Եւ յարուցեալ գնաց.
և իբրև հասեալ ի տեղին՝ դռանէ նոյնպէս, որպէս ի տեսլեանն
ասացեալ էր, զի մերկացուցեալ էր զնա և զամենայն դիակունոն:
25 Եւ ունէր ընդ անձն շագոյր մաշկեղէն ընդ ուս իւր: Ապա կայր
մարմինն նորա ի մէջ դիականցն. և մատուցեալ՝ առ յինքն զշա-
ղոյրն. և տեսանէր զի կայր ի նմա տուփ մի արծաթեղէն և խաչ
մի ի մէջ նորա, յորում կայր մասն մեծ ի տէրունեան խաչէն:
Կեքէր զինքն նովաւ, և առեալ զնայր զհետ ընկերաց իւրոց:
30 Զուեցին ամենայն դաւրքն ի տեղոջէն յայնմանէ, և երթեալ

3 Ա ի գեւդն... խեկեանն

7 Ա զբազում

9 ՏՏ այնք

9 Ա հայաստանայց

14 ՏՏ երազ իւր

18 ՏՏ ի պատերազմին տեղի

22 Հ մի մոռանայցես զընթերն այն

25 Ա, Ալ ուս ընդ ութ իւր

հասանելին յամուրս աշխարհին իւրեանց: Յայնժամ զՎաչրիճն խնդրէր Թագաւորն ի առն, և առ Սմբատ առաքէր շնորհակալութիւն մեծ, զի միամտութեամբ մարտուցեալ վանեցաւ, և ոչ եթող զտեղին, և ապա յետոյ ամենեցուն գնայր և նա փախստական:

5

Գ Լ Ո Ւ Խ Ի Ծ

Դարձեալ պատեալով Սմբատայ ընդ բռնասիր ի Յապարատասնի և յաղբոյ: Մեծամալ Սմբատայ պատուով բաժնի զամենայն մարդպաշտ: Եկն Սմբատայ ի Հայո. օրհնութիւն եկեղեցւոյն Ս. Դրեգորի ի Դուին: Կարողիկոսութիւն Արքեպիսկոպոս Թեոփիլոս:

10

Աւ եղև ի դալ միւս ամի՛ ժողովէին ամենայն գունդքն թշնամեաց, և երթեալ ընակէին ի Տապարատասն գաւառի. գումարէ և Սմբատ զամենայն զաւրսն իւր և ի դիմի հարկանի նոցա պատերազմաւ: Աւ մատենաց տէր Աստուած զգարս թշնամեացն ի ձեռն Սմբատայ, և սատակեաց զամենայն սրով սուսերի. և

15

ապրեալքն գնացին փախստական ի տեղիս իւրեանց: Իսկ այնք, որ էին ընդ նոսա, խնդրեցին երդումն և պայման և եկին կացին առաջի Սմբատայ, և Յովսէփն այն ընդ նոսա: Ապա ունէր Յովսէփ զգիւտն իւր առաջի նորա և պատմէ զտեսիլն, և բազում նշանս, զոր արարեալ էր ի մէջ բարբարոսացն, պատմէր Յայնժամ յարուցեալ Սմբատ ծունը կրկնէր առաջի նորա, և առեալ յինքն՝ կնքէր զինքն նովաւ. և տայր ի ձեռն Միրուի ուրումն առն երանելոյ, զոր և կարգեալ էր ի վերայ տանն իւրոյ հաւատարիմ և կամակատար, որ ի տանէ Դիմաքսնից, և տայր յեկեղեցին զոր ունէին երկցունք զրան նորա:

25

Յայնժամ առաջէ առ նա Թագաւորն հրովարտակ մեծապէս գտնութեամբ, պատուով մեծացուցանէ ի վեր քան զամենայն մարդպանս իւրոյ տէրութեան առնելով, և զամենայն անաւթս մատուակացն առաքէ նմա ոսկի, և հանգերնս Թագաւորականս, արտախուրակս ոսկեզաւծս և զանգապանակ ակամբք և մարգարտովք կարգեալ. և զորդն նորա, որոյ անունն էր Վարադաիրոց, զոր էր սնուցեալ նորա իբրև զմի յորդոց իւրոց և էր մեծարու ամենայն զրանն արքունի՝ կարգէր ի մատուակութեան, պաշտել զգիւտն անէին արքայի:

30

11 Բժում և ուղղելի բռնակէին:

11 Ա և ապաքատան

26 Ա գտնութի

29 Ա զանգապանակ... մարգարտով

Եւ կալաւ Սմբատ մարզպանութիւն աշխարհին այնորիկ
ամա Ը։ Յետ այնորիկ հրաման հասանէ կոչել զնա բազում մեծա-
բանաւք ի զուռն արքունի, և հրամայէ երթալ տեսանել զերկիր
իւր՝ յամի ութ և տասներորդի իւրոյ թագաւորութեանն։

- 5 Արդ՝ խնդրէ նա հրաման յարքայէն շինել զեկեղեցի սրբոյն
Գրիգորի, որ էր ի Գուին քաղաքի։ Եւ վասն զի վախճանեալ էր
Մովսէս կաթողիկոսն երանելի, և ոչ զոյր վարդապետ ի տեղւոյն
յայնոսիկ՝ և եւս փութացաւ խնդրել յարքայէն հրաման, և հասեալ
10 հրաման յերկիր իւր՝ առնէ խնդիր վասն աթոռոյն մեծի, զի
կարգեացեն ի վերայ նորա տեսուչ ինտոզ եկեղեցւոյն և առաջ-
նորդ փրկութեան իւրոյ։ Եւ նստուցին զԱրքայեան զՄշտունեաց
կաթողիկոսն յաթոռ հայրապետութեան։ Ապա սկսան արկանել
հիմն եկեղեցւոյն։ Ժողովեաց ճարտարապետս քարի, և կացոյց ի
15 վերայ նոցա հաւասարիմ գործակալս, և հրաման ետ փութանակի
հասուցանել ի կատարումն։

- Եւ գրեալ զիր ամօրաստանութեան բերդակալին և մարզ-
պանին առ արքայ, եթէ գիարի մերձ է առ բերդն, և քնասակար է
ի թշնամուոյ։ Հրաման հասեալ յարքայէ, եթէ սիրերն քակեսցի,
և եկեղեցին անդրէն ի նմին տեղւոյն շինեսցի։ Ամէն։

20 Գ Լ Ո Ւ Ե ԻԶ

- Սմբատ կոչի անգրէն ի դաւան Պարոնց, պատիւ տալու արքային՝
որ անուամեալ կոչի խոսրով—Շում և առաքի ընդդէմ Բուսանաց։
Նախաբար Հայոց՝ որք ընդ մեծ Գուրգ մի տակաւածեան Պարոնց
պաշտի ի Բուսանաց և հարկանի յանդազարեմէ Դաւայնի։
25 Սպանումն Դաւայնի։ Սմբատ ի մեծամարտի սպանումն զարքայն
Բուսանաց։ Փախուս գաւառն Բուսանաց։ Զաւան Պարոնց յաւորի
առնալ զպոխտի մոցա։ Մեծաւ օգով կոչի Սմբատ ի դաւան։

- Եւ եղև՝ յանցանել ձմերայնութն, ի զալ զարնայնութն
ժամանակի՝ հասանէին սուրհանգակքն հրովարտակաւք, և կոչեն
30 զնա մեծաւ շքեղութեամբ ի զուռն արքունի։ Եւ երթեալ յան-

7 Ա կաթողիկոսն (միշտ այդ.)
210 Ա մարաստանութիւն

17 55 զառակար է թշնամույ
18 Ա ի յարքայէ

դիման լինել թագաւորին ի Մեծ անուանեալ Դաստակերտին 43 և ելեալ արտաքս ի գահլիճն, նստի ի բոր և ի բահպակ 44.

Յայնժամ տայ նմա արքայ զսանուաւորութիւն՝ որ անուանեալ կոչէր Քոսրով Շուման, զարգարէ ի չընաղս, ի գտակ և ի պատմաւան բեհեղեայս յոսկւոյ աւծեալ, մեծացուցանէ ահագին պատուաւք ի ճամբար տկանակապ և ի զուարտակ, և ի գահն արծաթիս. արձակու ի նա զվաճառն փոքր, զդիւան տշխարհին 45, Տայ նմա զփողան շորեքձայնեանս և պահապանս զբանն նորա ի հետեակաց արքունի. զուարէ նմա զաւր մեծաւ անկողնեամբ

յարեկելս յերկիրն Քուշանաց. և հրամայէ նմա առնել մարգպան՝ զոր ինքն կամեսցի, Իսկ սորա զնացեալ անախ՝ եկն եհաս ի մերձակայ երկիրն առաջին իւրոյ իշխանութեան՝ Կոմշ, և կոչէ առ ինքն ի Վրկանէ զրուն ձեռական զաւրսն իւր զհամաշխարհիկ և զնայ ուղղորդ յԱրեկելս:

Եւ այս են իշխանք նախարարացն Հայոց, որ ընդ նմա իւրաքանչիւր գնդաւ և զբաւշու Վարազշապուհ Արծրունի, Սարգիս Տայեցի, Արտաւազդ և Վստոմ և Հմայեակ Ապահունի, Մանուէլ Ապահունեաց տէր, Վռամ Գողթնեաց տէր, Սարգիս Դիմաքսեան, Սարգիս Տրպատունի, և այլք ի նախարարացն: Եւ զաւրք նորա իրրե երկու հազար հեծեալ՝ յաշխարհէն: Եւսն զի զաւրքն Քուշանաց ասպատակեալ սփռեալ էին ի վերայ երեսաց տմենայն երկիրին. և իրրե լուան զլուր համբաւոյ նորա՝ ժողովեցան և զնացին. և սա պնդեալ զհաս նոցա՝ փութանակի հասանէր: Իսկ նոքա իրրե տեսին զնա զհետ նոցա հասեալ՝

25 զարձան ընդդէմ ճակատեցան, և բաղկեցին զմիմեանս պատերազմաւ. անախ ի փախուստ զարձան զաւրքն Քուշանաց, և վանեցան առաջի զաւրացն Քոսրով Շումոյ, բազումք ի նոցանէ մեռան և բազումք փախտտեալն զնացին: Եւ նա զարձեալ բանակեցաւ յԱլոր Շահր՝ ի Տոս գաւառի. և ինքն նստէր երեք

30 հարիւր արամբք ի քաղաքագեղդն որ կոչի Քախտ:

- 2 Ա, Ակ. ի գահպակ 38 զիստ-
գրեւո՛ւ Բոր, Բահպակ
5 33 պատմաւանս
6 Ա ի ճամբար
11 22 եկն ի հայս, փխկ եկն
եհաս: Այսպէս ուղղել և Գ.
16 Ա զբաւշու
18 Ա գողթնեան

- 19 Ա դիմակեան
25 Ա զարձաւ
29 Ա յաղբաւոր աստ գաւառի, Մ
յԱլոր Շահրապուղ գաւառի: Գ
ուղղել և՛ յԱլորաւոր և ի աստ
գաւառի: Ուղղեցինք աղագետ:
աղագր
39 22 Խրոխտ

Յայժամ թագաւորքն Քուշանաց խնդրեցին իւրեանց օգնա-
կան ի Մեծէն Թաքանայ արքայէ կողմանցն հիւսիսոյ, Եւ եկն ել
ամբոխ 1 թիւոյ ի թիկունս աւանականութեան նոցա, անց զգե-
տովն որ կոչի Վահագոս, որ ելանէ ի Թուրքաստանէ յերկրէն
3 Եւրդատայ, (զԴիոնոս եփեսոսեայ, զՇամնն և զԲրամնն, և հոսի ի
Հնդկէս) 47, Եւ բնակեալ ի վերայ գետեղրն՝ ասպատակա սփռեցաւ
ընդ արեւմուտս, և հասեալ յանկարծաւրէն պատեցին պաշարեցին
զգիւղաքաղաքն, զի ունէր գեւղն պատուար ամրութեան շուրջ
զիւրեաւ շուրջանակի:

10 Յայժամ հրաման տայ Սմբատ երեք հարիւրոց անկանել
ի բերդակն, որ ի մէջ գիւղաքաղաքին. և ինքն հեծեալ յերկար
երկւք արամբք, որոց էին անուանք այսոքիկ՝ Սարգիս Դիմաք-
սեան և Սարգիս Տրպատունի և ոմն մի ի զինակրացն գեղջու
հեծեալ, անուն Սմբատիկ. և զիմեալ յանկարծաւրէն՝ ի գուռն
15 հասին, հատին զամբոխին զաւրութիւն և զնացին: Եւ երեք հա-
րիւրքն անկեալ ընդ բերդակն որ ի մէջ գիւղաքաղաքին՝ զիմե-
ցին ի վերայ զաւրոց նորա: Եւ էր հրամանատար զաւրուն նորա
պարսիկ ոմն իշխան՝ անուն Դատոյեան, հրամանաւ արքունի:

Արդ՝ թէպէտ և արձակու առ նա Սմբատ որ է Թոսրով Շուկն,
20 խոյս տալ ի նոցանէ, նորա ճշ կամեցեալ լսել՝ ել ընդդէմ նոցա
պատերազմաւ. ի հարեալ նոցա զգաւրս Պարսից՝ փախստական
արարին զԴատոյեան, և ինքեանք ասպատակ սփռեալ՝ արշաւե-
ցին մինչև ի սահմանս Ռէոյ և Ասպահան գաւառի, և աւերեալ
զերկիրն ամենայն՝ դարձան անդրէն ի բանակն իւրեանց: Եւ
25 հրաման հասեալ ի Մեծէն Թաքանայ առ Ճեմրուխ՝ անցին զգե-
տովն և դարձան անդրէն ի տեղի իւրեանց:

Ապա հասեալ քննող յարքունուտ Սմբատայ և Դատոյեանայ,
այր ոմն գլխաւոր նախարար, որում անունն էր Շահրապան Բան-
դական: Իսկ արդարացուցին զարն ամենայն մնացեալն զՍմբատ.
30 և Դատոյեան տարեալ ի դուռն կապանաւք՝ սպանաւ յարքայէ:

Յայժամ Սմբատ ժողովէ զպաւրն և վերստին սպառազինէ,
գումարէ և այլ զաւրս բազումս յաւանութիւն իւր, և զիմեալ
գնայր ի վերայ ազգին Քուշանաց և արքային Հեփթաղեայ: Եւ

5 Ան և ի գաւառ, փեղ եւ ի գա-
տայ... զլուսնն. զլուսնն.
Ա զլուսնն և զլուսնն: 4
բարձր
16 Ա ի գաւառ հառ ին զամբոխին

17 Ա հրամատար
18 88 արձակէ
20 Ա նորա, փեղ նոցա
27 88 յիւր և

նա անտի մեծաւ կազմութեամբ ընդդէմ ելանէ նորա. եկին հասին ի տեղի մարտին և ճակատեցան դէմ յանգիման միմեանց. Արդ՝ պատգամ յղէ առ Սմբատ արքայն Քուշանաց և ասէ. «Զքնէ աւարտ է այսպէս խառնամբոխ մտանել ի պատերազմ՝ սպառել զաւրս մեր. Նւ կամ քա ծանիցի իմ և քո քաջութիւնդ. Բայց եկ, ես և դու միայն մարտիցուք, եղեալ ես աստի ախոյրիան, և դու՝ այտի. զի այսաւր ծանիցի քեզ քաջութիւն իմ: Իսկ նորա ձեռն յանձին հարեալ՝ ասէ. Մանաւանկ պատրաստ եմ ի մեռանելու: Նւ յարձակեալք աստի և անտի մեծաւ տաքնապաւ ի միմեանս հասանէին. և ի մէջ երկուց անկատուցն մարտ եղեալ ընդ միմեանս կռուէին. և ոչ կարէին վազվազակի զմիմեանս յաղթահարել, զի արք սկայազաւրք էին երկուքինն և կուռ սպառազինեալք: Ապա ի վերուստ իմն հասեալ աւդուութիւն՝ պատառի վերս և ամուր բահիլ⁴³ և կուռ զրահին ամրութիւն արքային Քուշանաց ի նիզակէն Սմբատայ. զի հարեալ զնա զաւրութեամբ զխաթաւալ յերկիր կործանէր: Նւ զաւրքն նորա իբրև տեսին զարքայն իւրեանց՝ զարհուրեցան և զարձան գնացին փախստական. և սոքա զհետ արշաւեալ հասին ասպատակու մինչև ի Բահլ շահաստան Քուշանաց, և աւար հարեալ զերկիրն ամենայն, զՀար և զՎատաղէս, զՏոխոթստայն ամենայն և զՏաղական. առնոյր և զերբդս բազումս և զնոյնս քանդեալ աւերէր, և դառնայր յաղթութեամբ մեծաւ և բազում աւարու, և երթեալ բնակէր ի Մարգ և ի Մարգոտոս գաւառի:

Յայնժամ հրեշտակք աւետարարք փութով հասանէին առ արքայն Խոսրով, լիով զեղեալսն պատմէին քաջութիւն: Իսկ արքայն Խոսրով զուարճանայր զուարթանայր մեծաւ խնդութեամբ, և հրամայէր զարդարել զիկզ մի մեծ և ամեյ ի զահլիճն. հրամայէ եւ հանել ի վեր զորդի նորա զՎարադադիրոց, որ անուանեալ կոչէր յարքայէ Ջավխեան Խոսրով⁴⁶: Նւ հրամայէ զանձա ցանել ամրութիւն. և զրէր առ նա հրովարտակ մեծապէս գոհութեամբ. և կոչէր զնա ի դուռն մեծաւ պատուով և շքեղութեամբ:

12 Բայ. սակաւազուրք, փիկ սկայ-
ազուրք: Ուղղութե ե ալոգե
աւրիշներէց:

12 Մ երկայնն

13 Բայ. զվերահասուս աւզը-
ցինք՝ վերս և ամուր

17 ՏՏ և զարձան և գնացին

20 Մ Տոխոթստայն

21 Ա զնոյն

23 Ա ի մարգոտոս

28 Ա չիք՝ ես

30 ՁԶ զանձու: Ուղղել և Մ

Գ Լ ՈՒ Խ ԻԷ

Մեռն Սմբատայ։ Ապագամբել Յախարարացն Հայոց ի Պարսից և
Երբայ ի Ժառայութիւն նստեցան։

- Ա. եղև իբրև մերձեցաւ աւթիւ միով ի գուռն արքունի՝
5 հրաման տայ արքայ ամենայն նախարարացն և զաւրաց իւրոց
կրանել ընդ առաջ նորա, և աւժանդակացն հրամայէ նժոյգ
սանել ընդ առաջ նորա յախռէ արքունի՝ արքունական կազ-
մածով. և երթեալ մեծաւ շքով և ժառաք յանդիման եղև
10 Թագաւորին։
- Իսկ նորա տեսեալ խնդութեամբ ընկալաւ զնա, և ձեռաց տա-
նա զձեռն իւր. և նորա համբուրեալ զձեռն նորա՝ տնկաւ ի վերայ
երեսաց իւրոց։ Յայնժամ ասէ ցնա արքայ. «Միամատութեամբ
վաստակեցար, և մեք աւելի գո՛հ եմք զքէն. և արդ՝ յայսմհետէ
15 աւելի մի լինիր աշխատ ելանել ի պատերազմն, ալլ կ'աց աստէն
մերձակայ, ժռ, կիւր և ժրբ, և ուրախութեան մերում պարագիծաւ։
Ա. էր նա երբորդ նախարար ի տաճարի Թագաւորութեանն
Քոստովայ արքայի, և կացեալ ժամանակս սակաւ՝ վախճանեցաւ
յամա ԻԸ-երորդի Թագաւորութեանն նորա։ Իսկ զմարմին նորա
մոռեալ՝ տարան ի Հայաստան երկիր ի բնիկ հանգատարանն,
20 և եղին ի տապանի ի զիւն Դարիւնս, որ է ի Դոզովիտ
գաւառի։

49

- Ապա ապստամբեալ զնացին ի Ժառայութիւն Մեծին
Խաջանայ արքայի կողմանցն հիւսիսոյ, ի ձեռն ճենաօտանն
25 Ճեպետայ. ապա զնացեալ յարևելից յարևմուտս ընդ կողմանս
հիւսիսոյ՝ խառնել ընդ զաւրացն Ճեպետախոյն տշորիկ, հրամա-
նաւ Թագաւորին իւրեանց Խաջանայ։ Ա. ելեալ ընդ պահակն
Ճորայ զաւրաւք բաղմութեան՝ զնացին յաւանականութիւն
Թագաւորին Յունաց։

Գ Լ Ո Ւ Խ Ի Ը

- Փախչել Աստուայ Խոռխոռուկայ ի ծառայութենէ Յաւանց եւ անկա-
նել առ Խոռքով եւ Ռեծուրել ի նմանէ. ապա ապագամբութիւն ի
Խոռքովէ եւ ապամեղմն Սահմանակալ՝ Պարսից եւ Յաւանց ի
5 Հայաստան առիարի յամս Խոռքութեամբ քաղաւորացն երկոցուցն:

- Իսկ արդ՝ զի՞նչ եւ զԱստու Խոռխոռուկայ առաջից եւ
զմեղանգամ զապագամբութիւնն: Դէր սա պատրիկ մեծ, վասն
որոյ հրաման տայ Թագաւորն կոչել զնա ի պապաւն, եւ զնաղեալ
ի նա եւթանասուն արամբք. եւ մեծարեալ շքեղացոյց զնա եւ որ
10 ընդ նմոյն ըստ արժանի վայելչական ընդունելութեանն: Եւ
նմա անաւթս ոսկիս եւ արծաթիս եւ զանձս բազում յոյժ:
- Եւ հրաման ետ երթալ ի Թիւրակ առ զաւրս իւր. եւ հրա-
ժարեալ ի Թագաւորէն եւ զնաց: Եւ մինչդեռ զնայր ի ճանա-
պարհի՝ արկ նա ի միտս իւր ապստամբել եւ զնալ առ Թագաւորն
15 Պարսից: Եւ ստերիւրեալ ի ճանապարհէն՝ զնաց ի ծովեղերն եւ
հանգիպեալ նաւի միոջ՝ ասէ նաւորդացն. «Անցուցէ՛ք զիս յայն-
կոյս, զի ի գործ կարեոր առաքեալ եմ ես ի Թագաւորէն: Եւ
հրապուրեալ զնաւորդան՝ անցուցին զնա, եւ զնաց փութանակի,
հեղեալ հասանէր ի Հայաստան երկիր: Եւ ոչ ոք վաղագոյն
20 իմացաւ զճանապարհ զնալոյ նորա, մինչև բազում աւթնանաւք
մեկնեալ հեռացաւ. ի ծովեղերէն: Ապա ուստեմն իրազեկ լինէին
զնալոյն. եւ երեալ ընդդէմ սորա քաղաքաց քաղաքաց զաւրք՝ եւ
ոչ կարէին զդէմ նորա ունել, եւ ընդ ութ եւ տասն տեղի արարեալ
նորա պատերազմն ի ճանապարհի՝ յազմող ամենայնի գտանէր,
25 Բէլլէտ եւ իւր զաւրականն պակասեալ նուազէր, եւ այնպէս զնա-
ցեալ փութանակի հասանէր ի Նախնաւան: Եւ ընկալեալ զնա
Պարսիցն ի բերդն ամրանայր: Յայնժամ ժողովէր զամենայն
զաւրս իւր սորատեղաւորն, եւ երթեալ պաշարէր զբերդն շուրջ-
նակի զամէնն:
- 30 Ազդ լինի արքային Խոսրովու եղեալ իրքն, եւ արձակէ ի

9 Ա նմա, փիկ ի նա

9 Ա արամբ

11 Ա բազումս

21 Ա 88 ապա ուրեմն: Հ ուստեմն

21 Ա իրազիկ

27 Ա զամէն սորատեղաւոր զգոր-
ծիւր

30 Ա իրան

վերայ նոցա զՊարսնինպետ հանդերձ զաւրու իբրև եկն մերձեցաւ զաւրն՝ թողին նոքա զքաղաքն և դնացին. և նորա փութացեալ զնաց առ Խազաւորն Պարսից։ Իսկ նա սիրով ընկալաւ զնա, մեծացոյց պատուովք, և ետ նմա զգանձս, և հրամայեաց ոռճիկ

5 յարքունուստ։

Եւ եղև զկնի ամբ միոյ մեռանել Մաւրկայ, և թաղաւորել փոկասայ։ Արկ սա ի միտս՝ իւր ապստամբել և զնալ առ Թաղաւորն մուսաց։ Սկսաւ պատրաստել երթվարս տաճիկս և կազմել սպառազինութիւն, յանկուցանէ յինքն արս սրիկայս։ Լուր եկաւ ի լսելիս

10 արքային բանն, հրաման ետ կապել զնա ոտիւք և ձեռաւք, և բրաւք սպանանել։

Եւ այս եւն սաճամանակաւք տէրութեանն Պարսից յամս հաշտութեան այնորիկ ի Հայաստան երկրի և ի Դուին քաղաքս։ Վնդատական, Նիսորական. զսա սպանին զաւրքն Պարսից ի Դուին, և ինքեանք ապստամբեալ զնացին ի Գեղուս։ Ապա Մերկուտ. ապա Յաղղէն. ապա Բուսմահ. ապա Յեմանն։ Իսկ ի Յունաց կողմանէ՝ նախ Յովհան Պատրիկ. ապա՝ Հերակղ. ապա Սորմէն Եւ զաւրավար. մինչև լլաւն ամք երեքասասանք հաշտութեանն։

20 Եւ հրաման ելանէ ի կայսերէ. շնրեսուն հազար հեծեալ վզնակալ է, տէր իմ ի վերայ աշխարհին Հայոց։ Արդ՝ ԼՍ՝ երգաւոր փողովեցին. ինձ անտի և նստուցին ի Թիրակացւոց աշխարհին։ Եւ արձակոյր զՊրիսկոս ի Հայս վասն զործոյն այնորիկ։ Մինչդեռ եկեալ հասանէր համբաւն խռովութեան մեծի,

25 և Պրիսկոս յարուցեալ զնայր անհնարին տագնապաւ։

9 ՏՏ յանկուցանէ
9 ՏՏ սրիկաւէր ՏՏ այսպեա
16 Ա յեղգեհն... յիմանն։ Տ ծա-
նաթ. 50

19 Ա սուրմէն, միւսներք Սուրմէն
22 Ա փողովեցին... նստուցին
22 ՏՏ ի Թիրակացւոց
25 Ա պրիկոս

Գ Լ ՈՒ Ե ԻՔ

- Սպանումն Մաւրկայ կայսեր և քաղաքի Փոկասայ: Ապստամբութիւն ի Փոկասայ Մաւրկի և Նետոնի զաւարձարաց: Պատահումն Ռահայի ի զաւարաց Փոկասայ, և Գաւայի՝ ի զաւարաց Խոտովայ: 5 Լուսանկէ Խոտովայ յաւրանկանութիւն Ռահայի, առնալ զհաղաքն և դարձ Խոտովայ Թէոփոսի արդարն Մաւրկայ: Առումն և կործանումն Գաւայի ի Խոտովայ: Առումն Ռահայի ի զաւարացն Փոկասայ և սպանութիւն Նետոնի:

- Եւ եղև յամի Հորեքատասաներորդի Խոտովայ արքայի, ի 10 քսաներորդ ամի Մաւրկայ Թաղաւորութեանն՝ ապստամբեալ ի բաց կացին ի կայսերէ զաւրն Յունաց, որ ի Թրակացւոց կողմանէ, և նստուցին իւրեանց Թաղաւոր զայլ ոմն անուն Փոկաս կոչեցեալ: Եւ զնացեալ միարանութեամբ ի կոստանդնուպոլիս՝ սպանին զՄաւրկի Թաղաւոր և զորդին նորա, և նստուցին զՓոկաս 15 յաթո՞ Թաղաւորութեանն: Եւ զնացին ինքեանք անդէն ի կողմանս Թրակացւոց աշխարհին ի դէմ Թշնամոյն: Եւ էր որդի մի կայսերն Մաւրկայ, անուն նորա Թէոփոս: Լուր համբաւոյն ելեալ տարածանէր ընդ ամենայն երկիր, եթէ զերծաւ Թէոփոս և զնաց առ Թաղաւորն Պարսից: Ապա ոչ սակաւ ինչ խոռովութիւն լինէր 20 ի մէջ Հոռովմայեցւոց տէրութեանն անդէն ի Թաղաւորանիստ քաղաքին, և յԱղեքսանդր քաղաքի յնդիպտոս, և յԵրուսաղէմ և յԱնտիոք, և յամենայն կողմանս երկրի առեալ սուր զմիմեանս սատակէին:

- Հրաման ետ Թաղաւորն Փոկաս սատակել զամենայն 25 ապստամբ՝ որ երկմտեալ էին ի նորին Թաղաւորութենէ: Բազումք սատակեցան անդէն սրով ի Թաղաւորանիստ քաղաքին: Եւ առաջեալ զԲոնոս ոմն իշխան հանդերձ զաւրու ի վերայ Անտիոքայ և յԵրուսաղէմ և յամենայն կողմանս աշխարհին. և նորա երթեալ հար զԱնտիոք և զԵրուսաղէմ սրով սուսերի, և զամենայն իսկ 30 զբազմութիւն քաղաքաց երկրին տխորիկ ապականաց սրով:

Յայնժամ ապստամբեալ ի բաց եկաց ի Փոկասայ՝ Երակլէս զաւրովար զաւրու իւրով, որ էր ի կողմանս Աղէքսանդրի, և բռնացեալ ի բաց կալաւ զերկիրն Նդիպտացւոց: Եւ յԱսորւոց

- Յ 22 ի Գ ամի: Մ ի քսաներեք ամի: Այսպես ուղղել և Գ.
11 Ա ի Թրակացւոց

- 13 Ա ի կոստանդնուպոլիս
21 Ա յաղէկաւոր
22 Ա զորի:

կողմանէ ապաստանեալ ներսէս դաւաժար ի Միջագետս Ասորոց, և հանգերձ դաւառ իւրով մտեալ բռնանայ յՈւրհայ քաղաքի և և կենալ դաւր ի վերայ նորա՝ պատեալ պաշարեալ պահէին զքաղաքն հանգերձ դաւառս:

- 5 Եւ եղև՝ իբրև լուաւ արքայն Թորով զլուր համբաւոյն աշնորիկ՝ ժողովեալ գումարեաց գամենայն բազմութիւն զաւրաց իւրոց, և զնաց ընդ արևմուտս, և հասեալ ի Դարա քաղաք՝ նստաւ շուրջ զնովաւ և պաշարեաց զնա, և մարտ եղեալ կռուէր ընդ նմա: Եւ ընդ կողմանս Հայոց գումարեալ դաւառ, և զՋուլանս 10 Վեհ ոմն իշխանս մեծ դաւառզուիւ նոցա: Յայնժամ արքայ Թորով բաժանէ յերկուս մասսուհս. զմի մասն եթող անդէն շուրջ զքաղաքաւն, և միւսով մասամբն զնաց ինքն ի վերայ դաւառն, որ պատեալ պաշարեալ պահէին զՈւրհայ: Եւ հասեալ ի վերայ նոցա յանկարծաբէն ի ծագել առաւառսուն՝ գումանս ստատակէր սրով, 15 զմասնս փախտատական արարեալ, կէսն ամացեալ ի դեռն և և փրաւ միւսանէին, և կէսքն զնային հալածական: Իսկ արքայն Թորով մատուցեալ ի դուռն քաղաքին, զի բացցին նմա և մոցէ ի ներքս՝ իսկ նոքա բացին զդուռն: Վիայց մանուկ մի վարդարեալ Թադաւորական հանգերձիւ, և եղեալ ի վերայ զիւրոյն նորա պսակ, և և հան արձակեաց առ նա ներսէս, 10 ասէ. «Դա է որդի Թադաւորին Մարկայ, Թեոգոս, և արասցես ի վերայ դորա ողորմութիւն, որպէս և հայր դորա ի վերայ քոյս»:

- Եւ մեծաւ խնդութեամբ ընկալեալ զնա Թորովայ արքայի, զարձաւ անդրէն և զնաց ի Դարա քաղաք, և ունէր զնա առ 25 իւր Թադաւորական պատուով. և նստաւ նա շուրջ զԴարայիւ դարի մի և կէս, և փորեցին զհիմունս քաղաքին ի ներքոյ պարսպին, և կործանեալ զպարսպն նորա՝ աւինս վքաղաքն, և սուր ի վերայ եղեալ մաշեցին գամենայն սրով սուսերիւ: Եւ արեալ դառ և դաւար քաղաքին, դարձան անդրէն ի Տիգրոն, 30 քանզի էր զաւր նորա աշխատեալ և լքեալ ի պատերազմէ քաղաքին: Եւ հասեալ ի վերայ Ուրհայի այլ զաւր ի Յունաց կողմանէ՝ մարտեան ընդ քաղաքին և առին զնա. և կալեալ զներսէս սպանին և արին հեղին:

7 Ա ի դար քաղաք
8 ՏՏ դառ, փակ զնա
9 Ա. Մ զշովանան: Հ. 9 զՋուլանս
10 Ա անդրէն

12 ՏՏ զնա,
13 Բալ. ամբացեալ, Ուրհայինք
այրուի
22 Ա Թորով արքայի

Գ Լ Ո Ւ Խ Լ

Պատեհազմ ի դառնիմ Եղեվարդայ եւ պարտութիւն Պարսից. այլ պատեհազմ ի դառնիմ Շիրակայ եւ պարտութիւն Յունաց: Եւրոզ պատեհազմ ի Ծաղկոսն: Ամենառաւ լինել Թէոփոսի խոստովանման: 5 զպատեհազմն Պարսից. ետրալ ի դառն ար:Ամի եւ տպա տպանանել:

Իսկ Զուանն Ղևհ, զոր արձակեաց ի կողմանս Հայոց հանգերձ զաւրու իւրով՝ երթեալ հասանէ յԱյրարատ դաւառ եւ ի Դուին քաղաք ի ձմերային ժամանակի, եւ զաղարեալ հանդուցանէ զզաւրս իւր մինչեւ ի զալ հասանել զարեւայնոյ ժամանակի: 10 Յայնժամ ապա եւ զաւրն Յունաց ժողովեալ զուսարեցան ի քաղաքադեւղն Եղեվարդ. եւ հասեալ ի վերայ նոցա զաւրն Պարսից՝ եղև պատերազմ ի զաշտին Եղեվարդայ. հարին զզաւրն Պարսից եւ կործանեցին կործանամբ մեծաւ. եւ սպանին զզաւրաւորն ի պատերազմին, եւ զմնացեալն փախտաւկան արարեալ հալածական տանէին: Եւ առեալ զառ եւ զաւար զբանակին Պարսից՝ զարձան ի բանակեալն իւրեանց, որ կայ ի վերայ դետեղերն, որ կոչի Հոռոմոց մարդ: 15

Եւ եղև ի զալ ամին միւսոյ, մինչդեռ արքայ Խոսրով մարանչէր ընդ Դարս քաղաքի, զուսարեցաւ այլ զաւր Պարսից ի կողմանս Հայոց, եւ Դատոյեան զաւրազլուխ նոցա: Եւ զաւրն Յունաց զուսարեցան ի զաշտն Շիրակ եւ ի գեւղն, որ կոչի Շիրակաւան: Եւ անդ դետեղեալ զաղարեցան աւուրս ինչ, եւ ինքեանք տաքնապեալք յընտանի պատերազմէն եւ զարուսեալք յարձակմանէ աւտար Թշնամոյն: Եւ զաւրն Պարսից հասեալ ի վերայ նոցա իբրև զխոյանալ արծուոյ: Իսկ նոցա թողեալ զանդի բանակին իւրեանց՝ անցին յայնկոյս գետոյն ի զաշտն, որ կոչի Ականից. եւ զաւրն Պարսից հետամուտ եղեալ հասանէին նոցա: Եւ լինի պատերազմն ի գեւղն որ կոչի Դեաիկ: Եւ մինչդեռ սոքա նակատեալ էին դէմ յանդիման զալ եւ մերձենալ առ միմեանս, իսկ բնակիչք զաւառին, որ էին ժողովեալ ի բերդն Երզնայի: Եւ ելեալ անախ բազմութեան մանկուոյ գերանդաւք 30

7 Ա զօրաւ ... յարարատ

8 Ա ի ձմերայն

9 Ա զարանայ

11 Ա Եղեվարդ... եղեվարդայ

23 Ա յընդանէ

27 Ա հասանեն

և սրիանաւք⁵² անկան ի վերջոյ նոցա, և գործեցին մեծ աւելիո
մնասուց, թողին վիրաւորս,⁵³ և առեալ զառ և զաւար և զկապուստ⁵⁴
զնացին ի բերդն իւրեանց:

Աւ նոցա բաղխեալ պատերազմաւ՝ փախստական լինէր զաւրն
5 Եւնաց անաջի նոցա (իսկ նոցա զհետ մտեալ կուտրէին զբազումս
ի զաշտացն և ի ճանապարհացն ցիր և թաւալ կացուցանէին: Աւ
սակաւք Ստացեալք փախստեայս զնացին: (Իսկ նոցա առեալ զառ
և զաւարն՝ զնացին ի բանակն իւրեանց: Աւ իբրեւ տեսին զեղեալ
չարութիւնն՝ համադուեղ արշաւեալ ի բերդն՝ առեալ զնա, զբա-
10 զումս սրով սատակեցին. և բազումք զահալէս լինէին յաւէ անտիւ-
և կէտքն ելեալ ընդ դուռնն՝ որ բանայր ի կողմն գետոյն՝ փա-
խստական գնային, և զայլն ամենայն ի գերութիւն վարեցին:)
Աւ զերեցան յաւուր յայնմիկ ի բերդէն յայնմանէ գեւղք ԼԳ. Աւ
զամենայն նոյնպէս ի գերութիւն վարեցին, և ժողովեալ զամե-
15 նայն զառ և զաւար զաւառին, և զաւրքն զարձան և զնացին
Ատրպատական:

Ապա եկն Սենխում Խոսրով: Աւ զաւրն Եւնաց գումարեալ
նստան ի Մաղկուսանն, մերձ ի զեւդն որ կոչի Անդզն, ընդ որ
անցանէ գետն Արածանի. և ի միւս կողմանէ քակեալ զգեւդն՝
20 ածին ամբութիւն շուրջ զինքեամբ: Աւ զուրադուի նոցա Թեոդոս
Խոսրոսունի: Աւ զաւրն Պարսից եկեալ բանակեցան մերձ առ
նոսա ի թիկանց կողմանէ. և նոքա զարուրեալ խաւսեցան ընդ
նոսա, նախ՝ ի խաղաղություն, ասացին ոչ ունել պատերազմ,
այլ թողուլ զբերդն և երթալ խաղաղութեամբ: Ապա միաբանք
25 եղեալ՝ ոչ հաստատեցաւ բանն, այլ վստահացեալ յամբութիւն
իւրեանց կարծէին առնել ինչ: Աւ եղև ի վաղիւ անդր զիմնաց
զնաց ի վերայ նոցա զաւրն Պարսից: Աւ ոչ ոք արկանէր ի նո-
ցանէն զէն դանձամբ իւրով, և կամ թամբէր զերթվար իւր: Աւ
թէ ոք զինէր զանձն կամ թամբէր զերթվար՝ հասանէին մանկունք
30 իշխանացն, և հանեալ ի բաց ձգէին զգէնն, չարաչար տանջելով
զարսն, և զգաւախ երթվարացն սրով հատանէին:

Աւ եկեալ զաւրն Պարսից ճակատեցան մերձ առ նոսա զէս
յանդիման ի զաշտին կողմանէ, և ձգեալ բազմութեանն զաւրու
աղեղնաւորացն, և թափեցին ի նոսա զկապարեա իւրեանց, և

6 Ա ցիրդ ի թաւալ
7 ՏՏ նոցա զառ և զաւարն առեալ
15 Ա զորն

24 Հաւանօրէն ուղղելի՝ քանիս-
րանք: Առաջ. Ս. Շաբանի:
34 Մ զկապանս, փիկ զկապարեա

- ծաղկոտէին նեախօք իւրեանց առ հասարակ զամենայն արս և զերիվարս) Եւ ընդստուցեալ ամենայն երկվարք, որ կապեալ էին առ մաուրս առ իւրաքանչիւր գրան խորանաց, ընթացրեալ առաթուր հարկանէին զխորանսն և զրանակսն ամենայն: Եւ
- 5 Թշնամոյն հասեալ զամբութիւնն՝ անկաւ ի բանակն, և անհնարին լինէր կոտորածն. և նոցա հասեալ զտեղի մի, ոմանք հեծեալսկք և ոմանք հեծեալք յանկումուղի մի, 53 ելին և զնացին փախստական: Եւ Թէոդոս Խոթխոռունի անկեալ ի բերդն ամբանայր. և նստան նոքա անգէն յայնմ զիշերի ի նոցուն բանակեալն: Եւ
- 10 եղև ընդ առաւառն, պատգամ արձակէին, զի Թոգցեն զերդն և զնացեն իւրեանց կարասեաւն և ամենայն կազմածոքն) Եւ յանձին կալեալ նոցա առնել այնպէս: Եւ յաւուրն երբորդի բացին զդուռն քաղաքին, և ելին զնացին ամենեքեան ըստ ասացելումն բանին: Իսկ զԹէոդոսն Խոթխոռունի
- 15 կոչէր զաւրավարն Պարսից և ասէր ցնա. «Ո՛չ ունիմ իշխանութիւն արձակել զքեզ առանց արքունի հրամանի, այլ տաց տանել զքեզ ի դուռն, և զրեցից վասն քոյ առ արքայ զամենայն բանաբարութեան, եթէ սրպէս միամատութեամբ և տիրաւորութեամբ զործեցեր, զի զզաւրս նոցա ի ձեռս մեր այնպէս մատնեցեր, և
- 20 ապա զերդդ առանց աշխատութեան սրպէս հոռւր մեղ, և եկիր կամաւք քովք ի ծառայութիւն: Եւ զքեաց ըսաւ նմին բանի, և ետ տանել զնա ի դուռն: Եւ արքայ Խոսրով սիրով ընկալաւ զնա, և կարգեաց նմա ռոճիկս և հանդերձագինս յարքունուստ: Բայց յապա ժամանակիս եղեալ կարծիս նենդութեան՝ հրամայեաց
- 25 սպանանել) Իսկ ի բերդին Անգեղ նստուցեալ բերդակալ, և դուստրեալ զզաւրս իւր զնաց ինքն ի ներքսագոյն և նուաճեաց զերկիրն ի ծառայութիւն:

Եւ եղև յիտ այնորիկ միւսանգամ պատերազմն ի կողմանս Բասենոյ, և հնար զՅոյնն և հալածեաց. և փախստական արարեալ

30 ընկենայր յերկիրն իւրեաց: Եւ կալաւ նա քաղաքս՝ զԱնդղ և զԳալլատուս, զՍերդինայ, և ի Դարային զքաղաքն Միսնկերտի: Եւ հրաման հասեալ յարքայէն՝ զնաց:

7 SS յանկումուղի, Ա, Ակ այսպէս: S. Ժանթթ. 53

11 Ա կարասեաւն, (առաջին սա-ի տակ խաղած), Ակ կա-

բասանաւն

31 Ա, SS ի Տարային: 2 ի գաբային

31 Մ Ժիսկերտի

Գ Լ Ո Ի Խ Լ Ա

Արձակել ևստրովայ գետեհամ բազմակնոն զնկալ յԱսորեստան և զԱսորեստան համեղեմ Թէոդոսիոս որդւով Մաւրկայ ի Հայաստան ևս Միջագետք հմազանդին ի ծառայութիւն Պատրիքի ևս Մաւրկայով զՅոյնոս, Երբայ ի վերայ Կարմոյ Թէոդոս յայնմ զանձն իւր Կարմիցաց. անձնաստ լինել Կարմոյ Իսայ զաւրաւարին Եսեմնայ ի Կարին. զաղբեցումն բնակեաց Կարմոյ յԱսորեստան և Կարմայ Կարմիցայով զանձն ևս Մարտիանոս Կարմիցայով զանձն ի Եսեմնայ ևս սպանումն Վասակայ Մարտիանոս:

Յայնմամ արքայ Խորրով զարձաւ ի Դարայէ և հանգոյց զգաւրս իւր վերստին, և այլ ևս բազմութիւն զաւրաց ժողովեալ զուստրեաց, և արձակէր ընդ կողմանս Ասորեստանի զաւր մեծ և հզաւր յոյժ, զՅոսեփ, որ Ըստմանն անուանեալ, զաւրագլուխ նոցա: Եւ հրաման տայր նոցա այսպէս, եթէ Վրդ եկեացն ի ծառայութիւն՝ սիրով ընկալ, և ի խաղաղութեան և ի շինութեան պահեցիր. և որ ընդդէմ զարձցին և պատերազմեցին՝ սրով սպանեցին: Եւ ընդ կողմանս Հայաստանի արձակէր զԱշտար զԵկատայար հանգերձ զաւրու մեծաւ, և զԹէոդոս կայսր զանուանեալ որդին Մաւրկայ ընդ նմա գումարէ:

Յոսեփայ առեալ զզաւրացն բազմութիւն գնաց ի կողմանս Ասորեստանի, և հասեալ ի Միջագետս Ասորէոց, պատեալ պաշարեն զՈւռայ քաղաք, և մարտ եղեալ կռուի ընդ նմա Իսկ նոքա ի բազմութենէ զաւրացն և ի մարտիցն յաղթութիւնն, և զի ոչ ուստեք զոյր նոցա՝ ակնկալութիւն փրկութեան՝ խաւսեցան ի խաղաղութիւն, և խնդրեցին երզումն, զի մի կորուսցն զքաղաքն, և բացեալ զՈւռայ քաղաքն հնազանդեցան ի ծառայութիւն Նոյնպէս և Ամիթ և Թելա և Ռաշայինայ և ամենայն քաղաք Միջագետաց Ասորեոց կամուք հնազանդեալ ի ծառայութիւն՝ պահեցան ի խաղաղութեան և ի շինութեան: Եւ գնացեալ նոցա յԱնտիոք քաղաք՝ հնազանդեցան և նոքա կամուք ի

21 22 Մ զԻսահայ, Գ. Խորրով:

Աղբեցինք այսպէս:

23 33 զաւրայ:

23 Թիւ ուղղելէ՝ մարտ եղեալ:

28 Ա թիւ 7:

29 Ա քաղաք:

ծառայութիւն հանգերձ ամենայն քաղաքաւք և բնակչաւք իւրեանց, փախստականք լեալ ի սրոյն փոկասայ:

Իսկ Աշտաա Յեզատայար եկն ի սահմանս Հայոց յամի ութ և տասներորդի Թագաւորութեանն: Եւ զաւրն Յունաց զուստրեալ 5 ժողովեցան ի գաւառն Բասենոյ, և եւս անողին դիմեալ յարձակեցան ի վերայ նորա. և եղև պատերազմ մեծ ի Դու և Յորդուս: Հարին զաւրն Յունաց և խորտակեցին կործանմամբ մեծաւ: Բազումք մեռան ի պատերազմին, և ոչ գոյր թիւ սպանելոցն ի զաշտին: 10 Հալածեաց զնոսա մինչև ի քաղաքն Սատաղացոց, և ինքն զուստրեալ բանակեցաւ շուրջ զԿարնոյ քաղաքաւ, և կալաւ ընդ նմա զործ պատերազմի. ընդդիմացան ի ներքուստ ինչ. և ոչ սակաւ լինէր կոտորածն ֆնասուց յարտաքնոցն: Ապա յառաջ մատուցեալ Թէոդոս կայսրն առելով, եթէ չես եմ Թագաւորն 15 ձերս: Յայնժամ հաւանեալ բանային. ելին գլխաւորքն քաղաքին և ընծայեցան նմա, և դարձեալ անդրէն հաւանեցուցին զքաղաքն, թէ նոյն ինքն է Թէոդոս, որդին Մաւրկայ: Յայնժամ բացեալ զգուռն՝ հնազանդեցան ի ծառայութիւն: Եւ կարգեալ ի նալ պահապանս, զնաց և կալաւ զքաղաքն Հաշտենից՝ զՅիթաութն և զՍատաղ և զԱռաստիայ և զՆիկոպուլիս և զնաց:

20 Ապա եկն Շահէնն Պատգուսապանս՝ և զանց արարեալ զԿարնոյ քաղաքան. և յոտոանն Դրենայ եկն մարզպանութեանն Շահրայեանպետոյ: Իսկ Շահեանն երթեալ հանդիպէր զաւրացն Յունաց ի Կորին գաւառի: Եւ արարեալ պատերազմ՝ հարկանէր զնոսա սրով սուսերի և փախստական արարեալ հալածական առնէր յաշխարհէն:

Իսկ յամին քսաներորդի առաջներորդի արքային Խոսրովայ հրաման ետ նմա՝ փոխել զբնակիչս ի Կարնոյ քաղաքէ և տանել 25 բնակեցուցանել յԱնմատեան շահաստանի. ընդ նոսին ըմբռնեալ և երանելի ծերունի կաթողիկոսն Յովնան ի գերութիւն վարեցաւ հանգերձ ամենայն սպասիւք եկեղեցւոյն: Եւ անդէն վախճանեալ բերաւ մարմին նորա ի գեւղն Աւան, յեկեղեցին, զոր ինքն շինեաց: Եւ ի նմին ամի վախճանեցաւ երանելին Աբրահամ կաթողիկոսն: Եւ յետ սորա յաջորդէ զաթոռ հայրապետու-

13 Ա, Գ, Դ, աւէ, փիւկ եւ եմ
Բ և եմ

18 Ա զիթաութն. 88 Ձիթաութն,
Ուղղեցինք այդպէս Ուղղա-

գոյն ձեռ թվում և կիթա-
ութն. 345 Եւրայր, 346 Եկ. Եր.
20, Եւրայր.

19 Ա զնիկոպուլիս

Թեանն Կումիտաս Տարանոյ եպիսկոպոսն, որ ի գեղջէ Աղցիցն
ուսնէ, և առ սովաւ կատարի շինուած եկեղեցւոյն սրբոյն
Գրիգորի:

- 5 Եւ յամին քաներորդի Խոսրովայ արքայի ասպատակ
արարեալ Շահնայ՝ որչաւեաց ի կողմանս արևմտից և գնացեալ
ի Կեսարիա Կաղաղովկացւոց. իսկ բնակիչք քաղաքին քրիստո-
նեայք ելին ի քաղաքէն և գնացին. բայց Հրեայքն ընդ առաջ
կրթեալ հնազանդեցան ի ծառայութիւն. և նստաւ նա ի քաղա-
քին յայնմիկ դտարի մի. Կալան զՎասակն Արծրունի զորդի
10 Սահակայ նահապետին Արծրունեաց, և սպանին զնա հանդէպ
զրանն քաղաքին ի վերայ փայտի. որ թէպէտ և բազում աւերոս
փնասուց զործեալ էր նորա ի զաւրուն Պարսից, սակայն ամենայն
զաւրն Պարսից որդայր զնա վասն քաջութեան և արիութեան,
և մանուկ ուժեղ և բարձրահասակ. Մանուանդ զի սնեալ ևս էր
15 ի մէջ նոցա, և վարժեալ ևս ի նոցանէն հրահանգաւ Այսպէս և սա

Գ Լ Ո Ի Խ Լ Բ

- Խոսրով մեծէ առնել Խոսրոսին, պատերազմ առ Կեսարեայ,
փախուտ Յուսից. Ետէն առնաւ զԲիւրիսինէ Զաւրովարտ պարսիկ
ի Հաս, փոխպսիկոս արօտէ յԱրարտ և դառնայ ի փախուտ
30 Նոսուցանել Հերակլի զԽոսրովին զսրդի իւր յարաք քաղաքու-
րեանն ևս երթալ յԱսորեստան Պարսոսին նորա առ Անթիոք բա-
ղամաւ: Երկրն Պաղեստինացւոց հնազանդի ի ծառայութիւն Պարսից,
Ասորեստրոսին Մուսաղէմ Բաղադի, առումն ևս կատարած ամենա-
րին: Եւրումն խաչափայտին: Հրաման յարժայէն Խոսրովայ՝ օրնել
25 ամերէն զՄուսաղէմ

ԽՈՍՐՈՎ ԻԲ, ՍՐԱԼՂԱՍ ԶԱՌԱՋԻՆՆ

- Եւ եղև ի ժամանակին յայնմիկ դումարել զաւրս Երակլի՝ որ
ի կողմանս Նզիդատացւոց, յամի քաներորդի երկրորդի Թազա-
ւորութեանն Խոսրովայ, և նաւեալք ընդ ծով հասին ի Կոստանդ-
30 նուպուլիս, և սպանեալ զՓոկաս Թազաւոր՝ նստոյց զՀերակղոս
զորդի իւր. յաթոռ Թազաւորութեանն, և արար յամենայն երկիրն
խաղաղութիւն:

1 ՅՏ Տարանոյ
14 Ա քաղէր հասակ

31 Ա և արար խաղաղութիւն ա-
մենայն երկրին

Եւ եղև իբրև թագաւորեաց շերակդոս՝ արձակեաց հրեշտակս մեծադէս գանձիւք և հրովարտակաւք առ արքայ Սոսրով՝ խնդրել զխաղաղութիւն մեծաւ թախանձանաւք: Որում ոչինչ կամեցաւ լսել արքայ Սոսրով ասելով. «Իմ է թագաւորութիւնն այն, և ես
5 զթէոդոս զորդին Մարկայ նստուցի թագաւոր: Եւ նա երթեալ առանց մեր հրամանի թագաւորեաց, և զմեր գանձն մեզ ընծայս մատուցանէ. բայց ես ոչ զազարեցից՝ մինչև ասից զնա ի բուն իմ: Եւ առեալ զգանձն՝ հրամայեաց սպանանել զհրեշտակս նորա, և բռնից նորա զյարար պատասխանի:

10 Թայնժամ գումարեալ Երակլի զդաւրս իւր՝ բանակեցաւ շուրջ զքաղաքան և արգել զնոսա յարշաւանաց իւրեանց: Եւ գումարեալ զգաւրն ի ձեռն կուրատորի ուրումն, հրաման ետ զգուշանալ, և ինքն զնաց ի անգի իւր:

Եւ պաշարեցին զքաղաքն Կեսարացւոց տարի մի, և նեղեցաւ
15 զաւրն Պարսից ի կերակրոյ. և զի ոչ գոյր խար երկվարացն բազմութեան, Եւ եղև իբրև հասին յաւուրս ամառնային ջերմութեանն, և լցեալ սեռնեցան վայրքն բուսով զալարոյ՝ հրդեհեցին զքաղաքն հուրը, և ելեալ զնացին բռնութեամբ, հարեալ զՅոյնն և փախստական արտրեալ յետուս իւրեանց. և ինքեանք երթեալ
20 ի սահմանս Հայոց: Եւ ձմերեալ զաւրն Պարսից ի Հայաստան աշխարհին:

Կոչի Շահէն փութանակի ի գուն թագաւորին Պարսից, և հրաման տայ նմա արքայ երթալ անդրէն ընդ արեւմուտս փութանակի Իսկ նորա առեալ զդաւրս իւր յաւուրս ամառայնոյ
25 զնացեալ հասանէ ի Կարնոյ քաղաք, և դիմեալ ի վերայ Մելտինոյ, առնու զնա և հնազանդէ ի ծառայութիւն: Եւ ինքն զնացեալ միանայր ի զաւրն Սոսրեմայ, որ էր ի Պարսիցացւոց կողմանէ:

Եւ յոստանն Դըւնայ եկն փոխանակ Շահայինպետի՝ Պարսեանպետ Պարշընազգատ. ապա նամգարուն Շոնադդ. ապա Շահ-
30 րապղական: Սա արար կոխ մի ի Պարս և յաղթեաց. ապա ձոռն վհեան: Սա հետամուտ լեալ զհետ թագաւորին Երակղայ ի Հայս մինչև ի սահմանս Ասորեստանի, մինչ եղև պատերազմ մեծ ի Նինուէ, յորում անկաւ ինքն և ամենայն զաւրք իւր:

2 Ա գանձիւք

13 Ա սրումն

26 Ա զնաց երթեալ, փիւղ գնացեալ .

27 Բու. ի զաւրն խոռեմայ, որ

էր ի պարսիցացւոց կողմանէ և յոստանն Դըւնայ, եկն փոխանակ Շահայինպետի: .. Ուղղեցինք կեսաղբութիւնն այսպետ:

Իսկ Թաղաւորն Երակզոս գումարէ զՓիլիպիկոս զոմն երէց
 ի զաւարմարութիւնս Եւ էր լիալ Փիլիպիկոս այս փեսայ կայսերն
 Մարկայ, և բազում ժամանակաւ արարեալ զաւարմարութիւն՝
 գործէր զմարտից յաղթութիւնս Եւ ապա յանկարծաւրէն արկեալ
 5 ի միտս իւր անգրէն յաւուրս Մարկայ Թաղաւորութեանն, կտրեալ
 զհերս զլիտոյ իւրոյ և զգեցեալ զքահանայութիւն՝ զինուորեցաւ
 յախտ և կնկեցեալ: Արդ՝ զսա բռնադատեալ Հերակզի, կարգէ
 զաւարմար և արձակէ ի կողմանս արևելից զաւրու մեծաւ Եւ
 նորա զիմեալ ընդ Կեսարիա Կապադովկացոց՝ երթեալ հասանէր
 10 ի Հայաստան երկիր, ի գաւառն Այրարատայ, և բանակի ի դաշ-
 տին Վաղարշապատ քաղաքի:

Հապենայ ստիպով ի ձեռն Թեթևընթաց երազոտն սուրհան-
 դակաց հրաման Թաղաւորին հասաւ մեծաւ վտանգաւ ստիպէր
 զգաւրս իւր հասանել զհետ նորա և անյիշատակ ի միջոյ ի բաց
 15 բառեալ զգաւրն Եւ նոքա երթեալ մեծաւ ստիպով հասին ի
 գաւառն Այրարատայ և բանակեցան ի վերայ գետեղերն Երասխայ,
 կամեցեալ առ վաղիւն խմբել զգործ պատերազմին: Եւ նմին
 ժամու | գիշերին գնացեալ ի վերայ Փիլիպպոսի ծն ի Նիզ դա-
 20 ւառի և դատեալ զԹիկամբք լիւրինն Արագածայ՝ երթեալ անցանէ
 ընդ Երեւակ և ընդ Վանանդ մերձ քաղաքան Կարնոյ և երթեալ
 հասանէ ի սահմանս իւր: Իսկ զաւրն Պարսից, քանզի յաւաքեալ էր
 ի հաւաքս և յայնպէս վտանգաւոր ուղեաց ճանապարհին, — քան-
 զի ցաղումք մեծան ի ճանապարհին ի զաւրացն, և բազմաց երի-
 25 վարք ստատկեալ՝ անկանէին հետիոտս — ոչ կարացեալ հապենայ
 ստիպով զկնի նոցա լինել հետամուտ: Այլ դադարեալ աւուրս ինչ-
 ապա գնացեալ հանգստիւ, երթեալ անցանէ ի կողմանս Ասորես-
 տանի: Եւ բանակեցան անգէն ի տեղառջն, ուր էին դառաջինն և
 լայնեալ յաջ և յանեալ իւրեանց՝ լստեցան և կալան գերկիրն
 ամենայնս:]

Յայնմ ժամանակի Թաղաւորեցոյց Հերակզոս զորդի իւր
 30 զԿոստանդին, եւս գնա ի ձեռն սընկղիտտին, և յանձնեալ ամե-

Ծր. 80, 29 Ա, 88 Ծնագոյ չ չնապ
 " 31 Ա ի հայոց
 " 32 88 մինչև եղև
 1 Ա Հերակզոս... զգործողիւս
 9 Ա կեսարայ
 10 Ա ալաւիկ և հետո՝ ալարատայ

18 Ավելորդ է Թճումբ զի վերայ
 3. Ժանութ. 55
 18 Ա Փիլիպպոսի
 19 Ա զԹիկամբ
 22 Ա ուղղեաց, փիկ ուղեաց

- նայն մեծամեծացն պալատոյն՝ հաստատեաց զնա յաթոռ Թադա-
ւորութեան իւրոյ։ Եւ իւր առեալ յանձն դանձոն զաւրավարու-
թեան, հանդերձ եղբարքն իւրով Թէոդոսիւ զոմարեալ ժողովեաց
զրազմութիւն զաւրացն, և անցեալ զնաց յԱսորեստան ի կողմանս
5 Անտիոքացւոյ։ Եւ եղև պատերազմ մեծ ի կողմանս Ասիացւոյ-
և բռնացեալ հոսեցաւ արիւն զաւրավարացն առ Անտիոք
քաղաքս։ Սաստիկ լինէր խումբ և խառնուրդ, և անբա-
կոտորածն ի մէջ տարուբերին. և յաւգնեալ վանեցան ի մարտին
երկօքին կողմանքն։ Բայց սակայն զաւրացեալ Պարսիկն՝ փա-
10 խուցեալ զԹոյնն հալածեաց, և ստացաւ հանդերձ քաջութեամբ
զյաղթութիւն։ Եւ եղև միւս ևս այլ պատերազմ մաւտ ի նեղուց
մարտն ի Կիւիկեայ։ Եւար Թոյնն զՊարսիկն ի նակատուն ԸՌ-
արանց ապառազիւնաց։ Եւ ինքն զարձեալ փախստական զնաց. և
զաւրացեալ զուրն Պարսից՝ անցեալ կալաւ զՏարսուս քաղաք և
15 զամենայն բնակիչս Կիւիկեացւոյ դատոիրն։
Յայնժամ ապա ամենայն երկիրն Պաղեստինացւոյ կամաւք
հնազանդեցան ի ծառայութիւն արքային Պարսից. մանաւանդ
մնացորդք ազգին Հեբրայեցւոյ, ապստամբեալք ի քրիստոնէից և
առեալ ի ձեռն զնախանձ հայրենի՝ մեծ աւերս ֆառուց զոր-
20 ձէին ի մէջ բազմութեան հաւատացեալոցն։ Երթեալ առ նոսա միա-
ւորեցան խառն ի միաբանութիւն։ Յայնժամ զուրն արքային
Պարսից նստէր ի Կեսարիա Պաղեստինացւոյ, և զաւրավարն նոցա
անուանեալ Ռազմիողան, որ է Խոռեամ, խաւէր ընդ Երուսաղէմի,
զի կամաւք հնազանդեցին ի ծառայութիւն, և ի խաղաղութեան
25 և ի շինութեան պահեսցին։
- Արդ՝ նախ միարանեալ հնազանդեցան ի ծառայութիւն, և
մատուցին զաւրավարին և իշխանացն պատարագս մեծամեծս, և
խնդրեալ ոստիկանս արս հաւատարիմս՝ նստուցին առ իւրեանց
առ ի պահպանութիւն քաղաքին։ Եւ յետ անցանելոյ ամսոց,
30 մինչ միարանեալ ամենայն ոստիկ կաճառացն՝ մանկունք քա-
ղաքին սղանին զոստիկանս Թագաւորին Պարսից և ինքեանք
ապստամբեալք ի բաց կացին ի ծառայութեանէ նորա։ Յայնժամ
եղև պատերազմ ի մէջ բնակչացն քաղաքին Երուսաղէմի, երէին
և քրիստոնէին։ Եւ զաւրացեալ բազմութեան քրիստոնէիցն՝ հարին

12 Ա մարն Կիւիկեայ
22 ՁԶ, Մ Գազմիողան։ Այսպե-
սազգիւ և Գ.
23 Ա Խոռեամ

27 Բու. զիշխանացն։ Ուղղեցինք
այսպէս։
28 Ամսոց մինչ. Թժի ուղղիկ՝
ամսոցինչ

- Աւրհնեալ է Աստուած ե հայր տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, հայր գթութեանց ե Աստուած ամենայն միտմարութեանց, որ մխիթարեաց զմեզ միտմարութեամբ բազմաւ ի վերայ ամենայն նեղութեանց մերոց՝ ի գալստեան ձերոյ հաւատիդ
- 5 Բանդի ոչ մխիթարեաց զմեզ ի գալստեան զոցա. նախ՝ յիշեցուցանելով մեզ դառաջին երթեակէն, զոր առնէին ի պատուական տեղիս Երուսաղէմի Երկրորդ՝ զի հաճեաց զմիտս մեր ի գալստեան զոցա, ե ծանեաք, զի ոչ խաղառ մերժեաց զմեզ Աստուած: Այլ արգարե սոյն Աստուած մեր ի մեզ է, ցուցանելով մեզ ի ձեռն նոցան իրաց զմեծամեծս իւր՝ որ յառաջ քան զյաւիտեանս մինչեւ ցայժմ կատարելով. ե զգաւութիւն նորա ե սքանչելիս նորա աւրհնելով ե մեք զՊաղոսին տասացուք. «Ո՛րոգէս մեծացան զործք քո, տէր. զամենայն իմաստութեամբ արարեր, Արգարե անքնին են զաստասանք նորա, ե առանց զննելոյ են ճանապարհք նորա: Զի ձվ ծանեաւ զմիտս տեառն, կամ թ խորհրդակից եղև նմա, կամ ձվ եւ նմա փոխ ե հատուցանէ նմա, զի ի նմանէ են ե նովաւ ե ի նա ամենայն՝ նմա փառք յաւիտեանս, ամէն: Արդ՝ զի զհակառակորդան մեր սիրելիս արար, ե եւ զմեզ ի գթութիւն ե յողորմութիւն. առաջի ամենայն զերչաց մերոց. որ զտիրասպանունս ե զհրեայս, որք կարծէին չարչարուեալս սորա զարձեալ թշնամանել զայն, որ չարչարեցաւ վասն մեր, զտէրն մեր Յիսուս Քրիստոս՝ զճմարիտ Աստուածն մեր, որք համարձակեալ պատերազմեցան իսկ, ե աշրեցին զպատուական տեղիս զայն՝ հաճեցաւ Աստուծոյ մարդասիրութիւնն զնոսա աւարացուցանել ի քաղաքէն սրբոյ իւրմէ Երուսաղէմէ: Որք կամէին բնակիչ առնել ինքեանց՝ լսեն բովանդակ չրեակել, ե տեսանել ոչ արժանաւորին, ե զպատուական ե զերկրպագու չարչարանս ե զտուրք ե զկենսընկալ նորա զերեզմանս ե զսուրբ Գողգոթայ մեծափառ նորոգեալ ճանաչեն, հասուցեալ զիւրաքանչիւր փառայ՝ բազում վերագրութեամբ զաստուածային պաշտանն ե զմայր եկեղեցեաց Սիւանն, ե զվերացումն նորա ե միանգամայն իսկ ասացեալ զամենայն երկրպագու տեղիս նորագեալ լսելով՝ նախանձարերին, ոչ ի բարի, այլ ի բնիկ նախան-
- 10
- 15
- 20
- 25
- 30

5 Լ. Ա. 9 քանդի ոչ, Ծ քանի
 ոչ: Թվում ե ուղղելի՝ քանիսին

6 9 զմեզ, փիւզ մեզ

14 Բու. տեքնէին

25 ՎԱւարացուցանել: Թվում ե

ազգազգած բոս, թերեւ
 ուղղելի՝ աւարացուցանել

25 Ա ի քաղաքէ իւրոյ սրբոյ

31 Ա սին

35 Ա նախանձ, փիւզ նախանձ

և անք հայրենական հաւր նոցա Կայնիւ Քանդի բազում անգամ
ջանացան, բազում կաշառաւք հրաման խնդրէին մտանել ի սուրբ
քաղաքն, և ոչ արժանաւորեցան՝ յԱստուծոյ արգելիս, որ և
խրատեաց զմեզ ոչ ըստ գործոց մերոց, այլ հայրական զթու-
5 թեամբն դարձուցանել զմեզ ի նորոգութիւնս
Բայց և զհրաշալիս գրելով ուրախ անենք զքեզ՝ ոչ յանի-
ւաւութենէ և կամ յաւերանաց շինութիւնք երկրպագու տեղեացս
այսոցիկ լինին, այլ ի ձեռն նորա ողորմութեանն, որով բարձրա-
ցոյց զաշխարհս և զառ ինքն ծանաթութիւն շնորհեացս
10 Արդ՝ որպէս ասացեալդ, թէ շնորհիւ Աստուծոյ ի ձեր սուրբ
աղաւթիցդ ամենայն եկեղեցիքս Նրուատղէմի կարգաւորեցան և
պաշտին Եւ խաղաղութիւն քաղաքիս Աստուծոյ և սորին շրջե-
կիս, որպէս դէմ յանդիման պատմեն ձեզ, որպէս տեսին զայս
քրիստոսաւէր մարդիկդ ձեր Քանդի պայս ամենայն ի նորին
15 յաւրինոցին՝ և միայն ի մարմնի են գործքն, 56 և ոչ ի մարդկայ-
ին ձեւաց է զաւրութիւն, զի մի պարծեացի ամենայն մարմին
առաջի նորայ՝ Քանդի նա է խաղաղութիւն մեր որ անէ զամե-
նայն, որպէս ասացեալդ է, և վերստին նորոգէ որպէս այժմիկ
մարտեալ՝ ուրախ արատցէ զմեզ ի ձեռն սուրբ աղաւթից ձերոց,
20 քարոզելով զսորին խաղաղութիւն սուրբ եկեղեցեացն և շնոր-
հելով մեզ հովիւս և առաջնորդս եկեղեցեաց նորա Եւ արկցէ
ի միտս ձեր՝ անգաղար աղաւթիով վասն մեր, և մի պա-
կասել ամենեւին ի յիշել և նայել ի մեզ և յաղքատս Նրուատղէմի,
և որ ինչ պիտոյ է՝ լնուլ Եւ եթէ հնար իցէ զաստուածաւէր ձեր
25 նախանձդ և ի ձեռնտուութիւն շինածոյ կենարար չարչարանացն
ձգել. զի և այսմ բարւոյ և փափագելի պարգեւաց հանդիպիմք
Բայց և զայս աղաչեմ զհայրական զձեր սրբութիւնդ և որք ընդ
ձեր սրբասուն եպիսկոպոսունսդ են, առաջի նոցա ընթեռնուլ
զթուղթդ]

3 Աստուծոյ	19 «Մարտեալ» թվում և աղա-
4 Մի որ. խրատեաց, Միւս 22	վազված բառ
խրատեաց, Այսպես ուղղել	23 ՏՏ և է նայել
և Մ, զորէն և 9	29 Ա զթուլիս

Գ Լ Ո Ի Խ Լ Դ

Նա այս է բարոյն պատասխանի՝ զոր գրեցին Հայր յՄարտադէմ առ
Թոգեստոս:

2այն աւետարտ փողոյ մեծի ի հրեշտակէն գոչէ մեզ ի ձեռն
5 Թղթոյն աշտորիկ, հասելոյ յաստուածակերտ քաղաքէ աշտի, որ
աւետարանէ մեզ ուրախութիւն մեծ:

Վասն աշտորիկ ուրախ լինին երկինք, և ցնծացէ երկիր,
զուարճացին փառաք իւրովք եկեղեցի և մանկունք իւր: Եւ
արդ՝ մեք ամենեքեան միաբան գոչմամբ գրեշտակական փառա-
10 բանութիւնսն երգեսցուք ասելով. «Փառք ի բարձունս Աստու-
ծոյ, և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

ԳՍ.ՅՍ.ՍԽԱՆԻՆ. 8. ԼՈՒՄԻՏԱՍՅԵ

Ենորհին Աստուծոյ յեպիսկոպոսապետէ և յամենայն ուղ-
ղափառ եպիսկոպոսաց և յերիցանցս, ի սարկաւաղացս և ի
15 զպրացս, և յամենայն ժողովրդոց աշխարհիս Հայոց՝ ձեզ նեղե-
լոցդ և վշտացելոց, զանալից եղելոցդ և խրատելոցդ, յանձանձե-
լոց և զղուելոց, սիրոփելոցդ և սիրեցելոցդ ի Հաւրէն երկնաւորէ:
Նղբայր պատուական Մոզեստոս, քեզ և ամենայն եկեղեցեացդ
որ յերուտաղէմի. շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, և
20 ռէրն Աստուծոյ և խաղաղութիւն բազմացել:

Նախ՝ զոհոնամք զԱստուծոյ ի վերայ միեմարութեանց,
ընդ որ միեմարեաց զմեզ, որպէս զի և զուք կարող լինիջիք
միեմարել զայնոսիկ, որ յամենայն նեղութիւնս իցինո Զի ահա-
ւասիկ մեք իսկ ի ձեռն միեմարութեան ձերոյ որ եհա առ մեզ
25 միեմարեացք ի բազում վշտացս և ի սասաիկ նեղութեանցս և ի
զառն կտտանացս որ նեղէ զմեզ: Այլ հաւատարիմ է Աստուած,
որ սիրոփեաց հայրական գթութեամբ իւրով զամենայն հաւատ

3 Վերնադիրը բնադրին և
2 և, Մի որ առ կայր, փիկ առ
Մոզեստոս
12 Ա յիք՝ 8. (Գումիտասոյ)

13 Ա եպիսկոպոսապետէ
21 ՏՏ զոհոնամ
25 Ա միեմարեաց
27 և հաւատ, փիկ հաւատ

- հաւատացելոց ի ձեռն այդորիկ, և մոռացոյց զտրամուծիւնս մեր
 ուրախութեամբ լրոյս և ձայնիւ շինութեամբդ և խաղաղութեամբդ
 նրուսաղէմի։ Բայց առ մեզ դռնէ մարդարէն, աղաղակէ և ասէ.
 ԵՄխիթարեցէ՛ք, մխիթարեցէ՛ք զժողովուրդ իմ, ասէ Աստուած,
 5 քահանայքդ խաւսեցործւք ի սիրտ նրուսաղէմի, և մխիթարեցէ՛ք
 զզա, զի լի եղև տառապանաւքս։ Իբրև յորդիս մատուցեալ է ի
 ձեզ Աստուած, քանզի «զոր սիրէ տէր խրատէ»։ Ը իցէ որդի, զոր
 ոչ խառանցէ զնա հայր իւր. զի նորա վերաւքն բժշկեցաք, և
 խրատ խաղաղութեան մերոյ ի նմա։ Բայց զիտեմ դու զայս,
 10 ո՞վ եղբայր սիրելի, ո՞չ սակաւ մխիթարութիւն զործէին և մերայ
 ժողովրդեանս յերթեակէ այդ ճանապարհացդ։ Նախ՝ զի մոռա-
 նային զիշտս և զտրամուծիւն աշխարհիս։ Նրկորդ՝ զի սրբէին
 զմեզս իւրեանց ի ձեռն ապաշխարութեան, պահոց և ողորմու-
 թեան, աքնութեամբ զտիւ և զգիշեր անհանդիստ ուղեղնացու-
 15 թեամբ։ Նրբորդ՝ զի մկրտէին զմարմինս ի ջուր սրբութեան ի
 Յորդանանու յորձանսն հրաղէզս, որ յամենայն տիեզերս աղբե-
րացաւ շնորհքն աստուածային. զի սփռէին զանձուկ սրտի
 զաստուածամերձ Մինէական լերամբն առ Մովսիսիւ, զմարդա-
 բնականն սանկով ընկեր ցընկեր, յեկեղեցիս ի լճան տեառն
 20 և ի տունն Աստուծոյ Յակովբայ։ Այլ ևս զմեծագոյնն ասացուք
 ըստ առաքելական ձայնի—զմատչելն ի Միտքի լեառն և ի քաղաք
 Աստուծոյ կենդանւոյ, յերուսաղէմ յերկինս, և ի բիւրաւոր բա-
 նակս հրեշտակաց և յեկեղեցիս անդրանկաց գրեցոյն յերկինս,
 զաթոռն Աստուծոյ ի վերայ երկրի տեսանել, և զդատաւորն
 25 ամենեցուն զԱստուած տեսանելով բազմեալ յերկնաւոր խորանի
 և ի վերայ աստուածընկալ խորսխիդ։ Իսկ իբրև դարձոյց
 բարձրեալն գերեսս իւր ի մէնջ, և նայեցաւ ի մեզ խեթիւ
 արեգակնն՝ և հետեւելով հետեցան անձինք մեր և խոս-
 վիցաք։ Տեսան Աստուծոյ մերում արդարութիւն, և մեր ամաւթ
 30 երեսացւ։ Այլ յորժամ կամեցաւ Աստուծոյ մարդասիրութիւնն ի
 վերայ կործանելոցդ սասակութեամբ առնել բարեբարութեամբ
 քաղցրութիւն, ընկզմեցաք ի խորութիւն բարձրութեան։ Եւ ի
 վերայ այսր աւետաբեր նկարագրի՝ անդադար բերանովք ան-
 հանդիստ լիզուաւք զՏէր մեր Յիսուս Բրիստոս, զբարեբարն և

8 Ա և եթէ (խրատ)

16 Ա աղբերացաւ

19 ԶԱ չիք՝ տակով, Այսպէս
լրացրել և Մ.27 Ա, Մ'ի ուր. ի քեզ խեթիւ չ
այսպէս28 Բայ. արեգակնն. ուղեցէնք՝
արեգակնն

զաքանչեւագործն և զպարզեաբաշխն աւրնեացուք. զի թէպէտ և
ախտէա ահագին և սաստիկ էր սուբակոթ և հրակէզ աւրն զա-
սաստանին քոյ, այլ ձառտարապետն իմաստուն, որ ընտրեացն
և սրբեաց զձեզ որպէս ոսկի ի բոլմ' նոյն նորոգեսցէ՝ վերստին
5 զփառս իւր ի վերայ քոյ, և զարմանալի արասցէ միեթարութիւն
իւր ի քեզ:

Այլ զայս ամենայն սիրելին մեր յառաջագոյն պատմեաց
մեզ յասելն իւրում զէջ Սիոնի յերթօր, — զանկեալդ ի ձեռս
աւաղակացն, որք մերկացուցին զգա, և վէրս ի վերայ վիրաց
10 եղեալ թողին կիսամաւ և գնացին. տեսանել զգա քահանայից
նանապարհորդաց՝ և առնել զանց. տեսանել զգա հրէից և զեւտա-
ցաց և ամբարշտաց՝ և առնել զանց. զիւրովին ճանապարհորդելդ,
զթուօթեամբդ մատչելդ, պատել զվէր դորս և արկանել ի զա
զողորմութիւն և զարիւն կենարար: Ասէ ձեթ և գինի արկանել
15 ի վերայ դորս և պառնել՝ զի բժշկեսցի: Որ ահաւասիկ տեսան
ածեալ ի պանդոկի յայդ և զարմանել և գերիս դահեկանս, որ
ես ի պանդոկապետն ահաւասիկ դու ունիս ի ձեռս քոյ զարման
առասու Յւ. զոր ինչ ծախեսցես ի դա՝ ի միւսանգամ գալտեսանն
հասուացէ քեզ:

20 Մի այնուհետև ողբացէ Սիւն, և մի զգեցցի սուգ նրու-
սադէմ, քանզի աւաղիկ եկեալ հասեալ է արքայն Դրիտոտո
փրկել և միեթարել. այլ պսակ միեթարութեան քո ի ծաղկացու
չարչարանաց նորա բոլորի, և մահ նորա թագ միեթարութեան
եղիցի ի վերայ զլիոյ քոյ: Յոյժ հաշէին և մաշէին շարքդ որդիքդ

25 հրէից, ով սիրելի, զի ծառքդ քրիստոսեանք, զորս հատին տա-
պարաւք կատաղութեամբն իւրեանց ի ձեռն անմիտ փայտա-
հարաց՝ ահաւաղիկ արձակեցին շառաւիղք և բաղմացան: Եւ
եղից զգա բարձրեալն ձեթնեաւք և արմաւենեաւք, զոր խաչա-
հանուացդ մանկունք և տեսանել անգամ մի արժանաւորեցին:

30 Բայց զուք, եղբարք, ըստ առաքելոյ ձայնին՝ ողջ լերուք ի
Տէր, հաստատուն կացէք, միեթարեցարեւք, միարան լերուք,
խաղաղութիւն արարէք, և Աստուած խաղաղութեանց և սիրոյ
եղիցի ընդ ձեզ. ամէն:

3 Ա հրադէզ
7 Ա այն, փիկ մեր
15 Ա բժշկեսցէ
15 Հ հետան, փիկ տեսան: Ատե-
ռան: Թ՛վի ուղղելի՝ տեսանի

17 Ա ունիս դու
24 Ա մարշէին, փիկ մաշէին
27 Ա ահաւասիկ
29 Ա մանկունս
30 Ա դու

ԵՐԱՅԱՄԸ ՏԱՃԽԵՐԻՑ ՀԱԽԻՄԻՄԵԱՅ

8 Ա չիք՝ երևեցաւ
10 Ա մաքմեայ
18 Ա յազգէն
25 ՏՏ որտե՞րն
28 ՏՏ ի կայանն

Գ Լ Ո Ւ Խ Լ Զ

Գալ Խոռեմայ առնալ զԿոստանդնուպոլիս. ողորմմէ Հերակլի. Խոռեմայ ի Խոստոմայ՝ առնալ զհաղաքն Ի նաւամաքի բեկանի զաւարտիւն Պարսիցի ժպիրի Խոստոմայ Խոստոմայ առ Հերակլի Նըստացանի Հերակլի զԿոստանդին յարաւ քաղաքաւորեանն եւ զնալ ի Խոստոմայ Խոստոմայ առնալ ի Հայո եւ առնալ զՊարսիս, զՆախնական եւ զԳաւնական Հաստանի Խոռեմայ ի վերայ Հերակլի ճաշար օտարմանմէ Հերակլի եւ Կոստոմայ զՊարսիս մասն առ մասն:

10 Եւ եղև յայնմ ժամանակի զիմեաց զնաց Խոռեմայ զաւարտիւն ի Պարսիցի, եւ զնախնական զնալ յայնմ Քիւզանդիայ, եւ ի խոզրէր անցանել եւ զերել զքաղաքն Թաղաւորանիստոյ

Արդ իբրև Խոռեմայ ի Պարսիցի զնալ, որ եկն ի Կործանել զԹաղաւորութիւն Նորայ՝ աղամայ բարեկամանայ եւ մեծարել զնոսա իբրև զվաստակաւորս եւ զսիրելի հիւրս. եւ ընդ առաջ Նորայ առաւարտաւորս, եւ առաւ զաւարտարին եւ ի խոսանացն մեծամեծ ընծայալ Եւ բաշխէր զաւարացն հոգա, եւ ճաշ եւ ընթրիս ամենայն զաւարացն մինչև ցեւթն տար. եւ ինքն նստեալ ի վերայ նստաւ կայր ի մէջ ծովուն եւ խաւէր ընդ նոսա աշակէս. զԶինչ կամիք առնել, կամ է՞ր եկիք ի տեղիս յայտ. միթէ զծով իբրև զքաղաք համարիք՝ մարտնչել ընդ նմա Կարող է Աստուած, եթէ կամի, ցամաքեցուցանել զսա առաջի ձեր. բայց զգոյշ լերուք՝ զուցէ ոչ հաճեցի Աստուած եւ խոզրէրսցէ ի ձէնչ զվրէժ անդունդք ծովուն Բանդի ոչ եթէ վասն աստուածապաշտութեան ձերոյ եւ ձեր յաղթութիւն, այլ վասն մերոյ անաւրէնութեան. մեղք մեր արարին զայտ, եւ ոչ թէ քաջութիւն ձերոյ Եւ կամ զԶինչ խոզրէ Թաղաւորն ձեր յինչն, որ ոչ առնէ ընդ իս զհաշտութիւն. բառնալ կամիցի զԹաղաւորութիւնս իմ. մի ջանացի, քանզի զսա Աստուծոյ հաստատեալ է, եւ բառնալ զսա ոչ ոք կարէ, բայց եթէ յԱստուծոյ աշակէս ինչ թուեցի, կամք Աստուծոյ կատարեցիս Եւ կամ ասիցէ, եթէ ես նստուցիք ձեր Թաղաւոր. արասցէ զնալ եւ կամեցի, եւ մեք ընդունիմք և յի

10 Ա. Բիւզանդիայ
11 Ա. իբրև՝ եւ (զերել)
12 Ա. եկն կործանել

22, Մ չեք՝ Զ (ջանացի):
Այսպէս ուղղել եւ Գ ըստ
Թաղաւոր. Արծր.

գընն արեան Մարկոյ խնդրիցէ. խնդրեաց Աստուած ի ձեռաց Փոկասայ ի ձեռն հաւր իմոյ Հերակղի. այլ տակաւին ծարաւի է արիւնարարութեամբ. Մինչև յԵրբ ոչ յազնացի արեամբ. յմիթէ թչ կարէին Հոռոմք սպանանել զնա և բառնալ զտէրութիւնն. Պար-
 5 սից, յորժամ ետ զնա Աստուած ի ձեռս մեր. այլ արար ի վերայ նորա ողորմութիւն. Եւ ետ զնոյն խնդրեմ ի նմանէ, զհաշտու-
 թիւն և զտէր. Եւս ետ խնդրեմ ի ձէնջ երիտ ինչս, և լուարուք ինձ. ի բաց արարէք յաշխարհէս զուր և զուր և զզերութիւն. և յերեցունցդ աւգուտ զտանէք, զի ոչ դուք նուազիք ի սովու,
 10 և ոչ հարկք արքունի կորնչիցին. Եւ ետ առաքեմ աւատիկ թա-
 ցաւորի ձերոյ հրովարտակ պատարագաւք, խնդրել ի նմանէ զհաշտութիւն և ընդ իս զխաղաղութիւնն. Եւ նոցա ընկալիալ զրնծայսն՝ հաւանեցան առնել ըստ խնդրոյ նորա:

Իսկ թագաւորն Պարսից ընդունէր զպատարագան բերեալ ի
 15 կայսերէ, և զհրեշտակոն անդրէն ոչ արձակէր. Եւ հրաման տայր զարաց իւրոց նաւաւք անցանել ի Բելզանդիա. Եւ կազմեալ նաւ սկսաւ պատրաստել նաւամարտութիւն ընդ Բելզանդիայ. Եւ
 ելին ընդ առաջ նորա ի Բելզանդիոյ զաւրք նաւամարտիկ. Եւ
 եղև պատերազմ ի մէջ ծովուն, ուստի դարձան ամաթով զաւրքն
 20 Պարսից. և կորեան Դ հազար մարդ նաւաւք, և այլ ոչ ետ հա-
 մարձակեցան ի նոյն դործ:

Եւ եղև յամի ԼԴ-երորդի Խոսրովայ արքայի՝ գրէ առ Երակղոս հրովարտակ այսպէս.—

«Աստուածոց պատուական և ամենայն երկրի տէր և թա-
 25 ցաւոր և ծնունդ մեծի Արամազդայ Խոսրով՝ առ Երակղէս անմիտ
 և անպիտան ծառայդ մեր:

«Ոչ կամեցեալ տալ զանձն ի ծառայութիւն մեզ, այլ տէր
 և թագաւոր կոչես զքեզ. և զանձ իմ որ առ քեզ են, ծախես, և
 զծառայս իմ պատրես, և զզաւրս աւազակաց ժողովեալ՝ չառս-
 30 ինձ հանգչել. Ոչ ապաքէն սպառեցի զԵոյնս. Եւ դու առես
 վստահանալ յԱստուածն քոյ. վասն է՞ր ոչ վրկեցին զհեաարիա
 և զԵրուսաղէմ և Աղեքսանդրիա մեծ ի ձեռաց իմոց. Միթէ և
այժմ թչ գիտես, եթէ զծով և զցամաք ինձ հնազանդեցուցի. իսկ

9 Ա յերկրունցդ

10 և կոբչիւսց են

10 Ա աւար

15 Բաւ. անդէն. Ուղղեցինք՝

անգըն

16 Ա ընդ բելզանդիայ

27 ՏՏ չիք՝ մեդ

32 Ա Աղէկաւորիայ

- արդ՝ միայն զԿոստանդնուպուլիս ոչ կարացից բրելլ Բայց արդ՝
 գամենայն յանցանս Թողում քեզ. արբի, մո զկին քո և զորդիս
 և եկ այսր։ Եւ տաց քեզ ազարակս, այգիս և ձիթենիս, որով
 կեցցես. և մեք սիրով նայեսցուք ի քեզ։ Մի խաբեսցէ զքեզ
 5 սնտոյ յոյսն ձեր. զի Քրիստոսն այն, որ վանձն իւր ոչ կարաց
 ապրեցուցանել ի Հրէիցն, այլ սպանին կապեալ զփայտէ, զքեզ
 զիմադ կարէ ապրեցուցանել ի ձեռաց իմոց։ Զի եթէ իջանիցես
 յանդունդս ծովու՝ ձգեցից զձեռն իմ և ըմբռնեցից զքեց. և ապա
 տեսցես զիս, որպէս դու ոչ կամիցիս։
- 10 Եւ առեալ Նրակլի կայսեր զհրովարտակն՝ հրամայեաց
 ընթեռնուլ առաջի հայրապետին և մեծամեծացն։ Եւ մտեալ ի
 տունն Աստուծոյ՝ տարածեցին զհրովարտակն առաջի սրբոյ
 սեղանոյն. անկան ի վերայ երեսաց իւրեանց յերկիր առաջի
 Տեառն, և լացին դառնապէս, զի տեսցէ զնախատինսն, զոր նա-
 15 խատեցին զնա թշնամիք նորա։
- Հաճոյ Թուեցաւ Նրակլի և ամենայն սինկղիստոսացն նստու-
 ցանել զԿոստանդուս որդի Նրակլի յաթոս Թագաւորութեանն, որ
 էր մանուկ փոքր։ Եւ Նրակլի հանդերձեալ զինքն՝ առնուլ զկին
 իւր և զնալ ընդ արեւելս. ապա յայնժամ աւելի ևս հաստատեցին
 20 զԿոստանդին ի պատիւ Թագաւորութեան ըստ առաջին բանին։
- Ապա պատրաստեցաւ Նրակլու կնաւն և ներքինեալն և
 իշխանաւք զրաւն և արար զգատին ի Կոստանդնուպուլիս, և
 զայգոյ գատինն նաւեաց ի ծով ի Քաղկեդոն։ Հրաման տայ դաւ-
 րաց իւրոց ժողովել ի Կեսարիա Կապադովկացոց. և ինքն չու
 25 արարեալ ի Քաղկեդոնէ՝ եկն ի Կեսարիա, և եհար զխորան իւր
 ի մէջ բանակին, և կոչել հրամայեաց գամենայն զաւրան և ըն-
 թեռնուլ զհրովարտակն առաջի նոցա, և պատմէր զելն իւր առ
 նոսա։ Իսկ զաւրն թէպէտ և ընդ բանսն խոռվեցան, սակայն
 խնդութեամբ ուրախ եղին ի վերայ գալստեան նորա։ Աւրճնեցին
 30 նմա զյաղթութիւնն և ասեմ. «Ամենայն ուրեք ձեռք և երթիցես»
ընդ քեզ եմք ի կալ և ի մեռանել. և եղիցին ամենայն թշնամիք
քոյ հոգ ի ներքոյ ստից քոց, ի ջնջել զնոսս յերեսաց երկրէ
տեառն Աստուծոյ մերոյ, և ի բառնալ զնախատինս իւր ի մարդ-

5 Ա չէք՝ զի

5 Ա չէք՝ փոք

16 Ա «Ընկղիստոսացն»

18 ՅՅ յարեւելս, փիւկ ընդ արեւելս

23 Բոյ. դատինն։ Ուղղեցինք
այսպէս

31 «Գալ»՝ ևւղղելի կեալ

կանէալ: Ջուեաց զնաց Երակլոս ձի հազարաւ, և երթեալ ի զուռն-
թազաւորին Պարսից, և հանապա՛րէ կալեալ ընդ կողմանս հիւսի-
սոյ՝ ել զէպ ուղիղ ի Կարենոյ քաղաք, և հասեալ ի Դուին ալբա-
րատեան՝ աւերէ՝ զնա և զնախնաւանս: Եւ դիմեալ ի Դանձակ
5 Ատրպատականի՝ կործանէ և զքաղինս Հրատին մեծի, որում՝
Վշապան⁵⁷ կոչէին:

Եւ արքայ Սոսրով փութացանէր զգաւրս իւր որ ի Յու-
նաց զաւառին, զի հասցէ նմա յաւանականութիւն: Զի թէպէտ և
կազմեցին զերթվարս իւր, և ետ ի ձեռս Շահնայ ապառաճապա-
10 տի, այլ նուազ էր զաւրն և չկարացին ունել զզէմ. զգանձս իւր
ամբարէր ի Տիգրոն, և ինքն պատրաստէր ի փախուստ:

Իսկ զաւրն Պարսից փութանակի հասանէին ի Մրծուին⁵⁸
Աղդ լինի Երակլի կայսեր, եթէ եկն Սոսեամ ի Մրծուին. առնու-
զգաւրս իւր և զերութիւն, և դառնայ առ ամուր աշխարհաւն Մա-
15 րաց. զայ հասանէ ի Փայտակարան: Աղդ եղև Սոսրովու, եթէ
դարձաւ Երակլոս և եհաս ի Փայտակարան, և կամի ընդ Աղուանս-
անցանել ի Վիրս. հրաման ետ զաւրավարի իւրոյ Շահր Վարա-
զայ, զի դառաջի կալցի: Եւ նա փութով հասանէ յԱլբարատ, և
անցանէ ի Դարզման ընդզէմ նորա, և բանակի ի միւս Տիգրա-
20 նակերտի յանդիման նորա: Եւ Շահնայ կոտա հասեալ բանակեցաւ
ի թիկանց Երակլի ի Տիգրանակերտ աւանի: Եւ էին սոքա աստի,
և նոքա անտի բանակեալ: Եւ բանակն Երակլի ի մէջ նոցա եր-
կացունց⁵⁹:

Երբև ետես Երակլոս, եթէ ի մէջ արկին զնա՝ զարձաւ ի-
25 վերայ զաւրուն՝ որ ի թիկանց կողմանէ, հապճեպ զաւրութեամբ
եհար զնա և խորակեաց և զնաց ընդ Մղուկս. և թափեցաւ
ընդ լեռնակողմն ի դաշտն Նախնուանն ի ձմերան փամանակի:

Եւ Շահր Վարազ զաւրու իւրով, և Շահնայ իւրովք զերծե-
լովք զնացին զհետ նորա: Իսկ նորա հասեալ անցանէ ընդ հուն-
30 զետոյն Երասխայ՝ յաւանն Վրնջուինս և բանակի յանդաստանս
նորա: Եւ զաւրն Պարսից հասեալ՝ ոչ կարացին անցանել զգետովն
այն աւրն: Հասանէ Երակլոս ի Բազրեանդ և անցանէ յԱղահու-
նիս, և բանակի ի գեւղն, որ կոչի Հրճմունք⁶⁰: Եւ Շահր Վարազ

1 Միջանկալ խոսք ե թվում տե
երթեալ ի զուռն թազաւորին
Պարսից կամ աղավաղման:

5 Բալ. արի գիւղն այն, փիւկ.
Ատրպատական: Աղղեցիկնք
այդդն ըստ Թովմ. Արճը.

6 Ա զլառողն: Այլ 22 զլնաղն:
9 ուղղում և զլնաղն: Տեա-
ծանք. 67

18 Ա յարայրեաա

25 33 հապճեպ

27 Ա լեռանակողմն

սփռէր զգաւրս իւր յԱղիո՞վիտ, և ինքն այրընտիր եղեալ Զ հա-
զար սպառազինաց վառելոց քաջաց, և երթեալ նստի յԱրճէշ գա-
ւառի՝ դարանամուտ լինել, որպէս զի ի մէջ զիշերի անկցի ի
վերայ բանակին Երակլի:

- 5 Ազգ լինի Երակլի ի ձեռն արձակելոյ լրտեսաց, եթէ եկն
Խոռեամ և դարանակալ եղև ի վերայ քոյ: Յայնժամ Երակլոս
ըստ նմին աւերինակի այրընտիր և ձիընտիր առնէ, և յարձակի
ի վերայ նորա քսան հազարաւ, և հասեալ յԱղի, գտանէ զարսն
յառաջմարտիկ հինգ հարիւր: Նախ՝ զնոսա կոտորէ, և զերծեալ մի
10 ոմն ի հեծելոցն՝ հասեալ ի յԱրճէշ գոյժ արկանէ Խոռեամ, եթէ
հասեալ է Թշնամին ի վերայ քոյ, և կոտորեցին զգաւրն պէշուպա 58
յԱղի: Եւ բարկացաւ Խոռեամ ի վերայ առնն, հրամայեաց զնա
կապել ոտիւք և ձեռուք, և տսէ՝ «Երակլոս ցարդ յինէն փախըս-
տական զնայր. արդ եկեալ հասեալ եմ այսպիսի զինու, և նա
15 յինէն ծշ փախեցէ: Այն-ինչ նորա բանքն ի բերան էին, և նոքա
հասին ստիպով ի վերայ նոցա, պատեցին զքաղաքն երեք կուսէ,
և բորբոքեցին զնա հուրը և այրեցին զգաւրացն բազմութիւնս:
Եւ եթէ ելանէր ոք ի նմանէն ի փախուստ՝ անդէն ըմբռնեալ
սատակէին. և ապրեալ ոչ ոք ել ի նոցանէ, զի զստինեալն եկեր
20 հուր աւազին: Բայց Շահր Վարազ զերծաւ՝ նստեալ ի վերայ
նուառտ երթվարի. այնպէս զերծեալ զնաց առ զաւրս իւր, զոր
ժողովեալ էր յԱղիո՞վիտ զաւառի:

- Իսկ Երակլոս առ զաւար և զկապուտ բանակի նոցա, դար-
ձաւ յաղթութեամբ մեծաւ, և երթեալ հասանէ ի կողմանս Կեսա-
25 րացոց. և Շահր Վարազ զնաց զհեռ նորա փութանակի] Բայց
զի յաւգնեալ էր զաւրն՝ խորհեցաւ բազում գաւառս ընդ մէջ
արկանել, զի հանգիցէ զաւրն և կաղմիցի, և գնացեալ ի կողմանս
Ասիացոց՝ անդ սփռեալ զազարեցին:

- Յայնժամ առեալ Երակլի զգաւրս իւր՝ դարձաւ յերկիրն
30 Հայոց, անցեալ ընդ Շիրակ հասանէ ի հուն գետոյն Երասխայ, և
անց ընդ գետուն առ Վարդանակերտաւն աւանու, երթեալ Թա-
փեցաւ ի Գոգովիտ գաւառս: Եւ Ռոմիկ Վահանայ և զաւրուն Պար-
սից կարծեցեալ զնոսա փախստական գնալ, Իսկ նորա ճանապարհ

1 58 յԱղիովիտ

8 Վարսն, Թերևս ուղղելի՝
զաւրն:

9 Մ քաջամարտիկ, փիկ յաւաջ-

մարտիկ

18 Ա Գ-կուտի

20 Ա զերծեաւ

24 Ա չէր՝ և

- կալեալ ի Հեր և ի Զարեանդ գաւառ, զէպ ուղիղ ի Տիգրոն ի վերայ Խոսրովուս և ի բրբն միջամուխ եղև ի սահմանս Ատրպատական գաւառի՝ ապա ուրեմն լուր եղև Ռոճ Վեհանայ. առ զգաւս իւր և զնաց զհետ նորա ի Նախնական քաղաքն Այնպէս փութով
- 5 զնացեալ գաիւ և զգիշեր, մինչև չոգաւ եհառ մերձ ի նաւ և նորա անկեալ յայնկոյս լերինն. Զարասպայ յերկիրն Ատրեստանայց, և աքա պնդեցան զհետ նորա. և նոցա դարձեալ ընդ արևմուտս՝ զնաց ի Նինուէ. և եկեալ այլ գաւառս յաւքնականութիւն Ռոճ Վեհանայ ի գրանէ արքային՝ արք ընտիրք յամենայն
- 10 Թագաւորութենէն, և խառնեալ ի միմեանս՝ հետամուտ եղին Երակլի իսկ Երակլոս ձգեաց զնոսա մինչև ի դաշտն Նինուէի, և դարձ հտ ի վերայ նոցա սասաիկ գաւառութեամբ. և էր բալ ի վերայ դաշտին. և ոչ զիտացին գաւառն Պարսից զգարձն Երակլին ի վերայ նոցա, մինչև երթեալ խառնեցան ընդ միմեանս ։
- 15 Ը և այնպէս գաւառացոյց տէր զոգորմութիւն իւր ի վերայ Երակլի յաւուր յայնմիկ, մինչև հարեալ սատակեցին զնոսա իրբև զայլ մի և սպանին զգաւաւարն ի պատերազմիս և զմնացեալսն շրջափակ արարեալ՝ կամէին զամենեանս սատակել իսկ նոցա բոլոր կալեալ, թէ «Աստուածատէր և բարեբար տէր, արև ի վերայ մեր ոգորմութիւն, թէպէտ և չեմք արժանի ոգորմութեանս, Յայնժամ Երակլոս հրամայեաց զնոսա թողուլ ի բաց, և ինքն հրամայեաց Երակլոս սապատակել ի վերայ երկրին։

Գ Լ Ո Ւ Խ Լ Է .

- Փախուտ խոստովայ ի Վեհկաւառ. առնուլ Հերակլի զՅիգրան և
- 25 զառնուլ յԱտրպատական. Դարձ խոստովայ անդրճն ի Յիգրան և սպանումն. Թագաւորիկ որդոյ ճորտ Կաւառայ և առնել հառաւրիւն բնդ Հերակլի, անկեալ երկամեջիւսոց զհիմ ստեմանս իւրեանց ։

- Իսկ Խոսրով արքայ Պարսից փախստական զնաց՝ անցանել ընդ Դիւաթ գետաւ ի Վեհկաւառ, հասեալ զարս նաւակամբջայն և Երակլոս հասեալ բանակեցաւ առ գաւառ մերձ Տիգրոն քաղաքի, և այլեաց զամենայն ապարանս Թագաւորական շուրջ զքաղա-
- 30

- 1 Ա ի զիգրան
4 Ա ի նախնական
9 ՏՏ ընտիր
20 ՏՏ չիք՝ թէպէտ և չեմք ար-

- մանի ոգորմութեան
30 Գ գաւառ, փիւղ գաւառ
30 Ա ի Խոսրոն

քան: Եւ ինքն զնաց յԱտրպտտական ամենայն աղիւիւն և բազմաթեամբ իւրով, զի էին միեւջ Նրակլի զարնուրեալ ի Թոռեմայ: Իսկ Թոռեմ ոչ եկն Խոսրով արքայի յաւանականութիւն, այլ եկաց անդէն ուր էրն ի կողմանս արեւմտից: Եւ Խոսրով արքայ զարձաւ:

5 անդրէն ի տուն, և հրամայեաց կազմել զնաւականութիւնս: Բայց տիկնայքն և որդիքն արքայի և զանձն և ախուռն արքունի երկվարացն էին ի Վեհկաւաւ:

Ակաւա Խոսրով ժողովել զմնացեալ նախարարն. և խաւսէր ընդ նոսա անգիրն դատաստանաւք, եթէ «Ընդէ՞ր և ոչ դուք մեռաբուք ի տեղւոյ՞ պատերազմին, զան եթէ գալ առ իս. արդեօք զԽոսրով մեռեալ կարծէիք: Յայնժամ խորհուրդ միարանութեան ի մէջ առեալ ասեն. «Եթէպէտ ի թշնամեացն ապրեցաք, բայց ի ձեռաց դորա ոչ գոյ մեզ ապրել. այլ եկայք իմացուք ինչ:»

10 Եւ յայնժամ երդուան առ միմեանս, և զնացեալ ի գիշերի ընդ զմեռ ի Վեհկաւաւ, կալան զնա և կարգեցին ի վերայ նորա պահապանս. և Թագաւորեցուցին զԿաւատ զորդի նորա. նաև զերթվարոն որով եկեալ էր Խոսրով ի Տիգրոն՝ հանին զաղտաբար: Իսկ յորժամ եհաս զոյժ աղաղակին այսորիկ առ Խոսրով՝ ընդգոստուցեալ յաւէն՝ զարնուրեցաւ. խնդրեալ երթվար, և մտեալ յասպատանն ոչ գտին: Եւ արքայ Կաւատ եկն անց ամենայն զաւրաւքն իւրովք: Եւ արքայ Խոսրով յայլակերպս եղեալ եմուտ ի բուրաստանն արքունի, և մտեալ ընդ Թաւ Թփով ծաղկոցին՝ զաւղեալ զաղարեաց: Եւ եկեալ Կաւատ արքայ հրամայեաց խնդիր առնել, և զնացեալ ի բուրաստանն՝ գտին զնա. կալան զնա և ածին ի

20 զահլիւն անդր: Եւ հրամայեաց Կաւատ արքայ, և սղանին զնա: Եւ վասն որդւոցն Խոսրովու ասեն նախարարքն. «Ոչ է արժան ապրել նոցա. զի խռովութիւն յարուցանեն:» Եւ յայնժամ հրամայեալ արքայ Կաւատ, և սղանին զամենեանն ի միում ժամու արտն. և խնդրեաց յինքն զտիկնայս և զզանձս և զախոռ արքունի:

30 Ապա սկսաւ արքայ Կաւատ խորհուրդ առնել ընդ նախարարս Թագաւորութեանն իւրում, եթէ «Պարտ է հաշտութիւն առնել ընդ կայսեր, և ի բաց թողուլ զամենայն սահմանս Թագաւորութեան նորա. և ընդ ամենայն կողմանս հաշտութիւնս արասցուք: Եւ հաւանեցան միարանութեամբ առնել այնպէս:

25 Բոր. ածին զահլիւն անդր: Ուրդուս եկն այսպէս ըստ Թովմայ Արծրունու, ըստ ցուցման

Ս. Շաբանդի.—Ա. անար. փիլիսոփայ

20 Ա. զախոռ

Յայնժամ հրամայէ Կաւառ արքայ գրել առ Նրակլոս հրովարտակ
ողջութեւնի. և թողու ի բաց դամեանայն սահմանս նորաւ. Եւ ապա՝
աւանել նմա երգումն. ապա կնքել և տանել ընդ հրովարտակին.
արձակէ ղմիաշնան ոմն իշխան մեծամեծ ընծայիւք՝ հաստատել
5 զնա ի վերայ միաբանութեանն այնորիկի.]

Արդ՝ իբրև հետո Ռաշնայն և ետ աւետիս և մատոյց զհրո-
վարտակն, և կալաւ զառաջեաւ զընծայան՝ մեծապէս գահացան
ղԱստուծոյ Նրակլոս արքայ և ամենայն զաւրք իւր. Յայնժամ
հրաման ետ արքայ Նրակլոս արձակել ղբաղաւթիւն գերութեանն
10 և զուարն ամենայն ի բաց աւալ. Եւ գրէ կտակ աւրհնութեան, և
հաստատել խաղաղութիւն հանդերձ երդմամբ, և արձակէ ղոմն
յիւրոց զլիաւոր նախարարացն, որում անունն էր Յուստաթ,
հանդերձ մեծամեծ ընծայիւք.՝ Եւ ղմիաշնայն մեծարեալ ընու-
պատուական գանձիւք և արձակէ. Եւ իւր չոսեալ խաղաղութեամբ
15 զնաց ի տեղի իւր.

Եւ Յուստաթ երթեալ ընծայիւք առաջի Կաւառայ արքայի.
և մատուցանէ զհրովարտակն, և առաջի ունի զընծայան. Իսկ
արքայ Կաւառ խնդութեամբ ընկալաւ զնա. և զարձեալ վերստին
հաստատել առ նմա զբանս խաղաղութեան և սահմանացն հատե-
լոց երգմամբ հրովարտակաց. և կնքեալ ապա ըստ առաջին աւրի-
նակին ղՅուստաթ ըստ առաջին թաղաւորաց. Եւ յանգիման նորա
20 հրամայէ գրել առ Շահր Վարադ, զի ժողովեացէ զզաւրն և եկեացէ
տնցցէ յերկիրն Պարսից, և ի բաց թողցէ զսահմանս Յունաց.
Թէպէտ և նա ոչ կամեցաւ լսել հրամանին այնմիկի. Եւ ղՅուստաթ
25 արձակեցին լի գանձիւք, և զնաց:

4 Ա. ԱԿ. զբաւառն ոմն Այստեղ
և հետ ուղղեցինք աշտուկս:
6 Բաւ. աշտուկ և հետ՝ Ռաշն

աշ
10 Ա. ա՞մի ի բաց առ
21 Թերեւ ուղղելի՞ ընդ Յուստաթ

Գ Լ ՈՒՆ ԼԸ.

- Վարագաճիւրաց կաթգի մարզպան Հայաց: Կռակ յարու կարողիկո-
տարեան Քրիստափորի և զկթի Յորտ Եղբի Մահ Կաւառայ: Բազա-
ւարի Արատորի մանկան: Խոռեան բա խահրգայ և աւգնակամու-
5 բեամբ Հերակլի առնա զԹիւրան, սպանմնէ զԱրատոր և իմքն
բազաւորէ: զխայն աշտնակամ դարձուցանէ Յաւաց: Սպանումն
Խոռեան, Բազաւարի Բարայ զսեւ Խոռեան, Ազարմիդիտայ և
Որմիդի սակաւ ժամնակ և ապա Յազկերթի, արգաւ Կաւառայ,
Պառակտումն աշտնակամն Պարսից:
- 10 Եայնժամ կոչէ արքայ Կաւառ զՎարագաճիւրաց զորդի Մըմ-
բատայ Բազրատունայ Խորրով Շում կոչեցելոյ, և տայ նմա ղիշ-
խանութիւն տանուաւորութեանն. առնէ զնա մարզպան և արձակէ
ի Հայս հանդերձ ամենայն ընչիւք հայրենի, ղի զաշխարհն ի
շինութեան պահեցէ: Եւ իրրեւ եկն նա ի Հայս՝ խնդութեամբ
15 ընկալան զնա ամենայն աշխարհն Հայաստանեայց, Բայց ղի մե-
ռեալ էր երանելին Կոմիտաս կաթողիկոսն և կայր տեղին անհրա-
մանատար՝ Խորհուրդ առնէր ընդ ամենեկուն տեսանել զոմն ար-
ժանաւոր: Եայնժամ առաջադրութեամբ Թէոդորոսի Ռշտունեաց
տեսան ընտրեցին զոմն անապատական՝ յլարահամեան տանէ,
20 որում անուն էր Քրիստափոր: Զնա նստուցին կաթողիկոս, և նա
զիպաւ այր հարաւ և ամբարտաւան, որոյ լեզու իւր էր իրրեւ
զսուր սուսեր: Սա բազում խռովութիւն յուղեաց և արկ սուր ի
մէջ ընդ ասպետ և ընդ եղբայր իւր հարախաւուրթեամբ: Կալա-
սա քաթա հայրապետութեան ամս Բ. և յամին երբորդի եղին ի
25 վերայ նորա բաժրատանս Եւ ժողովեալ ամենայն եպիսկոպոս-
տունս և իշխանս արարին քննութիւն: Եւ եկեալ արք երկու ի
նորին ընտանեաց և վկայեցին զնմանէ առաջի ամենայն բազմու-
թեանս: Ապա արձակեալ զոմանս յեպիսկոպոսաց անտի՝ և առին
ի նմանէ զփակեղն պատուոյ քահանայապետութեան, և ընկեցին
30 զնա ի կարգէն և հաւածեցին զնա տնտրգանաւք: Եւ անդէն փու-
թանակի նստուցին կաթողիկոս զՍգր ի Նիզ գաւառէ, որ էր առ
երանելոյն Կոմիտասաւ կարգեալ փակակալ արքայն Գրիգորի. և

11 Ա շումբն, փեկ շում

12 Ա առաջադրութեամբ, փեկ
առաջադրութեամբ

սա էր այլ խոնարհ և հեզ, որ ոչ կամէր զոք ցատուցանել, և ոչ ելանէր ի բերանոյ նորա բան տղեղ:

5 Եւ քորդ՝ միշտեւ խորհէր Կաւատ արքայ շինութեան աշխարհի, և կամէր ընդ ամենայն կողմանս խաղաղութիւն առնել, կեցեալ ամիսս վեց՝ վախճանեցաւ Եւ նստուցին Թաղաւոր զԱրտաշէր զորդի նորա. և նա էր մանուկ տղայ: Յայնժամ Երակլոս գրէ առ Խոռեամ աշտէւ. «Կաւատ Թաղաւոր ձեր վախճանեցաւ, և քեզ հասեալ Թաղաւորութեանն այն աթոռ, և ես քեզ տամ զնա, և զաւակի քո յետ քո Եւ եթէ դուր պիտոյ է՝ արձակեցից յաւ-
10 զնականութիւն որչափ և պիտոյ իցէ քեզ, և ուխտ դիցուք ի մէջ իմ և ի մէջ քո հանդերձ երդամք, գրով և կնքով: Յայնժամ զԻւրաւ հաւանեալ Խոռեմայ՝ Թողու ի բաց զԱղեքսանգրիս, և առեալ զամենայն զաւրս իւր և ի մի վայր գումարեաց, և Թողեալ զնոսա, և ինքն սակաւուք զնաց ի ժամադիր տեղին, ուր ասացեալ էր նմա Նրակլի: Եւ տեսեալ զմիմեանս ուրախ լինէին մե-
15 ծապէս: Յայնժամ երդուաւ նմա Նրակլոս՝ տալ զԹաղաւորութիւնն զայն, և խոստանայ նոյնպէս որդւոց նորա յետ նորա, և զաւր որչափ և պիտոյ իցէ: Եւ խնդրէր առաջին խնդիր ի նմանէ՝ զխաչն կենսաբեր, զոր գերեաց նա յԵրուսաղէմէ: Յայնժամ երդուաւ նմա Խոռեմ և ասէ. «Յորժամ հասից ի դուռն արքունի՝ նոյն ժամայն խնդիր արարից խաչին և տաց բերել առ քեզ: Այլ և պայման սահման եզից՝ ցոր վայր և դու կամիցիս. արեւ վասն նորա հաս-
20 տատութիւն զրով և կնքով և ագիւն: Եւ խնդրեաց ի նմանէ զաւր սակաւ, և մեկնեցան զնացին ի միմեանց:»

25 Իսկ Խոռեմայ առեալ զբազմութիւն զաւրաց իւրոց՝ զնաց ի Տիգրոն, և հրաման տուեալ ոմանց՝ սպանին զտղայ Թաղաւորն զԱրտաշիր, և ինքն երթեալ նստաւ յաթոռ Թաղաւորութեանն. և զամենայն արս գլխաւորս, որ ի գրանն կամ որ ի զաւրսն, յորում ոչ կարէր վստահանալ՝ հրաման ետ սրով սատակել զնոսա, և զոյլս կապանաւք ետ տանել առ Երակլոս: Յայնժամ արձակեաց երա-
30 նելին Երակլոս արս հաւատարիմս առ Խոռեմ վասն տէրունեան խաչին: Եւ նորա խնդիր արարեալ մեծաւ ստիպով՝ հազիւ հազ ետ ցարսն, որ եկեալ էին: Եւ ոգտ առեալ զնացին Ժութանակի: Եւ ետ նոցա ինչս ոչ ստեաւ. և մեծաւ ուրախութեամբ արձակեաց զնոսա պատուով:

8 Ա աթոռայ

21 Ա տայ

23 Ա ի Թաղաւոր

30 Ա առ Երակլոս

34 ՏՏ սակաւ

- Իսկ Քոռեամ յառաք միում զգնեալ էր հանգերձ Թագաւորական և նստեալ ի վերայ երիվարի շրջէր ի մէջ զաւրուսն ցուցանել զինքն՝ յանկարծակի ի Թիկանց կուսէ յարձակեցան ի վերայ նորա, հարին զնա և ստատկեցին։ Եւ Թագաւորեցուցին զԲրորն,
- 5 զուսար Քոսրովայ, որ էր կին նորին, և հարգեցին հրամանատար ՏՅ ի գրանն զՔոռախ Որմիզդ, որ էր իշխան կողմանց Աւրպատականի։ Արդ՝ Քոռախն այն յղէ առ բամբրիչն, ասէ. «Եւր ինձ կին»։ և նորա յանձին կալեալ ասէ. «Եւ միով արամբ հասարակ գիշերի, և ետարարից զկամս քոս։ Եւ յարուցեալ հասարակ գիշերի միով մանկամբ զնաց. և իբրև եմուտ ի տանարն արքունի՝ յարեան ի վերայ նորա պահապանք գրանն և հարեալ սպանին զնա։ Եւ կալաւ
- 10 բամբրիչն զԹագաւորութիւն ամս Բ և մեռաւ։ Յետ նորա Քոսրով ոմն յազգէ Սասանայ։ Եւ յետ Քոսրովայ՝ Ագարմիդուխտ զուսար Քոսրովայ։ Եւ յետ սորա Որմիզդի, Թոռն Քոսրովայ, զոր խզզամա՛հ արարին զաւրն Քոռեմայ՝ Եւ ապա Թագաւորէ Յազկերտ որդի Կուստայ, Թոռն Քոսրովայ, որ ունէր զԹագաւորութիւնն։
- 15 Իրկիւղիւ, զի պատառեալ բաժանեցան զաւրք աշխարհին Պարսից՝ յերիս մասունս։ Զաւր մի այն՝ որ ի Պարսից և ի յարեւելից կողմանէ, և զաւր մի Քոռեմայ՝ որ յԱսորեստանեայց ի կողմանէ։
- 20 Եւ զաւր մի՝ որ յԱւրպատական կողմանէ։ Բայց Թագաւորութիւնն նորա էր ի Տիզբոն, և ամենեքին միարան պատուէին զնա միաբանութեամբ։ Ամէն։

1 ՏՏ զհանգերձ
 5 ՏՏ հրամանատար Տեա Ժա-
 նաթ. 59.
 7 Ա բամբրիչն (նաև հետա),
 12 Ա յետ սորա.

18 Ա այստեղ և հետո՝ Քոռեմայ
 21 Ա ի տիրան
 22 ՁԶ «տան», կամ «այս է», փխջ
 ամէն։ Այսպէս ուղղել և Մ.

Գ Լ ՈՒ Խ ԼԹ.

- Պարզ ահաւանեան խալիմ յՄարտադէմ Կարադիկոսն Սզր ի Կար-
կիւնոյ Մժէմի Դեմուսնոյ ընդունի զժողովն Դադկեղանի եւ առնա-
պարգև զաղմ Կողբայ: Դեմուսնի մարագսիւնն ընդ իօխանս
5 Ստրպասակոսի. խորհուրդ Մժէմի սպանաւնել զնա. փախուսա նորա առ
Հերակլ եւ մեծաւել ի մմանէ: Դաւաժանութիւն Արալարիկոսի ընդ-
զէմ Կար իւրոյ Հերակլի. չմիտքանել Վարագսիւնն ընդ դաւա-
ժանսն. ահառ նորա: Դաւիթ Սահառունի Կարգի կիւրապաղաս
Թէնդորաս Ռոսունի պսիւզ զաօխարհն Հայաց յապահովի:
- 10 Իսկ զտէրունեան սուրբ խաչն ընկալեալ երանելի աստուա-
ծաւեր եւ երջանիկ Թագաւորին Երակլի՝ զումարէ զդաւր իւր յոր-
դոր եւ խնդալից սրախս Եւ չու յուղի անկեալ հանգերձ ամենայն
Թագաւորական սպասաւորութեամբն, պատուելով զսուրբ հրաշալի
եւ զերկնաւոր դիւան, եւ տարեալ հասուցանէ ի քաղաքն սուրբ
15 հանգերձ ամենայն սպասուք եկեղեցւոյ, որ ապրեալ էր ի ձեռաց
Թչնամնացն ի Բիւզանդիա քաղաքիւ: Ապա անդ ոչ սակաւ ինչ
լինէր ուրախութիւն յաւուր յայնմիկ ի մտանել նոցա յԵրուսա-
ղէմ: Ջայն լալոյ եւ ողբոյ եւ հեղումն արտասուաց անագին ըոր-
րոքման սրտից նոցա խանդաղատանաց, եւ կսկծելոյ աղեացն Թա-
20 դաւորին եւ իշխանացն եւ զաւարացն ամենեցուն եւ բնակչացն այ-
նոցիկ որ ի մէջ քաղաքին Եւ ոչ ոք կարէր երգել զտէրունեան
երգս յահագին եւ յազիպոյթ խանդաղատանացն Թագաւորին եւ
ամենայն բաղմութեանն: Եւ կարգեալ հաստատեաց ի տեղի իւր.
եւ զամենայն սպասս եկեղեցեացն եւ յիւրաքանչիւր տեղիս, եւ
25 բաշխեաց ամենայն եկեղեցեացն եւ բնակչաց քաղաքին ուրհնու-
թիւն եւ գինս խնկոց:
- Եւ զնոց ինքն զճանապարհս իւր զէպ ուղիղ ի Միջագետս
Ասորւոց՝ զի կալեալ հաստատեացէ ընդ ինքեան զքաղաքս սա-
ժանացն: Եւ սահման հաստատեցաւ նոյն՝ որ առ Յոսրովաւ եւ
30 Մաւրկաւ հաստատեալ էր: Եւ եկաց խաչն տէրունական յաս-

13 Ա զհրաշալի. (չէ՞ զսուրբ)

15 ՏՏ սպասիւք

16 Ա ի Բուզանդիայ

17 Ա ուրախութիւնք

տուածակերտ քաղաքին մինչև ցմեւանգամ առածն Երուսաղէմի յորդոցն իսմայելի, և ապա քնաց փախստական ի քաղաքն իսպառնանիստ հանգերձ ամենայն սպասիւք եկեղեցւոյն:

- Եկն ապա զաւրավարն Յունաց Մժէժ Գնունին ի Հայաստան
 5 երկրէն, և յինքն կալաւ զամենայն երկիրն ըստ ասացելումն սահմանին: Ասէ ցկաթուղիկոսն ցնդր՝ երթալ նմա յերկիր սահմանացն Յունաց և հաղորդել աւրինաւք ընդ կայսեր. ապա թէ ոչ՝ արասցուք մեզ ալ կաթուղիկոս. և զու կնլ զիշխանութիւնդ քոյ ի Պարսից կողմանէ: Իսկ կաթուղիկոսն իբրև ոչ կարաց թողուլ
 10 զերկիր իշխանութեան իւրոյ՝ խնդրեաց ձեռնարկ հաւատոյ ի թագաւորէն: Եւ վաղվաղակի առաքեցաւ նմա տումար գրեալ ձեռամբ թագաւորին, և նղովեալ զնկատոր և զամենայն հերձուածողս, բայց ոչ էր նղովեալ զժողովն Քաղիկոնի: Եւ զնաց կաթուղիկոսն յերկիրն Ասորեստանի, ետես զթագաւորն և հաղորդեցաւ ընդ նմա աւրինաւք: Եւ խնդրեալ ի թագաւորէն պարգևս զաղն Կողբայ, և առեալ զպարգևն՝ զարձաւ մեծաւ շքով ի տուն իւր: Եւ ապա յայնմհետէ նստէր ի մէջ բանակին Յունաց, մինչև զաւրավարին հանդիմանալ ըստ կամաց նորա: Կարգէր զկարգս զինուորացն և բաշխումն շտեմարանաց ի վերայ ամենայն
 20 երկրին:

- Իսկ Վարդապետիոց ասպետ, անուանեալ ի թագաւորաց Զաւիտեան Սոսրովուծ, որդի մեծին Սոսրովայ Շումն, շինեաց բոլորովին զամենայն աշխարհն Հայոց: Բայց ոչ նուաճեալ հնազանդեցաւ իշխանին մեծի որ յԱտրպատական աշխարհին, որում Սոսրի Որմզդն կոչէին: Նա և ոչ յետ նորա որդւոյ նորին Ռոստոմայ, որ էր իշխան ի կողմանս Ասորպատականի. և էր խռովութիւն մեծ ի մէջ երկոցունց: Ապա և զաւրավարն Յունաց Մժէժ սկսաւ և նա առնել չարախաւսութիւն զասպետէ առ Ռոստոմայ իշխանին, որ յԱտրպատական աշխարհին: ՎՄԻ կացցէ սա ի Հայս. ապա թէ ոչ՝ խռովութիւն մեծ լինիցի ի մէջ երկոցունց թագաւորացն: Եւ արձակեալ նորա զեղբայր իւր Գարիշպետ, զի երթեալ ձմերեացէ ի Դունի, և ապա կապեացեն զասպետ և առեալ զնացեն: Արդ՝ զի ամենայն զաւրն Պարսից սիրէին զասպետ՝ մի ոմն յիշխանաց անախ մեծ ազդ արար նմա և ստէ.

4 Ա, Ակ այստեղ և հետո՝ մեծէժ

7 ՏՏ չի՞՞ յունաց

23 Ա շքնուած. փոխ շուած

25 Ա Ռոստոմայ, Մ Ռոստոմայ, և ներքեւմ ծանօթ.՝ շքման և լինել Ռոստոմայ: Այսպէս ուղղել և Գ.

«Տես դանձն քոյ, զի վաղիւ կապելոց են դքեղի: Իսկ ասպեա
տակալ զկին իւր և զորդիս՝ փախեալ ի գիշերի, և ճանապարհ
կալեալ զնաց ի Տաբոն: Եւ անգ երթեալ ժողովաց զգաւրս իւր.
և խնդրեալ երդումն ի Թագաւորէն Նրակլէ, զի մի հեռացուցէ
5 զնա յաշխարհէն իւրմէ, և ընկալեալ երդումն հաւատարիմ՝
երթեալ յանդիման լինէր նմա յԱսորեստանեայց աշխարհին:»
Յայնժամ երդուաւ նմա Թագաւորն Նրակլոս և ասէ. «Կացցես
առ իս սակաւ ժամանակս, ապա արձակեցից զքեզ պատուով
մեծաւ յերկիր քոյ: Եւ մեծացոյց զնա քան զամենայն պատ-
10 րիկան որ էին ի Թագաւորութեան նորա: Եւ զնացեալ ի պա-
ղատն՝ ետ նմա ապարանս Թագաւորականս և զահոյս արծաթի
և զանձա բազումս յոյժ: Եւ որդի նորա Սմրատ էր սիրելի
սենեկապետին Նրակլի:

Եւ այս է Հարութիւն եղեալ յորդի կայսերն Նրակլի՝ ի
15 յանցս մեծս, որում անուն էր Աթալարիկոս, որ ի խոր խոցեաց
զսիրտ հաւրն և խրամատեաց զհրաշալի անձն, և յերեսաց նո-
րա զգեղեցկութիւնն, և պատճառք կորստեան իւր անձին և
բազմաց: Դիմելի միաբանեալ սա և Թէոդորոս եղբաւորդի
Նրակլի, անուանեալն Մադիստրոս, և բազումք ի մեծամեծաց
քաղաքին, և Վահան Խոսրոսունի. սոքա ամենեքին միաբանեալ
20 սպանանել զՆրակլոս, և զորդի նորա դԱթալարիկոս նստուցանել
յաթոս Թագաւորութեանն: Գտաւ ի խորհրդեանն յայնմիկ լեալ
Վարազտիրոց, որդի Խոսրովայ Շուքն Սմրատայ. բայց չէր միա-
բանեալ սպանման Թագաւորին և որդոց նորա. այլ ասէ. «Դուք
25 ասէք զնոսա տեղապահս Աստուծոյ, ապա ոչ է պարտ լինել
այլմ բանի, և յայլմ խորհրդի ոչ միաբանիմ ընդ ձեզ: Եւ բանք
խորհրդեանն պատմեցաւ լիով յունկն Թագաւորին յուրմեկ
կորատորէ, որ էր լեալ ի խորհրդեանն:» Իբրեւ հաւաստութեամբ
ի վերայ եհաս Թագաւորն՝ հրամայեաց ընդ առաւառն ունել
30 զորդի իւր և զեղբաւորդի և զամենեանն որք ընդ նոսա էին.
կարել զքիթս և զաջոյ ձեռնն ամենեցուն: Բայց արձակեալ
պատգամ առ ասպետ՝ ասէ. «Փոխանակ զի արարեր դու այլ-

7 Ա երդումն, փխկ երդուաւ

12 Ա բազում

15 22 որ և խոսխոսունեաց, Մ
ուղղել և տը ի խոր վերա-
ւորեաց, զորք պահել և 9.
Ազգեցիկն՝ տը ի խոր խո-
ցեաց:

17 22 չիք՝ կորստեան, Այսպեա
լբացել և Մ, և պահել և 9.

20 Ա խորխոսունին

20 Ա ամենեքեան

23 Ա յնուկն

29 Ա ընդ առաւառան

պիսի առ իս, և ոչ կամեցար արեանել զձեռն քոյ յարեւն իմ և յարեւն որդւոց իմոց, և ես ոչ արկից զձեռն իմ ի քեզ և յորդիս քոյ: Բայց երբ կնոց ուր և հրամայեցից քեզ, և արարից ի վերայ քոյ ողորմութիւնս: Եւ թէպէտ բազում անգամ աղաղակեցին կողմանքն՝ թէ չմեռցիք, սակայն նա ոչ կամեցաւ լսել նոցա:

8 Այլ հրամայեաց սառնել զնա և զկին նորա և զորդիս նորա ի կողի և ի քաղաքն նեղութեանն, որում աքսորն կուէն:

Գաւաւ լեալ ի խորհրդեանն յայնմիկ և Դաւիթ Սահառունի, զոր կապեալ Մծեօայ առաքէ ի պաղատն: Եւ հատեալ նմա զկապանս իւր ի նանապարհին՝ սատակէ զարսն որք տանէին զնա: Եւ դարձեալ անդրէն միտարանէ ընդ ինքեան զգաւրս Հայոց, յարձակի ի վերայ Մծեօի Գնունայ զաւերավարին Յունաց, հարեալ սատակէ զնա և զՎարադ Գնել Գնունի: Եւ առ յինքն զաւերավարութիւնն կամակցութեամբ և սիրով ամենայն զաւերացն:

15 Իսկ թագաւորն առնէ ըստ խնդրոյ իշխանացն զնա իշխան ամենայն աշխարհացն, և տայ նմա պատիւ կիւրապադատութեանն, և հաստատէ զնա ի ծառայութիւն իւր, և կալեալ զիշխանութիւնն ամա Գ ամենայն ճոխութեամբ մեծապէս: Ապա անարգեալ ի դաւրացն՝ հալածեցաւ, և անմիտարան լեալ ամենայն աղաւապն՝ կո-

20 րուսին զերկիրս Հայոց: Բայց միայն տատուածաւէր և քաջ իշխանն Ռչառունեաց դաւառին Թէոդորոս կազմէր զգաւրս իւրոյ կողմանն հանապազ և զգուշանայր զտիւ և զգիշեր ըստ իւրոյ քաջ իմաստութեանն, ոչ սակաւ աւելիս գործէր ի թշնամեացն: Եւ շինեալ զԱլթամար կղզի՝ անդ ապրեցաւ ցանէր զբազում զաւառս

Գ Լ ՈՒ Խ Խ.

- Բարձումն Սասանականին, որ կալաւ զԹոխանօրինն ամս Եղբ: Դիմել չբէից առ Բամայեացիս. երեւել Մահմեհի եւ միարամնի զԻսմայիլացիս: Առաջին պառեւազս ի մէջ Յաւնաց եւ Բամայեացւոց յԱրարիա: Պարտօրիւմ Յունաց. փախուցանել զԽաչափայսն ի Կոստանդնուպոլիս: Բամայեացիք հինքն Սփայտօրի Այլ զաւր Բամայեացւոց առնու զՅիզրակն: Նուազումն քաղաւորութեան Պարսից: Մահ Հերակլի եւ քաղաւորել որդւոյ Յորա Կոստանդինի: Մուս որդւոցն Բամայի յաօխարհն Հայոց: Առումն Դաւնայ եւ զերումն ԼՍ հազար արամց ի Դումայ: Պարսկօրիւմ Թէոդորոսի Ռոստմույ: Բամայեացիք յաւաքի առնան զրազում աօխարհս մինչեւ ի սահման Հնդկաց:

- 25 ԶԱրրահամաննն ճառեցից զգաւակէ, ոչ զազատէն, այլ զայն՝ որ յաղախնոյն ծնեալ, յորոյ վերայ անսուտ կատարեալ աստուածային բանն, եթէ չձեռք նորա յամենեսեան, և ամենեցուն ձեռք ի նառ:

- 20 Բայնժամ երթեալ ժողովեցան յԵղեացւոց քաղաքն երկոտասան ազգք ամենայն ցեղիցն Հրէից: Եւ եղև իբրև տեսին, թէ զնոց մեկնեցաւ ի նոցանէ զաւրն Պարսից, և թողին ի բաց զքաղաքն խաղաղութեամբ՝ փակեցին զդուռն և ամբացան ի նա. և ոչ հառն մտանել ի նոսա զաւրացն Հռովմայեացւոց տէրութեանն: Իսկ թաղաւորն Յունաց Երակիոս հրաման հաղաղել զնա: Եւ իբրև գիտացին սոքա, եթէ ոչ կարեմք ունել զդէմ նորա պատերազմաւ՝ խաւսեցան ընդ նմա ի խաղաղութիւն: Եւ բացեալ 25 զդուրս քաղաքին՝ երթեալ կացին տաղի նորա: Բայնժամ հրաման հա նոցա երթալ զաղաղել յԻւրաքանչիւր ի բնակութիւն. և զնացին նոքա: Եւ կալեալ զհանապարհս անապատին զնացին ի Տանկաստան առ որդիսն Բամայիլի, կոչնն զնոսա իւրեանց յաւգնականութիւն, և ծանուցանեն նոցա զհարապատութիւն իւրեանց 30 Դրոց կտակաւ: Իսկ նոցա թէպէտ և հաւանեալ վասն մերձաւոր

հարադասութեանն՝ այլ ոչ կարէին տոնել հաւանութիւն ի մէջ բազմութեան նոցա, և զի էին պաշտամունք նոցա բաժանեալ ի միմեանց:

- Յայնմ ժամանակի այլ ոմն ի նոցունց իսկ յորդոցն Իս-
 5 մայելի, որում անուն էր Մահմէտ, թանգար Յ1, որպէս ի հրամա-
 նէն Աստուծոյ երևեալ նոցա քարոզ՝ նշմարութեանն նախապարհ,
զԱրքայահամանն ուսուցանէր նոցա ճանաչել զԱստուած. մանա-
 ւանդ զի հմուտ և տեղեակ ևս էր Մովսիսական պատմութեանն,
 Արդ՝ զի ի վերուստ էր հրամանն՝ ի միջէ հրամանէ ժողովէին
 10 ամենեքեան ի միարանութիւն աւրինացն: Եւ թողեալ զունայ-
 նութեան պաշտամունն՝ դառնային առ Աստուած կենդանի, որ
 երևեցաւ հաւրն նոցա Արքանամու Արդ՝ աւրինադրէ զնոսա Մահ-
 մէս՝ ոչ ուսել մեռելոտի, և ոչ ըմպել զինի, և ոչ խաւսել սուտ,
 և ոչ խառնակել ի պոռնկութիւն: Եւ ասէր. «Երդամբ խոստացաւ
 15 Աստուած զերկիրն զայն Արքանամու և զաւակի նորա յետ նորա
 մինչև յաւիտեան: Եւ կատարեաց որպէս խաւսեցան առ այնմ
 ժամանական, մինչ սիրելն զԻսրայէլ: Իսկ արդ՝ զուք էք որդիք
 Արքանամու, և կատարէ Աստուած զխոստումն Արքանամու և
 զաւակի նորա ի վերայ ձեր.՝ այլ միայն սիրեցէ՛ք զԱստուածն
 20 Արքանամու և երթայք կալարէք զերկիրն ձեր, զոր ետ Աստուած
 հաւր ձերում Արքանամու, և ոչ կարէ ոք ընդդէմ ձեր կալ պա-
 տերազմու, զի Աստուած ընդ ձեզ է:»

- Յայնժամ ամենեքեան ժողովեցան միաբան յԵւլայ մինչև
 ցՍուր և յանգիման Եգիպտոսի, և զնացին յանապատէն Փառա-
 25 նու երկոտասան ցեղ՝ ըստ ցեղի տանց նահապետաց իւրեանց: Եւ
 բաժանեցին ԺԲ հազար արանց, որ յորդոցն Իսրայելի ի ցեղան
 իւրեանց, հազար այլ մի ի ցեղ մի՝ առաջնորդել նոցա յերկիրն Իս-
 րայելի: Եւ չուալք զնացին բանակք բանակք ըստ իւրաքանչիւր
 նահապետութեանց—Նաբէութ, Կեդար, Արդիւդ, Մոսսմբ, (Մասա),
 30 Մամմայ, Իդովմայ, Մասէ, Բողգաս, Թեման, Յետուր, Նափէա և
 Կեղմայ: Այս են ազգք Իսմայելի: Եւ հասեալ յԼաբարութ Մովս-

5 Բայ. Թանկանգար: Տես 'ձա-
 նաթ. 61

9 Ա զի վերուստ: ՏՏ զ'իվերուստ:
 Ուղղեցինք այսպէս:

21 Ա չիք՝ ոք

23 Մ երուսաղէմի, փիւղ Իսրայելի

29 Գ. փակագծի մէջ և զնում
 (Մասա) և գիտում, զոր աղև-

լոջդ պետք և լինի. քանի զոր
 այդ անունը չի հիշուա Ծննդոց
 զբրում և Վարդանի պատմու-
 թյան մէջ, մտնովանդ զոր
 դրանով ազգապանծբի թիվ
 կգտանա 13:

31 Ա եւկեղմա, փիւղ և կեղմայ

բու ի սահմանս Ռուբէնի. զի բանակն Յունաց բանակեալ էին յԱրարիա, և անկեալ ի վերայ նոցա յանկարծակի՝ հարին զնոսա ի սուր սուսերի, և փախտապառն արարին զԹէոդոս եղբայր կայսերն Նրակղի, և դարձեալ բանակեցան յԱրարիա:

- 5 Եւ ամինայն մնացորդք ժողովրդեան որդւոցն Իսրայելի ժողովեալ միաբանեցան ի միասին, և եղնն զաւր մեծ: Եւ եղև յետ այնորիկ արձակեցին պատգամս առ Թադաւորն Յունաց, և ասենայսպէս. «Հաւր մերում Աբրահամու եւ Աստուած զերկիրդ զայդ ի կալուած ժառանգութեան և դաւակի նորա յետ նորա: Եւ մեք 10 եմք որդիք Աբրահամու. Հաս լիցի քեզ ունել զերկիրդ մեր. Ի բաց Թող խաղաղութեամբ, և մեք ոչ եկեսցուք յերկիր քոյ. ապա թէ՛ ոչ՝ տոկոսիւք պահանջեսցուք ի քէն զկալեալնս:»

- Իսկ կայսրն ոչ առնոյր յանձն, և րստ պատգամին պատշաճի ոչ տանէր նոցա պատասխանի, այլ ասէ. «Իմ է երկիրս, և քոյ վիճակ Կ. 15 ժառանգութեան՝ անապատն. Երթ գնաս խաղաղութեամբ յերկիր քոյ: Եւ սկսաւ գունդս կազմել իբրև Հի, և ետ նոցա զաւրովար՝ զովմն մի ի հաւատարիմ ներքինեաց իւրոց, և հրաման ետ երթալ նոցա յԱրարիա: Եւ պատուիրեաց չառնել պատերազմ ընդ նոսա, այլ զգուշանալ անձանց, մինչև իւր այլ զաւրս գումարեալ արձակեցէ 20 յաւդնականութիւն նոցա: Իսկ նոցա հասեալ ի Յորդանան և անցին յԱրարիա, և թողեալ զբանակս իւրեանց ի գետեզերին՝ հետիտա գնացին ի վերայ բանակի նոցա: Իսկ նոցա զմասն ինչ ի բանակէն դարանակալ արարեալ աստի և անտի, և կարգեալ զբազմութիւն խորանացն շուրջ զբանակաւն, և ածեալ զուղտե- 25 բամակն՝ մակաղեցին շուրջ զբանակաւն և զվրանաւքն, և կապեցին չուանաւք զոտոս նոցա. այս է ամբուրիւն բանակի նոցա: Եւ սոքա յաւդնեալք ի ճանապարհին՝ ուր ուրեմն կարացին հասանել զամբուրիւն բանակին, և սկսան սատակել զնոսա: Եւ անկարծակի յարեան դարանակալքն ի տեղովէ իւրեանց և յարձա- 30 կեցան ի վերայ նոցայ: Եւ անկեալ աչ տեառն ի վերայ դաւաղն Յունաց, և ի փախուստ դարձան առաջի նոցա. և ոչ գոյր նոցա փախուստ ի Թանձրութենէ աւազոյն, զի Թաղէին ոտքն մինչև ի սրունսն, և տազնապ մեծ յարեգականն ջերմութիւնէն, և սուր թշնամոյն գնետ նոցա: Արդ՝ անկան ամինայն զաւրովարքն և

17 Ա չիք՝ և հրաման ետ երթալ
նոցա յԱրարիա
21 Ա հետիտա

34 ՏՏ ի վերայ, փիւզ գնա
36 Ա գորաւորքն, փիւզ դաւա-
վարքն

կործանեցան: Եւ եղև թիւ անկելոցն աւելի քան զերկու հազարս: Եւ սակաւք ի նոցանէ ապրեալքն փախստական անկանէին ի տեղի ապաստանի:

5 Եւ նոքա անցեալ ընդ Յորդանան՝ բանակեցան յերիքով: Յայնժամ անկու աւ նոցա ի վերայ բնակչաց երկրին. և հնազանդեցան ի ծառութիւն նոցա ամենեքեան: Յայնմ զիշերի և երուսաղէմացիքն փախուցեալ զաւերունեան խաչն և զամենայն սպասս եկեղեցեացն Աստուծոյ, և արկեալ ծով նաւաւք յուղարկեցին ի պաղատն Կոստանդնուպաւսի: Եւ ապա խնդրեալ նոցա 10 երզումն ի նոցանէ՝ հնազանդեցան ի ծառայութիւն նոցա:

Իսկ թագաւորն Յունաց ալ ոչ ևս կարաց զուսարել զգաւրս իւր ընդդէմ նոցա: Եւ նոքա բաժանեցին զգաւրս իւրեանց յերիս մասունս: Մասն մի յեզիպոսոս, որ երթեալ կալան մինչև գլղեքսանդրիա: 15 Եւ մասն մի ի հիւսիսոյ կողմանէ, ընդդէմ թագաւորութեանն Յունաց. Եւ յակոն թաւթափել կալան ի վերջնոյ ծովուն մինչև ցեզր գետոյն մեծի Նափրատայ. և յայնմ կողմն գետոյն՝ զՍևրհայ և զամենայն քաղաքս Միջագետաց: Եւ մասն մի յարեւելս՝ ի վերայ թագաւորութեանն Պարսից:

Եւ նուազեցաւ թագաւորութիւնն Պարսից ի ժամանակին 20 յայնմիկ, և զաւրք նոցա բաժանեալ յերիս մասունս: Յայնժամ զաւրացն Իսմայելի, որ էին գումարեալ ի կողմանս արեւելից՝ երթեալ պաշարեցին զՏիգրոն, զի անդ նստէր թագաւորն Պարսից: Եւ զաւր աշխարհին Մարաց զուսարեալ ի ձեռն զաւրավարին իւրեանց Ռստոմայ 25 Ձմ վառելոց՝ ժողովեցան և գնացին ի վերայ նոցա ի պատերազմ: յայնժամ թողեալ զքաղաքն՝ անցին յայնկոյս գետոյն Դաւադայ: Եւ գնացին և անցին նոքա զգետուն և պնդեցան զհետ նոցա, և նոքա ոչ դադարեցին մինչև ի սահմանս իւրեանց, ի գեւղն որ կոչի Հերթիւնս: Եւ սոքա պնդեալք զհետ նոցա՝ և չոգան բանակեցան ի դաշտին: Էր անդ և Մուշեղ Մա- 30 միկոնեան որդի Դաւթի, զաւրավարն Հայոց երեք հազար սղառազինաւք, և Գրիգոր իշխանն Սիւնեաց տէրն՝ Ռ արամբ, Եւ եղև յարձակումն ի վերայ միմեանց. և փախեան զաւրն Պարսից առաջի նոցա. իսկ նոքա զհետ մտեալ հարին զնոսս ի սուր սու-

4 ՅՅ անցեալք
8 Ա սղառ
9 Ա նոցա խնդրեալ
14 Ա ի հիւսիսոյ

20 Ա գաւրս
21 Բայ. յարեւելից. Ուղղեցինք
այսպէս:
22 Ա զտիգրոն

- սերի իւրեանց: Եւ մեռան ամենայն նախարարքն զիսուորք-
մեռաւ և զաւրաւարն Ռոտամե. սպանին և զՄուշեղ երկու քեռ-
 որդւովքն, և զԳրիգոր Սիւնեաց տէր միով որդւով: Եւ այլքն
 5 զերծեալ զնացին փախստական յաշխարհն իւրեանց: Եւ իբրեւ
 եկին հասին Թաւրոզք զաւրացն Պարսից յԱւարպատական՝ գու-
 մարեալ ժողովեցան ի մի վայր, և նստուցին իւրեանց զաւրավար
 զՄուսխապատ. և փութացեալ ի Տիգրան՝ էառ զամենայն զանձա-
 թազաւորութեանն և զընտելիս քաղաքացն և զթագաւորն իւ-
 10 ռեանց. և փութացաւ հասուցանել յԱւարպատական. և իբրեւ մեկ-
 նեալ հեռացան՝ յանկարծակի հհաս ի վերայ նոցա զաւրն Իս-
 մայիլի: Եւ նոքա զարուրեալ թողին զգանձս և զընտելիս քա-
 ղաքին և փախեան. փախեաւ և Թագաւորն իւրեանց, և անկաւ
 ի զաւրն հարաւոյ: Իսկ նոցա առեալ զգանձն ամենայն դարձան
 ի Տիգրան, առին և զընտելիսն քաղաքացն, և աւարեցին զամե-
 15 նայն երկիրն:

Յայնժամ կատարեալ երանելոյն Երուկի զկեանս իւր բար-
 ւոք ծերութեամբ. և էին աւուրք իւրոյ Թագաւորութեանն ամք
 Լ, Երզնիսեցոցանէ զորդի իւր զԿոստանդին՝ առնել ողորմութիւն
 ի վերայ ամենայն յանցաւորացն, զորս հրամայեալ էր առնել
 20 յաքսորսն, և դարձուցանել զնոսա յիւրաքանչիւր տեղիսն: Երզ-
 նիսեցոցանէ և վասն առդետի՝ ածել զնա և զկին նորա և զորդիս
 նորա, և հաստատել ի կարգն առաջին: Եւ եթէ կամեցի զնալ
 յաշխարհն իւր՝ երդուեալ եմ նմա, մի՛ եղիցի սուտ երդումն իմ:
 Արձակեմ զնա, և թող երթայ խաղաղութեամբ: Եւ

25 Մեռաւ Նրակոս, և Թագաւորեաց որդի նորա Կոստանդին:
 Եւ ոչ ոք ընտրեցաւ զաւրավար յաշխարհին Հայոց. քանզի ան-
 միարան լեալ իշխանացն՝ մեկնեցան ի միմեանց:

Եւ ել զաւր անպականիչ յԱսորեստան կողմանէ ընդ ճանա-
 պարս և ձորոյ յաշխարհն Տարօնոյ. առին զնա և զԲզնունիս և
 30 զԱղիոսիս: Եւ ճանապարհ կալեալ ի Բերկրոյ ձորն ընդ Որդապոյ
 և ընդ Գոգովիս՝ Թափեցան յԱյրարատ: Եւ ոչ ոք կարաց ի զա-
 րացն Հայոց արկանել զոյժ ի Դուին աւան. բայց արք՝ երեք

- 4 ՏՏ չիք՝ իբրեւ եկին հասին
 7 Ա աշտեղ և հետ՝ ի տիւրն
 13 Ա զգանձս
 18 ՁԶ առնել ի վերայ Մ քա-
 ցելի և (զթութիւն), վորք գա-
 ւել և և Պ. Ուղղեցինք արդ-

- մութիւնս ըստ զԼ. ԽԲ. առ-
 նել ողորմութիւնս
 19 ՏՏ գոր
 24 ՏՏ գրտ, փիղ զնա
 30 Ա զաղովիս
 31 Ա արարատ

իշխանացն, որք երթային ժողովել զգաւրն ձապադական, Թէոդորոս Վահեառնի, և Խաչեան Առաւելեան, և Շապուհ Ամատունի: Որք զնացեալ փախստական ի Դուին, և հասեալ ի կամուրջն Մեծամաւրի՝ ի բաց աւերեցին, և ինքեանք անցեալք զայժ արկանել ի յաւանին: Եւ ի բերդն ժողովեցին զամենայն մարդիկ աշխարհին, որ եկեալ էին ի կութա ալգեստանին: Բայց Թէոդորոսն գնացեալ ի Նախճաւան քաղաք:

Եւ հասեալ թշնամին Բուշայն ի կամուրջն Մեծամաւրի ոչ կարաց անցանել. բայց ունէին ատաջնորդ իւրեանց զՎարդիկ իշխան Մովկաց որ կոչէր Ակնիկ: Ապա անցեալ ընդ կամուրջն Մեծամաւրի՝ հարին ասպատակաւ զամենայն երկիրն, և ժողովեալ զաւար և զգերութիւն բազում յոյժ, և եկեալ բանակեցան ի յեղր մայրոյն Խոսրովեկերտի:

Եւ եղև յաւուրն հինգերորդի դիմեցին ի վերայ քաղաքին. մասնեցաւ քաղաքն ի ձեռն նոցա. քանզի արկին մուխ շուրջնաակի, մերժեցին ծիսող և նետաձգութեամբն զպահապանս պարսպին, և կանգնեալ սանդուխտ՝ ելին ի պարիսպն և անկեալ ի ներքս բացին զդուռն քաղաքին: Եւ դիմեալ ի ներքս զաւրք թշնամեացն՝ սատակեցին սրով զբազմութիւն քաղաքին, և Վասեալ զաւար և զկապուտ քաղաքին՝ ելին և բանակեցան ի նմին բանակեալովն, որ ար Ի էր տրէ ամսոյն, յաւուր ուրբաթի Եւ զապարեալ աւուրս ինչ՝ ելին և զնացին ընդ նոյն ճանապարհ, ընդ որ եկեալն էին: Եւ խաղացուցին զբազմութիւն զերւոյն ԼԵ հազար հոգի: Իսկ իշխանն Հայոց Ռշտունեաց տէրն դարանակալ եղեալ ի Գոգովիտ գաւառի՝ դիմէ ի վերայ նոցա սակաւաւք: Եւ ոչ կարաց զգէմ ունել նոցա. փախստական լինի ատաջի նոցա. և նոքա զհետ մտեալ նոցա՝ սատակէին զբազմամս ի նոցանէն. և ինքեանք չողան անցին յԱսորեստան: Եւ եղև այս յամս Եղրի կաթուղիկոսի:

Իսկ ի ձեռն այնր պատերազմի ի կայսերէ հրաման հասեալ զարտալարութեանն Թէոդորոսի Ռշտունեաց տեսուն՝ հանգերձ պատրկութեան պատուով:

Այս ամենայն լինի ի ձեռն կաթուղիկոսին Ներսիսի, որ

5 Ա Վարդիկ

8 Ա, Ակ բուշայն, փիկ բուշայն

13 Հ Խոսրովեկերտի, Միւս 22 և

38 Խոսրովեկերտի

20 Ա բանակեալն. լուսանցքում տեղն

23 Ա զետայն, փիկ զերւոյն

32 Ա զաւարութեան, փիկ զաւարութեան

յաշորդեցաւ ի նմին ամի յաթու կաթուղիկոսութան փոխանակ
 Եզրի կաթուղիկոսի:

- Բայց յորժամ ելին յարեւիք որդիքն Բամայիլի ի Սին անա-
 պատէն՝ ոչ ել ընդ նոսա և թագաւորն նոցա Ամու ալ իբրեւ
 5 յաղթեցին պատերազմաւք, վանեալ գերկոսին թագաւորութիւնն,
 կալան յնգիպատսէ մինչև ցլեառն մեծ Տորոս, և ի ծովէն արեւ-
 մտից մինչև ցՄարա և ձուժաստան՝ ապա ելին արքունական
 բանակաւքն ի բուն սահմանս կալուածոցն Բամայիլի Եւ հրաման
 ևս արքայ ժողովիլ զնաւ և զնաւորդս բազումս, և անցանել ընդ
 10 ծով ի հարաւակողմն յարեւիս, ի Պարոս, և ի Սաւկաստան, և ի
 Սընտ, և ի Սրման, յաշխարհն Տուրան և ի Մակուրան, մինչև ի
 սահմանս Հնդկացոյ, իսկ զաւարացն փութանակի պատրաստեալ՝
 զհրամանսն կատարէին. և այրեցին զամենայն երկիրն, և առեալ
 զուսար և զկապուտ՝ զարձան անդրէն, արշաւանս զնելով ի վե-
 15 րայ ծովուն մկանանցն հասանէին ի տեղիս իւրեանց:
- Հայս լուաք յարանց գերեւոց ի ձուժաստան Տաճկաստանէ,
 որոց ինքեանք իսկ ականատես եղեալ պատմեցին մեզ զայս բան:

Գ Լ Ո Ւ Խ ԽԱ.

Վասն հելից և չար խորհրդոց նոցա:

- Անացից և զհելիցն զապստամբողացն զխորհուրդան, որ սա-
 կաւ ժամանակս աւգնականութիւն դառեալ ի Հագարացւոցն՝ առին
 խորհուրդ շինել զտաճարն Սողամնի: Եւ դառեալ զտեղին, որ կոչի
 սրբութիւն սրբութեանց՝ շինեցին զնա խարսխով շինուածով
 տեղի աղաւթից իւրեանց: Եւ նախանձեալ ընդ նոսա Բամայիլա-
 25 ցւոցն՝ մերժեցին զնոսա ի տեղւոյն յայնմանէ, և անուանեցին զնոյն
 տուն աղաւթից իւրեանց: Նոքա յայլում տեղւոյ անգէն յատակս
 տաճարին շինեցին ալ տեղի աղաւթից իւրեանց: Եւ անդէն առաջի
 արկեալ զիւրեանց չարութեան խորհուրդ, լնուլ կամեցեալ զսրբ-
 սաղէմ ծայր ի ծայրէ արեամբ, ջնջել զամենայն քրիստոնեայնս
 30 յերուսաղէմէ:

9 Ա Ե. փոխ և

10 ՏՏ ի Սագաստան

11 Ա չիք՝ ի (Մակուրան)

28 ՏՏ չիք՝ տուն: Լոյսցել և

Մ և Գ.

29 Ա ծայր ի ծայր

- Արդ՝ այլ ոմն ի մեծամեծացն Իսմայելի երթայր յերկրպա-
 գութիւն ի տեղի աղաթից իւրեանց միայն ի զիմի հարան նմա
 արք երեք հրեայք ի գլխաւորաց նոցունց, որոց էին սպանեալ
 խոզս երկուս և տարեալ եղեալ ի տեղի աղաթիցն, և զարիւնն
 5 հեղեալ զորմովքն և գլատակաւ տանն: Եւ եղև իբրև ետես զնոսա
 այրն՝ զտեղի էառ և խաւսեցաւ ընդ նոսա զինչ և խաւսեցաւ. և
 նոցա պատասխանեալ նմա զանց արարին զնովաւ և զնացին: Եւ
 նա իսկոյն մտեալ ի ներքս կալ յաղաթն՝ ետես զչարիս, և զար-
 10 ձաւ փութանակի, զի կալցի զարան: Եւ իբրև ոչ եղիտ զնոսա
 լուռ եղև և զնաց ի տեղի իւր. և ապա բազումք մտեալ տեսին
 զչարիսն, և զոյժ արկին քաղաքին: Եւ ուսուցին հրեայքն իշխա-
 նին, թէ քրիստոնեայքդ պղծեցին զտեղի աղաթիցն: Հրաման
 ետ իշխանն, և ժողովեցին զամենայն քրիստոնեայսն: Եւ մինչ
 կամէին զնոսա որով սատակել՝ եկն այրն և եկաց յանդիման,
 15 ասէ. «Էնդէ՞ր հեղոյք զայդչափ արիւն ի տարապարտուց. հրա-
 մայեցէ՞ք ժողովիլ զամենայն հրեայսդ, և ես ցուցից զմահա-
 պարտան»: Եւ եղև իբրև ժողովեցին զամենեանն, և մտեալ ի մէջ
 նոցա ծանեաւ զարան զերիան, որ զիպեցան նմա: Եւ կալեալ զնո-
 սա՝ դատեցին ահագին դատաստանաւք, մինչև յայտնեցին զիոր-
 20 հուրգն: Եւ զի իշխանն նոցա էր ի հրէից անաթ՝ հրամայեաց սպա-
 նանել արս. վեց, զգլխաւորս խորհրդեանն. և այլոցն թոյլ ետ
 զնալ ի տեղի իւրեանց:]

5 Ա զորմօքն
 5 Ա զատակաւ
 5 Մ ետես, փեկ ետես

15 Ա զա՛մ քրիստոնեայքն
 15 ԵՏ հեղոյք

[Գ Լ ՈՒՆ ԵՐ .

Մեռանել Կոստանդնի և բազաւորել Մրակլոսի որդւոյ Հերակլի յերկրորդ կնոջէն: Գալ Վաղեմեհի ի Կոստանդնուպոլիս և նստաւ ցանկ թաղաւոր զԿոստա զորդի Կոստանդնի: Պաշտօնս Պարսից և Իսմայիլացոց ի Մարտ գաւառի և պարտ ինն Պարսից: Հէն իսմայիլեան ըռս կանխառացութեամ Պանիէլի մարգարէին: Ապիւրտս խորհուրդ Վաղեմեհի և մահ նորա: Գարձ յաւտէ ասպետի, որդւոյ Եսմէն Կոստանդնուպոլիս: Թուամս ննգութեամբ ըմբռնէ զԹէոփոս և առաւէ կապանաւ ի Կոստանդնուպոլիս: Արդարամայ Թէոփոս և զառնայ ի Հայս պատուով զաւրաւարութեան: Ապա փախչի ի Կոստանդնուպոլիս և դարձեալ մահնէ ի ծառայութիւն Յուսէպ պատուով կիրաւապաշտութեան. մահ նորա: Բաժանել զաւրան Իսմայիլի յերես առաջս և արտաւել յԱլքաթա, ի կողման Սեպիական գնդին և յԱղուամս:

15 Եւ եղև ի մահուանն Մրակլի Թաղաւորեաց Կոստանդին որդի նորա, և կարգէ ի վերայ զաւրաց իւրոց զաւրաւորս զՎաղեմախանսն, որ կոչէր Արշակունի: Եւ հրամայեաց իւրոց երթալ յարևելս:

Եւ ստեալ ինչ աւուրս Թաղաւորեալ Կոստանդին, դաւեալ ի Մարտինեայ՝ մարէ իւրմէ, ի կնոջէն Մրակլի՝ մեռանէր: Եւ Թաղաւորէ Մրակլոս, որդի Մրակլեայ, որ ի Մարտինեայ աւգոստեայ: Զանդի Կոստանդին էր յառաջին կնոջէն: Եւ Վաղեմախնի գործեցեալ իրս՝ զնայ ի վերայ նորա զաւրու իւրով ի Կոստանդնուպաւլիս: Եւ կախեալ զՄարտինէ՝ կտրէ զկողս նորա և ապա սպանանէ զնա հանդերձ երկու որդւովք նորա: Եւ նստուցանէ Թաղաւոր զԿոստաս զորդի Կոստանդին, և անուանէ յանուն հարն իւրոյ Կոստանդին: Եւ ինքն դռմարէ զզաւրսն, և զնայ ընդ արևելս:

Եւ եղև յառաջնութե ամի Կոստանդեայ Թաղաւորին Յուսէպ, և յամի ասաներորդի Յաղկերտի արքային Պարսից՝ զաւարեցան զաւրքն Պարսից ընդ Իսմայիլի Կիւ արանց վառելոց սղառագիւնաց: Եւ Իսմայիլացոցն ճակատեցան ընդդէմ նոցա Խիւ արանց

23 22 իբ՝ և (վաղեմախնի), Լքա-
ցել են Մ և Գ

25 Ա գանուն փխկ յանուն

առաւելեցաւ ի Մարտի
 դաւառի Մինչև յերիս առաւր
 յերկարեալ պատերազմն, մինչև
 նուազեալ երկոցունցն կողմանցն հետեւակն մարտին Ծանկարծա-
 կի ազդեալ զաւրացն Պարսից, եթէ եկն զաւր յաւաքականութիւն
 5 Իսմայիլացւոցն։ Եւ փախեան զաւրն Պարսիցն ի բանակէն զդի-
 շերն ամենայն. և Զնայորդքն զաւրուն Իսմայիլի զնացին ի վերայ
 նոցա ընդ առաւաւտն Եւ ոչ զոք զախն ի բանակին. և տապառակ
 սփռեալ ընդ ամենայն երեսս երկրի՝ հարին զմարդ և զանասուն
 սրով. և առեալ բերդս Ի՞նչ ապառկեցին զամենայն կենդանի որ
 10 էր ի նոսա։

Բայց զհազարն աղետս հինին Իսմայիլի, որ ըորոքեաց
 հրդեհեալ զծով և զցամաք, ի վերիցէ պատմելու Բայց երանելին
 Դանիէլ կանխաւ գուշակէ մարգարէութիւնն զայսպիսի նեղու-
 15 քիւնս որ եկն նհաս ի վերայ երկրի։ որ չորս զազանաւք նշա-
 նակէ զչորս Թագաւորութիւնսն, որ յառնելոցն էին ի վերայ
 երկրի Եւ նախ առաջին զԱրևմտից Թագաւորութիւն, զմարգա-
 րեալ զազանն, որ է Յունաց. և յայտ անտի է՝ ասէ. «Թափեցան
 վարազաթևքն. և ջնջեցաւ յերկրէ։ Զդիւտկան կոսմոլութեանն
 ասէ զջնջումն։ Եւ եկաց իբրև ի վերայ ուրից մարդոյ, և սիրտ
 20 մարդոյ առաւ նմա։ Եւ ահա զազանն երկրորդ նման արջոյ,
 և եկաց ի կողմն մի, յարեալից կողմանէ. զՍասանականին ասէ
 զԹագաւորութիւն։ Եւ կողք երեք ի բերան ունելով՝ զՊարսից և
 զՄարաց և զՊարթևաց Թագաւորութիւնն։ Եւ յայտ անտի է՝ որ
 ասէին ցնա. «արբի, կել զմարմինս բազմաց։ Որպէս և իկեր իսկ
 25 ամենեցուն դիտելով։ Եւսկ զազանն երրորդ իբրև դինձ, և չորք
 թեք Թոչնոյ ի վերայ նորա, և չորք զլուխ զազանին։ զՀիւսի-
 սային ասէ զԹագաւորութիւն, Գող և Մագող, և երկու ընկերք
 նոցին, որոց տուաւ իշխանութիւն Թոչի զաւրութեամբ ի ժա-
 մանակի իւրում ի կողմանս հիւսիսոյ։ Եւսկ զազանն չորրորդ
 30 ահեղ և զարմանալի, և ժանիք նորա երկաթիք, և մագիլք նորա
 պղնձիք. ուտէր և մանրէր և զմնացուածսն առ ոտն կոտորէր։
 Այս չորս, յարուցեալ Հարուտյ կողմանէ՝ Իսմայիլեան Թագաւո-
 րութիւնն. որպէս հրեշտակապետն մեկնեաց, եթէ Երազանն
 չորրորդ Թագաւորութեանն կացցէ, որ առաւել իցէ քան զամենայն
 35 Թագաւորութիւնս, և կերիցէ զամենայն երկիր։ Եւ ժ եղջիրք՝

3 Ա հետեւին
 12 Մ պարսի, փիկ զամիւ
 13 ՏՏ նեղութեան

34 Ա Թագաւորութիւն
 34 Ա է, փիկ իցէ

ժ Թաղաւորք յարեցեն, և զկնի նորա յարեցէ այլ՝ որ առաւել է
չարեաւք քան դամենայն առաջինսն: և որ ի կարգին է:]

- 5 Եւ ևզև յերկրորդում ամի Կոստանդի, Թոռն երանելոյն
Երակլի՝ խորհէր Վաղենտին ի միտս իւր՝ ճարտարութեամբ խա-
բել զսինկղիտոսն, և համբառնալ զինքն ի պատիւ Թաղաւորու-
թեանն, որպէս զի պատկեալ զինքն այնպէս արասցէ զաւրավա-
րութիւնս Եւ ծանրացոյց զլուծ ծառայութեան ի վերայ բնակչաց
քաղաքին, և զայն երեք հազար սպառազէնս, զոր ընդ ինքն տա-
րաւ, և զաւրս բազումս այլ միարանեալ՝ իւր Թիկունս հաստա-
տելր: Յայնժամ ժողովեցան արք քաղաքին ի սուրբ եկեղեցին
10 Աստուծոյ առ հայրապետն, և ծանուցանեն նմա բառնալ զծան-
րութիւնն ծառայութեան, և առաքեցին առ Վաղենտին՝ ի բաց
բառնալ զծառայութիւն զայն, և նա ոչ կամեցաւ լսել: Եւ անդ
էր մի ոմն յիշխանացն, որում անունն էր Անտոնինոս:] ասէ ցՎա-
ղենտին, շնորհ է նոցա միարանութիւնն այն և խորհուրդն. կամ
15 զի՝ իսկ իշխեցին համարձակարար արձակել առ քեզ զայսպիսի
բանս. բայց եթէ հրամայեսցես ինձ՝ ես երթայց և քակտեցից
զմիարանութիւն նոցա և զխորհուրդն: Եւ հալածեմ զնոսս յիւրա-
քանչիւր տեղիս, զի կատարեսցին կամք քոյս: Եւ ասէ. շնորհ և
20 արած՝ որպէս ասացերդ: Եւ նա յարուցեալ զնաց արամբք հա-
ղարաւք, և իբրև եմուտ յեկեղեցին՝ սկսաւ պատուհասել զգլխա-
ւորսն զանիւ: Յոռն եկաց հայրապետն, և ասէ. Շնորհ և ոչ է
իրաւացի առնել ի տեղւոյս յայսմիկ այսպիսի ինչ: Եւ յորձա-
կեալ Անտոնի՝ ած ապտակ ի ծնաւտ նորա, և ասէ. շնորհ կնի
25 զտեղին քոյս: Եայնժամ խոռովեալ ամբոխն՝ յարձակեցան ի վե-
րայ նորա: Եւ ըմբռնեալ զնա քարշեցին զոտանէ ի մէջ քաղա-
քին, և այրեցին հրով: Ազդ եղև Վաղենտինի, և զողումն կալաւ
զնա: Եւ անզէն վազվազակի հեղաւ ամբոխն ի վերայ նորա, և
քարշեալ արտաքոյ տանցն՝ զլիտատեցին. և տարեալ ի տեղին,
30 ուր այրեցին զԱնտոնինոս՝ ի նմին տեղւոյ այրեցին և զնա: Եւ
զԿոստանդին հաստատեցին լաթոռ Թաղաւորութեանս: Եւ արա-
քին զաւրավար զԹէոդորոս զոմն հաւատարիմ յիշխանացն Հայաս-
տանեայց, յայնց՝ որ ի Յունաց կողմանէ:]

Սա իբրև առ զաւրավարութիւնն՝ աղաչեաց զԹաղաւորն և
խնդրեաց պարգև՝ առնել զգործութիւն այնոցիկ, զորս էր աք-

ձ Ա խորհէր էնտին ի միտս:	6	88 զգաւրավարութիւն
88 խորհէր վաղենտին անտի	8	Ա աղաւաղէն
ի միտս: Ուղղեցինք աբղես:	23	Ա յամիկ
	32	Ա հայնց, փիկ յայնց

- սորեալ յԱփրիկէ: Եւ մտնաւանդ վասն առդեաի, որդւոյ Սմբատայ Խորով Շում կոչեցելոյ: Եւ քաղցրացոյց Աստուած զսիրտ Թազաւորին, և հրամայեաց ամել զնոսա ի քաղաքն Թազաւորական: Եւ ընկալաւ զնոսա իբրև զսիրելիս Թազաւորութեանն, և
- 5 զսրգի նորա առաջին սպաթար զՍմբատ ի մէջ ամենայն սպաթարացն, և կանախտատ 62, Եւ անդէն կարգեաց ի կարգն առաջի յամին հինգերորդի Թազաւորութեան իւրոյ, նոյնպէս և զՎահանն Խոնառունի և զայլ ևս: Եւ արձակեաց ի Հայս այլ ոմն իշխան, անուն Թումա: Սա ևկեալ ոչ կամէր եղծանել զուխտն, որ ի մէջ
- 10 կայսեր և իշխանին Մարաց: Միաբանեաց զամենայն իշխանսն ընդ ինքեամբ և զնաց առ իշխանն Մարաց և խաւեցաւ ընդ նմա ի խողաղութիւն: Եւ առ ի նմանէ ինչս բաղումս և խոստացաւ նմա երգամբ, զի տացէ տանել զԹէոդորոս կապանաւք ի պաղատն, զի նա էր իշխան աշխարհիս Հայոց: Եւ դարձաւ ևկն
- 15 անդրէն ի գաւրս Հայոց: Եւ իբրև ևկն յերկիրն Կոսէից, յանկարծակի յարձակեցան ի վերայ նորա, կալան զնա և կապեցին, և ետուն տանել յանդիման Թազաւորին: Իսկ արքայ Կոստանդին իբրև լուաւ խողկեցաւ յոյժ. զի ոչ էր ի հրամանէ նորա կապելն, և հրամայեաց լուծանել զնա ի կապանացն, և ընթեռնուլ զգիրս ամբաստանութեանն: Եւ ծանուցեալ զնինգութիւնն՝ հրամայեաց կոչել զառաջեաւ և ընկալաւ զնա սիրով, և նորին իշխանութեամբն պատուով: Եւ կարգեաց նմա ռոնիկ և ընդունելութիւն յարքունուսաւ Ազա հրամայէ կոչել զԹումաս ոմն, և ոչ հրամայեցաւ նմա մտանել յարքունիս, այլ
- 25 արտաքոյ քննութիւն առնել, և արդարացուցին զԹէոդորոս Ռըշտունեաց տէրն ի բանս իւր. և եղեն իրաւունս ի վերայ նորա: Իսկ զԹումաս անարգեալ ի բաց ընկեցին ի պատուոյս Յայնժամ տեսին զմիմեանս առպետ և Թէոդորոս Ռշտունեաց տէրն, և հեզուին արտասուա ի վերայ պարանոցի իւրեանց, զի էին սնընդակիցք միմեանց ի դրանն Խորովայ արքային Պարսից:
- 30 Բայց ասպետ ոչ կտրաց նուաճել ընդ իշխանութեամբն Յունաց, այլ արկ ի միտս իւր նինդութիւն: Եւ հրամանս խնդրեաց ի Թազաւորէն Կոստանդեայ, զի արձակեցէ արս չորս յընտանեաց

2 Ա լուսբ

5 Կարգալու և զսրգի նորա
զՍմբատ առաջին սպաթար ի
մէջ ամենայն սպաթարացն:

10 Հուկանալու և իբրև ևկն
Թէոդորոս

24 շԹումաս ոմն թվի սպաղելի
զԹումասն

իւրոց ի Հայս՝ տանել առ նա զինչս իւրս Եւ հրամայեաց թագաւորն առ նմա զհրամանս. իսկ նա այլակերպեալ զինքն՝ առ ընդ իւր արս երիտ, և հասեալ ի ծովեզր՝ եցոյց զհրամանն արքունիս և ի նաւն և էանց ընդ ծովն, և հապնեալ գնացեալ ի նմանութիւն թռչնոյ՝ եկն եհաս փութանակի ի Տայս և ամբացաւ անդառնդի ընկալան գնա Տայեցիքն խնդութեամբ:

Յայնմ ժամանակի ոչ ստեալ յուզմունք լինէին ի մէջ աշխարհիս Հայոց. քանզի փութանակի եկն եհաս հրամանն արքունիս առ զաւերավարն Հայոց՝ ունել զամենայն անցս ճանապարհացն, և յուղել յամբողջ աշխարհինս Ապա աղէ լինէր, եթէ եկն և ամբացաւ ի Հայս ի Տայս:

Յայնժամ հրաման ետ զաւերավարն Յունաց Թէոդորոս հանդերձ իշխանաւքն զաւերուն և նախարարաւքն Հայոց՝ արձակել զներսէս կաթուղիկոս առ ասպետ, և տանել նմա երդումն հաւատարմութեան, ի խնդրել նմա զիշխանութիւն աշխարհին, և անել նմա զկին իւր և զորդինս:

Եւ զնաց կաթուղիկոսն, հաստատեաց առ նմա զերդումն, զի մի այլ ուրեք կայցի ճանապարհ. և դարձաւ եկն անդրէնս Եւ զրեցին նոքա առ թագաւորն Կոնստանդին առնել նմա ըստ երդմանն, զոր խոստացաւ. քանզի էր գրեալ ասպետ առ թագաւորն այսպէս, եթէ զՄառայ քոյ եմ, և ոչ ուրեք երթամ ի ծառայութենէդ ձերմէ. բայց զի ասացին ցիս ոմանք, եթէ անդրէն երթալոց ես ուստի եկիրն՝ վասն այնորիկ զահի հարայ և փախեալ: Բայց արդ եթէ արժանի համարիք՝ միտմտութեամբ վաստակիմ, և կեամ և մեռանիմ ի վերայ ձերոյ աստուածաշնորհութեանդ: Յայնժամ հրամայեաց թագաւորն Կոնստանդին առնել զնա կիւրապաղատ, և տալ նմա ոչնակ պատուոյն և զիշխանութիւն աշխարհինս Եւ հրամայեաց արձակել զկին և զորդինս մեծաւ շքով, և ետ տանել զգահոյս արծաթեղէնս հանդերձ այլովք մեծամեծ ընչիւք:

Արդ՝ մինչդեռ դայր հրովարտակն և պատիւն առնել զնա կիւրապաղատ՝ յանկարծակի եհաս նմա հիւանդութիւն և մեռաւ Եւ բարձին զմարմինն նորա և տարան թաղեցին առ հաւրն իւրում ի Դաբիւհաւ Եւ զորդի նորա զանդրանիկ, որում անունն էր

4 Ա ի նմանութիւն

10 Ա յամբողջ

11 Ա չէք՝ ի (Տայս)

27 Ա այսակեզ և հետո՝ կուրապաղատ

27 Ա զսոփ, փիլիսոփայ

- Սմբատ, կարգեաց արքայ ի պատիւ հաւր իւրոյ, տուեալ նմա զիշխանութիւնն բնիկ տանուաւորութեանն ասպետութեան, և արար զնա զբունգար⁵⁰ զաւրաց իւրոց: Եւ նմա կին ի տանէն Արշակունեաց և յիւրոց մերձաւորաց, և արձակեաց ի բանակն առ զաւրս իւր: Եւ յետ այսորիկ արձակեաց զԹէոդորոս Ռշտունեաց տէրն ի Հայս մեծաւ պատուով, և ետ նմա զնոյն իշխանութիւն զաւրավորութեան, եթէ կամիցին իշխանքն Հայոց և եթէ ոչ կամիցին: Եւ եկն կարգեցաւ ի նոյն իշխանութեանն:
- Եւ եղև ի դալ միւսում ամի եկն զաւրն Իսմայելի յԱտրպաստական, և բաժանեցան յերիւ: Առաջ մի յԱյրարատ, և առաջ մի ի Սեպհական զնդին կողմանան, և առաջ մի յԱղուանտ: Արդ՝ որք ի կողմանս Սեպհական զնդին՝ արշաւեալ սփռեցան և հարեալ զամենայն կողմանսն զայն սախկ սրով սուսերի, առին զաւար և զգերութիւն: Եւ եկին ժողովեցան ի յՆրևան, և մարտեան ընդ բերդին, և ոչ կարացին առնուլ: Եկին ի յՈրդսդու, և ոչ նմա ինչ կարացին առնել: Գնացին անտի և բանակեցան յԱրծափս, հանդէպ բերդին առ ջրովն: Եւ սկսան պատերազմել ընդ բերդին, և բաղում աւճիրս փնասուց զործեցին անդ ի բերդէն: Արդ՝ էր նոցա ի թիկանց կողմանէ ել ի գլուխ անդր յԱսորենայ կողմանէ՝ որուս Կախանակտուցն կոչեն: Արդ՝ իջին ընդ այն արք ի վայր ի բերդէն՝ երթալ խնդրել ի բերդէն: Դարաւնից զաւր յաւգնականութիւն իւրեանց: Եւ ետ նոցա Սմբատ Բաղրատունի, սրգի Վարուդ Սահակայ՝ արս թ: Եւ զնացեալ ի զիշերի ելին ի բերդն և ոչ զգուշացան անդւոյն: Եւ զիտացին Իսմայելացիքն զտեղին, և զնացեալ ի նոյն հետին ելին ի բերդն, և կալան զտեղին մինչև ցառաւաւտն: Եւ արս Ժ պահապանս անդւոյն ըմբռնեցին ի քուն և սպանին:

5 Ա զբունգար
10 Ա յարարատ

11 55 ի սեփական (միշտ այսպէս)

14 Ա թ հերան, փիկ ի յՆրևան

Գ Լ Ո Ւ Խ ԽԳ.

Թէնզորոս Ռօստոմի հարկամէ՛ զԻսմայելացիս և քափէ՛ զաւարճ և զգեղին, զոր առեալ էր նացա յԱրծափս։ Այլ զուր Իսմայելացաց հարկամէ՛ սրով յԱյրաբառայ միմչիւ ի սահմանն Յայոց, Վրաց և Աղսւանից։

5 Իսաւամարտօրին առ Կոստանդնուպոլսով և չարայար պարտօրին Իսմայելացաց։ Կոստանդին կայսր առնէ՛ հառօրին ընդ Մաւնայ։ Եիմուրին և կեղեցւոյն յաճուն Զաւարթոց։ Ամբաստանօրին զաւրան Յունաց զՀայոց վասն իրաց հաւատոյ։ Հրաման ի Կոստանդնէ՛ առեալ միաբանօրին հաւատոյ ընդ Հռոմս։ Ժողով

10 և կեղեցական վասն խնդրոյ սիարամուրեան։

Նա և իսկ յամէն և րկրորդի Կոստանդինի, յամսեանն հոռի, որ աւր ԻԴ էր ամսոյն, յաւուր կիւրակէի ընդ առաւաւտս՝ ճշեցին Իսմայելացիքն ի բերդին վերջոյ և առաջոյ, և հարին զնոսա սրով առևերիւ։ Նա բազումք զահալէժ լեալ ստատակէին։ Նա զկա-

15 նայս և զմանկունս իջուցին ի բերդէն, կամէին սատակել։ և ոչ զոյր թիւ գերւոյն, և անասուն պանարացն բազում յոյժ։ Նա և ի վաղիւ առաւաւտուն ևնն հհաս ի վերայ նոցա զաւրավարն Հայոց, և հհար զնոսա անհուն կոտորածով։ Նա էին նոքա և րեք հազար ընաիր ապառաղէնս յամենայն զաւրացն Իսմայելի, և ոչ

20 ոք գերծաւ ի նոցանէ։ Բայց սակաւ ճողողրեալք հետևակք և րթեալ ամբացան ի շամբին։ Նա ապրեցոյց աւեր յաւուր յայնմիկ զբազմութիւն գերւոյն ի ձեռաց Իսմայելացւոցն։ և զԻսմայել խորտակեաց կործանմամբ մեծաւ և մեծան Բ իշխանքն Իսմայելի, Աթման և Ոգոմայ։ Նա և իսկ յազթուրթիւն մեծ զաւրավարին Հայոց։

25 Նա ևս տանել զաւրավարն Հայոց զընծայս Կոստանդինի պատեւրադմէն զընտիր ընտիր և րիվարացն ձ ձիւ զոր առեալ արքայի ուրախ և ինքն և ամենայն պաղատն, և արծակեաց անգլէն շնորհակալութիւն մեծ։

Իսկ այն զաւրն, որ ի կողմանս Այրաբատեան, հհար սրով

30 մինչև ի կողմանս Տայոց, Վրաց և Աղուանից, առ զաւար և զգե-

11 Ա Կոստանդինի

14 Ա բազում

17 Ա յիժ՝ զաւրավարն Հայոց

25 Ա Կոստանդինի

29 Ա արաբատեան

30 Ա գերութիւն

բութիւն, և եկն էանց ի Նախնական առ այն զաւր, որ մարտ
եղեալ կոուէին ընդ բերդին Նախնականի: Բայց սակայն ոչ կա-
րացին առնուլ զնա: Առին զբերդն Խրամայ, և սատակէին զնոսա
սրով, և զկանայս և զմանկունս գերի վարեցին:

- 5 Իսկ որ ի կողմանս Պաղեստինացոցն՝ հրամայեաց կազմել
նաւատորմիդս բազում. և եմուտ ի նաւ, և կալաւ զործ պատե-
րազմի ընդ կոստանդնուպոլիս: Եւ ոչ յաջողեցաւ նմա նաւա-
մարտութիւնն. քանզի ելին ընդդէմ նորա զաւրացն բազմութիւն
նաւաւք. և կործանեցին զնոսա ի խորս ծովուն, և զբազումս
10 վանեցին հրով, և զբազումս փախստական արարեալ հալածեցին:
Բայց սակայն զարհուրեցաւ արքայն կոստանդին. լաւ համարե-
ցաւ տալ սակ, և տոնել հաշտութիւն պատգամաւորաւք. և փու-
թացուցանէին Իսմայելացիք զՅոյնս, զի կատարեցն զրան հաշ-
տութեանն: Իսկ թագաւորն Յունաց կոստանդին, քանզի մանուկ
15 'էր, ոչ իշխեաց կատարել առանց կամաց զաւրուն, և զրէ առ
Պոսկոպ, զի երթիցէ ընդ նմա ի Դամասկոս առ Մաւրառ իշխոնն
զաւրուն Իսմայելի, և կատարեցէ զպայման հաշտութեան ըստ
զաւրուն կամացն: Արդ՝ իբրև հոռի Պոսկոպ զհրամանն արքունի
և լուաւ բանս ի վաւրացն՝ զնաց զհետ նոցա ի Դամասկոս առ
20 Մաւրառ իշխոնն զաւրուն Իսմայելի. և յայտնեաց զչափ սակին և
տեսց զսահմանն, և առ զհաշտութիւնն և զնաց:

- Յայնմ ժամանակի արկ ի միտս իւր կաթողիկոսն Հայոց
Ներսէս շինել իւր բնակութիւն մերձ առ սուրբ եկեղեցեացն որ
ի Վաղարշապատ քաղաքին, ի վերայ հանապարհին՝ յորում, տսնն,
25 ընդ առաջ եղև թաղաւորն Տրդատ սրբոյն Գրիգորի Շինեաց
անդ և եկեղեցի մի յանուն երկնաւոր Զուարթնոցն, որոց երևեալ
ի տեսլեան սրբոյն Գրիգորի բազմութիւն երկնաւոր զաւրացն:
Եւ շինեաց զեկեղեցին բարձր շինուածովք և չքնաղ զարմանա-
լեաւք, արժանի աստուածային պատւոյն, որում նուիրեացն: Ած
30 ջուր և հեղր զգետոյն և արկ ի գործ զամենայն վայրսն առա-
պար, տնկեաց այգիս և ծառատունկս, և շուրջանակի պատուա-
րեաց զբնակութեամբն զեղեցկադիր յաւրինուածով բարձր
պարսպաւ ի փոռս Աստուծոյ:

Այլ ոչ զադարեաց վիշապն այն ապստամբ, այլ թէ և առ-
տուածամարտ լինել կամեցաւ յիւրոց խորամանկութենէ. այլ

- երկնէր յարուցանել հալածանս ի վերայ եկեղեցեացն Հայաստանեայց աշխարհին: Քանզի յամս Կոստանդինայ Թագաւորի Թոռին Երակլի արկ ի գործ զխորամանկութիւն իւրոյ չարութեանն, արբանեակս իւր կալաւ զդաւրս Յունաց որ ի Հայաստան աշխարհին: Քանզի ճշ երբէք ընդունէին Հայք զՀոռոմն ի հաղորդութիւն մարմնոյ և արեան տեսանիւն և արդ՝ զրեն նոքա ամբաստանութիւն առ Թագաւորն Յունաց Կոստանդին և հայրապետն, թէ ժրբն զանաւրէնս համարեալ եմք յաշխարհիս յայսմիկ: Քանզի անարգանս համարին Քրիստոսի Աստուծոյ զժողովն Քաղկեդոնի և դամոսարն Լեոնի, և նոյովն զնոսան: Յայնժամ հրաման ևս Թագաւորն հայրապետուն հանդերձ, և զրեն հրովարտակ առ Հայս, զի միաբանութիւն հաւատոյ արտացեն ընդ Հոռոմի, զի մի խոտեակն զժողովն և դամոսարն զայն: Եւ էր անդ այր մի ի Բաղրեանդ գաւառէ, ի Բագաւան գեղջէ, որ էր ուսեալ զարուստ փիլիսոփայութեան, և անուն նորա Դաւիթ: Զնա հրամայեաց արձակել ի Հայս, զի երթեալ ի բաց հասցեն զհակառակութիւնն: Եւ ժողովեցան ամենայն եպիսկոպոսունքն և նախարարքն Հայոց ի Դաւին առ քրիստոսասէր կաթողիկոսն Ներսէս և առ բարեպաշտ դաւրափորն Հայոց Թէոփրոս Ռշտունեաց տէրն: Եւ տեսին զհրամանս Թագաւորին, և լուան զրանս փիլիսոփային, որ ուսուցանէր զերրորդութիւնն բաժանմամբ ըստ տաւմարին Լեոնի: Եւ իբրեւ լուան՝ չառին յանձն փոխել զճշմարիտ վարդապետութիւնն սրբոյն Գրիգորի՝ ըստ տաւմարին Լեոնի: Հանոյ Թուեցաւ ամենեցուն առնել թղթոյն պատասխանի:

3 ՏՏ չիթ՝ իւր

4 Բու. զգաւրսն որ ի յունաց աշխարհին: Աւղեցինք այսպես ըստ Առդիկի:

5 Ա զհոռովմի հաղորդութիւն: ՏՏ զՀոռոմի հաղորդութիւն: Աւղեցինք այսպես ըստ Առ-

դիկի:

6 ՏՏ չիթ՝ և (արեան)

13 Բու. տայր մի ի բաղրաւան գեղջէ: Աւղեցինք այսպես ըստ Առդիկի:

16 ՏՏ հասցէ

17 Ա եպիսկոպոսունսն

Գ Լ Ո Ւ Խ ԽԴ.

Պատճեն պատճենների քաղաքի եկեղյցի ի Հայոց ի Հռոմեոս քաղաք-
 րէն Կոստանդինոպոլս, զոր գրեցին Հայոց եպիսկոպոսոսն և Կարա-
 ղիկոսն Ներսէս Կոստանդնուպոլսի և զաւրաւարտն Յէնոպո-
 րոսի Թոմասեանց տեղում 64:

5

Համարիս և ուղղագրութեամբ մտմով նիկիական:

Աղայիս գրեց, ընթերցելի որ գրեցիստունէական
 հաւատն ունիս, աստուածասէր:

Հոգիւնկալ մարգարէիցն և յառաքելոցն Քրիստոսի ունիմք
 10 պատուէր՝ առնել աղաւթս խնդրուածովք ի վերայ աստուածա-
 սէր թագաւորութեանդ և ամենայն իշխանացն և դաւարց, և բո-
 լորովին ամենայն աստուածապաշտպաղատող, յոր սէրն Աստուծոյ
 հանգուցեալ է, և շնորհք աստուածային պարգևացն յայտնի են
 ի վերայ ձեր:

15

Զի ահա թագաւորութիւն մեծ և հզար քան ամենայն թա-
 գաւորութիւնս, զոր ոչ ձեռին մարդկան, այլ Աստուծոյ աջովն
 պսակեալ, զոր ոչ ոք կարացէ փոխանորդել՝ բայց Քրիստոսի
 թագաւորութիւն: Նոյնպէս և քահանայապետութիւն սուրբ՝
 շնորհին Աստուծոյ, նախարարք և զաւրք քրիստոսասէրք:

20

պանծացեալ ի լոյս աստուածասէր թագաւորութեանդ՝ անշարժ
 մնացաք ի մէջ չար և անաւրէն թագաւորացն Պարսից, Զի յոր-
 ժամ բարձին զթագաւորութիւնն և կորուսին ամենայն զաւրս
 աշխարհին Հայաստանեայց, և ի գերութիւն վարեցին զարս և
 զկանայս, իսկ ի մնացելոցն վերայ սուր եզեալ և շողացուցեալ՝

25

Նանայան դարձուցանել ի մոլորութիւն, այլ ոչ կարացին շարժել,
 նաև Եամայեցիին ևս անաւրէնք յունայնութեան իւրեանց: Մին-
 չև հրաման տալ Կաւստայ տրքայի և որդւոյ նորին Պարսկու-
 եթէ՝ Վերաքանչիւր ոք զիւր հաւատս կալցի, և զՀայս նեղել ոք

3 Գլխի վերնագիրը մինչև հա-
 տատն ունիս, աստուածասէր
 և եպիսկոպոսն է

4 Բայ. զաւրաւարտն: Ուղղեցինք

	այսպէս:
13	Ա շնորհ
23	Ա հայաստանեայ
28	ՏՏ կայցէ

մի իշխեսցէ: ամենեքին մեր ծառայք են, մարմնով մեզ ծառայեսցեն,
 իսկ վասն հոգւոցն, որ զհոգիւսն դատի՝ նա զիտէ: Ապա դար-
 ձեալ Խոսրով Որմզդի՝ յետ դերութեանն Երուսաղէմի, հրաման-
 5 եա ամենայն եպիսկոպոսաց կողմանցն Արևելից և Ասորեստանի
 ժողովել ի դուռն արքունի և ասէ. «Լսեմ եթէ երկու կողմանք են-
 ք խոստոնէիցն, և մին զմիւսն նղովէ. վասն զի չհամարին իրաւա-
 ցի: Արդ՝ միաբանութեամբ ժողովեսցին ի դուռն արքունի, զի
 զուլիզն հաստատեսցեն և զթիւրն ի բաց մերմեսցին: Եւ ժողո-
 վեցան ամենայն եպիսկոպոսունք և երիցունք և ամենայն հաւա-
 10 տացեալք կողմանցն այնոցիկ. և կացոյց ի վերայ նոցա ոստի-
 կանս զՍմբատ Բագրատունի, զանուանեալն Խոսրովայ Շրուռն, և
 զրժէկապետն արքունի: Եւ անդ էր ի դերութեանն և Զաքարիա-
 հայրապետն Երուսաղէմի և այլ բազում իմաստասէրք, զորս զե-
 15 րեալ էր յԱղեքսանդրացւոց քաղաքէն. որոց հրաման եա արքայ-
Խոսրով՝ արդարութեամբ ի վերայ հասանել, և զհամարիտն ծա-
նուցանել արքայի:

Եւ ժողովեցան ամենեքեան ի դահլիճն արքունի, և եղև ա-
 20 ղագակ. քանզի էին ոմանք ուղղափառութեան հաւատով, և զրով
 և կնքով հին թաղաւորացն: Եւ այլ Նեստորականք, և այլ բա-
 զում խոռոխեաղանճ ազանգոյն: Նաև հրէապետն Յոսի կառաջ՝
 մատուցեալ ասէր. «Մի կոչեսցի Աստուած այրն այն: Եւ ծանու-
 ցին զբանս թաղաւորին:

Պատասխանի ետ Թադաւորն և ասէ. «Ո՞յր հրամանաւ եկն
 25 նա ի տեղին յայն. արդ զանալից լիցի և զնասցէ: Նոյնպէս և
այլ բազմութիւն ազանգոց հրամայեաց հանել յատենէն: Բայց
 միայն զնիկիականն և զկոստանդնուպականն և զԵփեսոսին և
 զԲաղկեդոնին հրամայեաց ջննել:

1 Բու. շմբ ծառայք են մարմ-
 նով. իսկ վասն ուղղեցինք
 աշտեա ըստ Ասողիկի:

2 ՏՏ զհոգին դատել

4 Ա յարևելից

6 Բու. ինղովէ գինչ համարին:
 Այսպես ուղղեցինք ըստ Աս-
 7 ղիկի:

10 Բու. շոստիկան: Այսպես ուղ-
 8 ղեցինք ըստ Ասողիկի:

13 Բու. զզորս և զերեալ էր:
 Ասողիկ չուանի՝ և:

14 Ա յաղէկսանդրացւոց

18 Բու. շուղափառ հաւատով՝
 զրով: Այսպես ուղղեցինք
 ըստ Ասողիկի:

19 Ա այլք (բազում)

20 Բու. ժողովրդոց. փխկ ազան-
 20 ցոց: Այսպես ուղղեցինք ըստ
 Ասողիկի:

20 Բու. հայրապետն, փխկ հրէա-
 պետն: Այսպես ուղղեցինք
 ըստ Ասողիկի: Տ. ծանոթ. ՅՏ:

- Դիպեցան անդ արք երկու եպիսկոպոսք յաշխարհէն Հայոց, արք հաւատարիմք, զորս վասն բռնութեան աշխարհին էին ար-
ձակեալ, զի ծանուցեն թաղաւորին, Կուսիտաս Մամիկոնէից
եպիսկոպոս և Մատթէոս Ամատունեաց: Ունէին պատրաստական
5 անդ ընդ խնքեանս զգիր որբոյն Դրիգորի: Եւ հրամայեաց թա-
գաւորն հարցանել, եթէ շնորհց թաղաւորաց ժամանակս եղևն
ժողովքդ այդօքիկ: Եւ նոցա ասացին, եթէ շնիկիոյ ժողովն առ
Կոստանդնուսիւ եղև, իսկ Կոստանդնուպոլսին առ Թէոդոսիւ
Մեծիւ, և Եփեսոսին առ Փոքր Թէոդոսիւ, և Քաղկեդոնին առ
10 Մարկիանոսիւ: Պատասխանի ետ թաղաւորն և ասէ. շնորհց թա-
ղաւորաց հրամանքն չշմարիտ թուի լինել՝ քան միոյնս: Եւ ի
վերայ հասեալ թաղաւորն և վասն Նեստորի, թէ ճ, կամ ուստի,
կամ յորում ժողովի, և թէ զի՞նչ խաւսեցաւ, և հրամայեաց զնեա-
տորականսն հանել յատենէն անտի արտաքս: Նոյնպէս և վասն
15 Քաղկեդոնի ժողովոյն եւարց, եթէ չճյճ էին զլիաւորքս. և ծա-
նուցին նոս զամենայն և ասացին, եթէ Խնքեանք իսկ ի Նիկիայ
և Կոստանդնուպոլսի թաղաւորքն Կոստանդնոսն և Թէոդոս
Մեծն, իսկ յԵփեսոս՝ Կիւրեղ Աղէքսանդրու եպիսկոպոսն: Եւ ի Քաղ-
կեդոնի՝ Թէոդորոսոս եպիսկոպոսն, որ զնեստորին խորհէրս:
20 Էր անդ Նրան անուանեալ կաթուղիկոսն, և այլ եպիսկո-
պոսունք յԱսորեստանէ և յԱրուստամանէ և ի Քուստաստանէ, և
յայլոց աշխարհաց. վասն որոյ հրաման ետ արքայ Քոսրով քան-
գել զամենեցունց նոցա զեկեղեցիսն և որով ստատակել զնոսա, թէ
ճչգարձցին ի մոլորութենէն և ելանիցին յարքայական պազտայն:
25 Իսկ որք զՔաղկեդոնին՝ զՎիրոյ զԱղուանից կաթուղիկոսն,
և այլ բազում եպիսկոպոսունք ի Յունաց կողմանէ, և իշխանք,
որք եկեալ էին ի ծառայութիւն Պարսից թաղաւորին, որով և
զփայլեարն՝ իսկ հրամայեաց տալ. բայց խնդրեաց յետկար ի

- 1 ՏՏ եպիսկոպոս
3 Բուլ. զոր, փիւղ զորս: Այսպէս
բոս Ասողիկի,
3 Ա ծանուցանեն
4 Ա Մաթէոս
8 Ա ալուսեղ և Հետո՝ Կոստան-
դիանուպոլսին
12 Ա զնեստորականքն: ՏՏ զնեա-
տորականքն: Այսպէս ուղղեցինք
բոս Ասողիկի:

- 18 ՏՏ Եփեսոս
19 Ա Քաղկեդոնոս
20 Ա յի՞ճ՝ երան
24 ՏՏ Ելանիցին
25 Ա զՎիրոյ: ՏՏ զՎրաց, փիւղ
զՎիրոս Աղգեցիկնք բոս Աս-
ղիկի և Նորայրի ցուցման:
28 Ա զՂեփայլեարն: ՏՏ շքփայ-
լեարն: Տ. Ծանոթ. ՅՅ.
33 Ա յետիւտք

կողմանցն երկոցունց, զնիկիայն՝ որ առ Կոստանդինոսիւ, և զԿոստանդնուպօլսին՝ որ առ Մեծն Թէոդոսիւ [և զՍփեանսին՝ որ առ Փոքր Թէոդոսիւ, և զՔաղկեդոնին՝ որ առ Մարկիանոսիւ, և զամենայն քննել և ի վերայ հասանելու Եւ իբրեւ ծանեալ զամենայն հաւատեալ, և ճշմարտութեամբ ի վերայ եհաս՝ հնարցցնոսա և ասէ. «Նոքա երեքին ընդէ՞ր ոչ տասցին երկուս բնութիւնս՝ բաժանմամբ, որպէս զստայտ, յայտ է եթէ պարտ է և զմիշ յերկուս բաժանել և երկուս ասել Թաղաւորս, և ոչ միւ Զի և եւ յերկուց բնութեանց եմ, Թէպէտ ի հաւրէ և ի մաւրէ Թէպէտ ի հոգւոյ և ի մարմնոյ Բայց աստուածութիւնն, որ յամենայն տեղւոյ է, և զինչ կամի զամենայն լինել կամ առնել ճշ կարէ, աստուածութիւնն զինչ է»։

Ապա հրամայեաց հարցանել զԶաքարիաս հայրապետն Երուսաղէմի և զիմաստասէրն, որ յԱղեքսանդրացւոց քաղաքէն, զի զարգարն ասացելն երգմամբս Եւ նոցա պատասխանի տուեալ տսին. «Եթէ ոչ էաք մեք խոտորնակս գնացեալ առ Աստուծոյ՝ և ոչ նա բարկութեամբ խոտորնակս գնացեալ էր առ միշ. բայց արդ՝ երկուցեալ յԱստուծոյ՝ առաջի ձեր զճշմարիտն ասեմք, Հաւատաւ ճշմարիտ այն է՝ զոր ի Նիկիայն ասացին առ երանելոյն Կոստանդինոսիւ Եւ նմին միարան Կոստանդնուպօլսին և Սփեանսին. և նոցին միարան Հայոց հաւատն ճշմարտութեամբս Իսկ Քաղկեդոնի ասացեալն ոչ է միարան նոցին, որպէս ձեր բարեբարութիւնդ ծանեալ»։

Եւ հրաման տուեալ Թաղաւորն խնդիր առնել ի գանձու տեղւոյն, և դաին գրեալ զՆիկիայն հաւատս ճշմարիտս, և ի վերայ հասեալ ըստ միաբանութեան հաւատոյ աշխարհիս Հայոց, որ էք կնքեալ մատանեալ Կաւատայ արքայի և որդւոյ նորա Յուրովու՝ Յորոյ վերայ հրաման ետ արքայ Յոսրով, եթէ ամենայն քրիստոնեայք, որ ընդ իմով իշխանութեամբս եմ՝ հաւատ զՀայոցն կալցին Եւ որք միաբանին ընդ Հայոց հաւատոյն ի կողմանս Աստրեստանեայց, Կամյիշով միտրապօլիտ, և այլք տասն եպիս-

2 Ա զԿոստանդնի պօլսին (հետոս նախդես)

4 Ա ծանեալ հաւատեալ զամենայն

10 Բայ. աստուածութիւնն Թէ յամենայն տեղւոյ ոչ է, և զինչ կամի՝ զամենայն լինել

կամ առնել ճշ կարէ. Աստուածութիւնն զինչ է, Այսպէս ուղղեցինք ըստ Աստուծոյ

14 Ա ցիմաստասէրն

24 Աստուծոյ ուրիշ ի գանձու արքային, քիչ ի գանձու տեղւոյն

կոպտս. և աստուածասէր Թագունին Շիրին, և քաջն Սմբատ. և բաշկապետն մեծ: Իսկ զպատճէն ուղիղ խոստովանութեանն արքայ Խոսրով հրամայեաց կնքել իւրով մատանեաւն և տալ ի գանձս արքունի:

- 5 Իսկ արդ՝ զի եհան զմեզ Աստուած ի ծառայութենէ խաւարային իշխանութեանն և արժանի արար երկնաքաղաքացի Թագաւորութեանդ, ժրպփ ևս առաւել քան զառաւել արժան է մեզ վայելել ի խաղաղութեան, որ և պարտիմք խնդրել ի Քրիստոսէ Աստուծոյ վասն բարեպաշտ և աստուածասէր Թագաւորութեանդ՝ անշարժ Խալ մինչև յաւիտեանն, իբրև զաւուրս երկնից ի վերայ երկրի հանդերձ յաղթութեամբոյ բազմաւ, տիրելով ամենայն աիեզերաց, ծովու և ջրամաքի: Որ թէպէտ և մարմնով էջ ի մարդկային յազգէ, այլ ունիք զտեղիք աստուածային աթոռոյն: և լոյս փառաց աստուածասէր Թագաւորութեանդ լցեալ ունի զառ ի ներքոյս ամենայն, պսակեալդ յերկնաւատ, պարծանքդ ամենայն քրիստոնէից զաւրութեամբ աստուածային խային նշանաւն, նմանեալդ աստուածասէր, աստուածապաշտ, աստուածաշնորհ, քաջ և յազմող փրկութեանադործ երջանիկն Երակլի հաւրն քոյ, որ փրկեացն զամենայն երկիր ի դառն դահճէն: Եւ այժմ զնոյն շնորհեցէ Քրիստոս Աստուած ի մեռն բարեպաշտութեան քոյ:
- 10 Եւ որ վասն միաբանութեան հաւատոյ խնդիր հրամայեալ էր առնել, և զգիր բարեպաշտութեան խոստովանութեան արձակեալ էր առ մեզ անարժան ծառայոս, զոր իբրև տեսաք՝ երկրպագութիւն մատուցաք, և մեծաւ խնդութեամբ փառաւորեցաք զՔրիստոս, և աւրհնեցաք զբարերարութիւնն: Եւ արդ՝ այսպէս ուսաք զհաւատոցն համարութիւն: Եւ վհաննէս աւետարանիչն ասէ. «Ի սկզբանէ էր բանն, և բանն էր առ Աստուած, և Աստուած էր բանն»: Եւ նոյն զարձեալ ի Կաթողիկէին իւրում ասէ. «Որ էրն ի սկզբանէ, զորմէ լուսքն, որում ականաւես իսկ եղաք, ընդ որ հայեցաք, և ձեռք մեր շաշափեցին ի վերայ բանին կենաց: Ահա մարմին եղև բանն. և կեանքն յայտնեցան, և տեսաք և վկայեմք և պատմեմք ձեզ գլաւաւանական կենացն՝ որ էր առ
- 15 Բաւ Վերափ ևս տեսել պարտիմք խնդրել: Լոյսընք այդոս Ըստ Աստուծի:
- 20 Ա յիջ՝ և (աստուածասէր)

11 «Ի վերայ երկրի» բռնեով ընդհանով և զազանութեան Թագթը Աստուծի մաս:

հաւր, և երևեցաւ մեզն: Եւ նոյն Յովնաննէս ասէ յաւետարանին
 Թէ «ՋԱտառւած ուրուք չիք տեսեալն: Եւ Պաւղոս ասէ. «Ձոր ոչ
 սք ետես ի մարդկանէ, և ոչ տեսանել կարող էս: Իսկ զիմորդ
 ասէ, Եթէ եԱկանատես իսկ եղաք», և եթէ՝ «Ընդ որ հայեցաք և
 5 ձեռք մեր շաւշափեցին ի վերայ բանին կենաց», և եթէ՝ «Որ
էրն աս հաւր, և երևեցաւ մեզն: Այն կարի ահագին, որպէս պարտ
 իսկ է՝ ըստ աստուածութեանն. և այս կարի խոնարհագոյն և
 մարդասիրարար՝ ըստ մարդկային բնութեանս: Բայց յայտ իսկ է.
 զի զմարմնանալն Աստուծոյ պատմէ, որպէս տէրունականն պատա-
 10 մէ բան, Եթէ «Որ ետես զիս՝ ետես զհայր», «Ջիս» ասաց, որպէս
 զմի, և ոչ «զմեզ», որպէս զերկուս: Անդ զաստուածութենէն միայն
 ասէ «Որ միայն ունի զանմահութիւն բնակեալ ի լոյս անեղ և
անմատոյց», իսկ աստ՝ զմարդկութենէն և զաստուածութենէն. զի
 15 անտեսանելին ոչ երևէր, այլ ի տեսանելումն տեսանէին զանտե-
սանելին. զի ի տեսանելումն՝ հայրենի բնութիւնն աստուածային
 և մայրենի բնութիւնն մարդկային: Զի հայրենի բնութիւնն ի
 մարդկային բնութիւնն միացաւ անփոփոխելի միութեամբ: Եւ
 ծնաւ մի տեսակ—Աստուած և մարդ, որպէս ճրագն: Ծարսոնացին
 պատմէ. «Մի է, ասէ, Աստուած, և մի միջնորդ Աստուծոյ և մարդ-
 20 կան: Իսկ միջնորդն միոյ ուրուք ոչ է. զի յերկոցունցն զմիու-
 թիւնն. որպէս յԱրրահամէ, և ի Սառայէ Իսահակ ծնեալ միարա-
նութեամբ: Այսպէս և Քրիստոս ի Հոգւոյն սրբոյ և ի Մարիա-
 մայ ծնեալ մի բնութիւն, անզանդ և անշփոթ միութեամբ, ան-
 ճառ ըստ Աստուծոյ ի հաւրէ, և զի ոչ լուծաւ կուտութիւնն:
 25 Արդ՝ մի է տէր Յիսուս Քրիստոս, Աստուած և մարդ. կենաք
 կախեալ զփայտէ առաջի աշաց ըստ նախամարգարէին ձայնի,
 «Որոյ վիրաւքն բժշկեցաք ամենեքեան:» Այսպէս և երանելին
 Յովնաննէս զմիաւորութիւն պատմէ ի Կաթաւղիկէին իւրում ասե-
 30 լով. «Սա է, որ եկն ջրով և հողով և արեամբն Յիսուս Քրիստոս.
 ոչ ջրով միայն, այլ արեամբ և ջրով. և հողին է վոր վկայէ, զի
 հողին իսկ է ճշմարտութիւն: Սոքա երեքին են, որ վկայեն. հո-
 գին և ջուրն և՛ արիւնն. և երեքինն մի են: Եթէ՝ զմարդկան ինչ
 զվկայութիւն ունիցիմք՝ ապաքէն Աստուծոյ վկայութիւն մեծ է,

10	Ա զի, փիւ զիս	16	զեցինք աշտես
13	SS յանմատոյց	16	Ա չիք՝ ի (մարդկային
13	Բու. իսկ աղ, փիւ իսկ աստ:	23	Ա անշփոթ
	Ուղեցինք աշտես:	27	Ա ամենեքին
16	Բու. ի մարդկային: Զի, Ուղ-	33	SS զվկայութիւն մեծ է

- զոր վկայեաց ի վերայ որդւոյ իւրոյ, եթէ Վեա է որդի իմ սիրելի ընդ որ հանեցայ. զմա լուարուք: Եւ ոչ բաժանեաց յերկուս բնութիւնս և յերկուս անձինս և յերկուս միտս. այլ «զայն» և «զմայն» ասելով՝ զմիութիւնն յայտ արարեալս Որդէս և սոյն
- 5 իսկ աւետարանիչն յայտնէ ասելովն, եթէ Վեղին և Չուրն և արիւնն, և երեքինն մի են: Եւ ի միւսումն վայրի ասէ. «Եւ արիւնն Յիսուսի որդւոյ նորա սրբէ զմեզ յամենայն մեղաց: Եւ որդի Աստուծոյ է Յիսուս Քրիստոս և որդի մարդոյ. և երկուքինն ի միասին մի բնութիւնս Արդ՝ զի անմարմին և անմահ է աստուածութիւնն՝ ամենեցուն յայտ է. բայց այն առաւել զարմացմամբ և բարերարութեամբ լի, սքանչելիք և յոյժ մարդասիրութեան նշանակ: Զի անմարմինն մարմնանայր, և անտեսանելին տեսանիւր, անշաւափելին շաւափելւ, անժամանակն սկսանիւր, որդին Աստուծոյ որդի մարդոյ
- 15 լինէր, և զմարդկութիւն իւր խոռնէր ի թիւ աստուածութեանն իւրում: Արդ՝ զխոնարհելն մահու չափ և մահու խաչի՝ առաքեալն Աստուծոյ ասէ, եթէ Վիին թշնամիքն էաք, հաշտեցաք ընդ Աստուծոյ մահուամբ որդւոյ նորա: Եւ զարձեալ ասէ. «Որ յիւր որդին ոչ խնայեաց, այլ վասն մեր ամենեցուն մատնեաց զնա: Եւ զարձեալ՝ «Եթէ էր ծանուցեալ՝ ոչ արդեաւք զտէրն փառաց ի խաչ հանէին: Եւ զարձեալ՝ եթէ Վաստուած զորդին իւր առաքեաց ի նմանութիւն մարմնոյ մեղաց՝ և վասն մեղաց. և դատապարտեաց զմեզս ի մարմնի անդա: Զի՞նչ իցէ զդատապարտեացն». այն է, զի խափանեաց զայն որ զիշխանութիւն մահուն ունէր, այսինքն դատաւանայ իսկ զի՞նչ և առ մշակս այդոյն ասիցէ տէրն, եթէ Վերբն մերձեցաւ ժամանակ պաղոյն՝ առաքեաց զծառայս իւր առնուլ զպատու նորա. և կայեալ մշակացն զծառայս նորա՝ զոմանս տանջեցին, զոմանս քարկոծեցին, զոմանս սպանին. յետոյ առաքեաց զորդի իւր՝ ասէ. թերեւ ամաչեցին յորդւոյ աստի իմէ: Իսկ մշակն իրրն տեսին զորդին՝ ասեն. «ա է ժառանգն, եկաք սպանցուք զսա, և մեր եղիցի ժառանգութիւնն: Եւ հանեալ զնա արտաքոյ այգւոյն սպանին: Արդ՝ ոչ միայն բանն է որդի Աստուծոյ, այլ և բանն և մարմինն. և մարմինն բանին ի միտին. զի թէպէտ և մարդ է մարմինն, այլ և
- 20 30

3 Ա զոյն, փիկ զոյն

10 Ա ամենեցունց

10 ՏՏ յայտնի է

19 Ա մարդասիրութիւն

22 ՏՏ Վասն մեղաց-ից հետալացել են՝ (պիտաբել)

- Աստուած է: Արդ՝ որք ի սկզբանէ սկանառեալ և սպասաւորք
եղին բռնին՝ աշակերտաց իւրոց յայտնապէս ուսուցին: Աւ նոքա
զարձեալ իւրեանց աշակերտաց զնոյն աւանդելին, և դարձեալ
զնոյն աւանդութիւն դրով հաստատեցին: Աւ բազումք յառաքե-
լոցն բնկալան զձեռնադրութիւն և պիսկոպոսութեան, որպէս
զՅուսարամոս և զԵնանկլիտոս և զԿղեմնէտոս ի Հռոմ, և զԱնա-
նիոս յԱղեքսանդրիա, և զԵմաւոն Կղեովպեանց յԵրուսաղէմ,
զԴիոնէսիոս Արիսպոպոս յԱթէնս և զմեւ ևս Դիոնէսիոս ի
Կորնթոս, և զմիւս Տիմոթէոս յԱփեսոս, և զՏիտոս ի Կրետէս, և
զՊաղիկարպոս ի Զմիւռնիա Ասիացւոց, և զԷւոդիոս, որ է Պես-
րոս՝ յԱնտիոք, և Նրենիոս Փալիւսացի աշակերտ Պաղիկարպոսի
յնկեղեցւոյն Լաւդիկեցւոց: Աւ այլ ևս անթիւ բազմութիւն սքան-
չելի և եղիւնդոսաց և քահանայից և հոգեկիր նախասանից, փի-
լիսոփայից և սքանչելի մանկանց եկեղեցւոյ, որք զճշմարիտ հա-
ւատս եկեղեցւոյ ըստ առաքելական ձայնին գրով գրոշմեցին յիւ-
րաքանչիւր եկեղեցիս: Յայտնի ի Նիկիական ժողովոյն է, զի և
նոքա լիով էին ամենքին աշակերտք, որք յառաքելոցն ընկա-
լան, և ի Նիկիայ զնոյն հաստատեցին: Քանզի տեսցին զՈրդւոյ,
եթէ շնոյն բնութիւն Հաւր, որով ամենայն ինչ եղև յերկինս և
ի վերայ երկրի. որ յազազս մեր մարդացաւ և յազազս մերոյ
փրկութեան: Այսպէս և սուրբն Գրիգոր յառաջնոցն ուսեալ՝ մեզ
վարդապետեաց, եթէ թմբ ի մարմինն հաւատացին՝ ծանոյց նո-
ցա դաստուածութիւնն իւր. և որք ի մարմնոյն զթեցին՝ ուրա-
ցան զբնութիւն նորա: Քանզի մարմնացաւ ի մի բնութիւն, և
խառնեաց միացոյց զմարդկութիւնս ընդ իւրում աստուածու-
թեանն, զանմահն ընդ մեռելութեանս, զի զամենայն մարդիկ ան-
քակ աբասցէ յանմահ աստուածութենէ իւրմէ: Արդ ունիմք մեք
հաւատս ոչ ի նորադուինց սահմանեալ, այլ որպէս բնկալաց մեք
ի սուրբ առաքելոցն ի ձեռն հայրապետին մերոյ՝ արքայն Գրի-
գորի, վարդապետելով զՏրդատ արքայ և զԷլիսանն Հայոց աշ-
խարհին, գտցես եթէ և ամուր յառաջ քան զԿոստանդիանոս
Նաև սուրբն Ղևոնդ մեծ արքեպիսկոպոսն Կեսարու, ուր սնեալ և
ուսեալ էր սուրբ Գրիգորիոս, որ և ձեռնադրեացն իսկ զնա ի
քահանայապետութիւն, և նա զնոյն հաստատեաց զաւանդութիւն:

8 ՏՏ և զմիւս և զԴիոնէսիոս: Ա
յիք՝ և (Դիոնէսիոս): Ազգե-
ցինք աշակերտ
10 Ա ի զմիւս ևս

10 Ա զեւոդիոս, փիլի զեւոդիոս
12 ՏՏ յիք՝ և (հոգեկիր)
28 Ա ընդ մեռածաւ: Հ մեռելոս
30 Ա զԵլիսանն

Երկրորդ անգամ դարձեալ ի Նիկիայն ժողովեցան սուրբ և հը-
մարիտ հարցն հրամանաւ աստուածաւէր Թաղաւորին Կոստան-
դիանոսի, և ի բաց բարձին զամբարիշտ ազանդոյն մուկնու-
թիւնն, և սերմանեցին հաւատաւ հշմարիտս ընդ ամենայն տիե-
5 զերս Ուստի և մերն հանդիպեալ անդ սուրբն Ռատակէս որդի
սրբոյն Գրիգորի, որ ընկալաւ զհրամանս հաւատոյ ի սուրբ Ժո-
ղովոյն և ի մեծ Թաղաւորէն Կոստանդիանոսէ, բերեալ մատոյց
առաջի քրիստոսաւէր Թաղաւորին Տրդատայ և սուրբ քահանայ-
ապետին Գրիգորի հանգերձ հրամանաւք երջանիկն Կոստան-
10 գիանոսի։ Եւ ի վերայ այնորիկ հաստատեալ կամք, և բաւական
համարիմք զոչոյնս ի վարդապետութիւն ուղիղ հաւատոյս ըստ
ասացելուսն. «Մի փոփոխե՛ր զսահմանս հաւատոյ՝ զոր հաստատե-
ցին հարցն քոյս։»

Եւ դարձեալ երկրորդ անգամ յորժամ հանդերձեցաւ Թաղա-
15ւորն Տրդատ, և առ ընդ իւր զսուրբ եպիսկոպոսն Գրիգորիոս և
զնորին որդին զՌատակէս եպիսկոպոս, և ի զինուորական կողմա-
նէն զչորեակին զահեբեցա իւրոյ տաճարին, և հանգերձ Հ հազար
արանց ընտրելոց զլիւսաւորաց յամենայն սահմանացն իւրոց՝
գնաց ի Հոռոմ տեսանել զԿոստանդիանոս։ Որ իբրեւ տեսին զմի-
20 մեանս՝ առաջի կալաւ Կոստանդիանոսի զսուրբն Գրիգորիոս. և
նա խոնարհեալ յոստ սրբոյն Գրիգորի, զի աւրոնեցի ի նմանէ
Յայնժամ-միջնորդ կալան զհաւատսն՝ որ ի տէր Յիսուս Քրիս-
տոս, և երգամար միաւորեցան երկոցին Թաղաւորքն, անշուշտ
ունելով զխաղաղութիւն ընդ միմեանս մինչև յաւիտեան ի մէջ
25 Թաղաւորաց երկոցունց։ Եւ ևս հաստատեցին առ մեզ զհաւատոցն
հշմարտութիւնն, զոր հիմնադրեաց մեզ սուրբ Հոգին։

Զայլ ժողովս ուրեք լեալ մեք ոչ գիտեմք. և մեք այսպէս
համարիմք, եթէ այդ աստուածաւէր պալատանդ յերանելոյն
Կոստանդիանոսէ և ի ժողովոյն Նիկիոյ ունի զհաւատոցդ հիմնա-
30 դրութիւն։ Եւ ամենայն որ աւելի քան զայն ունի, թէ և յերկ-
նից հրեշտակ իցէ՝ նդովեալ եղիցի։ Արդ ամենայն վարդապետք
եկեղեցւոյ, որք փիլիսոփայական արուեստիւ գերազանցեալք և
աստուածային տեսութեանն հասու լեալ, հշմարիտ հիմնադրու-
թիւն ընկալեալ ի սուրբ առաքելոցն՝ այտի ի ձէնջ աւետարանե-

8 Ա երբեք, փիլի բարձին

5 Ա զստուածէս

17 Ա Հի հազարաց արանց

26 33 զհշմարտութիւնն

29 Ա Նիկիայ

33 Ա լիւսալք, փիլի լեալ

- ցին ընդ ամենայն տիեզերս Սուրբ և ճշմարիտ կաթողիկոսն մեր Գրիգորիոս ի Կեսարիա Կապադովկացւոց սնեալ և ուսեալ վարդապետեաց մեզ, յոր հիմնացեալ անշարժ կամք մինչև ցայժմ, և ի վերայ նորին ունիմք վարդապետս զսուրբ հարսն ճշմարտապատուս, որ ամենեքեան զնիկիայն խաւանցան—Յուստինոս, Դիոնիսիոս և Բեկտովր՝ Հռոմայ եպիսկոպոսք, և Դիոնիսիոս Աղեքսանդրացի, և Պետրոս վկայ, և Թէոփիլոս, և Աթանաս, և Կիւրեղ Աղեքսանդրացի եպիսկոպոս, և Բարսեղ Կեսարու եպիսկոպոս, և Գրիգոր Նազիազու, և Գրիգորն Նէոկեսարու սքանչելագործ, և Գրիգոր Նիւսացի, եղբայր Բարսղի, և այլ անթիւ հովիւք ուղղափառութեան՝ համաբարբառք նոցին, որոց պատմութիւնքն յայտնի են:

- Արդ՝ զի թշնամիք աստուածաշտութեանն բազում անգամ արշաւեալ կորուսին զերկիրս մեր. և որպէս զմարդիկ երկրիս կորուսին՝ և զկտակարանս եկեղեցւոյ և զվարդապետս նոյնպէս սպաւեցին: Եւ արդ՝ կտակարանս և վարդապետս ոչ գոն. զգիրս և զղալրութիւն մեք ոչ գիտեմք. բայց որչափ ինչ Յնացեալ են ի տեղիս տեղիս վարդապետական պատմութիւնք՝ ուսուցանեն մեզ այսպէս զհաւատոցն ճշմարտութիւնսն, որ ի Նիկիայն աւետարանեցաւ լոյս, յորս փութով հասանէր Ռատակէս, որդի սրբոյն Գրիգորի. և այսպէս քարոզեցաւ ձայն սիւնհոգոսական ժողովոյն Նիկիայ. Դ

ՀԱՆԳԱՆԱԿ ՆՌԻՄԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅՆ

- «Հաւատամք ի մի Աստուած հայր ամենակալ, յարարողն երկնի և երկրի, երևելեաց և աներևութից: Եւ ի մի տէր Յիսուս Քրիստոս, որդի Աստուծոյ, ծնեալ յԱստուծոյ՝ հաւրէ միածին, այս ինքն յեութենէ հաւր: Աստուած յԱստուծոյ, լոյս ի լուսոյ. Աստուած ճշմարիտ յԱստուծոյ ճշմարտէ, ծնեալ և ոչ արարեալ:

- 3 ՏՏ հիմնեցեալ
4 ՏՏ նորա՝
6 Ա բիկազը
6 Ա եպիսկոպոս կապուապոս (7)
14 Ա զմարդիկ երկիրս: ՏՏ մարդիկ երկիրս: Ուղղեցինք այսպէս:

- 16 Ա զկտակարանս և զվարդապետս
18 Ա վարդապետականք
19 ՏՏ ճշմարտութիւնսն հաւատոց
23 Ա յիք՝ շնորհալի Նիկիական ժողովոյն:
27 Ա ի գայութենէ, քիչ յեւթիցէ:

- Նոյն բնութիւն հաւր. որով ամենայն ինչ եղև յերկինս և յերկրի
երևելիք և աներևոյթք։ Որ յաղազս մեր մարդկան և վասն մերոյ
 5 փրկութեան իջնալ մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կոտորելապէս
ի Մարիամայ սրբոյ կուսէն՝ հոգւովն սրբովն։ Որ և էաւ հոգի, և
 մարմին, և միտք, և ամենայն որ ինչ է ի մարդ՝ ճշմարտապէս և
ոչ կարծեալք։ Չարչարեալ, այսինքն խաչեալ, թաղեալ, և յերիբ
 աւուր յարուցեալ, ելնալ ի յերկինս՝ նովին մարմնով նստաւ ընդ
 աջմէ հաւր Գալոց է նովին մարմնովն և փառաւք հաւր դատել
 10 ղկննդանիս և զմեռեալս, որոյ թագաւորութեանն ոչ գոյ վախճան։
 Հաւատամք և ի սուրբ հոգին յանեղ և ի կատարեալ, որ խաւա-
 ցաւ յաւրէնս և ի մարգարէս և յաւետարանս, որ էջն ի Յորդա-
 նան, քարոզեաց յառաքեալս, և բնակեցաւ ի սուրբս։ Հաւատամք
 և ի մի միայն ընդհանրական եկեղեցի, ի մի մկրտութիւն, յա-
 պաշխարութիւն և ի թողութիւն մեղաց, ի յարութիւն մեռելոց,
 15 ի դատաստանն յաւիտենից հոգւոց և մարմնոց, յարքայութիւնն
 երկնից և ի կեանսն յաւիտենականս։

- Իսկ ոյք ասեն՝ էր երբեմն յորժամ ոչ էր որդի, կամ էր
 երբեմն յորժամ ոչ էր սուրբ հոգի, կամ թէ յունից եղին, կամ
 20 յայլմէ էութենէ կամ ի գոյութենէ ասեն լինել զորդի Աստուծոյ
 կամ զսուրբ հոգին, կամ փոփոխելի, կամ այլայլելի՝ զայնպիսին
 նշովմէք. զի և զնոսս նշովէ կաթուղիկէ առաքելական եկեղեցի։
 Իսկ մեք փառաւորեսցուք՝ որ յառաջ քան զյաւիտեանս,
 երկիր պահանելով սրբոյ երբորդութեանն և միտնական Աս-
 25 տուածութեանն հաւր և որդւոյ և հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ
և յաւիտեանս յաւիտենից, ամէն։

- Եւ ապա կոչեցան ի Հոովմ, և յանդիման եղին Կոստանդիա-
 նոսի արքայի, և ուսուցին նմա զհաւատս ճշմարիտս, և վկայու-
 30 թեամբ հաստատեցին զհիմնադրութիւն հաւատոյն 67։

- Յամի ԺԳ՝ երեքասաներորդի կենարարին և փրկչին մերոյ
 30 Յիսուսի Յրիսաոսի թագաւորէ Դիոկղետիանոս երեք ընկե-

4 «Որ և» ուղղելի՝ որով
 4 22 յիք՝ էաւ Այսպես լրացրել
 ևն Մ և Գ

7 22 յիք՝ ընտաւ ընդ աջմէ հաւր
 Գալոց է նովին մարմնովն և ի
 Այսպես լրացրել են Մ-և Գ

13 Ա ընթանալական

15 Ա ի դատաստանն

18 Ա եղև

29 Ա, Այ յամի ԺԳ երեքասա-
 ներորդի Մ ուղղել և՛ յամի
 երկերիւք և չորրորդին Այս-
 պես և Գ, Տես Մանթ. 67

30 Ա Դէռիցիութեանս

- բաւքն Թաղաւորութեանն Հոռվմայեցւոց: Եւ յարուցին հալածանս
 ի վերայ քրիստոնէից, և աւերեցին զամենայն եկեղեցիս յամե-
 նայն տէրութեան իւրեանց: Եւ յամի եւթանասուն և հինգերորդի
 5 կենացն մեռաւ Կոստանդէս, և Թաղաւորեաց Կոստանդէոս որդի
 իւր ի Գալլիա և ի Սպանիա. և էր քրիստոնեայ ճշմարիտ Սո-
 ճակատ ընդ Մաքսիմիանոսի և ընդ Մաքսիմինոսի որդւոյ նո-
 րա, և ընդ Լիկիանոսի և ընդ Մարկիանոսի, և յաղթեաց նոցա,
 և կոտորեաց զնոսա՝ քանզի հաւատաց ի մի Աստուած տէր ամե-
 նայնի և յորդի նորա Յիսուս Քրիստոս, և գիտաց, եթէ նա ետ
 10 նմա զյաղթութիւնն: Եւ հրաման ետ քրիստոնէիցն շինել զեկե-
 ղեցիս և ապառել զտեղիս՝ ուր եղեալ էին մարտիրոսք, և մեծաւ
 պատուով մեծաբէր զքրիստոնեայսն: Եւ հրաման ետ ամենայն
 եպիսկոպոսաց ժողովել ի Նիկիա քաղաք. և ժողովեցան եպիսկո-
 պոսունք և սուրբք բազումք: Եւ եղեն անդ աւուրս Ժն. և ապա
 15 եմոյձ զնոսա ի պազման: Եւ մինչ ժողովեալ կային միահամուռ
 յոսկեղաւծ պատշգամի միոջ՝ եմուտ եկաց ի մէջ նոցա, և խոստո-
 վան եղև, եթէ Քրիստոնեայ եմ և ծառայ տեառն Աստուծոյ
ամենակալի, և Յիսուսի Քրիստոսի որդւոյ նորա սիրելւոյ: Եւ
 եղև խնդիր ամենայն եպիսկոպոսաց վասն հաւատոյ առաջի Կոս-
 20 տանդիանոսի արքայի: Ճաննցին զգիրս, և գրեցին հաւատս ճշ-
 մարիտս, որ ի Նիկիայն աւետարանեցաւ մեզ:
- Արդ՝ ի Ներոնիէ կայսերէ մինչև յերջանիկն Կոստան-
 դիանոս, և ի Կոստանդիանոսէ մինչև ի Մարկիանոս Թա-
 25 ղաւոր, ամենայն վարդապետաց զլիաւոր առաջնորդաց եկե-
 ղեցւոյ, ի քաջէն Թէոփիլէ ի մեծ ճարտարապետն սկսեալ,
 արուեստաւոր քաղաքացն Նզիպտացւոց և Աղեքսանդրացւոց և
 Հոռմայեցւոց և Կոստանդնուպուլսեցւոց և Անտիոքացւոց և
 Կեսարացւոց և Աթենացւոց և Կիւղիկեցւոց, և միանգա-
 մայն ընդհանուր ամենայն վարդապետաց եկեղեցւոյ... յա-
 30ւուրս Մարկիանոսի ի ձեռն տուամարին Լևոնի. Թէոդորիտոս
 զլուխ Քաղկեդոնի ժողովոյն, զոր նայն հաստատեաց չառափա-
 ութեամբ 68, Եւ մեզ մի լիցի պարծել բայց միայն ի խաչն
 տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի Նաև Դաւիթ իսկ պարծի ի

1 22 չիք՝ և (յարուցին): Այսպէս
 լրացել ևն Մ և Գ
 2 22 չիք՝ կենացն: Այսպէս լրա-
 ցել ևն Մ և Գ

5 Ա ի գալիկա, փիւլ ի գալիա
 27 Ա Կոստանդիանու պաշտպան
 28 Ա ընթանալ
 32 Ա չիք՝ մի

խաչ որդւոյ իւրոյ, և ոչ անարգանս համարեցաւ աստուածութեանն. ալ երբեմն կառք Աստուծոյ ասաց տէր, և երբեմն լեռան Սինեայ, և երբեմն բարձրութիւն երկնից, Բանդի ասէ. «Կառք Աստուծոյ բիւրապատիկք, հազարք ուղղիչք, և տէր ի նոսա ի Սինէ սրբութեանն: Եւ ի բարձունս և գերեաց զգերութիւնն, և զայլն ևս: «Կառք Աստուծոյ բիւրապատիկք, հազար ուղղիչք, և տէր ի նոսա, զի բիւրապատիկ է դաւրութիւն և փառք խաչին Քրիստոսի, որ բարձեալ ի վեր ունի զարարիչն երկնի և երկրի:» Եւ հազարքն ի Հրէից կանգնեցին զնա: «Եւ տէր ի նոսա ի Սինէ սրբութեանն: Եմյս արգեաւք զի նոսա, յայտ է՝ ի բիւրապատիկ դաւրութիւն և փառս խաչին. ուստի և զգերութիւնն թափեաց. և վասն այնորիկ մեք ոչ ամաչեմք ասել ցորդին Աստուծոյ. շուրբ և անմահ, որ խաչեցար վասն մեր, ողորմեմ մեզ»:

Իսկ վասն տէրունեան խորհրդեանն, զոր մեծաւ զգուշութեամբ բաշխեմք՝ այսպիսի ինչ. վասն զի ոչ ունիմք իշխանութիւն զսուրբն յանսուրբսն մատակարարելու: Վասն զի ունիմք մեք կանոնք համաշխարհականք կարգաց և աւրինաց, արանց և կանանց. զի որք կուսութեամբ զուգին՝ համարձակութեամբ վայելին ի տէրունական մարմնոյն, ըստ այնմ, թէ «Պատուական է ամուսնութիւն ամենեւեմք, և սուրբ են անկողինք»:² Իսկ երկրորդեանքն, և եթէ մին կոյս իցէ, և միւսն երկրորդական՝ հրամայէ ապաշխարել երկոցունցն ի միասին զերեւամ մի, և ապա հաւասարել աւրինաց: Իսկ զերրորդեանսն և զչորրորդեանսն ոչ ընդունի եկեղեցի, և ոչ իսկ իշխեն տալ զանուն հաղորդութեանն. ըստ այնմ թէ «Որ ուտէ և ըմպէ անարժանութեամբ՝ զաստատան անձին իւրում ուտէ և ըմպէ. զի ոչ խորէ զմարմինն տեառն: Եւ աստուածայինն բողոքէ ձայն՝ «Մի տալ զսրբութիւն շանց: Նաև ի աախաական քարեղէնս զմի ի տանս պատգամացն զամբ շնարան իւրով մատամբն գրեաց»:

Այլ տեսանեմք, զի և կարի իսկ ի հինսն և յառաջին փիլիսոփայոս պիղծ և զարդելի համարեալ էր պոռնկութիւնն.³ Զի Սողոմոն Աթենացւոյ աւրէնս եղեալ աթենացւոցն ի բաց կալ ի պոռնկութիւնէ և ոչ ընդունել զպոռնկորդին ի ժառանգութիւնս

2 Ա և իբրեւ երբեմն լեռան
3 Ա ուղիղք, փիլի ուղղիչք
10 Քալ. չ. յոյս. զ. զգեցիւնք չ. յոյս.
12 Ա իբր՝ և (անմահ)
17 33 Համաշխարհական

27 Ա զսրբութիւնս
28 Ա ի աախալն
31 Ա զպոռնկութիւն
32 Ա Սողոմոնի, փիլի Սողոմոնի
33 Ա հլ՝

Ղիկուրդոս Ղակեղավմայեցի աւրէնս եղ զակեղավմացւոց՝ ի բաց կալ ի պոռնկութենէ, և ոչ թաղել իսկ զպոռնկորդին:

2Թ էանով: 9 ոմն ղկին մարդ զաշակերտ Պիւթագորայ հարցնալ եղև, թէ յետ քանի աւուր մերձաւորութեանն ի կին մարդ արժան է յարքունիս [մտանել: և նա ասէ. «յիւրմէն նոյն աւրին. յաւտարէն»] և ոչ բնաւ:

Իսկ եթէ նոցա այնպէս զողջախոհութիւնն համուրեալ, ճշմարիտ ևս առաւել երկիրդիւ արժան իցէ և մեղ զառաքելականն կատարել զձայն, եթէ «Փախերճ» ի պոռնկութենէ: Գի թէպէտ և ոչ ոք է արդար և ոչ մի, այլ ոչ եթէ պարտ իցէ ի ձեռն յանդգնութեան զաստուածային զմարմինն թշնամանել: 2Բ պիղծն մերձեացի բերան, կամ դիմրդ ոչ զողովմն կալաւ զճաշակող՝ ի հուրն կենդանի աներկիւղաբար մերձեալ. այլ ունեւ լնաւ: 70, և ոչ մարդարէն արժանաւոր լինէր ճաշակել զնա, այլ միայն մերձեանալով ի շրթունս նորա անգէն ընկալաւ զմաքրութիւն:

Իսկ արդ՝ արժան իցէ անարբոցն և պղծոցն յերկրաւորացս յանդգնել յարքունիս: և կամ ճշ իսկ թոյլ տացէ մտանել, և կամ թէ ճշ հալածականս փախիցէ. այլ մանաւանդ եթէ և կամեացի ևս յարքունական սեղանոյն վայելել: 71 Բըշափ ևս առաւել յերկնաւոր թաղաւորին յարքունիս ունիցի ոք համարձակութիւն մտանել՝ ոչ ընկելով հանդերձ մաքրութեան, և աներկիւղ լրբութեամբ մատիցէ ի հուրն կենդանի, և ճաշակեացէ յարքունական և յերկնային սեղանոյն, այլ ոչ տարահալած լիալ արտաքս մերժեացի, ըստ այնմ, թէ «Ի բաց կացէք յինէն ամենեքեան՝ ոյք զործէք զանաւրէնութիւնս:

Մեք ընկալաք ի սրբոյն Գրիգորէ և յաստուածասէր Թաղաւորացն՝ ի Կոստանդիանոսէ և ի Տրդատայ, և յետ այնորիկ ապա կարգեցաւ մեղ Նիկիական լոյսն ի ձեռն նորին իսկ երջանիկն Կոստանդիանոսի, և ի նորին աւանդութեան վերայ հաստատեալ կամք, և ոչ խոտորիմք ի նմանէն ոչ յաջ և ոչ յահեակ: 72

և վասն այլ ժողովոց, որպէս և վերագոյն ասացաք՝ ճշմարտիւ ինչ մեք ոչ դիտեմք, բայց որպէս հին վարդապետացն

1 Ա գի կուրդոս, փիկ գիկուրդոս: Այսպէս ուղղուելն Մ և Գ

2 Ա, Ակ զթւանով: Մ՝ ի որ. և ՏՏ Աթէանով: Տ Ժաննթ 69

3 Բու, Եյիւրմէն աւրէն է: Այսպէս

ուղղեցինք ըստ Գիտոյից զԵրջի: Տե՛ս Ժաննթ. 69

10 ՏՏ զողովմն ոչ կայաւ

21 ՏՏ չէք՝ ի (կոստանդիանոսէ)

- ասացեալ է՝ առեբք և ճշմարիտ ասացեալ է զժողովն որ ի Կոստանդնուպոլսի մօզովնցան ի խափանումն Նեստորի ԶՔաղկեդոնի մօզովն չասացին ճշմարիտ. քանզի ասացին՝ առաջնորդ ժողովոյն այնորեկ որ յՆիքեսոս՝ զմիտան Նեստորի ունէին, բայց ոչ իշխէիզ ի վեր հանել. Եւ թէպէտ և արարին զժողովն Նաոխի ամբարշտութեանն՝ նման նորին այլանդակութեանն՝ զիւրեանց հաստատեցին չարափառութիւն. քանզի Նաոխոսն այն վրիպեալ ասէր, թէ «Յնկնից երեւր Քրիստոս զմարմինն». իսկ նոքա զմի Քրիստոսն յետ միանալոյ բանին և մարմնոյ՝ յերկուս բնութիւնս բաժանեցին, և ետուն կարծիս՝ զսուրբ զԵրրորդութիւնն չորրորդութիւն յաւելլով. Բանզի գտեալ զտուամարն Լեւոնի արձան չարափառութեան իւրեանց՝ ի վերայ նորին հաստատեցին զիւրեանց զԴնդակութիւն, և ասացին զմի տէր Յիսուս Քրիստոս յերկուց բնութեանց, ոչ ինչ բարձեալ բնութեանցն զանազանութիւն, վասն միանալոյն առաւել ողջախոհել զաւրութիւն երկաքանչիւր բնութեանց, և զերկաքանչիւրսն ի մի մի դէմ միաւորեալ՝ ոչ աստուածային բնութեանն տալ զմարդկային բնութեանն նուաստութիւնս, և ոչ մարդկային բնութեանն՝ զաստուածային բնութեանն ճոխութիւն. Անարժան և անկարելիս համարել՝ Աստուծոյ մարդ լինել, և ի կնոջէ ծնանել, և զամենայն կրել զմարդկային կիրս, և ի խաչին բեւեռել և մեռանել. Եւ

- Արդ՝ եթէ այդ ամենայն անկարելի էր՝ լինել ըստ մարմնոյ իւրոյ բանին Աստուծոյ՝ անկարելի էր ապա կուսին առանց առն յղանալ, և անապական ծնանել զմարդացեալն Աստուած, և անկարելի էր մարդումն ի հինգ նկանակէ զհինգ հազարսն կերակրել, և զյուրն ի զինի փոխել, և թքովն զաչս կուրին բանալ, և ի վերայ ջրոյն շրջել, և զգեա հալածել, և զմեռեալս յարուցանել, և զայլն ևս Իսկ մեք և ամինեքին որ զուղիղն խոստովանեմք, զի չէր լոկ մարդկային մարմինն, այլ աստուածութիւնն էր ի մարմինն. Իսկ զայնոսիկ, որ յետ միաւորութեանն պատուեն բաժանմամբ՝ խոտեմք և նզովեմք ըստ երանելոյն Կիւրդի Աղեքսանդրացոյ, որ ասէ, «Եթէ ոք ոչ խոստովանեցի, եթէ Աստուած է՝ ճշմարտութեամբ էմմանուէլ, վասն որոյ աստուածածին կոչոյն Մարիամ ծնեալ ընդ մարմնոյ զմարմնացեալ զբանն

Աստուած՝ նդովեալ լիցիւն՝ յեթէ ոք ոչ խոստովանեսցի ի մարմնի
 բնութեամբ միանալ բանին Աստուծոյ, և մի Գրիստոս զնոյն
 հանդերձ մարմնով Աստուած միանդամայն և մարդ՝ նդովեալ
 լիցիւն՝ յեթէ ոք զմի Գրիստոս բաժանեացէ յերկուս զէմս յետ
 5 միանալոյն, և միայն մերձաւորութիւն և յարեւութիւն ասիցէ,
 իբրեւ պատուով և կամ նսխութեամբ զաւրութիւն զտեալ, և ոչ
 միութիւն բնութեամբ՝ նդովեալ լիցիւն։ Եւ մեզ տէրունականն
 բողոքէ ձայնն. «Այնպէս լուսաւորեսցի լոյս ձեր առաջի մարդ-
 կան», այսինքն հաւատոյն ճշմարտութիւն, «որպէս զի տեսանիցեն
 10 զգործս ձեր բարիս, և փառաւոր առնիցեն զհայր ձեր որ յեր-
 կինս է»։

Իսկ մեք որպէս ընկալաք զհրամանս երկնաքաղաքացի և
 բարեպաշտ քո Թագաւորութեանդ, քաջ արանց արքայ Կոստան-
 զին, լուսադոյն համարեցաք զսահմանագրութիւնն ուղղափառ
 15 հաւատոյն, զոր ընկալանն հարքն մեր ի բուն առաջին վարդա-
 պետացն՝ գործով ծանուցանել առաջի աստուածատէր և բարե-
 պաշտ Թաղաւորութեանդ ի ձեռն պատճենիս։ Զի և մեր անար-
 ժանութեանս շնորհեսցէ Աստուած արժանաւորապէս խնդրել
 յԱստուծոյ զգիտութիւն բարւոյ, և աւրնել զաստուածատէր և
 20 զրարերար տէրութիւնդ, զի յաւիտեան տիրեացես ի վերայ
 ամենայն երկրի, ծովու և ցամաքի, յաղթութեամբ բազմաւ։

Գ Լ Ո Ի Ե ԽԾ.

Յարձակումն Իսմայելացոց ըստ սեպիեան Գանժէլի, Իմ խոսվարեամ
 ի Կոստանդնուպոլիս, ստացումն երեւելի արամց։

25 Ծառեցից դարձեալ զբուցելով զքանս ըստ չարիս հասելոյ ի
 վերայ մեր ժամանակի, վասն պատառման առաքապոսին հին հա-
 ւատոյ, և շնչել ի մեզ մահաբեր խորշակին, որ տապախառն
 արարեալ զմեծամեծ վարսաւոր զգեղեցիկ ծառս մատաղատունկս
 բուրաստանաց. և այս յիրաւի, զի տեսան մեղաք, և բարկացու-
 30 ցաք զսուրբն Իսրայելիս «Եւ թէ ախորժիցիք և լուիջիք ինձ,

16 չգործով թվում և ուղղելի՝

զբով

17 ՏՏ պատճենիս

17 Ա անարժանութիւնս

28 ՏՏ գեղեցիկ

առէ, զբարութիւնս երկրի կերիջիք. ապա թէ ոչ կամիջիք լսել ինձ՝
սուր կերիցէ գծեզ, դիւրեւան տեսան խաւսեցաւ զայս: 2
Զսոյն
իսկ մըրիկ ի վերայ Բաբելոնի տեսանի, այլ եկեալ հասեալ ի
վերայ Ժամնայն երկրի. վասն զի մայր է ամենայն ազգաց Բա-
բելոնի, և Թագաւորութիւն նորա Թագաւորութիւն կողմանց հիւ-
սիսոյ:

Իսկ հարաւային անդ քան զնոսա, այսինքն Հնդկիք և ի
նոսին կողմանէ ազգք բնակեալք յանապատին մեծի, ուրանաւ
որդիքն Արրահամու, որ ի Հագարայ և ի Քետուրայ ծնեալք—Իս-
մայէլ, Ամրամ, Մազան, Մադիամ, Յեքսան, Յեսրոկ, Մելիսաւէ. և
որդիքն Ղովտայ՝ Ամոն և Մովաբ. 3 և որդիքն Նաւայ, այսինքն
է Սդոմ, և այլք ևս, որ էին ի հարաւակողմն Հնդկաց, նոցին ի
հիւսիսոյ կողմանէ, ի մեծ և յահազին անապատէն, ուրանաւ
Մովսէս և որդիքն Իսրայելի բնակեալ էին, զոր ասաց մարգա-
րէն, եթէ Վիրաէս մըրիկ ի հարաւայ ընթացի, յանապատ
զնացեալ յահեղ տեղովէն, այն է անապատն մեծ և ահազին,
ուստի մըրիկ ազգացս այսոցիկ փոթորկեալ ել և կալաւ զամն
նայն երկիր, կոխեաց և հար զնա: Եւ կատարեցաւ ասացեալն,
թէ Եփրատն չորրորդ՝ չորրորդ Թագաւորութիւն կացցէ ի վե-
րայ երկրի, որ առաւել է չարեաւք քան զամնայն Թագաւորու-
թիւնս, որ արար անապատ զամնայն երկիրոյ:

Եւ արդ՝ զի՞նչ ևս զՀոռովմոց Թագաւորութեանն ասացից
զխոռովութիւն և զադէտս կործանման, որ ոչ երբեք զապարեաց
յընտանի պատերազմին. և հեղուքն արեան կոտորածոյ արանց
զլիւաւորաց և խորհրդակնաց ի Թագաւորութեանն, զոր պատ-
ցին խորհել խորհուրդ մահու ի վերայ Թագաւորին: Եւ վասն
այսորիկ կոտորեցին զամնայն արս զլիւաւորս, և ոչ մնաց ի թա-
գաւորութեանն այր խորհրդական. զի միահամուռ կոտորեալ
սպառնցան բնակիչք աշխարհին և իշխանքն որ ի Թագաւորու-
թեանն: Սպանին և զԳէորդ Մադիստրոս, և զՄանուէլ զայրն
առաքինի, որ էր աներ Սմբատայ ասպետի, որդւոյ մեծին Սմբա-
տայ Խաւրովայ Շուքն կոչեցելոյ: Զորմէ ասացին ոմանք՝ տեսա-
նել ի գիշերի ճրագունս լուցեալս ի տեղով սպանման նորա: Եւ
արկին զՍմբատ յաքսորս. վասն զի պարտաւորեցին զնա զաւրն

3 Ա բարիւղի
7 Ա հնդիք
11 ՏՏ այսինքն եզոմ
13 Ա Թագաւորութիւն

25 ՏՏ ի Թագաւորին վերայ
30 Ա շնուք
34 ՏՏ յաքսորն

իւրեանց ի յապատարութեան յետ իրացն հղելոց. 71 զի ասացին
 զնմանէ՝ ընդ Թաղաւորին, թէ Վաւեր նա, թէ պարս է արեան Մա-
 ղիստրոսին խնդիր ասնելոյ։ Եւ Մաղիստրոս էր իշխան զաւրուն որ
 յայնմ կողմանէ և սիրելի ամենայն զաւրացն։ Եւ Սմբատ էր իշխան
 5 զաւրու Թրակացւոց իշխանացն. և Մանուէլ գործէր ի Կոստանդնու-
 պուլիս զգարծ մագիստրէի։ Եւ ոչ կոչեաց Թաղաւորն զՄաղիստ-
 րոսն համարձակապէս իշխանութեամբ, երկուցեալ յապատարու-
 թենէ զաւրացն. այլ կոչեաց առ ինքն զասպետն Սմբատ և երգ-
 10 մեկոյց զնա ի խաչն տէրունական, որ ընդ անձին իւրում՝ զի-
 մի ումեք հանցէ զբանսն ի վեր, և արձակեաց զնա ի զաւրս իւր,
 և զի խաւսեցի ընդ Մաղիստրոսն խաղաղութեամբ՝ տարցի զնա
 խորհելով։ Իսկ նա երթեալ ոչ կարաց զնա խաբել, և մանաւանդ
 զի ոչ Թաղուցաւ ի նմանէ բանն։ Ապա խաւսեցաւ ընդ ամենայն
 15 իշխանս զաւրուն, և ետ նմա հրամանն արքունի։ Իսկ նոքա և
 ամենայն զաւրն իբրև ոչ կարացին ընդդիմանալ արքունի հրա-
 մանին՝ հոռու զնա ի ձեռս նոցա. զոր կալեալ կապեցին զնա
 և տարան յանդիման Թաղաւորին։ Եւ վասն այսորիկ զարք-
 Թրակացւոց իշխանացն խորհեցան ի վերայ նորա մահ, և աս-
 20 ացին զնմանէ պատճառս ապատարութեան խորհելոյ, զի մեոցի-
 բայց արքայն խնայեաց ի նա, և մերժեալ ի նոցանէ ապրեցոյց
 զնա։

Գ Լ Ո Ի Ե Խ Զ.

Պակտովմ Իսմայիլացւոց ընդ Պարսիկս։ Մահ Յազկերտի Բար-
 25 ձումն Սասանեան աշուրեանն։ Հայր մտանն ի Ժառայութիւն Իս-
 մայիլացւոց առաքնադարեամբ Թէպոստի Ռոստմույի Իսլ Կաս-
 անդիի կայսեր ի Հայո. բազում յիօյտանացն Հայոց գտն առ Յա-
 և ցուցանեն զմիամութիւն իւրեանց։

Եւ եղև ի քսաներորդի ամի Յազկերտի արքայի Պարսից, ի
 մեռտասան ամի Կոստասի կայսեր, որ կոչեցաւ յանուն հաւր իւ-
 30 բոյ Կոստանդին, և յամին ԺԹ-երորդի Իսմայիլացւոց տէրութեանն։

3 Բար յիք՝ Մաղիստրոս էր։ Լրա-
 ցելէք այսպէս։ Տ. Ժան. 71.
 6 Ա յիք՝ ոչ (կոչեաց)

9 Ա անձին իւր
 18 Բար յիք՝ ամի։ Այսպէս լրա-
 ցելէք։

- զաւրն Իսմայելացւոց, որ էին յերկրին Պարսից և Պուսաստանի՝
գնացին ընդ արևելա ի կողմանս Պահլան կոչեցեալ երկրի, որ է
երկիր Պարթևաց, ի վերայ Յազկերտի արքային Պարսից։ Եւ փա-
 խեաւ Յազկերտ յերեսաց նոցա, և ոչ կարաց ձողպրել։ Քանզի
 5 հասին զհետ նորա մերձ ի սահմանս Գուշանաց, և կոտորեցին
զամենայն զաւրս նորա։ Եւ փախուցեալ անկաւ ի զաւրս Թէտա-
լաց, որ էին ի կողմանցն եկեալ նմա յաւանականութիւն։ Եւ
իշխանն Մարաց, զորմէ վերագայն ասացի, եթէ զնաց յարևելա
առ արքայն իւրեանց և ապստամբեալ ի տեղի մի ամրացաւ, և
 10 խնդրեաց երդումն Իսմայելացւոցն, և զնաց յանապատն ի ծառայ-
ութիւն Իսմայելացւոցն։ Իսկ զաւրացն Թէտալաց կալեալ զՅազ-
կերտ սպանին, որ կալաւ զԹագաւորութիւնն ամս իւր։ Ըստրձաւ
տէրութիւնն Պարսից և աղղին Սասանայ, որ կալան զԹագաւորու-
թութիւնն ամս Շնի։
- 15 Արդ՝ իրև ևսևս արքայն Իսմայելի զյաջողումն յաղթու-
թեանն, և զի բարձաւ Թագաւորութիւնն Պարսից, իրև լցան
ամբ Գ պայմանի խաղաղութեանն՝ ոչ կամեցաւ ալլ աւելի առնել
խաղաղութիւն ընդ Թագաւորն Յունաց, ալլ հրաման ևս զաւրաց
իւրոց ունել զործ պատերազմի ընդ ծով և ընդ ցամաք, զի բարձցէ
 20 և դայն ևս Թագաւորութիւն յերկրէ, յերկոտասաներորդ ամի
Թագաւորութեանն Կոստանդի։
- Եւ ի նմին ամի ապստամբեցին Ղէայք և ի բաց կացին ի
Թագաւորութենէն Յունաց և հնազանդեցան ի ծառայութիւն ար-
քային Իսմայելի, եզին ուխտ ընդ մահու, և ընդ դժոխոց դաշինս
 25 կոնցին Թէոդորոս Ռշտունեաց տէր ամենայն իշխանաւքն Հայոց,
ի բաց ընկեցեալ զաստուածային դաշնաւորութիւնն։ Արդ՝ խաւ-
սէր ընդ նոսա իշխանն Իսմայելի և ասէր։ «Այս լիցի ուխտ հաշ-
տութեան իմոյ ընդ իս և ընդ ձեզ՝ որչափ ամաց և զուք կամի-
ջիք, և ոչ առնուամ ի ձէնջ սակ զերեսմ մի։ ապա յայնժամ տա-
 30 լիք երդմամբ, որչափ և զուք կամիջիք։ Եւ հեծեալ կալէք յաշ-
խարհիդ ԺԵ հազար, և հաց յաշխարհէն տուք, և ես ի սակն
արքունի-անդարեմ, և զհեծեալսն յԱսորիս ոչ խնդրեմ։ Բայց

1 Ա Իսմայելայ որ էին
 2 Ա երկիր
 3 ՏՏ որ էր
 4 Ա նորա, փխլ նոցա
 5 ՏՏ շիք՝ և (ապստամբեալ)
 18 ՏՏ զԹագաւորութիւն

20 Ա երկոտասաներորդ
 25 Ա Թէոդոս
 29 Մ սակ (զէրկի) է ամիւ եմ
 ներքեք ծանոթ. «ի ընդդէմ
 մեք գրեալ էք սակ զէրէ ամիւ»
 30 ՏՏ զերեսմ մի

այլ ուր և հրամայեմ՝ պատրաստ լիցին ի դործ. և ոչ արձակեմ
 ի բերդորայն ամիրայա, և ոչ տաճիկ սպայ՝ ի բաղմաց մինչև ցմի
 հեծեալս: Թշնամի մի մացէ ի Հայս. և եթէ վայ Հոռոմ ի վերայ
 5 ձեր՝ արձակեմ ձեզ դուրս յաւդնականութիւն՝ որչափ և զուգ կա-
 միցիք: Եւ երդնում ի մեծն Աստուած՝ եթէ ոչ ստեմա: Եւ այնպէս
 քակեալ պատասեաց զնոսա ի Հոռոմոց նեոին արբանեակն, զի
 թէպէտ և բաղում ազաշանս և պաղատանս գրեաց առ նոսա կայսրն
 և կոչեաց զնոսա առ ինքն, և ոչ կամեցան լսել նմա: Ապա առե-
 10 լան զամ ի Կարնոյ քաղաք, և եկայք զուգ առ իսա: Եւ կամ լան
 զամ առ ձեզ, և տամ ձեզ աւգնութիւն հողիկ և խորհիմք ի միա-
 սին, եթէ զինչ արժան իցէ տունիւ. սակայն և այնպէս ոչ կա-
 մեցան լսել նմա:

Եւ ամբաստանութիւն ամենայն զաւրացն Հոռոմին և՛ տըր-
 տունջ զմիտունեաց ահառնէն լինէին և զՀայոց՝ առաջի բաղա-
 15 ւորին իւրեանց վասն հարուածոց՝ որ եղին ի Մարդոցէնս: Զի
 տառցին, թէ «Միաբանեցան ընդ Իսմայելացիսն. զմեզ վստահո-
 ցուցին և զգաւրսն հապաղել ետուն յապատակ յԱսորպատական,
 և զնոսա ամին ի վերայ մեր յանկարծակի, և հարկանել ետուն
 զմեզ. և մեր ամենայն ինչ անդ անկաւ. բայց թող երթամք ի
 20 Հայս և մեր իրացն խնդիր տանեմք»:

Յայնժամ արքայ Կոստանդին հաւանեցաւ առնել զկամս
 դուրացն: Եւ առ զգաւրս իւր և զնաց ի Հայս չ հազարաւ: Եւ
 իբրև հասա ի Դերշան՝ ընդ առաջ եղին նմա արք իսմայելացիք
 և մատուցին նմա թուզթ յիշխանէն իւրեանց, որ էր զրեալ
 25 այսպէս, թէ «Հայք իմ են, անդ մի երթար. ապա թէ երթա-
 ւա զամ ի վերայ քոյ, և առնեմ զքեզ որ անդրէն փախչել ոչ
 կարես»: Իսկ արքայ Կոստանդին առէ. «Աղխարն իմ, և եւ
 երթամ. զու եթէ դաս ի վերայ իմ՝ Աստուած արդարութեան
 զատուոր էս: Եւ անաի զնացեալ եկն ի Կարնոյ քաղաք. յամի
 30 ԺԲ-երորդի թաղաւորութեան իւրում, ի քան ամի Իսմայելա-
 ցաց տէրութեանն»:

1 Բու. Հայուք և հրամայեմ:
 Թիզդեցինք. այսպէս: Կարող և
 լինել նաև՝ Հայուք՝ ուր և
 հրամայեմ:

4 ՏՏ կամիցիք

6 Մ. Նեոին արբանեակն: բա-
 ւերի տեղ աւել բազմակետեր:

(Գրաքննական խոստովանել):

10 Աստուածութիւն (աւգնութիւն).
 փիլի աւգնութիւն

14 Ա տեղեկն

25 ՏՏ մի երթաք

26 Ա տեղէն, փիլի անդրէն

- Եւ նստաւ արքայ Կոստանդին ի Կարնոյ քաղաքի աւուրս ինչ. անդ ընդ առաջ եղին նմա իշխանք եւ զաւրք Զորորդն կոչեցեալ Հայոց, եւ այլ ամենայն զաւրք եւ իշխանք, որ յայնմ կողմանէ գնացեալ էին յիշատականէն: Ընդ առաջ ելին նմա
- 5 Սպերացիքն, իշխանքն Բագրատունեաց, եւ Մանաղայքն, եւ Դաւթանազայքն, եւ որք յեկեղեաց զաւառէ, եւ ամենայն զաւրք տեղեացն այնոցիկ, եւ Կարնացիք, եւ Տայեցիք, եւ Բասկնացիք: Եւ անդ ընդ առաջ եղին նմա իշխանք Վանանդայ հանդերձ զաւրուն իւրեանց, եւ Շիրակացիք, եւ Խոփոտունին, եւ արք տանն
- 10 Դիմաքսենից: Անդ ընդ առաջ եղև նմա Մուշեղ Մամիկոնեան համազդեալքն իւրովք հանդերձ եւ այլովք ոմամքք իշխանաւք, եւ զաւր ըստ Այրարատայ կողմանէ. Առաւելեանք, եւ Առանեանք, եւ Վարաժնունիքն, եւ Գնթունիք, եւ Սպանգունիք, եւ այլք ընդ նոսին: Ընդ առաջ եղև նմա կաթողիկոսն Ներսէս, եկեալ ի
- 15 Տայոց: Եւ պատմեցին ամենայն իշխանքն Թագաւորին եւ զմիտս եւ զկոմս ապստամբութեան Ռշտունեաց տեառն, եւ փութանակի երթեկէս առ նա զեսպանացն Իմայելի: Յայնժամ նղովեաց Թագաւորն եւ ամենայն զաւրք իւր զՌշտունեաց տէրն, եւ լուծին զնա ի պատուոյ իշխանութեանն, եւ արձակեցին այլ այլ փութանակ նորա, եւ թ այլ ընդ նմա: Որ իւրև չողան հասին առ նա՝ կալան զնոսս եւ կապեցին, եւ ետուն տանել ի բերդն Բաղիշոյ, եւ զոմանս ի կղզիս Բղնունեաց. եւ ինքն չողաւ եմուտ յԱղթամար կղզի. եւ զաւրացն կողմանցն այնոցիկ եւս հրաման երթալ ամրանալ յԻւրաքանչիւր զաւառի: Եւ էին ընդ նմա
- ✓ 25 միտքան Վրացին եւ Աղուանն եւ Սիւնին, որք ըստ հրամանի նորա գնացին յԻւրաքանչիւր աշխարհ եւ ամրացան ի նմին: Իսկ Թէոդորոս Վանունեաց տէրն կալաւ զբերդն Արփայս. եւ Գրիգոր որդի նորա էր փեսայ Ռշտունեաց տեառնն. եւ Վարազ Ներսէսն Դաշակարին ամրացան ի ըսցւոյն, եւ ընկացան ի վերայ
- 30 զանձուցն. զի անդ էին ամենայն զանձքն աշխարհին, եկեղեցւոյ եւ իշխանաց եւ վանառականաց:

Իսկ արքայ Կոստանդին իւրև զայն լուաւ՝ կամեցաւ առնուլ առաք զզաւրացն բաղմութեան, եւ երթալ ձմերել ի Հայս, զի բարձցէ զերկիրն ի միջոյ: Եւ անդէն անկան ի վերայ

1 Ա Կոստանդին

6 Ա յեկեղեց

8 Ա տեղացն

12 Ա արայրատայ

19 ՏՏ իշխանութեանն

21 Ա բագաղիշոյ

23 Ա յաղթամար

23 Ա երթեալ

որեսաց իւրեանց կաթուղիկոսն և Մուշեղ ամենայն իշխանաւքն
 Հայոց, և մեծաւ աղայանաւք և արաստուալից պաղատանաւք
 խնդրեցին ողորմութիւն, զի մի ըստ նոցա յանցանացն իսպառ
 բարկացի և զերկիրն կորուսցէ։ Լուաւ արքայ պաղատանաց
 5 նոցա և արձակեաց անդրէն զգաւրացն բազմութիւնն. և ինքն
 զնաց յԱյրարատ ի հազարաւ Եւ երթեալ ի Դուին՝ նստաւ ի
 տան կաթուղիկոսին։ Եւ արար արքայ զՄուշեղ Մամիկոնէից
 տէր՝ իշխան Հայոց հեծելոցն, և արձակեաց զնա ի կողմն Սեպ-
 հական զնդին Գ հազարաւք. նոյնպէս արձակեաց ի գաւրաց
 10 իւրոց ի Վերս և յԱղուանս և ի Սիւնիս՝ քակտել զնոսա ի միա-
 բանութենէ։ Այլ զաւրքն նստէին շուրջ զԱրփայիւ ի լեռնակող-
 մանն և ի գաշաակողմանն, իսկ Թէպէտ առ ժամանակ մի ոչ
 կամեցան հնազանդել, սակայն յետոյ նուաճեալ ի ծառայութիւն
 15 Բայց Աղուանն և Սիւնիս և զուինքն Սեպհական ոչ հնազանդե-
 ցան, զորոց զերկիրն աւար առեալ տարան զինչ և գաին, և
 գարձան անդրէն առ արքայ։

Գ Լ Ո Ւ Խ ԽԷ.

Վասն Հայոց կարգիկոսիմ Ներսիսի. հաղորդել մտաւ եւ այլաց
 եպիսկոպոսաց ընդ Հռոմսն առ երկիւղի։ Մի ոմն յեպիսկոպոսաց
 20 բռնազատի ի կայսերէն՝ հաղորդել ընդ կարգիկոսիմ։ Գարն Լուս-
 սանդի ի Կոստանդնուպոլիս։ Փախուա Ներսիսի յերեսաց իօխա-
 նացն Հայոց։ Թէպէտ Թոսուցի հարկանէ զգաւրս Յանաց, առնու
 զԹրապիզոն, ետայ առ Մուիտս եւ ընդունի զիօխանութիւն ի վե-
 րայ Հայոց, Վրաց, Աղուանից եւ Սիւնեաց։ Պաշտաստութիւն Թովոյ-
 25 ելացւոց առ ի առնուլ զԿոստանդնուպոլիս։

Արդ՝ ասացից փոքր մի ի շատէ վասն Հայոց կաթուղի-
 կոսին Ներսիսի, զի էր նա բնակութեամբ ի Տայոց, ի զեղջէն,
 որում Իշխանն կոչնու։ Եւ անեալ ի մանկութենէ յաշխարհին
 Յունաց և ուսեալ զիզդուս և զգարութիւն Հռոմիւն, և շրջեալ
 10 ընդ աշխարհս գաւրու կարգաւք զինուորութեան. և հաստատեալ

Գ Բու. Այրարատ։ Ուղղեցինք
 այսպէս։

8 ՅՅ սեփական

14 ՅՅ յԱղուանն և ի Սիւնիս և
 գուճոն սեփական

- զմիտ իւր ի վերայ ժողովոյն Քաղկեդոնի և ի վերայ առեմարին
 Լեւոնի: Եւ ոչ ուսմեք ի վեր հանէր զխորհուրդս ամբարշտութեանն,
 մինչև երես յապիսկոպոսութիւն յաշխարհին, և անտի կոչեցաւ
յաթոռ կաթողիկոսութեան: Եւ էր այլ առաքինի վարուք,
 5 պահուք և աղաւթիւք: Բայց ի սրտի իւրում ծածկեալ ունէր
 զթիւնս դառնութեան, և խորհէր հաւանեցուցանել զՀայս Քաղ-
 կեդոնի ժողովոյն, ըսյց ի վեր հանել զբանն ոչ համարձակէր:
 Մինչև եկն արքայ Կոստանդին և նստաւ ի տան կաթողիկո-
 սին, և քարոզեցաւ յեկեղեցւոյն սրբոյն Գրիգորի ժողովն Քաղ-
 10 կեդոնի յաւուր կիւրակէի: Եւ մատեաւ պատարագ հռոմեւէն ի
 հռոմ երիցուէ, և հաղորդեցաւ թագաւորն և կաթողիկոսն և
 ամէն հպիսկոպոսուէն, որ կամաւ և որ ակամայ: Եւ այսպէս
 շարժեաց կաթողիկոսն զճշմարիտ հաւատս սրբոյն Գրիգորի, զի
 կալեալ էր ամենայն կաթողիկոսացն հաստատուն հիմնադրու-
 15 թեամբ ի սրբոյ յեկեղեցւոյն ի սրբոյն Գրիգորէ մինչև ցայսաւր:
 Եւ զսուրբ և զվճիտ և զտկանակիտ աղբերացն պղտորեաց զջուրս,
 զոր ի վաղնջուց իսկ ունէր ի միտս իւր կաթողիկոսն, և ոչ
 իշխեաց յայտնել մինչև ցայն աւր: Եւ ապա դտեալ ժամանակ
 կատարեաց զկամս իւր. մտտնէր զմի մի յապիսկոպոսացն, և բե-
 20 կանէր տհիւ: Մինչ զի առ մահուն երկիւղիւ ամենեքեան զհրո-
 մանսն հաղորդութեանն կատարէին. մանաւանդ զի մեռեալ էին
 երանելիքն, որք էին հիմնաւորադոյնք:

- Բայց յումնմեկ հպիսկոպոսէ ըմբերանեալ առաջի թագաւո-
 րին՝ պապանձէր: Քանզի յառաջագոյն ձեռն արկեալ էր նորա և
 25 ամենայն հպիսկոպոսացն, նզովէր զժողովն Քաղկեդոնի և զսու-
 մարն Լեւոնի, և մերժէր ի հաղորդութիւն Հռոմին. և կնքեալ
 զնա մատանեաւ կաթողիկոսին և ամենայն հպիսկոպոսացն և մե-
 ծամեծ իշխանացն մատանեաւքն. և ետուն առ նա՝ զի պահեսցէ
 յեկեղեցւոյն: Իսկ յորժամ մատեաւ պատարագն, և հաղորդեցան
 30 ամենայն հպիսկոպոսուէքն՝ հպիսկոպոսն այն, զորմէ վերագոյն
 ասացի՝ ոչ հաղորդեցաւ, այլ չոգաւ էջ ի բմբէն, և ծածկեցաւ
 յամբոխին:

Եւ իբրև կատարեցին զգործ հաղորդութեանն և ետուն թա-
 գաւորն ի սենեակն՝ մատեաւ կաթողիկոսն և Հռոմ երիցունքն և

4 Ա վարիւք

9 Ա ժողովոյն՝ կիւրակէի

11 Ա իրիցուէ

13 «Զ» ի թվում ե ուղղել՝ զոր

20 Ուղղել՝ երկիւղի

34 Ա ի սենեակն

34 Ա իրիցունքն

արարին ամբաստանութիւն զեպիսկոպոսէն զայնմանէ, եթէ «Ոչ նստաւ յաթոռ, և ոչ հաղորդեցաւ ընդ մեզ, անարժան համարեցաւ զմեզ և զձեզ, չսգաւ էջ ի բեմբէն, և փածկեցաւ յամբոխին» և խաղկեցաւ Թաղաւորն և հրամանս ետ երկու արանց, զի կալցին զնա, և տարցին յանդիման նորա ի սենեակն:

- Պատասխանի ետ Թաղաւորն և ասէ. «Քահանայ, ես» Ասէ եպիսկոպոսն. «Եթէ կամի Աստուած և ձեր փառք» Ասէ Թաղաւորն. «Նա զի՞նչ ես գու, որ ես՝ քո Թաղաւոր, և դա՝ քո կաթուղիկոս և հայր մեր. և դու ոչ արժանի համարիս զիս ընդ քեզ հաղորդութեանն, և ոչ զգա» Ասէ եպիսկոպոսն. «Ես այլ մեղաւոր եմ և անարժան. չեմ արժանի ընդ ձեզ հաղորդութեան, բայց թէ Աստուած արժանի առնէր՝ ընդ ձեզ համարէի թէ ընդ Բրիտանոսի ի սեղանոյ և ի նորին ձեռացն վայելեցայցաւ Ասէ Թաղաւորն. «Թող զայդ և զայս ասա ինձ, եթէ դա Հայոց կաթուղիկոս է, թէ ոչ» Ասէ եպիսկոպոսն. «Այնպէս որպէս զուրբն Գրիգոր» Ասէ Թաղաւորն. «Ունիս զգա առ կաթուղիկոս» Ասէ «Այո» Ասէ Թաղաւորն. «Հաղորդի՞ն ընդ դմա» Ասէ. «Այնպէս՝ որպէս ընդ սրբոյն Գրիգորի» Ասէ Թաղաւորն. «Իսկ այսաւր վասն է՝ չհաղորդեցաւ» Ասէ. «Բարեբար Թաղաւոր, մեք զձեզ մինչ ի յորմս նկարեալ տեսանէաք՝ զողումն ունէր զմեզ, թող թէ անաւասիկ զէմ յանդիման տեսանեմք, և բերան ի բերան խաւսիմք» Մեք մարդիկ եմք տգէտ և տխմար, ոչ լեզու գիտեմք և ոչ զըզրութիւն, բայց եթէ նախ ուսանիմք՝ և ի վերայ հասանիմք. այլ զբարեբար հրամանսդ սրուծել ձկ իշխէ» Այս աշխարհ ամենայն կարգաց հրամանք յայս տեղւոյս և ի դմանէ ի դուրս ելանէ» Յառաջ քան զայս չորս ամառք՝ ժողով արար դա, և զամենայն եպիսկոպոսանս այսր ժողովեաց, և վասն հաւատոյ զիր ետ առնել, և կնքեաց նախ իւրով մատանեաւն, և ապա մեր, և ապա ամենայն իշխանացն մատանեաւք» Եւ զիրն այն աշխարհում և հրամայեցէ՛ք խնդրել և տեսանել» 72» Եւ նա կայր պատանաւաւ Եւ զիտացեալ Թաղաւորն զսենեակութիւն նորա՝ յանդիմանեաց զնա բանիւք բազմաւք ի լեզու իւր Եւ հրամանս ետ Թաղաւորն երթալ հաղորդել ընդ կաթուղիկոսին» Եւ իբրեւ կատա-

1 ՏՏ զամբաստանութիւն
12 Ա համարի
13 Ա ճրբաստի սեղանոյ և նորին
17 Ա ամա, փիւղ գետ
20 ՏՏ ի յորմն

21 ՏՏ բուծելով իշխէ Ա բուծելով
Այսպէս ուղղված և ուրիշներէց
24 Թղի ուղղելի՝ աշխարհի
29 Բու. մատենաւք. փիւղ մա-
տանեաւր

ընաց եպիսկոպոսն զերամանս Թաղաւորին՝ ասէ. «Աւրհնեացէ Աստուած զբարեբար և դաստուածաւոր Թաղաւորութիւնդ յաւիտեան, տիրելով ի վերայ ամենայն ծովու և ցամաքի հանդերձ յազխութեամբ բազմաւ: Աւրհնեաց և Թաղաւորն զեպիսկոպոսն և ասէ. «Աւրհնեացէ Աստուած զքեզ. այնպէս արարեր՝ որպէս վայել է քո իմաստութեանդ, և ես չնորհակալ եմ»:

Աւ աստիկ ստիպով փութացուցանէին զարքայ ի Կոստանդնուպօլիս վաղ հասանել անդր, և զնաց փութանակիւ: Աւ արար իշխան Լայոց զՄորիանոս անն հանդերձ հայ դաւրուն՝ որ ի նոցուն կոզմանէ:

Իբրև զնաց արքայ Կոստանդին ի Դունայ՝ զնաց և կաթուղիկոսն ընդ նմա: Աւ երթեալ զազարեաց ի Տայս, և այլ ոչ դարձաւ ի տեղի իւր. զի իշխանն Ռշտունեաց և այլ իշխանքն որ ընդ նմա՝ անհնարին ցամամբ փքացեալ էին ի վերայ նորա:

Իսկ Թէոդորոս Ռշտունեաց տէր զարանակալ եղև յԱղթամար կղզի, ինքն և փեսայ իւր Լամպրակ Մամիկոնէից տէր. և խնդրեաց յիւր զաւրս ի յիմայելացւոցն, և եկն է հազար այլ յաւանականութիւն նմա, և նստայց զնոսա յԱղիովիտ և ի Բզնունիս, և ինքն առ նոսա ելեալ, կայր ի մէջ նոցա:

Աւ իբրև անցին աւաւրք ձմերայնոյն, մերձ ի դատիկն մեծ՝ փախեաւ Հոռոմ և անկաւ ի Տայս. և հանին անտի. և ոչ ուրեք կարաց զեռեղել, այլ զնացին փախստական մինչև մերձ ի ծովեղերն: Աւ աւերեցին զամենայն երկիրն. առին և զՏրապիզոն քաղաք, և խաղացուցին առ և աւար և գերութիւն բազում յոյժ:

Ահա այսորիկ զնաց Թէոդորոս Ռշտունեաց տէրն առ Մաւրաա իշխանն Իսմայելի ի Դամասկոս և ետես զնա մեծամեծ ընծայիւք: Աւ ետ նմա իշխանն Իսմայելի հանդերձս ոսկեղէնս և ոսկեթիւս, և վառ մի նորին աւրինակաւ: Աւ իշխանութիւն ետ նմա զԼայս և զՎիրս և զԱղուանս և զՄիւնիս, մինչև ցիպակոն և զպարնակն Ճորայ, և արձակեաց զնա պատուով: Աւ նորա պայման էր եղեալ նմա՝ ամէն զերկիրն զայն ի ծառայութիւն:

Աւ եղև յամին մեծասաներորդի Կոստանդի լուծուալն լինի

1 Մ. ասէ: քառի մասին ունի ծանօթ. «Յարինակին զբոսլ էր ասէն»:

12 ՏՏ. իշխան Ռշտունեաց...

անհնարինն: Ուղղեղինք՝ էլ՝ խոնն... անհնարին:

18 Ա յազովիտ

19 Ա ել, փիւկ ելեալ

հաշտութեանն՝ որ ընդ Կոստանդին և ընդ Մաւրաս իշխանն Իս-
մայելի։ Եւ հրաման ետ արքայն Իսմայելի ժողովել գամենայն
զաւրս իւր ի կողմանս արևմտից, և ունել զգործ պատերազմի
5 ընդ Հոսամաց Թագաւորութեանն, զի առցեն զԿոստանդնուպա-
լիս, և ի բաց բարձցեն զայն ևս Թագաւորութիւնն։

Գ Լ Ո Ի Խ ԽԸ.

Թուր արքային Իսմայելի առ քաղաւորն Յունաց Կոստանդին, Գալ
Մաւրասայ ի Փաղկեղան։ Մտիկ եղմայ խորակէ ևս ցումէ զնա-
ւասորմն Իսմայելացաց. զաւրն Իսմայելացաց քաղաւորն Փաղկեղան։
10 Այլ բանակ Իսմայելացաց, որ արտաւէր ի Ալիս՝ եւրբի ի բնայ ձմե-
րայնայ։ Բոխանք Հայոց միարեւմիմ եւ քաթանն զՀայոս ի միջի
իւնեանց։ Ազէն ժողովեղեանն։

Ենթէ կամիս, ասէ, խաղաղութեամբ ունել զկեանս քոյ՝ ի
բաց կաց յընդունայն պաշտամանէդ յայդմանէ, զոր ուսեալդ ես ի
15 մանկութենէ։ Ուրացիր զՅիսուսն զայն և զարձիր առ տառուածն
մեծ, զոր եսն պաշտեմ, զԱստուած հաւր մերում Աբրահամու։ Եւ
զբազմութիւն զաւրաց քոց արձակեալս ի քէն յիւրաքանդիւր տե-
ղիս։ Եւ ես արարից զքեզ իշխան մեծ ի կողմանսդ յայդսիկ, և
արձակեմ ի քաղաքդ ոստիկանս, և քննեմ գամենայն պաննս և
20 հրամայեմ բաժանել ի չորս մասունս, երեքն՝ ինձ և մի՝ քեզ։ Եւ
տամ քեզ զաւրս որչափ և կամիցիս, և առնում ի քէն սակ՝ որ-
չափ և զու կարես տալ։ Ապա թէ ոչ՝ Յիսուսն այն, զոր զու
Քրիստոս կոչես, մինչ զանձն ոչ կարաց ապրեցուցանել ի Հրէիցն,
զքեզ զեմբդ կարէ ապրեցուցանել ի ձեռաց իմոց։

Եւ ժողովեցան գամենայն զաւրքն, որ ի կողմանս արևելից,
25 ի Պարսից և ի Խուժաստանէ և ի կողմանէն Հնդկաց և յԱրուսա-
տանէ և յԵգիպտացոց կողմանէ առ Մաւրաս իշխան զաւրուն,
որ նստէր ի Դամասկոս։ Եւ կազմեցին նաւս պատերազմականս
յԱղեքսանդրիս և յամենայն քաղաքս ծովեղերեայս։ Եւ լլին զի-
նուք և մեքենայիւք զնաւս։ Գձ նաւս մեծամեծս, առ մի նաւն
30 հազար այր յընտիր ընտիր հեծելոց, Եւ հրամայեաց զործել նաւս
Թեթևս ինդ հազարս։ Եւ զուամբեաց ի նոսա արս սակաւ վասն

Թեթևութեան, առ մի նաւ արս հարիւր, զի արագապէս ճախրեցին սլանալով առ մեծամեծ նաւաւք շուրջանակի ի վերայ միանանց ծովուն. և արձակեաց զնոսա ընդ ծով, եւ ինքն առ զգաւրս իւր որ ընդ իւր, և գնաց ի Քաղկեդոն: Իրրե հետս ի վերայ ամենայն երկրի՝ հնազանդեցան ամենայն բնակիչք աշխարհին ի ծառայութիւն՝ որ զծովեզերքն և լեռնականս և դաշտականս, իսկ բազմութիւն դաւրաց Հոռոմին չողան մտին ի Կոստանդնուպոլիս պահապան քաղաքին. և ապականիչն չողաւ եմուտ ի Քաղկեդոն, յամի երեքտասաներորդի Կոստանդնուպոլիս յեղր ծովուն նաւս բազումս Թեթևս, զի յորժամ ծանրագոյն նաւքն հասանիցեն ի Քաղկեդոն՝ նա փութանակի հասցէ յաւաքականութիւն նոցա: Եւ զթուղթ արքային իւրեանց ետուն տանել ի քաղաքն առ Կոստանդին:

Եւ առ արքայ զթուղթն և եմուտ ի տունն Աստուծոյ, և անկաւ ի վերայ երեսաց իւրոց և ասէ. «Տես, տէր, զնախառնիսս, զոր նախասեցին զքեզ Հագարացիքս այս. եղիցի սղորմութիւն քոյ, տէր, ի վերայ մեր, որպէս յուսամք ի քեզ, ինք զերեսս նոցա, անարգանաւք, և խնդրեսցեն դանուն քո, տէր. ամաչեցեալ խոռվեսցին յաւիտեանս յաւիտենից, և ամաւթայից կորիցեն. ծանիցեն զի անուն քոյ տէր է, և զու միայն բարձրեալ ես ի վերայ ամենայն երկրի»։ Եւ վերացոյց զպսակն ի զլիւոյ իւրմէ, և մերկացաւ զծիրանխն և զգեցաւ քուրձ, և նստաւ ի վերայ մոխրոյ, և հրամայեաց պահս քարոզել ըստ աւրինակին Նինուէի՝ ի Կոստանդնուպոլիս:

Եւ ահա նկին հասին ի Քաղկեդոն նաւք մեծամեծք յԱղեքսանդրացւոց կողմանէ հանգերձ ամենայն փոքր նաւովքն և ամենայն կազմուածովքն իւրեանց, զի էր կազմեալ ի վերայ նաւացն մանզղիոնս, և մեքենայս հրացանս, և մեքենայս քարընկէցս, աղեղնաւորս և պարսաւորս. զի յորժամ հասանիցեն ի պարիսպ քաղաքին՝ ի վերուստ ի զլիւոյ աշտարակաց զիւրեաւ ելեալ ի պարիսպն՝ անկցին ի քաղաքն եւ հրամայեաց զնաւն կարգել ճակատ առ ճակատս, և զիմել ի վերայ քաղաքին։

1 Ա հախարեցեն
2 Ա սկտնաց
3 ՏՏ աշխարհին բնակիչք
10 Ա զեղր
10 Ա նաւն, փխկ նաւքն

11 ՏՏ հասանիցին
11 Ա յօղնութիւն
12 Ա աշտարակ և հետո՝ թուիտ
15 ՏՏ զնախառնիսս
22 Ա զիմել

Նւ իբրեւ մեկնեցան ի ցամաքէն իբր երկու ասպարեղաւք՝
անդ էր տեսանել զգաւութիւն ահի տեսան. զի ակնարկեաց տէր
յերկնից սասաիկ հողմոյ բռնութեամբ, և յարեաւ հողմն, մըրիկ
մեծ, և զզրզեցաւ ծովն ի ներքուստ անդնդոց ի վեր, և բարձ-
5 րացեալ զիցանային ալիքն նորա իբրեւ զկատարս բարձրաբերձ
լեռանց, և հողմն փոթորկեալ ի վերայ նոցա հայթէր իբրեւ զամպ
և դռէր, և խոխոջիւն յանդնդոց լինէին: Սւ անկան աշտարակքն,
կործանեցան մեքենայքն, քակտեցան նաւքն, և ընկզմեցան բազ-
մութիւն զաւրացն ի խորս ծովուն: Եւ մնացեալքն ի վերայ տախ-
10 տակացն ցնդեցան ի վերայ այեաց ծովուն, և տարաքերեալ ալսբ
և անդր յելիէջս ալեացն կործանեցան: զի երաց ծովն զերեւոյն
իւր, և եկուլ զնոսա. և ոչ մնաց ի նոցանէ և ոչ մի: Նւ ապրե-
ցոյց Աստուած յաւուր յայնմիկ բարձրացեալ բազկաւ զքաղաքն
ի ձեռն աղաւթից աստուածաւէր Թազաւորին Կոստանդիանոսի,
15 և ոչ զազարեաց հողմոյն բռնութիւնն և ծովուն խառնութիւնն
մինչև ցփեց աւուրս:

Նւ եղև իբրեւ տեսին Իսմայելացիքն զձեռն ահի տեսան՝
բեկաւ սիրտ նոցա. և ելեալ ի դիշերի ի Քաղկեդոնէ՝ զնացին ի
անդի իւրեանց: Նւ միւս զաւրն, որ նստէր ի կողմանս Կապուս-
20 կացւոց՝ արար պատերազմ ընդ զաւրացն Յունաց. զոր եհար
Յոյնն, և զնաց փախտաւկան ի կողմանս Արուստատնի, հարեալ
աւար զՉորրորդ Հայս:

Նւ եղև յետ անցանելոյ աշնանային ժամանակին, ի մեր-
ձենալ ձմերայնոյ՝ եկն զաւրն Իսմայելի և նստաւ ի Դուին. և
30 խորէր երթալ հարկանել զՎերս սրով սուսերի ճաւաղէր ընդ նմա
ի ձեռն պատգամի սպառնալեաւք, զի կամ եկեացեն ի ծառայու-
թիւն նոցա, և կամ ի բաց Թողցեն զերկիրն և զնացեն: Իսկ
նոքա չափին յանձն տանել այնպէս, այլ պատրաստեցան ընդդէմ
նոցա ի պատերազմ. Սւ զնաց Իսմայելացիին ի վերայ նոցա պա-
30 տերազմաւ՝ երթալ սաստակել զնոսա խաղաւ:

Այն-ինչ եղև նոցա ի ճանապարհ ելանել՝ անկաւ ի վերայ
նոցա ցուրտ և ձիւն ձմերայնոյ. վասն որոյ չոգան փութանալի
և զնացին ի կողմանս Ասորեստանի, և ի Հայս անիրաւութիւն
ինչ ոչ գործեցին:

Իսկ իշխանքն Հայոց որ ի Յունաց և որ ի Տաճկաց կող-

7 Ա աշտարակոն

21 Ա յունն

8 Ա մեքենայոն... նաւն

22 Ա այս ինչ, քիչ այն ինչ

10 Ա ալսբ անդր

- մանէ, Համազասպ եւ Մուշեղ, և այլն ամենայն եկեալ ի մի վայր միարանեցան, և աւարին ընդ միմեանս հաշուութիւն, զի մի եղիցի ի մէջ նոցա սուր և արիւնհեղութիւն, և անցուցին խաղաղութեամբ զաւուրս ձմերայնոյն, զի և զլինականսն ապրեցուցանին Քանդի Ռշտունեաց տէրն անկաւ յախտս հիւանդութեան, և չոգաւ անկաւ յԱղթամար կղզիւ Եւ ոչ զայր նմա լինել կարողութիւն ելանել արտաքս կամ խորհել ինչ, Եւ բաժանեցին զերկիրն ըստ թուոյ իւրաքանչիւր հեծելոց, և կարգեցին հարկապահանջս ռակոյ և արծաթոյ:
- 10 Եւ աստ էր տեսանել զաղէտս տարակուսի, զաւրէն հիւանդաց, յորժամ տապանապետացի ցաւն, և հասանիցի ի խաւսից՝ այնպիսի ինչ եղեն: զի ոչ զայր մարդկան տեղի փախստի և թաղստեան, և ոչ խնայել ի ներքուստ, այլ որպէս ոք զի անկցի ի ծով և ելա ոչ կարիցէ գտանել:
- 15 Իսկ իբրև զայն ետես Ռշտունեաց տէրն՝ խնդրեաց իւր զաւրս յԻսմայելացւոցն, զի հարցէ զձայն և հալածական արասցէ, և զՎիրս սատակեացէ ի սուր սուսերի:

Գ Լ ՈՒ Խ ԽԲ.

- 20 Ապստամբութիւն Մարաց իսմայելացւոց, Ռեկումն զաւարեան Բամայելացւոց յայնկոյ Ճարոյ պաշտկին և փախստս մնացելոցն ընդ դժուարս լեռնն եռակասու:

- Յայսմ ամի ապստամբեցան Մարք ի ծառայութենէն Իսմայելի և սպանին զիշխանն հարկապահանջին արքային Իսմայելի, ապաւէն և թիկունս իւրեանց արարին զամուրս աշխարհին Մարաց, զանտառս խորածորս, զվիւս, զվիմուստ, և զխորածորս դժնդակ՝ որ զգետովն Գաղայ և զլերամբն Մարաց, զժիր և զքաջ՝ ազգացն զաւրութիւնս, որ բնակեալ էին ի նոսա, Դեխ և Դեղումն:
- 25 Քանդի ոչ կարացին համբերել գառն և զժնդակ ծառայութեանն և հարկին ծանրութեանն որ ի վերայ նոցա, զի անդրէն ի նոցանէ միոյ միոյ այլի քառուին ՅԿԾ պայուասիկ զբամ73. և որ ոչն կարէր տալ՝ առնուին ընդ միոյ միոյ զբամի մարդ մի, և ի բաց բարձին զհեծելութիւն և զիշխանութիւն աշխարհին: Վասն
- 30

- այնորիկ առևալ նոցա զանձինս իւրեանց ի կշիռս՝ լաւ համա-
րեալ զմահ քան զկեանս. զմի յերկուցն գտանել,—կամ մեռանել՝
և կամ ազատել ի նար ծառայութենէն։ Եւ սկսան զմնացեալ մար-
դիկն դարս ժողովել, և դունդս դունդս կազմել, և թերեւ կա-
5 բացեն զերծանել ի ժանեաց վիշապին և դառնալունչ գազանէն։
- Արդ՝ իբրեւ հոեւս բազմութիւն դաւրացն Խամայիլի, եթէ ոչ
յաշոդի նոցա գործն ի կողմանէ ամուր լերանցն Մարաց, քանզի
ոչ իսկ նուաճեցան ի ծառայութիւն նոցա Կեթրուս և Սկիւթեայ,
որ են զեաց Դելուսք, հանգերձ ամենայն ամբարնակ բազմու-
10 թամբն։ Եւ բազումք ծախեցան՝ յամուրս և ի խորածորս գահա-
վէժ լինելով, և բազումք խոցտեալ նետիւք ի խարձան դժկոտս
ի քաջ և արի պատերազմողացն՝ ստուցեալ ի բաց ի կող-
մանցն յայնցանէ, զէժ եզին երթալ ի կողմանս հիւսիսոյ,
յազգն՝ որ ըստ Կասրիական դրացն։ Զոգան հասին ի կապանս
15 ձորայ, Եւ անցեալ ընդ ներքս ընդ կապանն՝ աւերեցին զամե-
նայն կողմանս աշխարհին որ առ լեռնոտամբն. և ելեալ ընդդէմ
նոցա դարս սակաւս, որում Հոնաց դուռն կոչեն, հարին զնոսա,
զի էին կոմնապաւք տեղւոյն։
- Եկն այլ դար ի կողմանցն Թիտալաց, և բազլեցին զմի-
20 մեանս գաւրութեամբ սաստիկ, և ի պարտութիւն մատնեցաւ
դարն Խամայիլի առաջի դաւրացն Թիտալաց։ Եւ հարին զնոսա և
ստտակեցին սրով սուսերի։ Եւ ապրեալքն փախստակա՛ն ոչ կա-
րացին ճողողրել ընդ կապանն, զի եկն այլ դար նոցա ի նոցա
թիկանց. և նոցա զէմս ի լեռան արարեալ ի դժուարս մեծի լե-
25 բինն Կապասու, ելին ընդ կողածս լերինն հազիւ հազ, սակաւք
ճողողրեալք մազապուրծ, մերկ և բոկ, հետեակ և վիրաւոր, չոգան
անցին ի կողմանս Տիգրանի, յերկիր բնակութեան իւրեանց։

5 Մ. բաց եր Թոգիլ՝ չի ժանեաց
վիշապին և դառնալունչ գա-
զանէն, զնկով բազմակէտ.

ներ։
8 Ա Կեթրուս և Սկիւթեայ, Մ.
Կեթրուս Եւսկիւթեայ

Գ Լ ՈՒ Ծ.

- Մուօեղ Մամիկոնեան մասնէ ի ծառայարիւն Յունաց: Թէպէտոս
Ռօռունքի եւ այլ իօխանէ հնազանդիւն ի ծառայարիւն Իսմայելա-
ցաց: Պառերազմ Յունաց եւ Իսմայելացաց ի Նախնականքի եւ բն-
5 կանն Յունաց: Առանն կարծայ. աւերումն երկրն Հայոց, Ազուա-
նից եւ Սիւնիաց ի ձեռն Իսմայելացաց եւ ալ պառանդաւ Մահ
Թէպէտոսի Ռօռունայ: Համազասպ Մամիկոնեան կարգի իօխան
Հայոց: Կարգիկեան Ներսէս դառնայ յարաւ կարգիկոսութեանն եւ
կասարէ զօրնուած իկեղեցոյն Զուարթնոց:
- 10 Վերջարան. Հայք ապստամբին յԹմայելացաց. կաստումն պառան-
դացն: Մուօեղ Մամիկոնեան ի բաց կայ ի ծառայարեմէ Իսմայե-
լացաց եւ կօչի ի պալատն: Եռովորիւն ի մէջ զարացն Իսմայելի-
րաժանի անցաւ ի չորս մասունն եւ կաստի զմիմեանս Յաղբի
Մախառայ հազարապետաց, միապետի եւ տունի իսպաղարիւն:
- 15 Իսկ Մուօեղ Մամիկոնէից տէրն ապստամբեալ ի Յունաց
կողմանէն՝ հնազանդեցաւ ի ծառայութիւն Իսմայելի. եւ ի նմին
ամի զաւրն Իսմայելի որ ի Հայաստան աշխարհի՝ կալան ի ծա-
գաց ի ծագս զերկիրն ամենայն Եւ Թէպէտոս Ռչտունեաց տէրն
եւ ամենայն իշխանքն աշխարհին միաքանեալ հնազանդեցան ի
20 ծառայութիւն, եւ ամենայն իրաւք փութային զկամս նոցա կո-
տարել, զի երկիւղ տննարիւն մահու կայր ի վերայ նոցա:
- Եւ ամին յայնմիկ ի ձեռն նախանձու եղբաւր իւրոյ մատեն-
ցաւ երանելի այլն աստուածատէր Արաւազդէն Դիմաքսեան եւ
տուաւ ի ձեռն անողորմ դահնի Հաբիբն անուանեալ զաւրաղարի,
25 որ նստէր յԱրուճն Աշնակի Եւ սպան զնա սատակմամբ չարա-
չար մահուամբ:
- Յ. Եւ էին աւուրք ցրտաշունչ ձմերայնոյն, եւ նեղէր զնոսս
Յոյնն. եւ նոքա ցրտոյն ոչ կարէին ելանել եւ տալ պատերազմ
ընդ նոսա, այլ կիին յանկարծակի եւ զնացին անցին զգետովն, եւ
30 չոգան ամառացն ի Զարեհաւանի Իսկ Յոյնն իբրեւ ետես զայն՝
ոչ ինչ փոյթ արար վասն նոցա, այլ աւարեաց զերբզն Դըւնայ.

և զնոց ի Նախնաւան, և մարտեաւ ընդ բերդին, զի աւարեացէ զնա եւ: Եւ էր զաւարովար զաւրուն Յունաց Մաւրիանոս ոմն, զոր ասէին այր հաւատարիմ:

Արդ՝ ի հասանել ժամանակի զարնայոցն՝ կազմեցաւ պատ-
 5 բասեցեալ ի պատերազմ ընդ զաւրուն Իսմայելի Եւ Մաւրիա-
 նոս յամռեալ՝ զիւրն խորհէր կատարել զգործ: Եւ արդաւեաց Տաճիկն ի վերայ Յունին, որ մարտ եղեալ կռուէին ընդ բերդին Նախնաւանի: Եւար զնոսա և սասակեաց ի սուր սուսերի, և զմնացեալսն փախստական արարեալ: Եւ զնոց Մաւրիանոս փա-
 10 խստական, և չոգաւ անկաւ ի Վերս: Իսկ զաւրն Իսմայելի դարձաւ ի նոցանէ և պաշարեաց զՎարնոյ քաղաք, և մարտ եղեալ կռուեցաւ ընդ նոսա. իսկ նոքա ոչ կարացին զդէմ ունել նոցա պատերազ-
 մաւ, բացին զգուրս քաղաքին, և հնազանդեցան ի ծառայութիւն: Եւ նոցա մտեալ ի քաղաքն ժողովեցին ոսկի և արծաթ և զամն-
 15 նայն բազմութիւն ընչից քաղաքին. և կողոպտեաց զամենայն երկիրն Հայոց, և զԱղուտն, և զՄիւնիս, և մերկացոյց զամենայն եկեղեցիս: Եւ կալաւ պատանդ զգլխաւոր իշխանս աշխարհին և զկանայս և զուսերս և զգասերս բազմաց: |

Եւ Թէոդորոս Թշառունեաց տէրն համազդեալքն իւրովք
 20 զնոց ընդ նոսա. և տարեալ իջուցին զնոսա յԱսորեստան: Անդ մեռաւ Թէոդորոս Թշառունեաց տէրն, և մարմին նորա բերաւ ի գաւառ իւր, և թաղեցաւ ի գերեզմանի հարց իւրոց:

Եւ ունէր զիշխանութիւն Հայոց աշխարհիս Համադասդ Մա-
 միկոնէից տէրն, որդի Դաւթի, այր առաքինի յամենայն դէմս:
 25 Բայց ընդանհոուն և ընթերցասէր և ուսումնասէր, և ոչ ըստ հայ-
 րենի ազգին վարժ և կիւթ հրահանգաւք զինուորական վարժից, ոչ մտեալ ի ճակատ և ոչ տեսեալ զդէմ թշնամեաց: Եւ արդ՝ սկսաւ նախանձել ի ընութիւն հայրենի տանն քաջութեանն, ջեր-
 մեռանդ փութով կատարել և զգործ քաջութեան ըստ նախնեացն
 30 վարժից լիապէս կատարել, ի վերուստ խնդրելով զառաջնորդու-
 թիւն և զյաջողութիւն անձին քաջութեանն կատարել: |

Իսկ կաթողիկոսն Հայոց Ներսէս զնոց ընդ թագաւորին, որպէս վերագոյն ասացի, և յուեաց ընդ նմա ի Կոստանդնու-
 պաւլիս: Եւ ընկալաւ զնա անդ պատուով. և ետուն նմա ինչս և
 35 արձակեցին անդրէն ի սեղի իւր, և եկն զաղաքեաց ի Տայս,

6 Ա և պատրաստեաց
 5 «Ընդ զաւրուն» Թվում է ուղ-
 զելի՝ «զաւրն»

11 ՏՏ կռուեցան
 16 ՏՏ և զամենայն եկեղեցիս
 մերկացոյց

մինչև մեռաւ Ռշաուենեաց տէրն, դադարեաց ասպատակ Տահկին. և ասպա յետ վեցերորդի ամի հալածանացն դարձաւ անդրէն ի տեղիս իւր. և հաստատեցաւ յաթոռ կաթուղիկոսութեան. փութայր կատարել զյինուած եկեղեցւոյն, զոր շինեաց ի վերայ
5 պողոտային Վաղարշապատ քաղաքի:

Արդ՝ թէպէտ և վայրապար գրուցեալ տողեցից դրանս ի կարգի պատմութեանս ըստ անհաճար խորհրդոյ մտացս իմոց, և ոչ ըստ արժանաւոր շնորհի գիտութեան.) այլ սակայն անդր հայեցեալ ի կարգս ուսումնասիրացն, և հաստատեցից մարգարէական բարբառովն, որ ըստ հրամանի տեսածն խաւսեցեալ, Զի թէ և յառաջինս կանխաւ կատարեալ՝ այլ սակայն և ի վերջինսս մինչև յաւիտեան կատարեսցի ըստ բանին տեսածն որ ասէ. «Երկինք և երկիր անցցին՝ և բանք իմ մի անցցեն»: «Զի հաւր բորբոքեսցի, ասէ, ի բարկութենէ իմէ, այրեսցէ և իջցէ մինչև ի գոթոս ներքինս»: Եւ զի զնոցանէն ասէ՝ յայտ է, զի ասէ, եթէ Վառեսցին հրով, բորբոքեսցին հիմունք լերանց նոցա, այսինքն զմեծամեծ իշխանացն դրոճութիւնսն, Եւ թէ՝ «Կուտեցից չարիս ամենայն ի վերայ նոցա, և նետիւք իմովք սպառեցից զնոսան» Զի որպէս նետք թռուցեալք ի զրկաց ասն կորովոյ ի լայնալիճ աղեղանէ ի նպատակ՝ այսպէս և սոքա ի Սին անապատէ որ ի վերայ ամենայն երկրի կատարեալ սովով և սրով և ահիւ մեծաւ Եւ զի ի կողմանս անապատին բորբոքեցաւ հուր՝ այսպէս յայանապէս ցուցանէ այնու զի ասէ. «Լաւա առանց ըժշկութեան արձակեցես ի վերայ նոցա, զգազանս անապատի, որք այսր և անդր քարշնացեն զնոսա ընդ երկիրն: Զորմէ զտչէ մարդարէն Դանիէլ, եթէ «Գազանն չորրորդ ահեղ և զարմանալի, և հզաւր յոյժ.՝ ժանիք նորա երկաթիք, և մադիւք նորա պղնձիք. ուտէր և մանրէր, և զմնացեալսն առ ոտն կոտորէր: և այլն ևս. և ասպա եւր բանիցն ասէ. «Մերձ է աւր կորստեան նոցա, հասեալ է պատրաստութեամբ տէր ի վերայ նոցա: Որ և այս ևս կատարեսցի ի ժամանակի իւրում:

Ի նմին ամի ի բաց կացին Հայք ի ծառայութենէ Իսմայե-

7 Ա իմոյ
12 Ա յաւիտեան: Զիք՝ տեսան
14 Ա իմէ, փիւկ իմէ
17 Ա եթէ, փիւկ և թէ
19 Ա աղեղնէ

28 88 կոչէ
27 Ա պղնձիք
28 Ա և այլն ևս ևս ապա: 88 և այլն ևս ապա: Ու պղնձիքն այսպէս

լացւոցն, և հնազանդեցան անդրէն ի ծառայութիւն թագաւորին
Յունաց: Եւ արար արքայ Կոստանդին զՄամիկոնէից տէր զՀա-
մազասպ՝ կիւրապապա, և ետ նմա գահոյս արծաթիս և զիշխա-
նութիւնն աշխարհին Հայոց, և պատիւս ալլոց իշխանացն, և
5 զանձս դաւրացն:

Յայնժամ ետես արքայն Իսմայելի, եթէ ի բաց կացին Հայք
ի ծառայութիւն նոցա, զամենայն զպատանդսն, զոր տարեալ էին
յերկրէն, ողիս իբրև ՌՁԼԾ, սասակեցին զամենեսեան ի սուր
սուսերի. և Թագորդն սակաւք, թուով իբրև ԻԲ, որք ոչ զիպե-
10 ցան ի տեղւոյն, այն միայն ապրեցան:

Իսկ Մուշեղ Մամիկոնէից տէր, վասն զի էին նորա չորս
որդիք ի պատանդի առ Իսմայելացւոցն, վասն այնորիկ ոչ կա-
բաց ի բաց կալ ի ծառայութիւն նոցա: Եւ էր Համազասպայ
եղբայր մի ի պատանդի Բայց զայն՝ և այլ ևս յիշխանացն հան-
15 ղերձ կանամբք իւրեանց խնդրէին առ ինքեանս յԱսորիս: Վասն
այնորիկ լու. համարեալ զմահ քան զկեանս՝ ի բաց կացին ի ծա-
ռայութիւն նոցա, և հապճեպ երթեկով հնազանդեցան ի ծառա-
յութիւն թագաւորին Յունաց, հանդերձ միաբանութեամբ իշխա-
նացն և զաւրացն Աղուանից և իշխանացն աշխարհին Սիւնեաց
20 հանդերձ աշխարհաւս իւրեանց. որք լծեալ էին յառաջագոյն յաշ-
խարհագիրն Ասորպատականի 74, մինչև բարձաւ թագաւորութիւնն
Պարսից և տիրեաց Իսմայելացին, նոքա անդրէն նուաճեալ միա-
բանեցան ընդ Հայոց: Եւ ձերբակալ արարեալ զՄուշեղ և զայլ
ևս յիշխանացն որ էին ընդ նմա: Արդ՝ զայլ իշխանսն, զորս
25 ձերբակալ արարեալ էին՝ հրամայեաց թագաւորն թողուլ ի բաց,
բայց զՄուշեղ առ ինքն խնդրեաց:

Արդ՝ առաքեաց Աստուած խոռովութիւն ի մէջ բանակացն
որդւոցն Իսմայելի, և պատառեցաւ միաբանութիւն նոցա,
և խառնեցան ընդ միմեանս, և բաժանեցան ի չորս
մասունս: Մասն մի այն՝ որ ի Հնդկաց կոչմանն. մասն
մի այն՝ որ ունին զԱսորեստանն և զկողմանս հիւսիսոյ, մասն
մի այն՝ որ յնդիպոս և ի կողմանս Թեաւալացւոց. մասն մի ի

3 Ա կորապապա

8 Ա ի յերկրէն

12 Ա որդիս

13 ՁՁ շիրք Համազասպայ, եղ-
բայր մի, Մ և Պ ուղղել և
լրացրել են՝ շիրք (որդիք)

Համազասպայ (և) եղբայր մի:
Մինք ուղղեցինք այսպես:

18 Ա իշխան

20 Ա խառնակեցան, փիկ խառ-
նեցան

կողմանս Տաճկաց և յԱսկարան կոչեցեալ տեղւոյն Եւ սկսան
կռուել ընդ իրեարս, և անհուն կոտորածով զմիմեանս սատակելին:
Արդ՝ միարանեալ այն որ յնգիպտոս և որ ի կողմանս Տաճկաց՝
սպանին զթագաւորն իւրեանց, և աւար հարին զրազմութիւն
5 զանձուցն, և այլ թագաւոր նստուցին: Եւ ինքեանք զնացին
յիւրաքանչիւր տեղիս:

Իսկ այն իշխանն որ ի կողմանս Ասորեստանի էր, Մաւիաս
անուն իշխան նոցա, որ էր երկրորդ թագաւորին իւրեանց, իբրեւ
հոսե զեղեալսն՝ միարանեալ զգաւրս իւր, լիցնաց և նա յանա-
պատն և սպան զայն ևս արքայ, զոր նոքայն նստուցեալ էին, և
10 ետ մարտ ընդ գաւրացն որ ի Տաճկաց կողմանէ, և հար զնոսա
կոտորմամբ մեծաւ Եւ դարձաւ անգլէն յազթութեամբ յԱսորես-
տան,] Իսկ այն գաւրն որ ի յնգիպտոս, միարանեալ ընդ թագա-
ւորին Յունաց, և արար հաշտութիւն, և միաւորեցաւ Եւ բող-
15 մութիւն գաւրաց իբրեւ հնդեռտտան հաղարաց հաւատացին ի
Գրիստոս և մկրտեցան: Եւ սաստկացաւ արիւն կոտորածին տն-
հուն բազմութեանց ի մէջ բանակացն Իսմայելի. և զորք պատն-
բազմին տազնապէր զնոսա՝ զմիմեանս սատակելով: Եւ ոչ կարէին
զազարել փոքր մի ի սրսոյն և ի գերութիւնէն և ի սաստիկ պա-
20 տերազմացն: Եւ որ ի ծովու և ի ցամաքի, մինչև գաւրացաւ Մաւիաս
և յազթեաց ամենեցուն: Եւ հնազանդեցուցեալ ընդ ինքեամբ՝ և
թագաւորէ ի վերայ կալուածոց որդւոցն Իսմայելի, և առնէ խա-
ղազութիւն ընդ ամենեանս:]

5 Ա իւրեանք, փիւղ ինքեանք

15 Ասորիկի մաս՝ մկրտեցան ԹՁԻ

22 կալուածոյ

23 ՏՏ ամենեան (ամէն)

Յ ի չ ա ա կ ա ռ ա ն զ ր չ ի ն:

Զ յաինս ի զրոյց և զառաջինս ի
մեղաւորաց զանաբման զանաբուհոս

և զանիմաստ զԳրիգոր երէցս արժանի
առնել ազաւեմ զմեզ ով որ. ընթեր-
ցողք միով ողորմայիւ, և մեզաց իմաց
թողութիւն շնորհել ինչ և իմացն
ա՛մի, և նա որ յիշէ՛ յիշէ՛ լ ինիցի ի
Գ՛ և յորդարմիտ գառաւորէն մերմէ
Թ՛ է Գ՛ է, և նմա փոքր յաւիտեանս
ամէն:

ժամանակէն Սերեոսի Պատ-
 ները, վորոնց մասին խոսե-
 լնց նրա առաջին տողից,
 վաժ քառ և կամ մի քանի
 բներն աշխատել են ուղղել
 ր. 16) շատ համանական և
 զգայն ստորագրեալն կամ
 ստորագրելն Պատկանյան
 և զջան ստորագրելն Ֆեա-
 սմանակնն Մառ (եր. 279.
 և ստորագրելն Քալաթյանց
 նստորագրեալն կամ զգան-
 (եր. 33) ուղղում և՛ զգան-
 ծան.) ուղղում և՛ զգան-
 նորձերն. ինքնին ցույց են
 մեկն ստույգ չեւ
 ա հինգ թագաւորացն յի-
 նկատե, վոր Սերեոսը յուր
 ւն մեջ յուր գրելիք պատ-
 լաններէ—առաջին՝ նախնի
 բնները. յերկրորդ՝ այնու-
 ՛ զգարգեաց ժամանակացն,
 լղաղեաց վերաբերութեան
 և Բանի վոր Սերեոսի ժա-
 լակ վերկշական տարեթիվը
 բի մեջ հեղինակները սովոր
 տիրող թագավորների տա-
 ում և նկարագրել յուր ժա-
 տեղի ունեցան հինգ թա-
 վորներն են, ինչպես ցույց
 ւնը և Մ. Խորենացիէ աշ-
 ւ առաջարկը զբժտ ևն հին
 աղ քոթմտ և նորի:

կողմանս Տաճկաց և յԱսկարան կոչեցեալ տեղւոյն և և սկսան
կռուել ընդ իրեարս, և անհուն կռաւորածով զմիմեանս սատակէին:
Արդ՝ միաբանեալ այն որ յՆգիպոսոս և որ ի կողմանս Տաճկաց՝
սպանին զթագաւորն իւրեանց, և աւար հարին զբազմութիւն
5 զանձուցն, և այլ թագաւոր նստուցին: Եւ ինքեանք զնացին
յիւրաքանչիւր տեղիս:

Իսկ այն իշխանն որ ի կողմանս Ասորեստանի էր, Մաւիաս
անուն իշխան նոցա, որ էր երկրորդ թագաւորին իւրեանց, իբրև
հետ զեղեալսն՝ միաբանեալ զգաւրս իւր, [Հնաց և նա յանա-
10 պատն և սպան զայն ևս արքայ, զոր նոքայն նստուցեալ էին, և
ետ մարտ ընդ գաւրացն որ ի Տաճկաց կողմանէ, և հար զնոսս
կռաւորմամբ մեծաւ և և դարձաւ անդրէն յաղթութեամբ յԱսորես-
տան:] Իսկ այն զաւրն որ յՆգիպոսոս, միաբանեալ ընդ թագա-
ւորին Յունաց, և արար հաշտութիւն, և միաւորեցաւ և բազ-
15 մութիւն զաւրաց իբրև հնգետասան հազարաց հաւատացին ի
Քրիստոս և մկրտեցան: Եւ սաստկացաւ արիւն կռաւորածին ան-
հուն բազմութեանց ի մէջ բանակացն Իսմայելի, և զորք պատե-
րազմին տազնապէր զնոսս՝ զմիմեանս սատակելով: Եւ ոչ կարէին
զազարել փոքր մի ի սրոյն և ի դերութենէն և ի սաստիկ պա-
20 տերազմացն: Եւ որ ի ծովու և ի ցամաքի, մինչև զաւրացաւ Մաւիաս
և յաղթեաց ամենեցուն: Եւ հնազանդեցուցեալ ընդ ինքեամբ՝ և
թագաւորէ ի վերայ կալուածոց որդւոցն Իսմայելի, և առնէ խա-
ղաղութիւն ընդ ամենեսին:]


- 5 Ա իւրեանք, փխկ ինքեանք
15 Ասորիկի մաս՝ մկրտեցան ԺԶԹ
22 կալուածոյ
23 ՏՏ ամենեսին (ամէն)

Յ ի չ ա տ ա կ ա բ տ ն գ ո չ ի ն :

Զ ի տ ի ն ս ի զը չ ա գ և զառաջինս ի
մեղաւորաց զանաբման զանաբուհոս

և զանիմաստ զԴրիգոր Էրէցոս արժանի
առնել աղանձ զանկ ով որ. բնթեր-
ցողք միով ողորմայիւ, և մեղաց իմաց
թողութիւն շնորհել ինձ և իմացն
ս'մի, և նա որ յիշէ՝ յիշէ՝ և լինիցի ի
Բ'է՝ Բ'է, և նա փառք յաւիտեանս
ամէն:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ



Ծ Ա Ն Ո Յ Ո Ւ Յ Ի Ի Ն Ն Ե Ր ^{*)}

1. (Յ եր. 1)։ «Ջանստարագրեալ ժամանակն։ Սերեոսի Պատմության բազմաթիւ աղավաղությունները, վորոնց մասին խոսեցինք Առաջարկումս՝ սկսվում են հենց նրա առաջին տողից։ «Ջանստարագրեալ» անշուշտ աղավաղված բառ է կամ մի քանի քառի աղավաղություն, վորը բանասերներն աշխատել են ուղղել զանազան կերպով։ Միհրդատյան (յեր. 15) շատ հավանական է համարում «զանստորագրեալ» կամ «զայն ստորագրեալ» կամ «զայն ստորագրել», բայց նաև՝ «շան ստորագրել»։ Պատկանյան (ուսու. Թարգմ. Ժան. յեր. 1) կարդում է «շան ստորագրել»։ Ճեռտեր ուղղում է՝ «անտերիւր գրել ժամանակն»։ Մառ (եր. 279. Ժանոթ.) առաջարկում է ուղղել՝ «զայն ստորագրել»։ Խալաթյանց (եր. 73) առաջարկում է կարդալ «զանստորագրեալ» կամ «զանստորագրել» (պատվով)։ Մաաիկյան (եր. 33) ուղղում է՝ «զանսուտ գրեալ»։ Հ. Ակինյան (եր. 75, Ժան.) ուղղում է՝ «զանստուգն նկարագրել»։ Այս տարբեր փորձերն ինքնին ցույց են տալիս, վոր հիշյալ ուղղումներից վե՛ր մեկն ստույգ չէ։

2. (Յ եր. 1)։ «Ջամա և զաւուրս հինգ Թագաւորացն յիշատակելով»։ Ուշադիր ընթերցողը կնկատե, վոր Սերեոսը յուր այս կարճատև ու մութ ներածության մեջ յուր գրելիք պատմությունը բաժանում է յերեք շրջանների—առաջին՝ նախնի քաջերի վիպասանությունը և առասպելները. յերկրորդ՝ այնուհետև պատահած անցքերը, և յերրորդ՝ «զարգեաց ժամանակացոյ, այսինքն՝ հեղինակին ժամանակակից «զաղետիցս վերաբերութեան զամա և զաւուրս հինգ Թագաւորացն»։ Փանի վոր Սերեոսի ժամանակ դեռ սովորություն չէր դարձել փրկչական տարեթիվը գործածել ժամանակագրական հաշիվների մեջ՝ հեղինակները սովորելին անցքերի ժամանակը նշանակել տիրող Թագավորների անքիներով։ Ըստ այսմ Սերեոս խոստանում է նկարագրել յուր ժամանակի աղետալի անցքերը, վորոնք տեղի ունեցան հինգ Թագավորների որերով։ Այս հինգ Թագավորներն են, ինչպես ցույց ենք տվել մեր «Սերեոսի Պատմությունը և Մ. Խորենացի» աշ-

^{*)} Այս ծանոթությունները, ինչպես և առաջարկներ գրված են հին ուղղագրութեամբ, վոր մեքենագրելու ժամանակ փոխված է նորի։

խառութեան մեջ (յեր. 74—75) «Յունաց այն հինգ թագավորները, որոնց ժամանակ կատարված զեպքերը նկարագրված են Սերեոսի Պատմութեան այս ժամանակակից մասում, այսինքն Մորիկ, ֆոկաս, Հերակլ, Երակղակ և Կոստոս Ասպլին յույն կայսրը, վոր հիշվում է այս ժամանակակից պատմութեան մեջ՝ Մորիկն է, և վերջինը, վորի կենդանութեամբ վերջանում է պատմութեանը՝ Կոստոսն է»։ Յեւ վերջին, Սերեոսի Պատմութեան այս ժամանակակից մասը սկսվում է մի բանաստեղծական ներածութեամբ, վոր կրում է վերնագիր՝ «Մատեան ժամանակակեան» (այսինքն՝ ժամանակակից), «Պատմութիւն քաղաքական», (այսինքն՝ հինգ թագավորների) և ապա պարունակում է աղետների նկարագրութեանը (յեր. 32)։

Ն. Ազոնց (յեր. 12, ծանոթ.) միանգամայն ընդունում է մեր այս բացատրութեանը։ Եւր կողմից ավելացնում է, թե կարելի էր, փոխանակ Բյուզանդական կայսրներին, վերջնել Սասանյան թագավորներին, այսինքն՝ Ուրմիզդ, Պարսով Փարվեդ, Կավատ, Արտաշէր, Հազկերտ (Բայց այս զեպքում թագավորներին թիվը կդառնար յոթը, վորովհետեւ Սերեոս այս ժամանակակից մասում խոսում է նաեւ Պարսով Անուշոււանի մասին (նրա վերջին 14 տարվա), Բըր Բամբիլի մասին, վոր թագավորեց յերկու տարի, չխոսելով Պոռմի և մի քանի կարճատե թագավորների մասին, վորոնց թագավորութեան ժամանակը Սերեոս հաշվում է մի տարի։ Հ. Ալիյան (յեր. 48, ծանոթ.) յենթադրում է, թե այս հինգ թագավորները «հավանորեն 590—652 շրջանի թագավորներն են — Մորիկ, Պարսով Ապրուսեդ, Հերակլ, Կոստանդին, Հազկերտ» (Բայց Միշլեյս կարելի էր ժամանակի տեղութեանն արտայայտել՝ իրար խառնելով յերկու ազգերի և իրար ժամանակակից թագավորների տարիները)։

Ն. Մառ (յեր. 279—80) նույնացնում է այս հինգ թագավորներին՝ մի քանի տող ներքե հիշված՝ Հայոց և Պարթևաց հինգ թագավորների հետ, և այս հինգ թագավորները համարում է՝ Սիւկկյան յերեք թագավորներին — Սելուկոս Նիկանոր, Անտիոքոս Սոսեր և Անտիոքոս Թեոս, և Պարթևաց յերկու տառիկ Արշակներին — Արշակ Մեծին և Արշակ Բային։ Այսպես մեկնելով հինգ թագավորների կարգը՝ Մառ աշխատում է Սերեոսի բնագիրը համաձայնեցնել յուր մեկնութեան, հայերեն ընադիրը տրոհելով և կարդալով այսպես.

1. «Մի նոյն շարադրելով ասացից զառ ի յապայան եղելոյ

և ցուցից համառուտիւք զարդեաց ժամանակացս զազեռիցս վերաբերութեանս: 2. «Զամս և զաւուրս հինգ թաղաւորացն յիշատակելով անդ հայելով ի մատենանն Մարարայ փիլիսոփայի Մծուրնացոյն և այլն, վորը և թարգմանում ե այսպես.

I "... и поведаю о последующих событиях и изложу вкратце постигающие (нас) в настоящее время бедствия", II «Годы и дни пяти царей я расскажу, глядя в ту историю (матенан) Низибитского философа Марабы» և այլն: Բայց որանից կհետեի, թե Սեբեոսը Սելևկյանն Պարթև հինգ թագավորներին թյուրիմացությամբ կոչել և Հայոց և Պարթևաց թագավորները

3. (Յեր. I): «Մարարաս փիլիսոփայ Մծուրնացի: Սերեոսին իբրև աղբյուր ծառայած Մարարաս Մծուրնացի փիլիսոփայի և նրա աղբյուրի մասին Խորենացու աղբյուր Մարարաս կատինայի հետ շատ ընդարձակ գրականություն և ստեղծված, վորոնց հետ մասամբ կարելի է ծանոթանալ այս գրքի Առաջարանում: Մծուրնացի մակդիրը վրմանք բացատրում են Մծուրք տեղանունից, ուրիշները հասկանում են Մծրնացի, համարելով թե մծուրացի ձևը աղավաղություն և մծուրնացի (մծրնացի) բառի թվում է, վոր Հայաստանում դոյություն և ունեցել ասորական աղբյուրից ծագած մի գրվածք Հայաստանի հնագույն պատմության մասին, հիմնված հայ ժողովրդական ավանդությունների վրա, (վորոնք դեռ մեր դարի սկզբում կենդանի էին ու գրույվում էին Վանի շրջանում): Այս ավանդությունների ժողովածուն, վոր վերագրվում է ինչ-վոր դիտնական ասորու, Մար-Արաս անունով, ունեցել և մի քանի խմբագրություններ: Ժողովածուին վավերականություն ընծայելու նպատակով՝ նրան տրված է պաշտոնական ծագում—պետական գիվանից կամ վաղեմի պաշտոնական արձանագրությունից: Այս խմբագրություններից մեկից ողտվել է Խորենացին, յուր կողմից յենթարկելով նրան գրական մշակության և լրացնելով ուրիշ ժողովրդական ավանդություններով (ինչպես Արամի գործերը), իսկ մյուս խմբագրությունից ողտվել է Սեբեոսը, վոր իբր թե ձեռք և բերել այն՝ Մար Արասի աշակերտներից Միջագետքում, բայց միաժամանակ ողտվել և նաև Խորենացու Պատմությունից և նրա Մարարասյան աղբյուրից: Սակայն յերևում է, վոր Խորենացին ունեցել է տեղեկություն Մարարասեան աղբյուրի ուրիշ զրավոր կամ անդիր վարիանտների մասին եւ, վորտեղ տարբեր կեր-

պով ե յեղել պատմվելիս Բագրատունյաց ծագման մասին և վայրիվերո խոսվելիս Հայկի մասին: Տես այս մասին ծան. 8:

4. (ՅԵՐ. 2): «Ըստդիպան արձանագրին»: Սերեոսի ձեռագիրները, ինչպես և տղազերները, առանձին առանձին են գրում ըստ դիպան», վորտեղ ըստ» նախադրությունը մնում է անտեւր, առանց խնդրի: Մասիկյանը ըստ»-ը կարգում է ընդ, և ընում է հին հեղինակներից յերկու վկայութուն ընդ դիպան»-ի գործածության. սակայն անաջող Նրա բերած որինակներում ընդ դիպան նշանակում է՝ հանգեպ, դիմացը, և վոչ թե՝ ինչպես Մատիկյանը ուզում է հասկանալ (արձանի) առաջին յերեսի վրա: Անմիտ բան էլ կլինեւր ասելը, թե պատահեցին արձանագրության՝ գրված արձանի առաջին յերեսի վրա, վորովհետև արձանի յերկրորդ յերեսի վրա չեն գրում: Այսպես կարգալու դեպքում խոսքի մեջ բայն էլ կպակասեւր: Ակինյան (յեր, 77) կարգում է՝ «անդ դիպան»: Այս յենթադրությունը հավանական կլինեւր՝ յեթե չլինեւր գովարությունը ըստ» և «անդ» բառերի տարբեր գրություններին: Մենք յերկու բառը կցեցինք՝ իբրև մի նոր բառ՝ ըստդիպել, համանշանակ հան-դիպել բային, նույն բայարմատից, բայց տարբեր նախդիրներով: «Դիպան», «դիպաւ» ժողովրդական ձևերը Սերեոսը գործ է ածում և ուրիշ տեղեր, (դ. Ժե, 16), ինչպես ցույց է տվել նաև Հ. Ակինյանը, սովորական «դիպեցան» ձևի հետ: Ըստ դիպան» ջոկ ջոկ գրված լինելը ձեռագիրներում՝ վոչ մի նշանակութուն չունի. այդ բանը կատարել են գրիչներն ըստ իրանց հասկացողության, արտագրելու ժամանակ. վորովհետև, ինչպես հայտնի է՝ Սերեոսի ժամանակ, այսինքն յերկաթագրով գրելիս, առհասարակ բոլոր բառերն իրար կից էյին գրվում, առանց նրանց մեջ արանք թողնելու: Յեթե այնու ամենայնիվ հարկ լինեւր այս ըստ»-ը ջոկ դրել՝ պետք կլինեւր նրան ուղղել «աստ», և ոչ «անդ» կամ «ընդ»:

5. (ՅԵՐ. 2): «Հինք թագաւորացն Հայոց և Պարթևացն»: Այս հինգ թագավորները վոչ մի կապ չունին քիչ վերը հիշված հինգ թագավորների հետ (Տ. ծանոթ. 2): Սրանք, ինչպես հաղորդում է Սերեոս, գրոշմված են յեղել յունարեն գրերով Ագաթանգեղյան արձանագրության մեջ, թեև այս արձանագրության մեջ գրված է յեղել՝ «Դրեցի զամս առաջին թագաւորացն Հայոց», (առանց Պարթևներին հիշելու): Բանասերներից վոմանք արամագիր են «հինգ» բառը այստեղ կարգուի «հին», վորպես համապատասխան արձանագրության «առաջին» բառին, բայց այս

դիպրում եւ դարձյալ Տնում ե հակասությունը «Թագաւորացն Հայոց» ե «Թագաւորացն Հայոց ե Պարթևաց» մեջ, Այս հակասությունը, կարծում ենք, կարելի ե վերացնել՝ Սերեոսի աղա-վադոված բնագիրն այսպես հասկանալով, թե Հայոց ե Պարթևաց հին (կամ հինդ) Թագավորների մասին գրել ե Մար-Աբասը՝ ոգտփելով Ագաթանգեղոյան արձանագրությունից, վորտեղ գրված են յեղել Հայոց առաջին Թագավորները անունները:

6. (Յեր. 2), «Ի նորին աշակերտացն» Հ. Ալիսյանը (յեր. 77) ուզողում ե «Ի նորին դաստակերսան», այսինքն թե Սերեոսը այդ արձանագրությունը գտել ե Պարսկաստանում, խոսքով Թագավորի դաստակերտում (տես ծանոթ. 43). Բայց Պարսկաստան տարված են յեղել վոչ թե արձանագրությունը, վոր գրված եր փոփոցում «հանդէպ գրան արքունական տաճա-րին», այլ զահլեհի զարգարուն սյուները, վորոնց վրտ արձանա-գրություն չկար, Նույնքան անհիմն կերպով Հ. Ալիսյան «Մար-Աբաս փիլիսոփան» ուզողում ե «Ագաթանգեղոս փիլիսոփա», հա-մարելով թե Մար-Աբաս անունը հետո ե մոռնված Սերեոսի մեջ՝ խորհնացու Մար-Աբասի աղդեցությամբ, Մար-Աբաս փիլիսո-փան ճիշտ յուր տեղումն եր Կասկածելի ե ամբողջ առասպելը, իբր թե, ինչպես տեսն են Սերեոսին Մար-Աբասի աշակերտները Միջագետքում՝ այդ նյութը Մար-Աբասը գտել ե Մանատրուկի ուղլատի փլատակների մեջ (խոսքով Ապրուեղի Թագավորության մամանակ), Ագաթանգեղոսի ձեռքով փորագրված մի արձանի վրա:

7. (Յեր. 2), Միհրդատյանը ե նրա հետևողությամբ Պատ-կանյանը չակերտների մեջ են դնում, իբրև Ագաթանգեղոյան արձանագրություն, ամբողջ առաջին գլուխը ե յերկրորդ գլխի ամենամեծ մասը, մինչև «արդ Թագաւորէ Արշակն Փռք կոչեցեալ» (եր. 10): Միհրդատյանը նույն գլուխներին վերադրելու ծանո-թությունների մեջ, խոսելով Հայկի աստվածաշարության, Ագատ լերան ե նրա ստորոտում Արրահամի հարճ Մարսեակի բնակու-թյան մասին՝ այս տեղեկությունները վերագրում ե Ագաթանգե-ղոսին, ինչպես նաև տեղեկությունը՝ Բաղդատունիների Հայկից սերված լինելու մասին: Միհրդատյանի այսպիսի հասկացողու-թյան հետևող ե յեղել ե Վ. Լանգլուան, վոր յուր Collection-ի մեջ թարգմանելով վերահիշյալ ամբողջ հատվածը՝ կնքել ե նրան «Pseudo - Agathange» (կեղծ Ագաթանգեղա) անունով:

Խոշոր Թյուրիմացությունն և այս

Նախ լեզվի տեսակետից նայելով՝ նկատում ենք, վոր Ազաթանգեղոս չէր կարող տեսնել՝ շիւղում տեղում տեսցեն զպատճէնն՝ Պատճեն կոչվում և արտագրությունը մի բնագրից, այն - ինչ Ազաթանգեղոս ինքը առաջին անգամ պետք է գրեր և վոչ թե արտագրեր։ Դարձյալ՝ արձանագրության մեջ չէր կարելի գործածել՝ զսկսայց տեսել։ Ազաթանգեղոս գրում փորագրում եր արձանի վրա, և վոչ թե զրույց պատմում։ Պարզ դատողությամբ ել դտնում ենք, վոր Ազաթանգեղոս, ստանալով թագավորից հրաման արձանի վրա գրելու զգամա առաջին թագաւորացն Հայոց՝ չէր համարձակի իրա գլխի անտես անել այս թագավորական հրամանը և առանց վորեն հրամանի նախ և առաջ պատմել զզվէպս յահնգն արքայ և յարի այրն։ Բացի սրանից՝ մի կտոր արձանաքարի վրա չէր կարելի այդքան նյութ տեղավորել հին ժամանակի խոշոր յերկաթապիւր գրերով։ Բայց ամենագլխավորն այն և, վոր մինչդեռ Սեբեոս խոստանում է յուր պատմության այդ մասը գրել՝ հայելով ի մատենան Մարտայ փիլիսոփայի Մծուրնացոյ՝ Միհրդաայանի և նրա հետևողների ըմբռնողությամբ Մարտարար լուրովին վերանում է մեջտեղից իբրև աղբյուր, և նրա անգ հանդես է դալիս Ազաթանգեղոսը։ Յեթե այդ բանասերները դոնե ուշագիւր լինեն, վոր Հայկի ու Բելի, Արայի և Շամիրամի են մասին Սեբեոսի պատմածը շատ մեծ նմանություն ունի Խորենացու պատմածին ըստ Մար Աբաս Կաթինայի՝ հարկավ պետք է յեզրակացնեն, վոր Սեբեոսի մոտ ել այդ հոգվածներն տեսված են համանուն Մարաքասի մատյանից, և վոչ թե Ազաթանգեղոս արձանագրությունից։

Սեբեոսի մոտ Ազաթանգեղոս արձանագրությունից այս տեղում պահված է միայն վերնագիրը—«Եւ Ազաթանգեղոս գրիչ— առեալ ի դիւանէ արքունիւ։ Այստեղից սկսած արդեն Սեբեոսն և վոր շարունակում է. «Զոր փոքր մի և ապա յիւրում տեղում տեսցեն զպատճէնն», (այսինքն՝ Ազաթանգեղոսն արձանագրության պատճենը, առաջին հայ թագավորների անունները, քիչ հետո յուր տեղում կտեսնես)։ «Եւ նախ կպատմիմ վեպը ահեղ արքայի մասին», և այլն։ Իսկ թե վերտեղ է դետեղել Սեբեոս այդ պատճենը՝ քիչ հետո կտեսնենք։ (Տ. ծանոթ. 16)։

8. (Յեր. 2)։ «Բէլն Տիտանեան», «արքայն Տիտանեան», «Տիտանն»։ Նույն անուններով կոչում է Բելին նաև Խորենացին—«Տիտանեանն Բէլ», «արքայն Տիտանեան», «Տիտանեանն»։

Տարակույս չկա, վոր Մարտարասեան յերկու աղբյուրներէից մեկն ողտովել և միւսից, Ռ՝րն և Նրանցից այս անուններէ հեղինակը և վճրն և ոգավազը Սերեոսի աղբյուրում վոչ «Բէլը» և վոչ «Տիտանեանը» չունին վոչ մի բացատրություն. այս բառերը նրա մօտ դործ են անվում իբրև հայտնի՝ պատմատի տերմիններ, Այն-ինչ Խորենացու մօտ նրանք լիովին բացատրված են, և մենք դիտենք թե ի՞նչ և ի՞նչը և ի՞նչու և կոչված Տիտանյան, Հայտնի յի, վոր Խորենացին ժողովրդական վեպերն և արտաքոյ Ս. Գրքի զրույցները համարում և այլաբանություններ, վորոնց տակ թաքնված և ճշմարտությունը, նա շատ անգամ բերում և այսպիսի վեպեր և զրույցներ և յոր կողմից ճշմարտում է, այսինքն այլաբանութիւնը մեկնում և, պատմական իրողութիւնը յերևան հանում, Այսպես ևլ նա վարվել և ներկա դեպքում Ա. գրքի Զ գլխում նա բերում և մի զրույց Ռերոսոսի սիրիլայից—«Զկնի նաւարկութեանն Քսիսութեայ ի Հայս՝ Զրուանն, Տիտանն, և Յապետոսթէ լինէին իշխանք երկրի», որը նա անմիջապէս ճշմարտում և (այսինքն մեկնում և) տակով, չոր ինչ թուին Սեմ, Քամ և Յարեթն, Ապա ուրեմն արտաքին զրույցների Տիտանը ըստ Խորենացու յի Ս. Գրքի Քամը, Նոյի յերեք վորդիներից երկրորդը, Դարձյալ Խորենացին նույն Ա գրքի է գլխում ապացուցանում և, թե արտաքին հեղինակների Բելը Ս. Գրքի Ներքովին և Ուրեմն, ըստ Խորենացու՝ Տիտանյան Բելը Ս. Գրքի Քամյան Ներքովին և Հասկանալի յի, թե ինչու Խորենացին դործ և անել «Տիտանեան Բէլը» և վոչ «Քամեան Ներքովթ», նա ունեցել և արտաքին աղբիւր (=Մարտարասյան աղբիւրը), վորի մեջ պատմված և—արտաքոյ Ս. Գրքի—Բելի պատերազմը Հայկի հետ, Խորենացին այս Բելին նույնացնելով Ս. Գրքի Ներքովի հետ, և Հայկին դարձնելով Ս. Գրքի Թորգոմի վորդի՝ նրանց մականուններն ևս պետք և գներ ըստ արտաքին աղբյուրների—Տիտանյան և Յապետոսթեան, և վոչ ըստ Ս. Գրքի Քամեան և Յարեթեան, հակառակ դեպքում նա խարդախած կլիներ Ս. Գրքը, որտեղ վոչ Բել (հակայ) և վոչ Հայկ կայ և վոչ նրանց պատերազմը:

Սրանից երևում և, վոր «Տիտանեան Բէլը» հորջորջումն ստեղծողը եղել և Խորենացին, և կարող եր լինել միայն Խորենացին, քանի վոր այս հորջորջումն ստեղծելու համար անհրաժեշտ էյին երեք նախադրյալներ—1) հայացք՝ թե վեպերն ու զրույցները այլաբանութիւններ են, որոնց տակ թաքնված և ճշմարտություն

նը, 2) Ծանոթութիւն Բերոսոսյան սիրիլլայի «Զրուան, Տիտան և Յապետոսթէ-ին, և 3) Տեղեկութիւն, թե արաւաքին հեղինակներէ Բելը Ս. Գրքի Ներքովքն եւ Իսկ այս հրեք նախագրչալներն ունի միայն խորհնացին և վոչ ալ վոք մեր հին հեղինակներէց:

Սրանից անհերքելի կերպով հետևում է, վոր Սերեոսի Մարասեան աղբյուրի հեղինակն ոգավել է Մ. խորհնացու Պատմութիւնից և այնտեղից վերցրել «Տիտանեան Բէլ» հորջորջումը (Տես մեր հոգվածը և խորհնացի և Սերեոս, Պատմ. և Դրակ. Ինստիտուտի Տեղեկագրում, գիրք I, յեր. 155—160):

Գ. (Յեր. 3): Ե՛ր ասան որ ի լեռնոտինն, որ զառաջինն շինեալ էր Զրուանայ հաւրն՝ և եղբարքն հանդերձ: Առեղծվածային խոսք. Թնչ լեռան ստորոտ է. Ինչ տուն է, որ շինել և Զրվան հայրը. մվ և այդ Զրվանը, Թնչ յեղբայրներ են—այս հարցերից վոչ մեկին պատասխան չենք գտնում Սերեոսի մոտ. բայց բոլորի պատասխանը գտնում ենք խորհնացու մոտ, վոր իբրև բանալի յի ծառայում այս առեղծվածը լուծելու խորհնացին, ըստ իր սովորութեան, տեղերի աշխարհագրական անունները բացատրելու նպատակով՝ բերում է Ոլիմպիոդորոս փիլիսոփայի պատմած անգիր զրույցը (գիրք Ա, գլ. 2), վորի մեջ պատմվում է, թե յերբ Քսիսթոթրոս (= Նոյ) նավով հասավ Հայաստան և ցամաք ինչով նրա որդիներից մեկը, Սեմը, յերկիրը գիտելու նպատակով դիմեց դեպի հյուսիս-արևմուտք. այնտեղ հանդիպեց մի գաղտի, յերկայնանիստ լեռան մոտ, որտեղով մի գետ էր հոսում դեպի Ասորեստան: Այստեղ նա կանգ առավ յերկու լուսնական ամիս, ու գնաց: Նա կրտսեր վորդիներից մեկը, Տարբան իր վորդիներով, աղջիկներով ու փեսաներով մնաց նույն տեղում, բնակութեան տեղ չինեց: Նրա անունով գաղտը կոչվեց Տարբան, իսկ լեռը հոր անունով՝ Սեմ. իսկ վորտեղ վոր նրանք իրարուց բաժանվեցին՝ Յրոնք: Նույն Սեմը մի կարճ ժամանակ ապրեց նաև Բակարիացոց կողմերը, և նրա անունով դավաոր կոչվեց Զարավանդ, վորովհետև արևելքում Սեմին Զրվան են ասում:

Այս զրույցով խորհնացին բացատրում է Սեմ (Տաւրոս) լեռը՝ Սեմի անունից, Տարոն դավաոր անունը՝ Տարբանի անունից, Յրոնք տեղի անունը՝ Երվելա բայից, իսկ Զարավանդ դավաոր Սեմի Զրվան անունից. ինչպես կոչելիս են յեղել նրան Արևելքում, (և ինչպես ինքը բացատրել է Բերոսոսեան Սիրիլլայի Զրվան, Տիտան և Յապետոսթէն (Տես ծանոթ. 8):

Քորենացու այս հատվածով քաջատարվում է Սերենոսի առեղծ-
վածային հատվածը. լեռը՝ Սիմը կամ Տաւրոսն է, նրա ստորոտը՝
Տարոնի դավառն է, Զրվանը Սեմն է, առաջին բնակութեան
տունը՝ վոր Զրվան հայրը շինել էր վորդոց և յեղբայրների հետ՝
Տարրանի շինած բնակութեանն և։ Նույն-խոյն քաջատարվում է
եւ Եղբարբքն՝ խոսքում անտեղի «և» շաղկապը։ Ձեռագրում
անշուշտ բաց է թողնված «որդւոքն» բառը, ինչպես յերևում է
Քորենացու պատմածից. ուրեմն պետք է այստեղ բնագիրը
լրացնել՝ «շինեալ էր Զրուանայ հաւրն՝ որդւոքն և Եղբարբքն
հանդերձ»։

Ահա դարձյալ մի ապացույց, վոր Սերենոսի Մարարասեան
աղբիւրի հեղինակը ծանոթ է յեղել Քորենացու Պատմութեան։
Անծանոթ խմբադրոցն այստեղ ամփոփել է Քորենացու պատ-
մածը, բայց այնքան անաշուղ կերպով, վոր առանց Քորենացու
Պատմութեան ողնուխան՝ անհասկանալի կմնար։ Տես մեր հոդ-
վածը Քորենացի և Սերենոս, Տեղեկադիր, եր. 160—162)։

10. (Եր. 5)։ «Յուզ սկայաւրէն կամարինն։ Բալոր ձեռագիր-
ներն այստեղ ունին «յաւղ», վորը Միհրդատյանը ուղղել է «յա-
ղեղն»։ Նրան հետեւել են և ուրիշները (Պատկանյան, Խալաթյանց,
Մատթեկյան ևն)։ Սակայն Միհրդատյանի ուղղումը սխալ է, հե-
տեանք չհասկացողութեան, և անիմաստ է դարձնում բնագրի այս
խոսքը—«ե կանգնէ զկապարճան ի գետնոյ ընդ ինքեան յուղ
(ուղղած՝ յաղեղն) սկայաւրէն կամարինն։ Պատկանյան թարգմա-
նել է «Вставив стрелу в дугу исполненного лука, который
опирался в землю», (յեր. 5), վորից դուրս է գալիս, իբր թե
նետը արձակելու ժամանակ Հայկը աղեղը յենել է գետնին։ Բացի
սրանից՝ թարգմանութեան մեջ բաց է թողած «ընդ ինքեանն», և
ավելացրած է նետ՝ վոր չկա բնագրում—«նոքը բնադրում բո-
ւորովին այլ կերպ պետք է հասկանալու Հայկը, յորը փախչում էր
Բելլե առաջ՝ կապարճը կրում էր ուսին, ինչպես սովորութեանն էր։
Իսկ յերբ վորոշեց կռվել՝ նա կանգ առաւ, կապարճը ուսից
խցնցրեց, (վորպեսզի չխանդարե «ընդ գիրկա մասնել»), գետնի
վրա կանգնեցրեց յուր կողքին, մինչև հսկայական կամարի (քա-
մարի, դռու) ողը։ Ուրեմն կապարճը նստնում էր մինչև Հայկի
դռոն, վորի վրա ող կար, վորից, ինչպես յերևի, կախում էյին
կապարճը մի կեռով, վորպեսզի քալելիս կապարճը կախված մնա
սրունքի մոտ, և կռիվի ձեռքերն ազատ լինին։ Հետաքրքրական
մանրամասնութեան հին դիւնավորման կամար բառը զինվորական

գոտու նշանակութիւնը Սերեոսը գործ և անուամբ քանի անգամ ևս ժպտում և այնուհետև:

11. (Յեր. 6): Միջին կոչված յերկաթագրի մեջ իրար շատ նման են Մ և Տ գրերը, վորի պատճառով հաճախ ծագում են աղավաղութիւններ ձեռագիրների մեջ: Այստեղ ձեռագիրներն ունին «Բագարամ... Բիւրում», վոր Պատկանյանը ուղղել և Բագարատ, Բիւրատու նույն տառերի շփոթութիւնից «ի Մեղիտինէ» հասուակ անունը դարձել և «ի տեղի մի» (եր. 27): Ինչպես նաև գրված և «մայինա», վորտանակ լատյ ի նա» (եր. 61. ծանոթ.):

12. (Յեր. 7): «Ժամանակագիրն»: Այս ժամանակագիրը Եւսեբիոս Կեսարացին և, վորի ժամանակագրութիւնից քաղում և հեղինակը Բ գլխի բովանդակութիւնը, ինչպես առաջին անգամ ցույց և տվել Խալաթյանց (յեր. 85—88, և նյութեր, յեր. 11—17), վորի այս յեղրակացութիւնն ընդունել և և պրոֆ. Ն. Աղոնցը (յեր. 12—13, և նույն Եւսեբիոսին և վերաբերում բառէ բառը — անոր ունէր, ասէ, արքայ ի դրան իւրում թագաւորութեանն» (եր. 9): Եւսեբիոսն այստեղ ունի. «Արշակ արքայ տանէր գերի և թագաւորաբար պահէր: Մտոր ժամանակագիր համարում և Աղաթանգեղոսին, (յեր. 279—281):

13. (Յեր. 7): Եթէ և նկատում է. Ակինյանը (յեր. 31), վոր այստեղ յուր տեղումը չե հատվածս՝ «ի Դամասկոսէ տսնն դնացեալ—որ խառնին յաղգ Արամնակայ», վորովհետև այս հատվածով խղվում և կապը՝ «քանզի զսոյն ձառէ ժամանակագիրն այդպէս որպէս առաջիկ կայ և հաջորդող «Ապստամբութիւն Պարթեւաց» խոսքի մեջ: Սակայն է. Ակինյանի առաջարկը՝ այդ հատվածը տեղափոխել քիչ առաջ և զետեղել «ապստամբիցին յԱսորւոց թագաւորացն ի ծառայութենէ» խոսքից հետո՝ ընդունելի չե, վորովհետև այս տեղի հետ ևս նա բոլորովին չե կապւում: Մեղ թվում և, թե այս հատվածը միջանկյալ և. ընդմիջարկի դը ուրիշ հարմար տեղ չե գտել նրան զետեղելու՝ քան առաջին գրքի վերջում, մտադրութիւն չգարձնելով այն բանի վրա, վոր դրանով խոսքի հաջորդական կապը խզվում և:

14. (Յեր. 7): «Փառականն դաշտ որսոց և արշաւանաց նոցին»: Փառական դաշտը հիշվում և նաև Աղաթանգեղոսի մաս իբրև վորսատեղ՝ մի անհասկանալի վերադիրով—«ի դաշտն փառական Եմակաց» (ուրիշ ձեռագիրներ՝ նշանակաց): Նկատի առնելով Աղաթանգեղոսի հունարենն հին թարգմանութիւնը, վոր

այստեղ ունի p'arakanes emakon, ավելի ուշիդ կլինե՞ր այդ հաս-
վածը հայերեն կարգաւ՝ փառակա՞նս եմակաց:

15. Յեր. 9): «Զարգարէ զնա ի սնդր և ի՝ վակասա: Մնդր
բառը բանաստեղծներից և վոչ մեկը չէ հասկացել. նա չկա վոչ մի
բառաբանում: Պատկանյանը Թարգմանության մեջ պահում և
հայերեն «սնդր» բառը և ծանոթության մեջ գրում է, թե այս
բառը պետք է նշանակելիս լինի վորևէ արքայական զարդ, բայց
հայտնի չէ Բնչալիտի Հիշում և հունարենից վոխ առնված սնդոն
բառը, վոր նշանակում և աղնիվ կտորից պատմուհան: Առաջին
անգամ Արմատական բառարանի հեղինակը բերում և այդ բառը
և համարում և «անստույգ և ի հարկէ խանգարված բառ»: Բերում
և այնուհետև Մատի կարծիքը ЗВО, 14, 88, վորտեղ նա այս
բառը հանում և ստորերեն քոսրէ բառից, վոր նշանակում և
«ուղարկենք», վոր խմատով անհարմար և տեղին: Բերում և
հետո Թոֆչյանի բացատրությունը, ըստ վորում սնդր (sender)
պարտկերեն բառ և և նշանակում և «խեթի նման մի սաթ», վոր,
ավելացնենք մեր կողմից, նույնպես անհարմար և Ստեփան Մար
մի ուրիշ տեղ (Арабское извлечение из Истории Сирийской
Хроники Марибаса С. П. Б., 1902, յեր. 88, ծանոթ.) տալիս և
այս բառի ուշիդ բացատրությունը, (վոր անհայտ և Մնացել
Արմատ. բառարանին): «Մնդր բառը, ասում և նա, փոխադրու-
թյուն և ստորական քոսրէ բառի, վոր նշանակում և սաղավարտ,
վորի մեջ դուրս և ձգած իդական վերջավորությունը, սու-
հնչյունը ըստ որևէի սղված և «ը», և «ը» հնչյունն ըստ սովո-
րության ուժեղացած և՝ փոխվելով ոմ՝ ր-ի առաջ: Նույն տեղում
իրավացի և նկատում Մատը, թե այս աստիական բառի զործա-
ծությունը, (վորի նշանակությունը, մենք կարծում ենք, Սերենոս
չէ հասկացել) ցույց և տալիս աստիական աղղեցությունը Անա-
նունի վրա:

16. (Յեր. 10): «Եւ այս են Թագաւորք Արշակունիք...»: Սերենոս խոստացել եր Ագաթանգեղոսն արձանադրության
պատենքը բերել քիչ հետո՝ յուր տեղումը: Այդ տեղը՝ այս տեղն
և, Պարթևաց Թագավորների ցանկից հետո Այստեղ գետեղվում
և Պարթևների առմի յերկրորդ ճյուղի, այսինքն Արշակունի
առաջին հայ Թագավորների ցանկը, վոր արձանի վրա գրած և
յեղել Ագաթանգեղոսը «հրամանաւ քաջին Տրգատայա: Բայց
Ագաթանգեղոսի ցանկը կարող եր պարունակել Հայոց առաջին
Թագավորների անունները մինչև «Քաջն Խարով», առ առավելն

մինչև «Մեծ Տրդատէան: Նշանակում է՝ հաջորդ անունները նորամուտի հավելված են: Այս ցանկի և առհասարակ ժամանակագրութեան մասին մանրամասն դրել է Ադոնցը լի յենթադրություններով, (յեր. 13 և հաջ.), վորտեղ բերվում են նաև համեմատված և ստուգված ցուցակներ Պարթևաց և Արշակունյաց թագավորների՝ ըստ Սեբեոսի և Նորենացու:

17. (Յեր. 12): «Զնոյն ձև աւրինակիս: Բոլոր ձեռագիրներն ունին «Զնոյն ձև աւրինադրէն դմամիկոնէիցն սակս դազագ (կամ դազագաց) զնեզութիւնն: Նույն կերպով են կատարված և սպաղարությունները առանց վորևե դիտողութան: Պատկանյան այս տեղը թարգմանել է. „После него (царствовали преемники его). Скажем несколько слов о роде князей Мампконян“, և գրում է ծանոթութեան մեջ, թե բնագրում այս տեղը բոլորովին անհասկանալի է: Ա. Ալիսյան (յեր. 31) տվյալ տեղն ուղղադրում և կարդում է. «Զնոյն ձև օրինադրէ (Արշակ Փռք) զՄամիկոնէիցն աան սպարապետութիւնն»:

Մենք վաղուց ցույց ենք տվել (Սեր. պատմ. և Մ. Նոր. յեր. 162—3), վոր այստեղ բնագիրն աղավաղված է՝ մի թուղթ դուրս ընկած լինելով: Այս աղավաղությունը ցայտուն կերպով յերևում է՝ յերբ համեմատում ենք այս կտորը Ասողիկի հետ, վոր այստեղ հավատարիմ կերպով արտագրում և Սերենուցի:

ՍԵՐԵՈՍ

Յետ որոյ նուաճեալ Ստան-րացւոյն Արտաշրի որդւոյ Սասանայ զամենայն Արիս և զանարիս, և զբազումս ի նոյն ազգէ թագաւորութեան Պարթևաց և Պաշլաւկաց՝ թագաւորէ ինքն, և զկնի նորա պայտապառք նորին զնոյն ձև աւրինադրէն զՄամիկոնէիցն...

ՍԱՍՈՒԿԻ (յեր. 32)

Յետ որոյ նուաճեալ Ստան-րացւոյն Արտաշրի որդւոյն Սասանայ զամենայն Արիս և զԱնարիս և զբազումս ի նոյն ազգէ թագաւորութեանն Պարթևաց և Պաշլաւկաց՝ թագաւորէ ինքն, և յետ նորա պայտապառք նորին զնոյն ձև օրինակի: (Վերջանում և դուրսը):

Տարակույս չե մնում, վոր Սեբեոսի ձեռագրում «աւրինակի» բառի առաջին յերեք վանկերը գրված են յեղել թղթի յերկրորդ յերեսի վերջին առդի վերջում, իսկ շարունակությունը՝ «կի» փոխադրված է յեղել հաջորդ թղթի սկիզբը: Սակայն այդ սկիզբը չկա մեղ հասած ձեռագիրներում: Դրա փոխարեն՝ անկասկած և ան-

հասկանալի՝ «... գրէն զՄամիկոնէիցն սակա զազգաց զնեղութիւնն»։ Այս անկապ և անհասկանալի խոսքերը՝ դուրս ընկած թղթին հաջորդող թղթի սկզբի բառերն են, վորոնք աղավաղվել են շնորհիւ այն բանի, վոր խզված է նրանց կապը նախընթաց յերեսի (այսինքն կորած թղթի յերկրորդ յերեսի վերջին տողի) հետ։

Այս յեղրակացությունը, վոր բովում է յերկու հեղինակներին համեմատությունից՝ արդարանում է նաև Սեբեոսի բնագրի ուշագիր քննությամբ։ Յեթի առ ժամանակ անտես անենք Մամիկոնյանների ծագման վերաբերյալ հատվածը, վոր բնագրի ներկա վիճակում անտեղի միջանկյալ հատված է թվում՝ կտեսնենք, վոր հեղինակը զլիւի վերնագրում խոստանալով կրկնել ազգաբանութիւններն ըստ Մ. Խորենացու և Ստ. Տարոնացու՝ բերում է Պարթևաց թագավորների ցանկը, Արշակ Գալից սկսած մինչև Արտավանը, վորին սպանելով Սասանյան Արտաշիւրը՝ վերջ է դնում Պարթևների հարստության և թագաւորութւնի, Սասանյան հարստության հիմնադիրը։ Այսպէս զալիս է Մամիկոնյանների վերաբերյալ հոգւածը, վորից հետո հեղինակը սկսում է թագավորների յեռանուն ցանկը—Սասանյանների, հայ Արշակունիներին և Յուդայայի, զիսակով վոր Արտավանի սպանությունը և Արտաշիւրի թագավորությունը տեղի յեն ունեցի Հայոց Խոսրով Մեծի թագավորության 31-րդ տարում։ Աչքի յե ընկնում այստեղ մի մեծ պակասորդ—հայ Արշակունիների ցանկը՝ Վաղարշակից հետո մինչև Խոսրով Մեծի 31-րդ տարին։ Կարծիք եր հայ հեղինակը, Պարթևների ցանկը զնկուց հետո մինչև նրանց բարձումը՝ անտես անել հայ Արշակունիների ցանկը, վոր նրանց ժամանակ թագավորութւն էին Հայաստանում մինչև Խոսրով Մեծը։ Հեղինակը հիշում է Վաղարշակի անունը՝ առանց նրա թագավորության տարիները նշանակելու, վորից հետո թույլ է մինչև Խոսրով Մեծի 31-րդ տարին, այսինքն դանց է անում ավելի քան 400 տարվա ժամանակի հայ թագավորների ցանկը։ Այսպիսի մոռացություն անկարելի յէ յենթագրելու Պարզ է, վոր Պարթևների բարձումը նշանակելուց և Սասանյան Արտաշիւրի թագավորությունը հիշելուց հետո, հեղինակը պետք է զառնար հայ Արշակունիներին և զնեք նրանց ցանկը, Վաղարշակից սկսած մինչև Խոսրով Մեծը, Արտաշիւր Սասանյանի ժամանակաւիցը, վորից հետո բնական կերպով շարունակել՝ գրելով յեռանուն ցանկը։

Այսպէս ուրեմն մենք գտնում ենք դուրս ընկած թղթի բովանդակությունը—հայ Արշակունիների ցանկը Վաղարշակից

մինչև Խոսրով Մեծը: Յեւ վորովհետև, ըստ ավանդության և ըստ Սերեոսի, Մամիկոնյանների գաղթը Հայաստան տեղի ունեցավ Խոսրով Մեծի ժամանակ՝ հեղինակը այս Թագավորի պատմությանը կցել է Նրա ժամանակ տեղի ունեցած այս գաղթի պատմությանը:

Ուրեմն Մամիկոնյաններին վերաբերյալ հատվածը վոչ թե միջանկյալ է այստեղ, վորը բանասերները զուր ֆունջ են անում մի ուրիշ՝ ավելի հարմար տեղ փոխադրել, այլ հենց յուր բնական տեղումն եւ Նրա կապը նախընթաց խոսքի հետ խզվել է՝ մի թուղթ դուրս ընկած լինելու պատճառով:

Ն. Ազոնցը (յեր. 3) նույնպես ընդունում է, վոր վերը հիշված տեղում բնականայես պետք է գտնվեր նաև հայ Արշակունի Թագավորների ցանկը, և նա կարծում է, թե այդ ցանկը հենց այն է, վոր՝ դրված է Բ գլխի վերջում, վոր սկսվում է «Արգ՝ Թագաւորէ Արշակն Փոքր կոչեցեալ» խոսքերով և վերջանում է «Պապ որդի Արշակայ՝ ամս էս: Բայց Նրա այս կարծիքն անընդունելի յեւ Հեղինակը Պարթև և Արշակունի հայ Թագավորների ցանկը բերում է յերկու անգամ, առաջին անգամ՝ ըստ Մարտրասյան (և Ագաթանգեղյան) աղբյուրի, իսկ յերկրորդ անգամ՝ յերկրորդում եւ նույնը ըստ Խորենացու և Ստ. Տարոնացու: Ազոնցի հիշած ցանկը՝ հայ Արշակունիների ցանկն է ըստ Մարտրասյան աղբյուրի կամ Ագաթանգեղյան արձանագրության (տ. ծան. 16), վոր գրավում է յուր բնական տեղը Պարթևների ցանկից հետո ըստ նույն աղբյուրի. (հիշենք՝ չգրոշմեալ ի վերայ վիմի զամս և զաւուրս հինդ Թագաւորացն Հայոց և Պարթևացն): Իսկ յերր հեղինակն յերկրորդում է այդ ցանկերն ըստ Խորենացու և Ստ. Տարոնացու: Պարթևների ցանկը լրիվ կա մինչև նրանց բարձումը, իսկ հայ Արշակունիներինը չկա—կորած է, վորովհետև, ինչպես ասացինք՝ ձեռագրից մի թուղթ է ընկել:

18. (Յեր. 13) ՎՅայսմանէ այն է սպարապետ: Ն. Ազոնց (յեր. 3) կարծում է, վոր հաջորդ յերեսում հիշված՝ Խոսրովի սպարապետ Դոռնակը՝ Հայաստան գաղթած յերկու յեղբայրներից, Մամիկոնից և Կոնակից, մեկն է, այս վերջինը, անվան մեջ մի տառի կորուստով: Նա այս Դոռնակ սպարապետի անվան մոտ է փոխադրում Մամիկոնյաններին վերաբերյալ հատվածը, (թեպետ հրաժարվում է գտնել քերականական կապը յերկուսի մեջ և բնագիրը վերականգնել), և ուղղելով բնագիրը՝ կարդում է. «եղեն

յազգ մեծ ի Մամիկայ (փոխանակ Մամիկոնայ) և Կոնակայ, յայտնանէ սպարապետէս: Իսկ Հ. Ակիւնյանը (յեր. 31) կարգում և յայտն տանէ յառնէ սպարապետէս:

19 (յեր. 14) Երեսնուն ցանկը շատ աղավաղված և և պարունակում և բազմաթիվ ժամանակագրական, մանավանդ օրն-խրոնիկական սխալներ: Սրանց ուղղումը յերկար ժամանակի յերկարոտ և նպատակ ել չունի, քանի վոր այս ցանկերն ըստ ինքյան զուրկ են պատմական հետաքրքրութիւնից: Նրանցով մանրամասն դրաղվել և պրոֆ. Ադոնցը, վորի աշխատութիւնից բերում ենք այս յիշատեւն ցանկն՝ բանասերի ուղղումներէ համաձայն:

Անաւանդ ցոօկ (յեր. 7)

Հ ա յ ո ջ

1. Խոսրով 50 (32-րդից)	20
Անիշխանութիւն	11
2. Տրդատ	70
3. Խոսրով	17
4. Տիւան	12
5. Արշակ 49 կամ 48	) 60
Անիշխան 11 կմ 12	
6. Պապ	13
7. Վալարդատ	6
8. Արշակ և Վալարշակ	5
9. Խոսրով	3
10. Վսամշապուհ	8

255, *) տանց
Խոսրովի 30
տարուն՝ 225

Պ ա ռ ս ի ջ

1. Արտաշիւր	50
2. Նապուհ	73
3. Ներսէս	9
4. Որմիզդ	3
5. Շապուհ	73
6. Արտաշիւր	4
7. Վասմ	11
8. Հաղկերտ մինչև 2-րդ տարին	2

225

*) Պրոֆ. Ադոնցի ժամ վերականգնող աղված և՝ 335:

Ռ յ ու զ ա ն զ ա ց ո ց

1. Աւրեղիանա (3 տարուց)	6
2. Տեղեկութիւն ամիս 6	
3. Պրորոս	6
4. Կարոս և վորդիք	7
5. Դիտկեալիանոս	22
6. Կոստանդին	9
7. Մաքսիմիանոս և Գաղերիանոս	) 19
8. Մաքսիմիլիան (փոխ. Մաքսիմնոս)	13
9. Կոստանցիոս	17
10. Կոստանդին	32
11. Կոստանցիոս և Կոստանդ	24
12. Հուլիանոս	2
13. Վաղենտիան և Վաղէս	13
14. Գրացիանոս	17
15. Թեոդոս	19
16. Արկադիոս	19
17. Ոնորեոս մինչև 2-րդ տարին	

225

20 (յեր. 18), Հատվածս՝ չի սուրբն Կոստանդիանոսէ սկսա-
նի՝ մինչև չի բռնադրուանն մնաւաւ համարում ենք ընդմիջաբ-
կության, ուստի դրինք փակագծերի մեջ:

21 (յեր. 18), «Եւ Յուլիանոսի պղծոյ՝ Ճիշտ ժամանակա-
դրական թվերով Շապուհի 44-րդ տարին, վոր և 353, չև դուզա-
գիպում Հուլիանոսի Թաղավորության տարիներին, այսինքն
361—363-ին. իսկ այստեղ, Սեբեոսի ընթած սինիսրոնիկական հաշ-
վով ավելի ևս սխալ և Հուլիանոսի 3 տարիները ժամանակակից
դնել Պորոզի 44-րդ տարուն, վորովհետև ըստ Սերեոսի ցու-
ցակի՝ Հուլիանոսը Թաղավորել և Շապուհի 19-րդ տարում, և
նրան հաջորդել են Վաղենտիանոս, Վաղես և Գրատիանոս: Այս
պատճառով չև Յուլիանոսի պղծոյ՝ համարում ենք ընդմիջաբ-
կության:

22. (Յեր. 22), Բալոր ձեռագիրներն այստեղ ունին «...և յեր-
կրորդ ամի միարանեալ Պարսից արքայի ընդ Իսմայելացիան ար-
տաքո ի Սինէ անապատէ՝: Պոսքը Թերի յի, աղավաղված և և

հակապատմական. հայտնի չէ՝ Վճր թագավորի յերկրորդ տարին
 բարտաքս ելին ի Սինէ անապատէն. խոսքը չե կազմում նախնա-
 թաց խոսքի հետ, և Պարսից Վոչ մի թագավոր չե միաբանել
 Իսմայելացոց հետ Միհրդատյան լրացրել և ընագիրը՝ ավելա-
 ցնելով՝ ետ ելին արտաքս ի Սինէ անապատէն: Սակայն մյուս ան-
 տեղութիւնների վրա Վոչ Վոջ ուշադրութիւն չե դարձրել: Ազա-
 վադութիւնն ալստեղ, մեր կարծիքով, առաջ և յեկել Վոչ թե
 դրինների սխալից կամ անուշադրութիւնից, այլ նրանից, Վոր
 մայր որինակում, Վորից արտադրված և այժմյան ձեռագիրը՝
 այստեղ Վորեն պատճառով գրվածքը ֆառված և հաջորդաբար
 յերեք տողերի վերջում: Սկզբնապես գրված և յեկել

և յերկրորդ ամի յազկերտի
 պարսից արքայի միաբանեալ ետէից
 ընդ իսմայելացիան, ... ելին
 արտաքս ի Սինէ անապատէ, հն:

Նոտադրված բառերը մայր ձեռագրում յեղծվել են, և գրիչ-
 ներն արտադրել են՝ ինչ Վոր մնացել և, տեղափոխելով միայն
 «միաբանել» բառը Մենք հատվածը ամբողջացրինք ու վերա-
 կանգնեցինք ըստ Մերկոսի, դւ. Խ:

22. (Յեր. 33), Յերկանուն ցանկի թագավորների և նրանց
 տարիների համեմատութիւն համար բերում ենք ճիշտ ցուցակ-
 ներ—Սասանյան թագավորների՝ ըստ Նելդեկեի, և Բյուզանդա-
 կան կայսրների՝ ըստ Մյուլբալդի (Առողիկ, ծան. 86 և 102).

Սասանյան թագավորներ

Հազկերտ Ա, նստով	399
Վահրամ Ե Զուք	420
Հազկերտ Բ	438
Վորմիդդ Դ	457
Պերոզ	457 կամ 459
Վաղարշ	484
Կավառ	488
(Զամասպ)	
Քաբոզ Ա Անուշըրուան	531
Վորմիդդ Դ	578
Քաբոզ Բ Ապրուեղ	590

(Վահրամ Զ Զորին, Վստամ)

Կալատ Բ Շերոյն	627
Արտաշիր Գ	628
Շահր Վահրազ, Բորան, զանազանք	629
Վորմիզդ Ե	631
Հազկերտ Գ	632

Բյուզանդական կայսրներ

Արկադիոս (և Մնորեոս), նստավ	395
Թեոդոս փոքր	408
Մարկիանոս	450
Լևոն	457
Լևոն փոքր	474
Զենոն	474

(Բասիլիսկոս, Մնտոս Զենոն 12)

Անաստաս	491
Հուսախանոս	518
Հուստինիանոս	527
Հուսախանոս Բ	565
Տիրեր	578
Մորիկ	582
Փոկաս	602
Հերակլոս	610
Կոստանդին	641
Կոստանդ	641

24. (Յեր. 23)։ ՎԱԶՆ Կարգեղովմայեցի իշխանութեանն։
 Խոսքը այստեղ անտարակույս Սասանյան իշխանութեան մասին
 և՛ Եզիշեն Արշակունյաց բարձումը նշանակելիս՝ ասում և՛ զի
 բառնալ ազդին Արշակունեաց տիրեցին աշխարհիս Հայոց ազգն
 Սասանայ պարսկի, որ վարէր զիւր իշխանութիւն օրինօք մո-
 ղուցնէ ևն։ Սերեոս այստեղ հայտնապէս Եզիշեն ազդեցության
 տակ և գտնվում. բայց թէ ինչ և նշանակում՝ «կարգեղովմայեցի»
 բառը՝ դժբախտաբար հայտնի չի։ Արտաշիր Բարեկան Սասանյանը
 Յաւարացի եր և վոչ Կարգեղովմայեցի, և այսպիսի տեղի կամ
 քաղաքի անուն հայտնի չի։ Պատկանյանը ռուսերեն թարգմա-
 նության ծանոթության մեջ (յեր. 181) հիշում և, թէ Շպիգել
 Բիսութեանյան արձանագրության մեջ հանդիպել և karka անու-

նով մի անհայտ ժողովրդի, վորի բացատրության համար նա մեջ է բերում դանադան զիտնականների կարծիքներ. վերջը ինքը այդ անունը համեմատում և նշանամեում պատահող *gargasar* կոչված տեղի հետ, վորի առաջին մասում տեսնում և *karka* ժողովրդի անունը: Բայց բոլոր այս համեմատություններն արժեք չունին, քանի վոր վնչ հնչյունով և վոչ նշանակությամբ չեն հարմարում Արտաշիր Սասանյան Ստահրացուն:

Թույլ ևնք տալիս մեզ մի չենթադրություն անելու կարելի և կարծել, թե «կարճեղովմայեցի» բառը ազավազություն և, և սկզբնապես յեղել և «չար եղովմայեցի»: Քանի վոր մի կողմից հին հայ հեղինակները նայել են Սասանյաններին վրա իրրև հայ Արշակունիների դարավար վոխերիմ թշնամիների վրա, և մյուս կողմից՝ Ս. Դրքում հաճախ հիշված «Եղովմայեցիները», իրանց համարելով նաավի սերունդ, անընդհատ թշնամական հարարերության մեջ եին բուն հրեաների (Հակորի սերունդի) հետ՝ արա նմանությամբ Սերեոս «եղովմայեցի» և կոչում Սասանյաններին՝ հայ Արշակունիների վերարերմամբ:

25. (Յեր. 27): «Կարգեսցէ զքաղաքն ի շահրմար Ատրպատականի»: «Շահրմար» բառը նախկին հրատարակիչները ազատ գրել են զլիսագրով՝ իրրև հատուկ անուն: Պատկանյան այս տեղը թարգմանում և «и назначить городом Шахрмар Атрпатаканский», հայտնելով ծանոթության մեջ, թե հիշյալ հատվածն անկանոն և և անհասկանալի: Իսկ զրքի վերջը ծանոթության մեջ (յեր. 185) Շահրմարը նա ստուգարանում և՛ քաղաք Մար կամ Մարաց, վոր ստեղծան կարող և նշանակել և ոճերի քաղաք. (պարսկերեն *mar* նշանակում և ոճ): «Այս քաղաքի մասին, ասում և նա, ուրիշ տեղեկություններ չունինք»:

Սակայն շահրմար վնչ հատուկ անուն և, և վոչ քաղաքի անուն, այլ հասարակ բարդ բառ և. պարսկերեն շահր նշանակում և աշխարհ, իսկ մար (կրճատ ձև, փոխանակ համար՝ի) նշանակում և համար, հաշիվ, մաս, ուրեմն ամբողջ բառը նշանակում և աշխարհահամար, աշխարհամաս: Սյունյաց վահան իշխանը, հայերի միարանությունից զուրա պալով և ասելությամբ լցված՝ խնդրում և խորով թագավորից, վոր Սյունյաց հարկային ղեկմանը Դվինից փոխադրե Փայտակարան և Սյունյաց աշխարհը մայնն Ատրպատականի աշխարհահամարի մեջ, վորպեսզի հայի անուն չմնա նրա վրա. (բառացի՝ իրանց վրա, այսինքն՝ վոր իրանք այլևս հայաստանցի՝ հայ չկոչվին): Այս խնդիրը խորով

կատարում է, և Սյունիքը յերկար ժամանակ մնում է իբրև Ատրպատականի մաս՝ մինչև Սասանյանների բարձումը, յերբ Սյունյաց աշխարհը, զվար առաջ լծվել էր Ատրպատականի աշխարհ և ադրին՝ Պարսից Թագավորության վերանալուց հետո նորից միաբանեցավ ու միացավ Հայոց հետ» (Գլ. Ծ.) Այս վերջին տեղեկության մեջ՝ Սերեոս շահումար բառի փոխարեն գործ է ածում նրա հայերեն Թարգմանությունը — «աշխարհագիր»։ Շահումարի այս ուղիղ մեկնությունը ավել ևն Մարկվարտ, Ադոնց, Սպենյան, Մանանդյան, Արմ. բառարանը փոքր ինչ տարբեր է մեկնում այս բառի նշանակությունը։

26. (Յեր. 28)։ Մաշապեթնան, վոր գրված կա նաև ուրիշ շատ ձևերով — մաշկապեթնեն, մաշկապատեն, ևն — պահպանվել են maskaparcen (մաշկապարճեն) բառն է, վոր նշանակում է Պարսից արքայական կանանցի վրանը։ Հյուսիսային այս ուղիղ բացատրությունը բերում է Արմ. բառ։

27. (Յեր. 29.) «Զոր անուանեալ Շահաստան-ի Նոկ-նոյ կոչենն»։ Բոլոր ձեռագիրներն ու տպագիրներն ունին «շահաստանին Ոկնոյ կոչենն»։ Մարկվարտը (Վիեննայի Յուշարձան, յեր. 301) այս աղավաղված ձևն ուղղում է Շահաստան-ի Նոկ-նոյ, վորի մեջ «ի» պարսկական վորոշիչ մասնիկ է, իսկ «նոկ» միջին պարսկերեն, և «նոյ» նոր պարսկերեն նշանակում են «նոր», այնպես վոր ամբողջը նշանակում է «շահաստանն նոր», նոր մայրաքաղաքը։ Նույն գիտնականն առաջարկում է և և մի յերկրորդ՝ վոչ այնքան հավանական մեկնություն, այսինքն՝ վոր բառի վերջին «նոյ»-ը առաջ է յեկել շումմա բառից, ուրեմն ամբողջը պետք է նշանակե «շահաստանն նոր Հոմմա»։ Դալով այս քաղաքի պատմական անվան, — «Վեհ Անշատը Խոսրով»՝ նույն գիտնականը տալով է, վոր նրա իսկական պարսկական արտասանությունն է «veh Antijok Chosro», վոր նշանակում է՝ վեհ Անտիոք Խոսրովու, այսինքն այն քաղաքը, վոր Խոսրով շինեց և նրա մեջ բնակեցրեց հռոմեական Անտիոքից բերած գերիներին՝ բուն Անտիոքից լուսազույն է։

28. (Յեր. 30)։ Խաղամախիք անունով տեղ ոչ մի ուրիշ հեղինակ չէ հիշում բացի Սեբեոսից, որ նույն բառը գործ է ածել և մի քիչ առաջ (յեր. 27) «ի դատին խաղամախեայ» (վոր հավանորեն պետք է կարդալ՝ «խաղամախեաց»)։ Բանի վոր հեղինակը չէ հիշում քաղաքի անունը, վորի և Խաղամախիքի միջև տեղի չէ ունեցել կոտոր՝ պարզ է, վոր նա աչքի առաջ ունի մի մեծ՝

կենտրոնական քաղաք, վորպիսին եր այդ ժամանակ Դվինը: Արդ՝ Դվինից դեպի արևմուտք, յերկու-յերեք քիլոմետր հեռավորութեան վրա ընկնում եր Պոսրով Կոտակի տնկած անտառը, Պոսրովակերտ, վոր ռազմական կարևոր դիրք եր համարվում Դվինի դեմ պատերազմ մղելիս: Դ. Փարպեցին հիշում ե, թե Հաղարա՝ վուխտը Վահանի վրա հարձակվելիս՝ Դվին քաղաքի մոտ հասնելով՝ պատերազմական նակատը պատրաստում եր զի միջոցէ մայրւսին, որում Պոսրովակերտն ասենա: Ինքը Սեբեոս հետո (գլ. Խ) նկարագրելով Արարացոց առաջին հարձակումը Դվինի վրա՝ ասում ե, թե նրանք եկան բանակեցան Պոսրովակերտ անտառի յեզրին և այնտեղից հարձակվեցին քաղաքի վրա:

Այս հիմունքների վրա հավանական չենք համարում, վոր հիշված Պաղամարիքի տակ պետք ե հասկանալ Պոսրովակերտ անտառը, իսկ բառը բացատրել՝ առաջ յեկած Կաղամարիք-ից, այսինքն կաղամարի տնկված անտառ: Փալատոսը ասում ե, թե անտառում տնկված եր «վայրի կաղին», և դաշտը լցրին կաղնատուն տնկով: Վոչ մի զժվարություն չկա վայրի կաղնատունը և կաղամարին նույնացնելու մեջ:

29. (Յեր. 30): Ձեռագիրներն այստեղ ունին. «Ապա եկն ինքն արքայն Անուշ Ըսուան, վոր զՎնդոյն կապեալ եղ ի Գրուանդականին ևն: Միհրդատայնը գիտնալով, վոր Վնդոյին բանտարկող թաղավորն յեղել ե Վորմիզդը, Պոսրովի վորդին՝ վերը բերված հատվածը համարել և ազավաղված, և իւր կողմից ուղղել ե. «Ապա եկն ինքն արքայն (Որմիզդ որդի) Անուշ Ըսուան Պոսրով(ու), որ զՎնդոյն կապեալ են: Այս ուղղագրութիւնն ընդունել և և Պատկանյանը:

Մակայն այս ուղղագրությունն անտեղի չե, և ձեռագիրները ճիշտ ունին «Անուշ Ըսուան Պոսրով, որ», միայն թե սրանից հետո թուղթ ընկած լինելով բնագրից՝ այդ Պոսրովի մոտ պատահաբար ընկել և զՎնդոյն կապեալ եղ: Են: Մեր ուղղումից հետո (ա. հաջորդ ծանոթությունը) այս անտեղությունը վերաանում ե:

30. (Յեր. 30): Մայր ձեռագրում, վորից ծագել են Ա և մյուս ձեռագիրները՝ բնագրի «Անուշ Ըսուան Պոսրով որ» խոսքից հետո մի թուղթ պոկված ե յեղել, վորը նորից դետեղել են ձեռագրի մեջ, բայց վոչ յուր տեղում, այլ մի թուղթ հետո, վորի պատճառով մի քանի յերեսի վրա ամբողջապես խառնաշփոթված են յեղելությունները, խախտված ե անցքերի հաջորդությունը,

կցկառւր եւ և անհասկանալի Ներկա հրատարակութեան մեջ վերականգնեցինք ընագիրն սկզբնական ձևով, ինչպես առաջարկել էինք մեր Սերեոսի պատմութեան մեջ (յեր. 103—108): Վերականգնախաթաղ հրատարակութունները շտեմանողներին հասկացողութեան տանք հիշյալ խառնաշփոթութեան մասին՝ այստեղ համառոտակի կըրեմք հատվածների հաջորդութեանը նրանց մեջ:

«Ապա եկն ինքն արքայն (Որմիզդ որդի) Անուշ Ըստան Խարով (ու), վոր զՎնդոյն կապեալ եղ ի Դրուանդականի», մինչև եղի սպանցեն զՈրմիզդ և նստուացեն Թագաւոր զորդի նորա զԽարով» (յեր. 35): Վորից հետո շարունակվում է. «Խորհուրդ արարեալ լուծանել զնա և առնել իւրեանց առաջնորդ», մինչև և քսա հազարաւորաց, ըստ զնդից, ըստ զրաւից իւրեանց» (յեր. 37): որից հետո շարունակվում է. «Արդ՝ վասն զի մայր Եապոյն», մինչև և «Խորհրդական և սրտիս արիագոյն» (յեր. 33): Վորից հետո շարունակվում է. «Որպէս ասացի, արար պատերազմ մի մեծ», մինչև «Եւ էին երկու որդիք սպարապետիս այսորիկ, անուն միայն Վնդոյ և միւսայն Վստամ» (յեր. 30), վորից հետո շարունակվում է և «զգաւրս աշխարհին Հայոց ընդունէին զուսմարել» են (յեր. 38):

31. (Յեր. 35): «Անցանել ընդ զամս: Զոմ հունարեն բառ եւ, Ζεύγμα, նախկներով կազմած ու գետի յերկու ափերին չվաններով պինդ կապված կամուրջ: Սերեոսը ուրիշ տեղ (Գլ. 15) զոմ բառի տեղ դործ է ածում հայերեն նախկամուրջ:

32. (Յեր. 35): «Խորհուրդ արարեալ խորհին արանց և համահարզանց և փուշտիպանաց արքայի»: «Խորհին արք» Սերեոս դործ է ածում մի քանի անգամ. ուրիշ հեղինակների մոտ այս բառը չեւ պատահում: Նշանակում է վոչ Թե խորհող՝ խելոք՝ խմտտուն մարդիկ, այլ «խորհրդականներ»: Սրանք՝ արքունիքում գտնվող նախարարներն են, վորոնք Թագավորից հրավիրվում են խորհրդի, ինչպես յերևում է մի քանի տող վերը բերված խոսքից—«Էղոյցեալ զնախարարսն որ ի դրանն արքունի, և զգունդս համահարզանց և փուշտիպանաց, և խորհուրդ արարեալ»: ... Գատկանյան «Խորհին արք»-ը աջող և թարգմանում «ДУМНЫЕ ЛЮДИ», բայց սխալվում է նոյնացնելով նրանց համահարզների և փուշտիպանների հետ: Դրանք տարբեր զառակարգեր են:

«Համահարզ» հին պարսկերեն բառ է, կազմված «համահամ», և անհայտ նշանակութեամբ harz բառերից, և հավանորեն նշանակում է՝ նիզակից, ոգնտկան, թիկնապահ: (Արմ. բառ): Վեր-

յին՝ թիկնապահ բառը կարծում ենք անհարմար է, քանի վոր դրա համար կա հատուկ բառ, այն է—

«Փուշտիպան», որ նույնպես հին պարսկերեն բառ է, և հաճախ գործ և անվում մեր հին գրականության մեջ. կաղմված և քաշ թիկն, կռնակ, և քան պահպանող բառերից, ուրեմն տառացի համապատասխանում է հայերեն թիկնապահ—ին։

33. (Յեր. 35)։ «Մայր շապոյ»։ Բոլոր տպագրությունների մեջ շապուհ բառը ապված և գլխատառով—Շապուհ, իբրև հատուկ անուն, թեպետ ինքը Պատկանյանը ուղիղ է դիտել, վոր այստեղ «մայր Շապոյ» նշանակում և արքայորդու մայրը՝ Հիրավի, շապուհ պարսկերեն բառ է, պահլավերեն՝ sah puh, նոր պարսկերեն sah, արքա և pur, վորդի։ Խորենացին էլ գիտե այս բառի հիշտ նշանակութունը—«Շապուհ, որ լսի արքայի մանուկ» (Բ, ՀԷ)։ Ներկա ժողովրդական լեզվում այս բառի տեղ գործ է անվում շահպահ։

34. (Յեր. 31)։ Այս մարդպաններից վերջինները հիշվում են Սերեոսի մոտ և հետո (գլ. ԻԷ), վորտեղ Խորականի փոխանակ գրված և Նիխորական, Մերակրուսի փոխանակ Մերկուս, Նոյեմանի փոխանակ Յեման։

35. (Յեր. 32)։ «Մատեան ժամանակեան»։ Այստեղից իսկապես սկսվում է Սերեոսի բուն Պատմութունը, վորի մասին խոստարանության մեջ ասել էր, թե շուրջից համառատիւք զարդեաց ժամանակաց զազեալիցս վերաբերութեան զամս և զաւուրս հինգ թաղաւորացն յիշատակելով։ Այստեղ մատյան ժամանակեանը խոստարանության արդի ժամանակն է. պատմութիւնն թագաւորականը խոստարանության հինգ թագավորների տարիներն են. իսկ խոստարանության շաղէտները՝ բանաստեղծութեն և յերկար նկարագրում է ամբողջ այս նախերգանքում, Սրանից յերեկվում է, վոր Սերեոսի բուն նպատակն և յեղել՝ դրել «կործանիչ և ազականող՝ Աստուծոց անիծված Խոսրովի» պատմությունը, վորի մեջ Հերակլը հանդես է գալիս իբրև պատմական գործիչներից մեկը, բայց գլխավոր՝ կենտրոնական անձը Թուս է Խոսրով Փարվեզը։ Այս պատճառով բնական կլիներ պատմությանը վերնագիր դնել վոչ թե «Պատմութիւն ի Հերակլն», այլ «Պատմութիւն յԱպրուէզն Խոսրով», ինչպես իրավացի նկատում է և հայր Ակիւնյանը (յեր. 47)։ Սակայն ձեռագիրներն իրավունք չեն տալիս այսպիսի խոշոր փոխոթություն անելու հենց գրքի ձևկառուով։

36. (Յեր. 33): «Զրու՛ն իսկ զպարթևական զպալհաւն անդրէն՝ դարձուցեալ (ՁԶ փախուցեալ) Թագ կապեալ մեծարեաց»։ Այս նախադասութիւնը շատ է հիշեցնում Խորենացու հատվածը (Բ. ԽԾ), «զրու՛ն պատուական զձեր սեպհական պաշխաւն (ՎՁԷ. պալհաւն) զայն անդրէն՝ ի ձեզ դարձուցից և զքեզ Թագաւ փառաւորեցից»։ Ազաթանգեղոս այստեղ ունի. «զրնութիւն պարթևական զձեր սեփական պալհաւն (ՎՁԷ. պաշխաւն) ի ձեզ դարձուցից և քեզ Թագ եղեալ փառաւորեցից»։ Սակայն մի նախադասութիւն, վոր հայ Ազաթանգեղոսի և Սերեոսի մոտ կա և չկա Խորենացու մոտ, — այսինքն՝ «և երկրորդ ինձ կոչեցից» (Ազաթ.), «և արար իւր երկրորդ Թագաւորութեանն» (Սեր.), — ցույց է տալիս այստեղ Սերեոսի կախումը Ազաթանգեղոսից։ Միայն թե «բու՛ն» և «անդրէն» բառերը, վոր ունին Խորենացին և Սերեոսը, և չունի Ազաթանգեղոս՝ համեմատական են դարձնում կարծել, թե այս տեղում Սերեոս աչքի առաջ է ունեցել յերկու հեղինակներին ելլ

37. (Յեր. 50): «Զամարակար՝ պալհավերեն բառ է, hamar = համար, հաշիվ, և kar = արար բառերից բարդված, և նշանակում է հաշվարար, հաշվակալ, այսինքն պետութիւն յիշմուտքի զլիարժեք պաշտոնեալ (Արմատ. բառ.)։ Պատկանյա՛ն այս բառը պահում է Թարգմանութիւն մեջ, իսկ Ժանոթութիւն մեջ բացատրում է իբրև казнохранитель, գանձապահ։

38. (Յեր. 50): «Ձեռագիրներն ու տպագիրներն ունին. «զանձուդ աշդորիկ (փոխանակ՝ աշգուիկ) գձայաստան մեր արասցուք», վոր հայտնապես սխալ է, և մենք ուղղեցինք՝ «գձոնն մեր արասցուք»։ Գանձը հափշտակող իշխանները մտադիր չկին այդ գանձով Հայաստանը գնել Պարսիկներից և Յուդեիից, այլ մտադիր էին պատերազմով՝ և ուժով իրանց հայրենիքը իրանց դարձնել։ Այդ գանձը հարկավոր էր՝ չուն զորք վարձելու համար, «վորոնցից ոգնականութիւն ստանալով» պիտի պատերազմէին յերկու Թագավորների դեմ։ Դիչ հետո տեսնում ենք, վոր այդ խորհուրդը չե աջողվում, իշխանների մեջ յերկպառակութիւն և ընկնում, իսկ հոնական զորքի վրա՝ հույս գնել կարելի չէ լինում։

39. (Եր. 52): «Կորատոր կամ կուրատոր լատիններն բառ է, cura = հոգ՝ հոգատարութիւն բառից, և տառացի նշանակում է՝ հոգատար, հոգաբարձու։ Սա մի պաշտոնյա էր, վոր հսկում էր քրմուղների, ցորենը մթերելու, հողերը բաժանելու և այլ գյուղատնտեսական գործերի վրա։ Բառը լատիններից անցել է հույներին kourator ձևով և ստացել է նշանակութիւնը բարձր պաշ-

տոնյայի (առանց ֆուենկցիաները վորոշ լինելու)։ Հիւրչմ., Արմատ. բառ.։

40. (Յեր. 52)։ «Մինչդեռ նա նստէր ի ջերմկի՝ բժշկել ի հիւանդութենէ։ Մենք այսպէս ուղղեցինք ձեռագիրներն և տղա-դիրներն ազավազված խոսքը՝ «Մինչդեռ նա նստէր ի ջերմի», վորը Պատկանյանը թարգմանել է. «когда он страдая лихорад-кой лечился от болезни близ города Каринна»։ Վոր այստեղ ջերմուկ և յեղել դրված և վոչ ջերմ՝ սպորդ յերևում և անմիջա-պէս հաջորդող խոսքերից—«արշաւելով ի ջերմուկն» ոչ գիպան նմա», (վորովհետև կորատորը, լուր ստանալով դավադրության մասին՝ փախել ընկել ևր Կարին)։ խոսքը այստեղ անվանի Ար-ծաթի կամ Արծըթի ջերմուկի մասին և, Կարինից դեպի հյուսիս ընկած մոտ 20 քլմ. հեռավորությամբ, Արծաթի գլուղի մոտ Այս ջերմուկը հիշվում է ժողովրդական յայլի մեջ հետևյալ ձևով.— «Արծըթի բարձր տեղ է. Ջուրը հիվընդի գեղ է. Միտած սիրածի չեն աս. Աս ինչ անորէն գեղ է։ (Այս քառյակը փոքր հասակումս լսել եմ իմ հորից, վոր 20—24 տարեկան հասակում զնացած է յեղել Ախալցխայից Նրդրում՝ գերձակության արհեստին մեջ կա-տարեկադործվելու համար, և լսել և այնտեղ, Նրդրումում)։ Նույն քառյակը դանադան վարխաններով հետո հատկացրել են ուրիշ անդերի—«Ալադյաղ բարձր տեղ է», «Ապարան բարձր տեղ է» են, բայց սրանց մեջ անհարմար և դալիս «ջուրը հիվընդի գեղ է» խոսքը, վոր շատ լավ հարմարում և Արծաթի ջերմուկին։ Մեր բերած վարխանոր համեմայն դեպս 90 տարվա հնություն ունի։

41. (Յեր. 56)։ «Ընկենու ի կինիկն։ Կինիկն յունարեն բառ է, kynégion, վոր նշանակում է վորսատեղ և զործ և անվել նշանակելու համար այն կրկեսը Բյուղանդիոնում, ուր ձգում եին դատապարտվածներին՝ գազաններին կուր դառնալու համար։ Պատկանյանը ոռւսերեն թարգմանության ծանոթության մեջ (յեր. 199—200), բերում և Նրբոի Ստորին կայսրության Պատ-մությունից յույն հեղինակ Թ. Սեմիկատտի պատմածը Սմբատի (Symbace) կրկես ձգվելու մասին, վորից յերևում է, թե Մորիկ կայսրը նրա ապստամբության գործի քննությունը հանձնել և ծերակոյտին, վորպեսզի նրա հանցանքը դատարանով հաստատվի և վճիռը անաչառ լինի։ Սմբատը, իր սեփական խոստովանու-թյան համաձայն, դատապարտվում է կրկեսը ձգվելու, վորպեսզի գաղտնիներից պատռվի։ Հավաքված բաղմությունը և ինքը դա-տապարտվածը սպասում ենին մի քստմենի մահի։ Երբ Մորիկի

զթաւարաւութիւնը կանխեց հասարակութեան կարեկցութիւնը։ Կայսրի վոգորմութիւնը ընդունվեց հասարակութեան ցնծալից աղաղակներով, և բոլորը որհնում էին կայսրին, վոր իրանց ազատեց հանդիսաւես լինելուց մի սոսկալի տեսարանի։ Ըստ այս պատմութեան՝ Սմբատի մենամարտը զազանների հետ տեղի չե ունեցել, և Մորիկը ներել և Սմբատի հանցանքը լող յուր զթաւարութեամբ։ Անքնակալ և անհիշատ պատմութիւն։ Ընդհակառակը, ժողովուրդը ինքը ծարավի եր նման զազանամարտերի, (այլապես մի եր ստիպում նրան զայ կրկես՝ սոսկալի տեսարանին հանգիստես լինելու), և միայն զատապարտվածի ցույց տված ույժն ու ճարպիկութիւնը զազանների հետ մենամարտելիս՝ նրան սիրելի դարձրին հանգիստեսների աչքում, վորոնք սկսեցին պահանջել, ուղղակի պահանջել կայսրից, վոր ներե զատապարտվածին։ Նույնը խնդրում եր և կայսրուհին, վորին առաջուց սիրելի ե յեղել Սմբատը։ Կայսրը ներեց՝ զիջելով հասարակութեան պահանջին։ Այն պատիվը, վոր հետո տվին Սմբատին, հրաժիրելով արքունական ընթրիքին՝ տրվում և հերոսին՝ հաղթողին իբրև մրցանակ, և վոչ թե ձրի վոգորմութիւն ստացած զատապարտյալին։ (Հասարակութեան մեղող դերը այսպիսի զեպքերում գեղեցիկ նկարագրված և Սենեկիյի Յմի հրթաւ վկայում)։ Սերէոսի ամբողջ պատմութիւնը, թե զազանների հետ կովելիս Սմբատի գործ դրած տարբեր միջոցները—(ցուլը անշուշտ պատված ե յեղել, վորի պատճառով տեղահան են եղել յեղջուրները) և թե ամբոխի արտահայտած համակրանքը հերոսին (աւնդ ազաղակ բաղում ամբոխին գերկիրն ընուն և խնդրէին ի վերայ նորա ոգորմութիւն ի թագաւորէն), այնքան բնական ու կենդանի յեն, վոր տարակուսելու տեղիք չէջնում, վոր Սերէոսի այս պատմութիւնը իրական անցքի նկարագրութիւն ե—Նույն գլխի վերջում՝ դեղեցիկ ուղղագրութիւնը (շտրիբուն, փոխանակ շիբուն—ի), վոր կատարեցինք համաձայն Միխիթար Անցու պատմութեան (հրատ. Պատկ. յեր. 35), ցույց ե տալիս, վոր Սմբատը զպատվավորա յաջորդ ուղարկվեց Ափրիկե, նշանակվելով զորքի տրիբուն, այսինքն լեգեոնի հրամանատար։ (Լեգեոնն՝ ունենում եր վեց արիբուն, tribunus militaris, վորոնք հերթով, տարեկան յերկու ամիս, վարում էին լեգեոնի հրամանատարութիւնը)։

42. (Յեր. 58)։ «Պէշասպիկ», (ձեռագիրներում և տպագիրներում պէշասպիկ)։ Պատկանիյան ուսաներն թարգմանութեան մեջ պահում ե այս բառը և ծանոթութեան մեջ (յեր. 200) հայտնում

և, թե բառի նշանակութունը իբրև պարզ չեւ Հյուբշման բառը բացատրում է պահլավական pesaspik, [(պէշասպիկ), pesh]—առաջ, ասք—ձի բառերից և ԻԿ մասնիկից, վոր նշանակում է առաջնաձի սուրհանդակ, թաղավորների արագընթաց թղթատար: Ըստ Հյուբշմանի՝ բառը հայերենին անցել է ասորական pesaspig ձևից:

43. (Յեր. 66): Մեծ Դասաակերտը անշուշտ Պարսովի շինած այն նշանավոր դասաակերտն է, վորի շինության համար նա ի միջի ալլոց Հայաստանից բերել ավելց Սանատրուկ՝ Թագավորի ավերակ պալատի զարդարուն սյուները, ինչպես ավանդում է Սերեոս: Այս դասաակերտի ճիշտ տեղը հայտնի չէ. վրմանք զնում են բուն Տիգրոսն քաղաքում, ուրիշները՝ քաղաքից դուրս, մոտ 60 քմ. հեռավորության վրա, նույնացնելով Արտեմիսի հետ: Այս դասաակերտի չափազանց նոսրության նկարագիրը ըստ Գիրբոնի՝ բերված է Ղևոնդի Պատմության Առաջաբանում (յեր. Խա—Խր): Տես և Հ. Ակինյան, յեր. 90—92: Պատկանյան դասաակերտը հասկանում է իբրև հասարակ անուն և թարգմանում է великое поместье.

44. (Յեր. 66): Էնտի ի բոր և ի բահակ», (տաղերենբում գլխագրերով՝ իբրև հատուկ անուններ):

Բոր բառը Հյուբշմանը համեմատում է պահլավերեն bop, նոր պարսկերեն bob բռների հետ, վորոնք նշանակում են բարձ, սթոյ, գորգ՝ վորով զարդարում են տունը. իսկ բահակ բառը նա թողնում է առանց բացատրության: Արմ. բառ. բերելով Հյուբշմանի հիշյալ բացատրությունը՝ յուր կողմից ավելացնում է յերկու ուրիշ վկայություններ ևս բոր բառի, վոր բառարանները սխալ են բացատրել՝ իբրև կողով, գամբուղ, նաև ավելացնում Ազուլեցոց բարբառում պահպանված բյուր բառը, վոր նշանակում է հաստ անկողին: Հյուբշմանից առաջ բորի ուղիղ մեկնությունը տվել է «Եվրոպա» հանդեսը 1852 թվին: Բահակի մասին Արմատ. բառարանն էլ վոշինչ ստույգ չե տալիս, հավանական համարելով, վոր նույնպես իրանական փոխառություն է, բորի նման մի կահ, վորով թագավորական գահինը զարդարված էր: Պատկանյան յերկու բառն էլ պահում է թարգմանության մեջ—«и войдя в залу он сел на Боб и Баклак», և ծանոթության մեջ ասում է. «այս հատվածի իմաստը չկարողացանք հասկանալ»:

45. (Յեր. 66): «Պարով Եում»: Հյուբշման միայն հիշում է, ասելով թի պատմանուն է, առանց նշանակությունը բացատրե-

լուս Պատկանյան (բնագիր, ծանոթ. յեր. 100) բացատրում է, վոր շում պահալվերեն բառ է, նշանակում է գովեստ կամ դրվատ Խոսրովի, ձեռագիրների մեջ խառն գրվում է շում կամ շնուհն:

46. (Յեր. 66): «Արձակու ի նա զվաճառն փոքր, զդիւան աշխարհին», Դժվար է ասել, ի՞նչ են փոքր վաճառր, աշխարհի զիվանը Պատկանյան խոսափել է թարգմանելուց, բայց ե թողել մի քանի տող, ի միջի ալոյց և այս խոսքերը, իսկ ծանոթության մեջ (յեր. 72) նա նկատում է. «վերջին տողերի աղավաղության և մի քանի բառերի անծանոթության պատճառով՝ թարգմտրի սոված պատիվներն այնքան ել հասկանալի չեն»: Մեր կողմից յենթադրում ենք, թե այստեղ խոսքը մի արտակարգ շնորհի մասին է, այսինքն՝ վոր թարգմտրը Սմբատին շնորհեց յուր մարդպանության սահմանում արքունական տուրքերի մի մասը: Դիվանը, ինչպես հայտնի յն՝ արքունական հասույթների հաշվակալությունն էր. իսկ «փոքր վաճառք թվում է թե այդ հասույթների մի հատուկ տեսակն էր» (առետրից? մաքսից?), վոր մտնում էր աշխարհի զիվանի մեջ, վորը և Խոսրովը շնորհեց Սմբատին:

47. (Յեր. 67): «ԶԴիոնոս եփեսոսայո, զՇառնն և զԲրառնն (ՎԱՏ. քրահնն), և հոսի ի Հնդկէս գրինք փակագծերի մեջ իբրև ընդմիջարկություն: «Հոսի ի Հնդկէս» չե կարող վերաբերվել Վեհապետին (Ոջսուս, այժմ Ամու-Դարիա), վորովհետև սա Հնդկաստանի սահմանների մեջ չե մտնում և հոսում է Արալյան լիճը. «ԶԴիոնոս եփեսոսայո, զՇառնն և զԲրառնն» հայցական հոլովները տեղ չունին և չեն կապվում վնչ նախընթաց խոսքի և վնչ հաջորդ «հոսի»-ի հետ: Թվում է թե այս խոսքերը մեկը դրել է յուր ձեռագրի լուսանցքում, (իրան հայտնի հատուկ անուններ), իսկ այդ ձեռագրից արտագրողը մոռել է բնագրի մեջ, վոր շատ սովորական բան է, և սրանով խոսքի կապը խզվել է և իմաստն աղճատվել: «Դիոնոս եփեսոսայ» մենք չկարողացանք՝ վորոշել մեր ձեռքի տակ յեղած միջոցներով: Նրանց յունական արմատները ցույց են տալիս, թե շատ հին բառեր են (տեղ նշանակող), գուցէ Աղեքսանդր Մակեդոնացու ժամանակից ֆնացած: «Շառնն և Բրառնն» իրար կողքի պատահում են Խորենացու Աշխարհադրության մեջ (հրատ. Սուքրի, յեր. 43), իբրև ողգերի անուններ Հնդկաստանում պարսկերեն այսպես կոչված Կապ ունի՞ն արդյոք այս անունները Հնդկաստանում հոսող յերկու՝ գետերի՝ Բրահմապուրաջի և Շամալոյի հետ՝ չենք կարող ասել:

48. (Յեր. 68), «Պատահի վերականգնում քաշիկ և կուռ գրահին ամբողջիւն: Անծանոթ են վերականգնում և քաշիկ քաները և անորոշ և խոսքի նշանակութիւնը: Պատկանյան (ոռութարգմ. յեր. 75, ծանոթ.) նկատում և, վար է վերականգնում քաշի արմատն և հալանորեն՝ վերտ, վոր նշանակում և շղթայի նման հյուսված. իսկ քաշիկ քաշը հանում և Բաշ քառից, Քուշանների մայրաքաղաքի անունից: Այս բացատրութիւնները մեր կողմից լրացնում ենք՝ ընդունելով Արմ. բառարանի հետ վերականգնումը իրրե ազատագրած բառ, ուղղելի վերտ և ամուր, իսկ քաշիկ բառին տալիս ենք նշանակութիւն՝ Բաշում շինված, Բաշի, (ինչպես Դամասկոսի անունով ազնիվ սրերը կոչում էին զամասկյան են), Բաս ալամ՝ հիշյալ հատվածը կնշանակե—Քուշանաց թագավորի հյուսվածո՝ բնախը (քաշիկ) և պինդ ու կուռ գրահի ամբողջութիւնը պատասխում և Սմբատի նիգակից: «Պատասխանը բառը հարմար և հյուսված գրահին և վոր միտադադ մետաղից շինվածին: Ընդհանրապես ել հյուսված գրահ էին դործածում, վոր չեր կաշկանդում զարականի շարժումները:

49. (Յեր. 69), «Ազատ ապստամբեալ գնացին — յաւգնականութիւն թագաւորին Յունաց: Այս հատվածի վերաբերմամբ Հ. Ա. կինյանը գրում և (յեր. 33) «Այսպեղ սկզբին թուղթ ինկած կերևա, ուր ընդարձակ կապտովեր պղծիմէն Հերակլի ի կողման հիւսիսոյ առ արջայն Թեապոլացոյ, պուղարկումն անհոռի քաղաքիւնանն աղգաց, զապատակն Յունաց յԱտրպատական, զառ և զաւար: (հմտ. Պատկ. ԿՅ 23, մեր հրատ. յեր. 24) Այս արշավանքի հիշատակութիւնը, զոր կիսատանար Սերեոս առ մանրադատում՝ չկա այժմ մեր որինակին մեջ: Թերևս այս պլիի մնացորդն ըլլա զապատասխանը— յաւգնականութիւն թագաւորին Յունաց հատվածը:

Միանգամայն ընդունելի յենք համարում այս յինթագրութիւնը, վոր ալիքի ույժ և ստանում նաև այն հանգամանքով, վոր այս հատվածը կապ չունի նախընթացի հետ, վորտեղ նկարագրվում են Սմբատ Շում Խոսրովի կյանքի վերջին որերը, մահը և թաղումը: Սրան հաջորդող զապատասխանը գնացին հատվածը կարծես այդ ապստամբութիւնը կապում և Սմբատի մահվան հետ, վոր անհիմն և Մյուս կողմից ել տեսնում ենք, վոր ապստամբները, չինացի Ճեպետի հրապարանքով, մտնում են Քաջանի ծառայութիւն մեջ և յերկար ճանապարհ կտրելով Ճորա պահին անցնելով Քաջանի հրամանով գնում են Յունաց թա-

